Էջմիածին

Թ
2008

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Սեպտեմբեր

2008

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՍՐԲԱՐԱՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Սրբալույս Մյուռոնի ամեն մի օրհնություն գալիս է հավաստելու մեր հոգևոր ավանդների ոչ միայն շարունակականությունը, այլև նորոգությունը, հնի միախառնումը նորին։

Մյուռոնի պատրաստման և օրհնության քառասնօրյա խորհրդական ընթացքը ասես հոգևոր մի ճանապարհորդություն լինի նյութականից հոգևորը, անցյալից դեպ ապագան, երբ Հայաշխարհի ու Արևելքի ծաղկանց բույսերի քառասնաբույր և քառասներանգ միախառնումը հոգևոր շնորհի հեղմամբ վերածվում է օծության սրբարար յուղի՝ տևական աղոթասացությամբ և օրհնության ընթացքում համաքրիստոնեական և ազգային եկեղեցական մասունքների հետ կենդանի հաղորդությամբ։

Այն նաև մի ճանապարհորդություն է մեր ազգային-եկեղեցական պատմության դժվարին և նվիրական էջերով։

Ձեռամբ Հայոց Հայրապետի, երբ հին Մյուռոնի մակարդն է միախառնվում օրհնվող նոր յուղին, թվում է, թե անցյալի մեր պատմությունն է գալիս՝ միանալու մեր կյանքին։ Մյուռոնաթափ աղավնիից Մյուռոնի կաթսայի մեջ հին Մյուռոնի հեղումը կենդանի մի հաղորդություն է դառնում մեր պատմության հետ, որն իր հերթին օծուն է Հայոց Մյուռոնով։

Հոգենորոգ այդ պահն իրենում ամփոփում է ժամանակային տարբեր շերտեր՝ առաքելական քարոզությամբ Հայոց աշխարհ բերված օծության յուղը, որը որպես ծածկյալ խորհուրդ երեք դար պահված մնալով Տարոն աշխարհում, ձեռամբ Ս. Գրիգորի այնուհետև ցոլանալու էր Արածանիի ջրերում՝ այնտեղ ճառագմամբ սկսելով լուսեղեն անխզելի իր ընթացքը արդեն Հայոց պատմության շրջագծում և դառնալով մասնատված Հայոց աշխարհի ու աշխարհասփյուռ և աշխարհացրիվ հայ ժողովրդի ազգային-հոգևոր միասնականության խորհրդանիշը։

Հատկանշական է, որ ի թիվս այլ բնորոշումների, Ս. Էջմիածինը անվանվել է նաև հոգևոր արեգակ, որն իր ճառագայթները տարածում է Սրբալույս Մյուռոնի միջոցով, որի լուսեղեն դրոշմով իրար են զոդվում հայ ժողովրդի զավակները։

Մեր պատմության դժվարին ժամանակներում Ս. Մյուռոնի օրհնությունը համարվել է հայ կյանքի կենսունակության ու հարատևության խորհրդանիշը, որ չնայած հայրենիքից եկող անմխիթար լուրերին՝ կյանքը շարունակվում և նորոգվում է այնտեղ՝ դառանալով հոգևոր ապավեն ու նեցուկ հեռվում գտնվողների համար։

Սրբալույս Մյուռոնի հետ են կապվում և հայ կյանքի տևական ու ամենաբազմամարդ ուխտագնացությունները, որով Ս. Մյուռոնը ոչ միայն տարածվում, այլև յոթ տարին մեկ Ս. Էջմիածնում համախմբում և մեկտեղում է Հայաշխարհի և գաղթաշխարհի հայությանը։ Ինչպես գրում են նախորդ դարերի հեղինակները, Մյուռոնօրհնության օրերին Ս. Էջմիածնում կարելի էր տեսնել հայկական գրեթե բոլոր տարազները և լսել բոլոր բարբառներն ու խոսվածքները։

Այստեղ է, որ հայը հանդիպում էր հային, լսում մեկը մյուսին, ապրում մեկը մյուսով, որով ի մի էր գալիս և ամբողջանում ազգային հոգսերի, հանձնառությունների և ծրագրերի կենդանի խճանկարի մանրակերտը: Ս. Մյուռոնի ամեն մի օրհնություն այսպիսով դառնում էր հայության հանձնառության և հավաքական կամքի արտահայտությունը:

Սրբալույս Մյուռոնի այս նոր օրհնությունը վերստին եկավ հավաստելու ավանդույթի շարունակականությունը և յոթ տարին մեկ աշխարհասփյուռ հայությանը Ս. Էջմիածնում ի մի հավաքելու զորությունը:

Ս. Մյուռոնի այս նոր օրհնությամբ մեկ անգամ ևս հաղորդվեցինք անցյալի մեր ավանդներին, մտովի վերապրեցինք մեր պատմության դարավոր ընթացքը, որին այսօր գումարվում են նոր մարտահրավերները և խնդիրները: Անցնող դարերի ընթացքում Հայոց Հայրապետների մտահոգություններից մեկը եղել է Ս. Մյուռոնի շարունակականության պահպանումը, որ չկտրվի անցյալը ներկային կապող ոսկե շղթայի՝ սերունդներից ավանդված օղակը: Կյանքի երբեմնի անհաստատությանը աստիճանաբար սկսեց փոխարինել կյանքի հարափոխությունը՝ առաջնային դարձնելով ազգային-հոգևոր ավանդների պահպանությունը արդի աշխարհում, և որ այնքան դժվարությունների, զոհողությունների և զրկանքների գնով ավանդված Սրբալույս Մյուռոնի լույսը այսօր հանկարծ չխամրի մեր ճակատին՝ խամրեցնելով և հայության դրոշմն ու կնիքը մեր հոգիներում:

Նոր օրհնված այս Մյուռոնը չորրորդն է Հայաստանի անկախացումից ի վեր: Երջանկահիշատակ Վազգեն Առաջինը 1991 թ. օրհնված Մյուռոնը հռչակեց որպես Անկախության Մյուռոն: Երջանկահիշատակ Գարեգին Առաջինը 1996 թ. օրհնած Մյուռոնը նույն ընթացքով անվանեց վերածնության Մյուռոն՝ որպես արտահայտությունը հայ ժողովրդի վերականգնված ազգային անկախության:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին էր վիճակված կատարելու սկսվող երրորդ հազարամյակի և Հայաստանում Քրիստոնեության պետականորեն ընդունման 17-րդ հարյուրամյակի առաջին Մյուռոնօրհնությունը որը տեղի ունեցավ 2001 թ.: Այն իր համահայկական ընդգրկմամբ և միջազգային ու միջեկեղեցական տարողությամբ նմանը չի ունեցել Հայոց Եկեղեցու պատմության մեջ Արածանիում լուսավորչահեղ Մյուռոնից հետո՝ դառնալով Մյուռոնը 1700-ամյակի:

Մյուռոնն իր ունեցած հոգևոր շնորհներից բացի նաև խորհրդանիշն է միասնության, այն միասնության, որի կարիքն այսօր այնքան շատ ունի մեր ժողովուրդը: Ինչպես դարեր շարունակ Ս. Մյուռոնը եղել է նաև խորհրդանիշը մեր հայրենիքի հարատևության, այսօր էլ այն թող լինի նաև խորհրդանիշը մեր ժողովրդի միասնության, մեկ Հայրենիքի և մեկ Եկեղեցու պատկանելության, որոնց առջև ստորադասվում են գաղափարական և քաղաքական տարաձայնությունները: Եվ այս Մյուռոնը թող դառնա Միասնության Մյուռոն, մեր մեծագործ հայրապետներից Սիմեոն Երևանցու բնորոշմամբ պարգևելով ազգիս հայոց սեր և միություն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆԸ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 28 սեպտեմբերի 2008 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Կպատրաստես Սուրբ օծության համար յուղ...
Դա սրբություն է և ձեզ համար սրբություն էլ թող մնա»:

(Ելից. Լ, 25, 32)

Սիրելի ուխտավոր բարեպաշտ ժողովուրդ.

Երկնքի բարձունքներից այսօր վերստին սրբություն է իջնում, օրհնություն, շնորհ և խնդություն է բաշխվում մեր Հայրենիքին, մեր հոգիներին, համայն հայ կյանքին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ազգիս աշխարհասփյուռ զավակների աղոթական մասնակցությամբ Տերունապատվեր խոսքի համաձայն Մյուռոն ենք օրհնում: Փառք, բյուր փառք և գոհություն Ամենախնամ Աստծուն:

Աստծո բարերար կամքով է, որ Վարագա Սուրբ Խաչի տոնական օրը խնդագին հոգիներով Սրբալույս Մյուռոնի օրհնության համար համախմբվել ենք Միածնաէջ մեր սրբավայրում, որը երկնային լույսերով անվախճան ժամանակների համար ճարտարագծվել է որպես մեր ժողովրդի հավատքի վկայարան և ուխտի խորան: Դարեր ի վեր ուխտավոր հոգով առաջնորդվելով այստեղ՝ ազգս հայոց զորանում ու նորոգվում է հավատքով, տեսնում հավերժության իր լուսաճեմ ուղին, դեպի փրկություն, դեպի Աստված իր ճանապարհը: «Զի սա լուսաւորէ զմեզ հաւատով և բուսուցանէ ի Տանն Աստուծոյ: ...Զի սա նորոգէ զմեզ շնորհօք Հոգւոյն Սրբոյ և սնուցանէ և պտղաբերէ և դալարի պահէ» (Սիմեոն Երևանցի Կաթողիկոս): Սուրբ Էջմիածնի աստվածապարգև հոգեսնունդ այս առաքելությունը Սուրբ Գրիգոր մեր Լուսավորիչ Հայրապետի ժամանակներից Սուրբ Մյուռոնով սփռվում և բաշխվում է մեր եկեղեցիներին, մեր օջախներին, աշխարհասփյուռ հայ կյանքին:

Մյուռոնօրհնության այս շնորհանորոգ օրը մեր Արարչի հետ հաշտության խորհրդանիշ ձիթենու ճյուղի բերքին խառնեցինք բնության ամենից ազնիվ, բուժիչ և բուրումնավետ հյութերը: Այս արդար նյութին միախառնեցինք հին Մյուռոնը, որով սերնդեսերունդ փոխանցում ենք մեր Տիրոջ օրհնած յուղը, խառնեցինք և նորաեփ Մյուռոնը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության: Օրհնեցինք մեր նվիրական մասունքներով՝ Տերունական փրկարար Խաչով, Սուրբ Գեղարդով, Աջով մեր Լուսավորիչ Հայրապետի: Մեր հոգու ամենաջերմ աղոթքներով հայցեցինք բարեխոսությունը մեր սուրբ հայրերի, որպեսզի նորօրհնյալ Մյուռոնը Սուրբ Հոգու ներգործությամբ դառնա «կնիք երկնավոր անապականության», երկնային յոթնարփյա շնորհները բաշխի մեր կյանքին և ինչպես Աստված է տնօրինել՝ լինի ու միշտ մնա սրբություն մեզ և բոլորի համար: Այսօր նյութը Սուրբ Հոգու երկնահեղ շնորհներով սքանչելագործ զորություն է ստանում, այսօր նյութը հայցով ու աղոթքով բանական ու շնչավոր

է դառնում. «Երդվեցնում եմ քեզ, նյութ ձեթի, հանուն Ամենակարող Հոր, ... որպեսզի ամեն ներգործություն սատանայի և զորություն նրա քեզանից հալածյալ լինի, որպեսզի օրհնությամբ զորանաս՝ քեզանով օծյալին դրոշմելու Սուրբ Հոգին՝ հանուն Ամենակարող Հոր և Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի» (Կանոն Ս. Մյուռոնի օրհնության):

Աստծո բարերար Կամքով սուրբ և սրբարար է Մյուռոնը: Լուսանյութ, անուշաբույր Մյուռոնով սրբվում են եկեղեցիները, դառնում Աստծո տուն: Մյուռոնով օծվելով՝ եկեղեցականները կոչվում են Տիրոջ Սուրբ Սեղանի սպասավորության: Շնորհակիր և շնորհաբաշխ Մյուռոնով մկրտության ավազանից ծնվում ենք որպես Աստծո սեփական ժողովուրդ, որպես Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի: Սուրբ Մյուռոնի դրոշմով ճանաչում, ապրում, զգում և պահպանում ենք մեր հայ և քրիստոնյա ինքնությունը, մեր ազգային ամբողջականությունը: Մյուռոնադրոշմ հաղթել ենք վասն հավատի և վասն հայրենյաց կենաց և մահու մեր բոլոր պատերազմները, մեր գոյության և լինելիության բոլոր մարտերը: Մյուռոնի զորությամբ ու լույսով միավորել և միավորում ենք մեր անցյալը, ներկան և մեր զավակների ապագան:

Մյուռոնօրհնությունը, սիրելի հայորդիներ, կոչ է և հրավեր ազգիս՝ մնալու սրբության շնորհի մեջ, մերժելու չարը ու չարի գործերը և մեր կյանքում անստվեր պահպանելու Տիրոջ Ավետարանի լույսը: Մյուռոնօրհնությունը պատգամ է ապրելու Քրիստոսով, ընթանալու Քրիստոսի հետ, քանզի Սուրբ Մյուռոնով ի Քրիստոս մկրտված՝ Քրիստոսով հանդերձավորվեցիք (հմմտ.՝ Գաղ. Գ 27): Տիրոջ հետ, Տերունապարգև սիրով միայն պիտի գերակայեն մեր կյանքում բարությունն ու արդարությունը, մեր սրտերի մեջ անսասան ու անբիծ պիտի մնա մեր հայրերի սուրբ հավատքը և մեր ուղին լինի բազմարդյուն ու բարեհույս:

Այսօր մենք՝ Հայրապետ հայոց, քաջալեր ենք ու լավատես, լի ապագայի հույսերով, քանզի Հայաստան և Արցախ մեր հայրենի աշխարհում, վերազարթոնք ապրող մեր Եկեղեցու մեջ, մեր անկախ պետական կյանքում, բայց մանավանդ մեր ժողովրդի առողջ ներաշխարհում մենք զգում և տեսնում ենք արթնացող և հասունացող կամքն ու պահանջը մաքրվելու, սրբվելու, արդար հասարակություն և պետություն կառուցելու: Տեսնում ենք կամքն ու պահանջը ամոքելու ազգային վերքերը, հաղթահարելու եկեղեցական մեր կյանքի դժվարությունները, ժամանակի բերած բաժանումներն ու տարակարծությունները, որպեսզի հայոց անդաստանում միշտ և առհավետ լինենք մեկ և միասնական՝ մեկ ազգ, մեկ հավատք, մեկ Եկեղեցի՝ միասնական Հայրենիքով և միակամ ու միախորհուրդ ընթանանք դեպի նոր ձեռքբերումներ, մեր արդար իղձերի ու արժանի նպատակների իրագործման Աստծո կողմից նախախնամված բարի հանգրվաններ:

Լավատես ենք ու քաջալեր Աստծո՝ ազգիս պարգևած բարիքներից, աշխարհասփյուռ հայ կյանքի մեջ պտղաբերող բարի գործերից, իրականություն դարձող ծրագրերից, որ ծառայում են մեր ժողովրդի բարօրությանը, մեր Հայրենիքի բարգավաճումին, մեր Սուրբ Եկեղեցու պայծառությանը: Միավորենք ու զորացնենք մեր ջանքերը, որ հայրենի մեր երկիրը ծաղկունք ապրի աստվածաշնորհ խաղաղության ու ազատության մեջ և հզորանա տիրավանդ ճշմարիտ սիրով, իր զավակների նվիրումով, տաղանդով ու արարումով: Խնամք տանենք ու հոգանք, որպեսզի մեր աշխարհասփյուռ Եկեղեցին միշտ պայծառ լինի նախնյաց ավանդով ու կարգավորությամբ, էջմիածնակնիք հայ հոգուն հավատարիմ աստվածասեր ժողովրդով: Թող լուսեղեն Մյուռոնի ազգահավաք հրաշագործ զորության շնորհներով արգասավորվի միությունն ու մեկ

առաքելությունը մեր Սուրբ Եկեղեցու և միաբանությունը մեր ժողովրդի:

Մյուռոնօրհնության այս սրբազան օրը, սիրելի բարեպաշտ հավատացյալներ, հոգու հայացքով վերստին տեսնենք մեր Տիրոջ Էջքը հրեշտակների զորքերի հետ, ոսկե մուրճի հարվածով անդնդային ուժերի կործանումը, տեսնենք երկնանման խորանից աղբյուրացող կենդանարար ջրերով համատարած ողողումը Հայոց աշխարհի, որը Լուսավորչատեսիլ պատկերն է մեր ժողովրդի մկրտության, Սուրբ Հոգով վերստին ծննդի, և զորանանք հոգով, տոգորվենք նոր հույսերով, վերածնվող կյանքի նոր զարթոնքով:

Ժողովուրդ հայոց, ժողովուրդ շնորհընկալ և հաղթական, որ դարեդար ապրածդ կյանքով, սխրալի վկայություններով հավատարիմ ես Սուրբ Էջմիածնով Աստծո հետ հաստատած ուխտիդ, հանապազ նորոգվիր հավատքով, պայծառացիր եկեղեցաշեն և հայրենանվեր գործոց արդար ու բարի արգասիքներով, որ Աստծո օրհնության ներքո հավերժ անսասան մնա Քրիստոսապսակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, միշտ ապրի ազատ ու ինքնիշխան, Արարատով հավերժ թագադրյալ մեր Հայրենիքը, և հայ կյանքը լույսով նայի գալիքին:

Այս մաղթանքով և զգացումներով ողջունում ենք այստեղ ներկայությունը Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ տիար Բակո Սահակյանի, հայոց պետական ավագանու՝ մաղթելով հաջողություններ վասն Հայաստանի և Արցախի առաջընթացի, վասն Արցախի մեր ժողովրդի ազատ ապրելու արդար իրավունքի:

Ի Քրիստոս սիրո եղբայրական ողջույն ենք հղում Նվիրապետական մեր Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին՝ հայցելով իրենց կյանքին Տիրոջ օրհնությունն ու զորակցությունը:

Ուրախ ենք մեր ժողովրդի համար նվիրական այս օրը Սուրբ Էջմիածնում ողջունելու հոգևոր Մեր եղբորը՝ Նորին Ամենասրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքին՝ հայցելով Տիրոջ հովանին բարեպաշտ իր հոտին:

Ի Քրիստոս սիրո Մեր ողջույնն ենք բերում նաև քույր Եկեղեցիների շնորհազարդ հոգևորականներին, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպաններին, օտարերկրյա պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ մաղթանքով Տիրոջ հանապազ առաջնորդությունը իրենց առաքելությանը:

Հայրական օրհնությամբ ողջունում ենք մեր Եկեղեցու թեմական առաջնորդներին, թեմական և համայնքային վարչական մարմինների պատվարժան անդամներին, ուխտապահ եկեղեցականաց ողջ դասին, ձեզ, ուխտավոր զավակներ Մեր, և համայն հավատացյալ մեր ժողովրդին՝ ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս:

Հայցենք միասնաբար, որ Բարձրյալը խաղաղություն պարգևի աշխարհին, Իր շնորհի ներքո խաղաղ պահի մեր Հայրենիքը և ապահով ու անվրդով՝ մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի:

Թող նորօրհնյալ Մյուռոնը, ինչպես Աստված է տնօրինել, լինի ու միշտ մնա սրբություն մեզ և բոլորի համար. Ամեն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵՑ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

Սեպտեմբերի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ գումարվեց Մյուռոնօրհնության կազմակերպման հանձնախմբի նիստ:

Ժողովի ընթացքում Մյուռոնօրհնության և հարակից միջոցառումների կազմակերպման աշխատանքներին անդրադարձավ հանձնախմբի ատենապետ, ԱՄՆ Հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը: Ենթահանձնախմբերի ծրագրերն ու գործունեությունը ներկայացրեց հանձնախմբի աշխատանքների համակարգող Տ. Առեն աբեղա Ճեպեճյանը: Ժողովականները, ի դեմս Հայաստանում Հունաստանի դեսպանության, գնահատանք հայտնեցին Հունաստանի Հանրապետության իշխանություններին՝ Մյուռոնի համար անհրաժեշտ ձիթայուղի ապահովման ու Հայաստան փոխադրման համար:

Նշվեց, որ Մյուռոնօրհնության նախընթաց օրերին՝ սեպտեմբերի 26-ին, տեղի կունենան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի “Շողակաթ” հեռուստաընկերության նոր շենքի բացման և Մայր Աթոռի մկրտարանի՝ նորակառույց Ս. Վարդան եկեղեցու և Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռի օծման արարողությունները: Սեպտեմբերի 27-ին քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդները Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ կայցելեն Հայոց Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր, նույն օրը երեկոյան Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում տեղի կունենա էկումենիկ արարողություն: Սեպտեմբերի 28-ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում կմատուցվի Սուրբ Պատարագ և ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի կկատարվի Սրբալույս Մյուռոնի օրհնությունը:

Մյուռոնօրհնեքի առիթով հրատարակության են պատրաստվել մի շարք գրքեր Հայ Եկեղեցու, Սուրբ Մյուռոնի խորհրդի և պատրաստության, Մյուռոնօրհնության արարողության ընթացքին գործածվող սրբությունների մասին: Այս օրհնության առիթով կթողարկվի նաև հուշամեդալ:

Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ մամլո ասուլիս՝ նվիրված Մյուռոնօրհնությանը, որի ընթացքին լրագրողների հարցերին պատասխանեցին Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Խոսելով Սրբալույս Մյուռոնի խորհրդի մասին՝ Հովնան Սրբազանը նշեց. “Սրբալույս Մյուռոնն աստվածայինը խորհրդանշող հոգևոր ուժ է պարունակում իր մեջ: Սրբալույս Մյուռոնի օծումով քրիստոնյան իր մեջ զգում է աստվածայինի առատացումը, որը և մարդուն առաջնորդում է դեպի բարի և դեպի բարոյականով հարուստ կյանք: Հայի համար Սրբալույս Մյուռոնն իր մեջ բովանդակում է Եկեղեցու առաքելականության ոգին, մեր հայրերի հավատքի ձայնը և ամենից կարևորը՝ հոգևոր վերածնունդը դարձնում մշտական մղումը մեր էության, որը պտղաբերումն է Սուրբ Հոգու ներազդեցության”:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ԾԱՂԿԱՆՑ ՀՅՈՒԹԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԿՍՎԵՑ ՄՅՈՒՌՈՆԻ ԵՓՈՒՄԸ

Սեպտեմբերի 14-ին՝ Խաչվերացի տոնի երեկոյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ անդաստանի արարողություն, որին հաջորդեց Սրբալույս Մյուռոնի ծաղկանց նյութերի օրհնությունը:

Հոգևորականների հանդիսավոր թափորը Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ և բազմաթիվ հավատացյալների ուղեկցությամբ դուրս գալով Մայր Տաճարից՝ պտտվեց նրա շուրջը, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս կողմերը, վարդաջուր ցողվեց հավատացյալ հայորդիների վրա՝ իբրև նշան օրհնության:

Այնուհետև թափորն ուղղվեց դեպի Հին Վեհարանի բակը, որտեղ կատարվելու էր Ս. Մյուռոնի ծաղկանց նյութերի օրհնությունը և սկսվելու էր եփումը: Ընթերցվածքներից և աղոթքներից հետո հոգեզմայլ շարականների երգեցողության ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ կատարվեց Մյուռոնի բաղադրիչ նյութերի օրհնությունը, որից հետո դրանք միախառնվեցին կաթսայի մեջ, ու սկսվեց եռօրյա եփումը:

Արարողության ավարտին ներկաներին իր Հայրապետական պատգամն ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ կոչ անելով ամենքին հարատև աղոթելու և հայցելու, որ Տերը Սուրբ Հոգու շնորհները հեղի Սրբալույս Մյուռոնի մեջ և հրաշագործ զորությամբ օժտի այն, որպեսզի այդ յուղի դրոշմամբ հայորդիները մաքրվեն բոլոր տեսակի մեղքերից, և սրբությունը լինի զարդը նրանց անձերի:

Մյուռոնի նյութերի եփման ողջ ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները սաղմոսերգությամբ շարունակաբար հսկում կատարեցին Ս. Մյուռոնի կաթսայի մոտ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Սեպտեմբերի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Հին Վեհարանի շենքի ներքո "Հայաստան՝ երկիր դրախտավայր" խորագրով տեղի ունեցավ ուխտավոր լուսանկարիչ Տաթևիկ Մելքոնյանի լուսանկարների անհատական ցուցահանդեսի բացման արարողությունը: Ցուցահանդեսում ներառված են Հայաստանի Հանրապետության, Արցախի և Արևմտյան Հայաստանի եկեղեցիներն ու սրբավայրերը պատկերող շուրջ 100 լուսանկարներ:

Միջոցառումը սկսվեց միասնական "Հայր մեր"-ով, որից հետո բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների և արխիվի տնօրեն Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը: Տեր Հայրը ներկաներին փոխանցեց Նորին Սրբության օրհնությունն ու բարեմաղթանքը, շնորհավորեց լուսանկարիչ Տաթևիկ Մելքոնյանին առաջին անհատական ցուցահանդեսի բացման առիթով և անդրադարձավ եկեղեցիների և մեր սրբությունների ճանաչողության և պահպանման նշանակությանը յուրաքանչյուր հայորդու կյանքում: Տեր Ասողիկը շեշտեց, որ Տաթևիկ Մելքոնյանը որպես ուխտավոր այցելել է եկեղեցական բազում սրբավայրեր և իր հոգու աչքերով տեսածի արդյունքն ենք վայելում այս բազում լուսանկարների միջոցով:

Այնուհետև ներկաներին դիմեց Մայր Աթոռի մշակութային բաժնի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Կարեն Մաթևոսյանը, ով հորդորեց ներկաներին անպայման այցելել մեր սրբավայրերը և հաղորդ դառնալ մեր նախնիների թողած հարուստ մշակութային ժառանգությանը: Նույն հորդորը ներկաներին ուղղեց նաև Մայր Աթոռի "Խրիմյան" թանգարանի պատասխանատու, արվեստաբան Շահեն Խաչատրյանը: Վերջում իր երախտագիտության և շնորհակալական խոսքն ասաց ցուցահանդեսի հեղինակը:

Գեղարվեստական կատարումներով հանդես եկավ "Լույս" վոկալ կվինտետը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԲԱՑՎԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ ԳՈՐԾՈՂ “ՇՈՂԱԿԱԹ” ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ

Սեպտեմբերի 26-ին Երևանում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ “Շողակաթ” հեռուստաընկերության նոր մասնաշենքի պաշտոնական բացման հանդիսավոր արարողությունը: Նոր շենքը վերանորոգվել և բարեզարդվել է ազգային բարերարներ տեր և տիկին Վաչե և Թամար Մանուկյանների հովանավորությամբ:

Հանդիսությանը բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քհն. Մելիքյանը՝ անդրադառնալով “Շողակաթ” հեռուստաընկերության անցած ուղուն, նպատակներին և ապագա ծրագրերին: Տեր Հայրն ուրախությամբ արձանագրեց, որ “Շողակաթի” բազում հոգևոր ծրագրեր արդեն իսկ սիրվել են մեր ժողովրդի կողմից և ընդգծեց Հայ Եկեղեցու քարոզչության գործում ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործման կարևորությունը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց նոր շենքի օրհնության կարգ, որից հետո Նորին Սրբությունն իր պատգամն ուղղեց ներկաներին: Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին՝ շենքի ձեռքբերման գործում իր աջակցության համար, տեր և տիկին Վաչե և Թամար Մանուկյաններին, շինարարներին և “Շողակաթ” հեռուստաընկերության աշխատակիցներին՝ հույս հայտնելով, որ վերանորոգված այս շինության շնորհիվ “Շողակաթ” հեռուստաալիքն իր հաղորդումներով ու ծրագրերով միշտ սպասված ու սիրելի կլինի յուրաքանչյուր ընտանիքում:

“Գոհունակություն է Հայրապետիս համար հաստատել, որ “Շողակաթ” հեռուստաընկերությունը շուրջ մեկ տասնամյակ իր գովելի ավանդն է բերում մեր զավակաց քրիստոնեական դաստիարակությանը, հոգևոր, ազգային ու մշակութային կյանքի զորացմանը: Հեռուստաընկերության հաղորդումները մասամբ հասանելի են նաև Մփյուռքի մեր զավակներին Հանրային հեռուստատեսության Առաջին ալիքի միջոցով: Հեռուստաընկերության աշխատակիցները տարիների ընթացքին լուսաբանել ու մատչելիորեն ներկայացրել են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությունը, սրբազան ծեսը, տոներն ու խորհուրդները, մեր հոգևոր մշակույթն ու հայրենավանդ արժեքները: Մեծ է “Շողակաթ” հեռուստաընկերության ծառայությունը մեր Եկեղեցու զավակաց սրտերում քրիստոնեական մեր սուրբ հավատքի զորացմանը և հոգևոր գիտելիքների ձեռքբերմանն ի նպաստ: Առավել կարևորվում է հեռուստաընկերության գործունեությունը, երբ մեր Եկեղեցին տակավին զգում է անհրաժեշտությունը բավարար թվով հոգևորականների”,- նշեց Հայոց Հայրապետը:

Ներկաներին իր սրտի խոսքն ուղղեց նաև ազգային բարերար տիար Վաչե Մանուկյանը: Նա ընդգծեց Հայ Եկեղեցու քարոզչության անհրաժեշտությունը յուրաքանչյուր հայ մարդու համար և հույս հայտնեց, որ հաջորդ տարի Վեհափառ Հայրապետի օրհնությամբ “Շողակաթ” հեռուստաընկերության հաղորդումները կսփռվեն նաև արբանյակային կապով՝ հնարավորություն ընձեռելով աշխարհասփյուռ հայությանը հաղորդ դառնալու Հայ Եկեղեցու և մեր Հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին: Վաչե Մանուկյանը շեշտեց, որ քրիստոնեական դաստիարակությունը հատկապես կարևոր է մեր մատաղ սերնդի համար, ուստի իրենք ուրախ են, որ մասնակից են Մայր Աթոռի հովանու ներքո գործող հեռուստաընկերության աջակցմանը:

Այնուհետև ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը և Վաչե Մանուկյանը հանդիսավոր կերպով կտրեցին մուտքի կարմիր ժապավենը: Ներկաները շրջեցին հեռուստաընկերության շենքում, ծանոթացան նոր շենքի պայմաններին և հնարավորություններին:

Հանդիսությանը մասնակցում էին բարձրաստիճան պետական այրեր, քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, Մայր Աթոռի միաբաններ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը, ազգային բարերարներ, Մյուռոնօրհնության առիթով Ս. Էջմիածին ժամանած քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ և բազմաթիվ հյուրեր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՕԾԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ Ս. ՎԱՐԴԱՆ ԵՎ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՏՈՒՌ -ՄԿՐՏԱՐԱՆԸ

Սեպտեմբերի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ տեղի ունեցավ նորակառույց Ս. Վարդան և Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարանի օծման արարողությունը: Մատուռ-մկրտարանը կառուցվել է լոնդոնաբնակ բարերար Արմեն Սարգսյանի հովանավորությամբ, ճարտարապետն է Ջիմ Թորոսյանը:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի միաբանների, Ս. Էջմիածին ժամանած ազգային բարերարների և քույր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ "Հրաշափառի" ներքո հանդիսավոր թափորով մուտք գործեց նորակառույց մատուռ-մկրտարան: Հոգեպարար շարականների և սաղմոսների երգեցողության ներքո Նորին Սրբությունը կատարեց մատուռ-մկրտարանի օծման արարողությունը: Վեհափառ Հայրապետը Սրբալույս Մյուռոնով օծեց նորակառույց մկրտարանի Ս. Սեղանը, չորս ավետարանիչների անունները կրող խորանի սյուները և Սուրբ Ավազանները: Օծման արարողությունից հետո Վեհափառ Հայրապետն իր ուրախությունը հայտնեց նոր մկրտարանի օծման առիթով՝ հույս հայտնելով, որ նրա Սուրբ Ավազաններում բազում հայորդիներ պիտի մկրտվեն՝ դառնալով մեր Եկեղեցու և մեր Հայրենիքի արժանավոր զավակները:

"Մայր Տաճարում աղոթական կյանքի պահանջներից թելադրված՝ ժամանակին մկրտարանը հաստատվեց Ղազարապատ շենքի մի հատվածում, քանզի Խորհրդային շրջանում հնարավոր չէր նոր մկրտարան կառուցել: Ուրախության առանձնակի զգացումով են համակված այսօր մեր հոգիները, և մենք փառք ենք մատուցում Բարձրյալին, որ նոր աղոթատուն է հառնել Մայր Տաճարի հայացքի ներքո, հովանու ներքո Միածնաէջ մեր սրբօրրանի, որն առավել պայծառություն է հաղորդում պատմական և նվիրական մեր Մայրավանքին, պայծառությունը՝ մեր ազատ կյանքի, մեր վերականգնված պետականության:

Նորաշուք, վարդաքար մկրտարանը մեր աղոթքներն է բարձրացնելու երկինք Սուրբ Վարդան Զորավարի և Սուրբ Հովհաննես Մկրտչի բարեխոսությամբ, ովքեր եղան մեր Տիրոջ փառքի վկաները, երանելի սրբերը, չարի դեմ հաղթանակով պատրաստեցին Տիրոջ ճանապարհները, որպեսզի աշխարհում Աստծո օրհնությամբ ծնունդ առնեն բարի պտուղներ: Սուրբ Հովհաննես Մկրտչի և Սուրբ Վարդանի պաշտելի մասունքները՝ ամփոփված մեր հայրենի հողում, սրբացնում են մեր երկիրը և նրանց վրա կառուցված եկեղեցիները, դարեր շարունակ օրհնում մեր կյանքը: Արդարն, կառուցվող ամեն աղոթատան հետ Աստված ավելի է մոտենում մեր ժողովրդին, և երկնային օրհնությունը առավել առատանում մեր կյանքում",- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց մկրտարանի բարերար Արմեն Սարգսյանին, և ի գնահատություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին բերած իր եկեղեցաշեն ծառայությունների՝ նրան շնորհեց Հայ Առաքելական Եկեղեցու “Ս. Գրիգոր Լուսավորիչ” պատվո բարձր շքանշանը՝ մաղթելով, որ Տերը երկար ու երջանիկ օրեր և ամենայն հաջողություններ պարգևի բարերարին և նրա ընտանիքին:

Մատուռի օծման արարողությանը ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, մշակույթի և գիտության գործիչներ, ազգային բարերարներ և բազմաթիվ ուխտավոր հայորդիներ:

Արարողության ավարտին Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀՈԳԻՆԵՐԻ ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Սեպտեմբերի 27-ին Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղի ունեցավ հոգեհանգստյան կարգ Մեծ եղեռնի զոհերի հոգիների հանգստության համար: Մինչ արարողությունը ծաղկեպսակ դրվեց հուշահամալիրում:

Հոգեհանգստի ընթացքում հայոց նահատակների հոգիների խաղաղության համար իրենց մայրենի լեզուներով առ Աստված աղոթեցին նաև Մյուռոնօրհնության տոնակատարությունների առիթով Մայր Աթոռ ժամանած քրիստոնեական քույր Եկեղեցիների ներկայացուցիչները:

Հոգեհանգստին մասնակցում էին Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական Աթոռների ներկայացուցիչները, թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ազգային բարերարներ և բազմաթիվ ուխտավոր հայորդիներ: Հայոց Հայրապետին քույր Եկեղեցիներից ընկերակցում էին Օրենբուրգի և Բուզուրսկի Վալենտին միտրոպոլիտը՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցուց, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Արևելյան Եկեղեցիների Քահանայապետական Կոնգրեգացիայի պրեֆեկտ կարդինալ Լեոնարդո Սանդրիի, Բենիամին եպիսկոպոս Մենուֆեն՝ Ղպտի Ուղղափառ Եկեղեցուց, Եվստաթիոս Մաթա Ռոհամ միտրոպոլիտը՝ Ասորի Ուղղափառ Եկեղեցուց, Հնդիկ Մալանկարա Եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Թոմաս Աթանասիուս միտրոպոլիտի, Անգլիկան Եկեղեցուց Ջեոֆրի եպիսկոպոս Ռաուելը, ինպես նաև ներկայացուցիչներ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդից, “Կրոններն աշխարհում խաղաղության համար” կազմակերպությունից, Զմմառի Կաթոլիկ Հայոց Պատրիարքությունից և Մխիթարյան միաբանությունից:

Վերջում միջեկեղեցական պատվիրակություններն այցելեցին նաև Ցեղասպանության թանգարան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂԹՈՔ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սեպտեմբերի 27-ին ժամը 17-ին, Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում տեղի ունեցավ Էկումենիկ աղոթքի արարողություն՝ բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Ամենասրբություն Բարդուղիմեոս Ա-ի:

Էկումենիկ արարողության ընթացքում ներկաներին Հայրապետական իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց, որ իր հրավերին ընդառաջ՝ քույր Եկեղեցիների և միջազգային էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչները Մյուռոնօրհնության առիթով Ս. Էջմիածին են ժամանել՝ միասնաբար աղոթելու և իրենց զորակցությունը հայտնելու Հայոց Եկեղեցուն և մեր ժողովրդին:

"*Հայ Եկեղեցու նշանավոր Հայրապետներից Մկրտիչ Ա Խրիմյան Կաթողիկոսը Քրիստոսի Մեկ և Տիեզերական Եկեղեցին պատկերավոր կերպով համեմատել է ծաղկեփնջի հետ, ուր ամեն մի ծաղիկ ունի իր ուրույն գույնը, իր ուրույն երանգը և իր ուրույն բույրը՝ Քրիստոսի սիրո կապով մեկտեղված: Սուրբ Հոգու անուշաբույրը սփռելու ենք կոչված մենք, սիրելի հոգևոր եղբայրներ, Քրիստոսի Սուրբ Եկեղեցիներս: Հարգելով մեր մշակութային տարբերությունները՝ յուրաքանչյուրս մեր ուրույն կարողությամբ, բույրով և վկայությամբ կոչված ենք նեցուկ կանգնելու միմյանց և որպես մեկ միասնական ուժ "առողջ և սուրբ յարտաքին և ի ներքին ախտից"՝ ծառայելու արարչաստեղծ աշխարհին, որը վտանգված է պատերազմներից, ահաբեկչություններից, բնական և բարոյական աղետներից:...Հայ Եկեղեցու կյանքում կարևոր այս տոնախմբությանը Ձեր մասնակցությունը եղբայրական սիրո դրսևորում է՝ մեր բարեկամությունն ավելի զորացնելու տեսիլքով, որպես Տիրոջ տնտեսության գործակիցներ: Այսօրինակ համախմբումները լավագույն առիթ են միմյանց ավելի լավ ճանաչելու և փոխադարձ հոգևոր արժեքները գնահատելու համար՝ մեր Եկեղեցիների երկխոսության և համագործակցության ճանապարհին",*- նշեց Գարեգին Բ Կաթողիկոսը:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում կոչ արեց աղոթելու աշխարհի խաղաղության և հաշտության համար, պատերազմներից տուժածների, կարոտյալների, նեղյալների և հազարավոր գաղթականների համար, որպեսզի Աստված զորացնի եղբայրական սիրո ոգին մարդկանց սրտերում: Նորին Սրբությունը հորդորեց աղոթել նաև երկրների ղեկավարների, Եկեղեցիների պետերի համար՝ հայցելով Սուրբ Հոգու շնորհները նրանց համար՝ առաջնորդելու իրենց հավատացյալ ժողովուրդներին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հրավիրեց Մյուռոնօրհնության առիթով Հայաստան և Ս. Էջմիածին եկած Տիեզերական Պատրիարքին՝ իր պատգամն ուղղելու

ներկաներին: Նորին Ամենասրբությունը շնորհակալություն հայտնեց Գարեգին Բ Կաթողիկոսին հրավերի համար և անդրադարձավ էկումենիկ շարժման կարևորությանը՝ ընդգծելով Հայ Առաքելական Եկեղեցու մեծ դերակատարությունը էկումենիկ շարժման մեջ:

“Կա՞ մեկը, որ չի կարող փառաբանել այս օրհնյալ ազգի գերբնական ավանդության ու հարուստ մշակույթի շատ և բազմազան կողմերը: Կա՞ մեկը, որ չի կարող հիանալ այս երկրի աստվածաբանությամբ և հոգեղինությամբ, Ս. Պատարագով և վանականությամբ, ինչպես նաև երաժշտությամբ և ծեսով: Ի դեպ, այս արարողությունն իսկ համապատասխանում է այն էկումենիկ ոգուն և ջերմությանը, որը բնորոշ է ձեր ժողովրդին: Սակայն, վերջին հաշվով, այս բոլոր հատկանիշները ոչ միայն հղկել են ձեր ժողովրդին, այլև հարստացրել են ամբողջ աշխարհը: Եվ դրանք են, որ դարերի ընթացքում պաշտպանել են ձեզ ճգնաժամերի և մեծ արհավիրքների ժամանակ”,- նշեց Բարդուղիմեոս Ա Պատրիարքը:

Էկումենիկ արարողությանը ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ կառավարության անդամներ, ԱԺ պատգամավորներ, մշակույթի և գիտության գործիչներ և ավելի քան 25 ներկայացուցիչներ Արևելյան Ուղղափառ, Օրթոդոքս, Կաթոլիկ, Անգլիկան և այլ քրիստոնեական Եկեղեցիներից և հարանվանություններից, էկումենիկ և միջկրոնական կազմակերպություններից, ինչպես նաև պետական պաշտոնյաներ և Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՕՐՀՆԵՑ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԸ

Սեպտեմբերի 28-ը նշանակալից օր էր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և աշխարհասփյուռ հայ ժողովրդի կյանքում, քանզի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ 21-րդ դարի երկրորդ Մյուռոնօրհնեքը:

Վարագա Ս. Խաչի տոնի առավոտյան հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ներկայությամբ Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Ամենասրբություն Բարդուղիմեոս Ա-ի և Մյուռոնօրհնության առիթով Սուրբ Էջմիածին ժամանած թեմական առաջնորդների, ազգային բարերարների, քույր Եկեղեցիների ներկայացուցիչների, ուխտավոր բազմահազար հայորդիների հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց Միածնաէջ Մայր Տաճարում: Պատարագիչն էր Հունաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանը: Հընթացս Ս. Պատարագի Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագի ավարտին Մյուռոնի կաթսայի առջև կատարվեց ձիթայուղի օրհնության վերջին աղոթքը, որից հետո Մայր Տաճարի զանգերի ղողանջների, ինչպես նաև սաղմոսների և շարականների երգեցողության ներքո Սրբալույս Մյուռոնի կաթսան տեղափոխվեց Ս. Տրդատի բաց խորան:

Երեկոյան ժամը 17.00-ին Մայր Աթոռի Ս. Տրդատի բաց խորանում, տեղի ունեցավ Մյուռոնօրհնության նվիրական արարողությունը: “Հրաշափառի” երգեցողության և Մայր Տաճարի զանգերի ավետաբեր ղողանջների, հազարավոր հավատացյալների բազմության ծափողջյունների ներքո Հայրապետական շքեղաշուք թափորը՝ խաչվառների և խաչերի առաջնորդությամբ Մայր Տաճարից շարժվեց դեպի բաց խորան: Հայրապետական ամպհովանու ներքո Հայոց Հայրապետի հետ ընթանում էին ՀՀ նախագահ տիար Սերժ Սարգսյանը և Նորին Ամենասրբություն Բարդուղիմեոս Ա Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքը: Վեհափառ Հայրապետի ընթերականերն էին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից Տ. Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության լուսարարապետ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանը: Հայրապետական թափորի մեջ Մյուռոնօրհնության արարողության ժամանակ գործածվող սրբազան մասունքները, սրբությունները և Մյուռոնի նյութերը կրում էին Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչ Տ. Շահան արքեպիսկոպոս Սվաճյանը, Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանը, Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանը, Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքե-

պիսկոպոս Կճոյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը և Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը:

Հայրապետական թափորով տարվող Հայոց Եկեղեցու նվիրական սրբություններից էին Աստվածամուխ Ս. Գեղարդը, Կենաց Խաչը՝ Տիրոջ Խաչափայտի մասունքով, և Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը: Նորին Սրբությանը բաց խորանում սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը և Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Ս. Տրդատի բաց խորանում Մյուռոնօրհնեքը սկսվեց միասնական "Տերունական" աղոթքով: Սրբազան Հայրերն ընթերցեցին հատվածներ Հին և Նոր Կտակարաններից, ինչպես նաև աղոթքներ՝ նվիրված Ս. Մյուռոնին:

Նորին Սրբությունը նախ Մյուռոնի կաթսայի մեջ լցրեց 40-ից ավել ծաղիկներից պատրաստված հյութը, ապա բալասանը: Քուվեյթում և Արաբական Միացյալ Էմիրություններում կաթողիկոսական փոխանորդ Տ. Կորյուն արքեպիսկոպոս Պապյանը, ի նշան Հայոց Եկեղեցու միասնականության, Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց Անթիլիասում օրհնված նոր Մյուռոնը: Սրբազան Ավանդության համաձայն՝ Ամենայն Հայոց Հայրապետը նոր Մյուռոնին խառնեց նաև հինը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռքով օրհնված Սրբալույս Մյուռոնի զորությունը փոխանցելով նորին:

Ապա Վեհափառ Հայրապետը նոր Մյուռոնը տյառնագրեց և օրհնեց Կենաց Խաչով, Աստվածամուխ Ս. Գեղարդով և հայոց հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով:

Սրբազան արարողության ընթացքում Նորին Սրբությունն իր Հայրապետական պատգամն ուղղեց համայն հայությանը՝ անդրադառնալով մեր ժողովրդի և եկեղեցու կյանքում Ս. Մյուռոնի խորհրդին և նշանակությանը:

Նորին Սրբությունն այնուհետև Ս. Խորան հրավիրեց Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքին: Ամենայն Հայոց Հայրապետը և Նորին Ամենասրբությունը ներկաներին օրհնեցին Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով և Ս. Գեղարդով:

Այնուհետև Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը հրավիրեց Մյուռոնօրհնության կնքահայր, Մայր Աթոռի բարերար տիար Սարգիս Բեդևյանին՝ համբուրելու Ս. Մյուռոնի կաթսան և ստանալու Սրբալույս Մյուռոնի օրհնությունը:

Արարողության ավարտին Հայրապետական հանդիսավոր թափորը հայրապետական մաղթերգի ներքո հավաքված հոծ բազմության միջով ուղղվեց դեպի Մայր Տաճար:

Մյուռոնօրհության սրբազան արարողությանը ներկա էին նաև ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, կառավարության անդամներ, ԱԺ պատգամավորներ, ազգային բարերարներ, մշակույթի և գիտության գործիչներ և բազում ուխտավոր հայորդիներ: Սրբազան արարողությանը քույր Եկեղեցիներից ներկա էին Օրենբուրգի և Բուզուրսկի Վալենտին միտրոպոլիտը՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցուց, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Արևելյան Եկեղեցիների Քահանայա-

պետական Կոնգրեգացիայի պրեֆեկտ կարդինալ Լեոնարդո Սանդրիի, Բենիամին եպիսկոպոս Մենուֆեն՝ Ղպտի Ուղղափառ Եկեղեցուց, Եվստաթիոս Մաթա Ռոհամ միտրոպոլիտը՝ Ասորի Ուղղափառ Եկեղեցուց, Հնդիկ Մալանկարա Եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Թոմաս Աթանասիուս միտրոպոլիտի, Գերասիմ միտրոպոլիտը՝ Վրաց Ուղղափառ Եկեցեցուց, Անգլիկան Եկեղեցուց Ջեոֆրի եպիսկոպոս Ռաուելը, ինպես նաև ներկայացուցիչներ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդից, "Կրոններն աշխարհում խաղաղության համար" կազմակերպությունից, Զմմառի Կաթոլիկ Հայոց Պատրիարքության ներկայացուցիչ Տ. Վարդան եպիսկոպոս Աշքարյանը և Մխիթարյան Միաբանություն վանահայր Հայր Եղիա Քիլաղպյանը:

Մինչև ուշ երեկո աշխարհի չորս ծագերից ժամանած բազում ուխտավոր հայորդիներ շարունակ այցելում էին Մայր Աթոռ՝ հպվելու Ս. Մյուռոնի կաթսային և ստանալու նոր Մյուռոնի օրհնությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՌՈՄԻ ԿԱԹՈԼԻԿ ԵՎ ՀՆԴԻԿ ՄԱԼԱՆԿԱՐԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մյուռոնօրհնեքի առիթով Մայր Աթոռ ժամանած Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակությանը՝ գլխավորությամբ Արևելյան Եկեղեցիների Քահանայապետական Կոնգրեգացիայի պրեֆեկտ կարդինալ Լեոնարդո Սանդրիի և ուղեկցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի ու Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի: Հանդիպմանը ներկա էին նաև Զմմառի Կաթոլիկ հայոց Պատրիարքության ներկայացուցիչ Տ. Վարդան եպիսկոպոս Աշքարյանը և Մխիթարյան Միաբանություն վանահայր Հայր Եղիա Քիլաղպյանը:

Հրաժեշտի հանդիպմանը Վեհափառ Հայրապետը կարդինալ Սանդրիի միջոցով ի Քրիստոս իր ողջույններն ու շնորհակալությունը փոխանցեց Հռոմի Բենեդիկտոս ԺԶ Պապին՝ Հայոց Եկեղեցու հանդեպ ցուցաբերած եղբայրական սիրո ու հարգանքի համար:

Իր հերթին կարդինալ Լեոնարդո Սանդրին ուրախություն հայտնեց Հայ Առաքելական և Կաթոլիկ Եկեղեցիների միջև առկա սերտ հարաբերությունների ու համագործակցության առիթով, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց Հայ Կաթողիկե Եկեղեցու նկատմամբ Հայոց Հայրապետի ուշադրության համար:

*
* *

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նաև Հնդիկ Մալանկարա քույր Եկեղեցու պատվիրակությանը՝ գլխավորությամբ Նորին Սրբազնություն դոկ. Թոմաս Աթանասիուս միտրոպոլիտի և ուղեկցությամբ հնդկահայոց հոգևոր հովիվ Տ. Օշական վարդապետ Գյուլզյուլյանի:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Մյուռոնօրհնեքի սրբազան արարողությանը նրանց բերած կարևոր մասնակցության համար՝ նշելով, որ Մյուռոնօրհնեքը կարևոր առիթ է քրիստոնյաների համախմբման՝ ի նշան քրիստոնեական սիրո և եղբայրության:

Նորին Սրբությունն իր եղբայրական բարեմաղթանքները փոխանցեց Հնդիկ Մալանկարա Եկեղեցու Հովվապետին և անդրադարձավ առաջիկա նոյեմբերին Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու 300-ամյակի առիթով Հնդկաստան կատարելիք Հայրապետական իր այցին, որի շրջանակներում նախատեսվում է նաև այցելություն Քերալա՝ Հնդիկ Մալանկարա Եկեղեցու հոգևոր կենտրոն:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը և գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆՈՐ ՕՐՀՆՎԱԾ Ս. ՄՅՈՒՌՈՆԸ ԲԱՇԽԵՑ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մյուռոնօրհնեքի առիթով Մայր Աթոռում համախմբված Հայ Առաքելական Եկեղեցու Հայաստանի և աշխարհասփյուռ հայոց թեմերի առաջնորդներին:

Հայոց Հայրապետը, ողջունելով եպիսկոպոսաց դասին, իր ուրախությունն ու գոհունակությունը հայտնեց, որ Աստծո ողորմությամբ միասնական աղոթքով սեպտեմբերի 28-ին կատարվեց Մյուռոնօրհնության նվիրական արարողությունը, և երկնային շնորհներն առատորեն հեղվեցին մեր Հայրենիքի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վրա:

Նորին Սրբությունն իր խոսքում նշեց, որ մխիթարական էր տեսնել, որ աշխարհի տարբեր ծայրերից բազում հավատավոր հայորդիներ էին ժամանել՝ իրենց ուխտը կատարելու և աղոթքն առ Աստված բարձրացնելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Ուրախալի էր նաև, որ Հայոց Եկեղեցու համար կարևոր այս իրադարձությանը ներկա էին քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, հայոց պետական ավագանին՝ գլխավորությամբ ՀՀ նախագահ տիար Սերժ Սարգսյանի:

Վեհափառ Հայրապետը նաև իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց Մյուռոնօրհնության նախապատրաստման հանձնախմբի ատենապետ, ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին և հանձնախմբի անդամներին՝ Մյուռոնօրհնության աշխատանքները լավագույնս կազմակերպելու, նրանց նախանձախնդիր և հետևողական ծառայությունների համար:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը թեմական առաջնորդներին բաշխեց գեղարդակերպ սափորներով նոր Մյուռոնը՝ մաղթելով, որ Տերը Ս. Հոգու շնորհներով զորացնի նրանց իրենց առաքելության մեջ՝ բարի արդյունքներ ապահովելու մեր Եկեղեցու պայծառության և ժողովրդի բարօրության համար:

Առաջիկա օրերին թեմական առաջնորդները կմեկնեն իրենց թեմեր՝ տանելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը և նորօրհնյալ Ս. Մյուռոնն իրենց բարեպաշտ հոտին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՎԱՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղի ունեցավ եպիսկոպոսաց խորհրդակցական հավաք:

Հավաքը սկսվեց “Հայր մեր”-ով, որից հետո Վեհափառ Հայրապետը, ողջունելով Մյուռոնօրհնության առիթով Ս. Էջմիածին ժամանած Հայաստանի և Սփյուռքի հայոց թեմերի առաջնորդներին և վանաբնակ բարձրաստիճան հոգևորականներին, Հայրապետական իր օրհնությունն ու գնահատանքը բերեց նրանց՝ մաղթելով Աստծո զորակցությունն իրենց առաքելության իրականացման գործում:

Հավաքին հրավիրված էր ԱԳՆ Սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեի նախագահ տիկին Հրանուշ Հակոբյանը: Նա եպիսկոպոսաց դասին ներկայացրեց ՀՀ Սփյուռքի նախարարության հայեցակարգը: Զեկույցում տիկին Հակոբյանը հանգամանալից անդրադարձավ նախարարության կառուցվածքին և ապագա ծրագրերին՝ ուղղված Հայաստան-Սփյուռք կապերի զորացմանը, հայապահպանությանը, հայրենադարձությանը և հայ ներուժի համախմբմանը: Զեկույցից հետո տիկին Հակոբյանը պատասխանեց եպիսկոպոսների հարցերին:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց տիկին Հրանուշ Հակոբյանին համապարփակ, մանրամասն զեկույցի համար՝ հաջողություններ մաղթելով նախարարության գործունեությանը:

Հավաքի օրակարգում էր նաև թեմական, ծխական տիպային կանոնադրության ուղենիշային փաստաթղթի նախագծի հարցը, որի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռի միաբան Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը՝ անդրադառնալով թեմերից ստացված առաջարկություններին:

Օրակարգում ընդգրկված էին նաև Հայ Եկեղեցու քարոզչական առաքելության կազմակերպմանը և ներեկեղեցական կյանքին առնչվող այլ հարցեր: Եպիսկոպոսաց հաջորդ խորհրդակցական հավաքը որոշվեց գումարել առաջիկա տարի նոյեմբեր ամսին:

Հավաքը փակվեց Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով և “Պահպանիչ” աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՕԾԵՑ ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱԼԱ ԳՅՈՒՂԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎ ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎԻ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Սեպտեմբերի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական շքախմբով մեկնեց Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ, ուր Ռոստովի մարզում հանդիսապետեց Մյասնիկյանի շրջանի Մեծ Սալա գյուղի Ս. Աստվածածին և Դոնի Ռոստով քաղաքի Ս. Խաչ հայկական եկեղեցիների օծման արարողությունները:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մովսես եպիսկոպոս Մովսիսյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, գավազանակիր Տ. Հովնան աբեղա Հակոբյանը, Ս. Գայանե վանքի հոգևոր սպասավոր Տ. Գրիգոր քահանա Տերտերյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Դիվանատան ներեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Պարույր քահանա Ավետիսյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրն Վիլեն Հակոբյանը, “Հորիզոն-95” ՍՊԸ-ի տնօրեն պրն Գագիկ Գալստյանը:

Ռոստովի օդանավակայանում Նորին Սբության գլխավորած պատվիրակությանը դիմավորեցին ՌԴ Հարավային Դաշնային շրջանում ՀՀ գլխավոր հյուպատոս Արարատ Գոմցյանը, ՌԴ Ռոստովի մարզի նահանգապետ Վլադիմիր Չուբը, մարզային իշխանության ներկայացուցիչներ, ինչպես նաև Ռուսաստանի հայոց թեմի հոգևոր դասի ու հայ համայնքի ներկայացուցիչները:

Աղ ու հացի և ողջույնի կարճատև արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը մեկնեց Մյասնիկյանի շրջանի Մեծ Սալա հայաբնակ գյուղ՝ կատարելու Ս. Աստվածածին եկեղեցու օծումը: Սուրբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1860-1867 թթ. դեռևս 1779 թ. Ղրիմից Դոն տեղափոխված անեցիների կողմից: Եկեղեցու օծումը կատարվել է 1867 թ.՝ ձեռամբ Գևորգ Դ Հայրապետի: Խորհրդային շրջանում՝ 1938 թվականից եկեղեցին փակվում է և վերածվում ցորենի պահեստի, հետագայում՝ գերիների բանտի, զինվորական հոսպիտալի: Եկեղեցու նորոգությունն սկսվում է 1992 թ. և շարունակվում մինչև 2004 թ.:

Գյուղում շրջանի ղեկավար Խաչատուր Անոսյանի ու Մեծ Սալայի գյուղապետ Գուրգեն Պոպովյանի գլխավորությամբ Հայոց Հայրապետին մեծ խանդավառությամբ դիմավորեց գյուղի բնակչությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատմական այցի ա-

ռիթով հազարավոր հայորդիներ կազմակերպել էին մեծ տոնախմբություն՝ ավանդական աղ ու հացով, ազգային նվագարանների երաժշտությամբ և հոգևոր ու ազգային երգերի կատարմամբ: Եկեղեցականների և ժողովրդի թափորով Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց եկեղեցի: Հանդիսավոր արարողությամբ Նորին Սրբությունն օծեց եկեղեցու Սուրբ Սեղանը, իսկ արարողությանը մասնակից Նավասարդ և Եզրաս Սրբազանները՝ խորանի չորս սյուները:

Հավարտ արարողության հայրական իր օրհնությունն ու պատգամը ներկաներին փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը, ընդգծելով Քրիստոսին աշխարհին պարգևած Աստվածամոր կերպարի և Եկեղեցու առաքելության նմանությունը, մասնավորապես նշեց. "*Սուրբ Աստվածածնի եկեղեցին, որ Սրբալույս Մյուռոնով այսօր վերաօծեցինք, պիտի կամրջվի Սուրբ Էջմիածնի ու աշխարհասփյուռ մեր եկեղեցիների հետ, նոր ավիշ ու արյուն պիտի ներարկի ձեր կյանքում: Այն պիտի դառնա ձեր ապավինության վայրը, ուր պիտի կառուցեք ու նորոգեք ազգային-եկեղեցական ձեր կյանքը՝ խարսխված Ավետարանական սուրբ պատգամների, մեր սուրբ հայրերի ժառանգության ու հայրենական ավանդների վրա:*

Սիրելի զավակներ Մեր, այս այցելության ընթացքին գոհունակությամբ ականատես դարձանք, թե որքան ջերմ է Ռոստովի մարզի հայության սերն ու նվիրումը հանդեպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և անկախ մեր Հայրենիքը, որ հաղթահարած բազմաթիվ փորձություններ ու տագնապներ, իր նոր կյանքն է կերտում: Փառք ենք վերառաքում առ Աստված, որ Դուք՝ ձեր հայրերի արժանի հետնորդներդ, շարունակում եք հավատարմորեն պահպանել ու զորացնել ազգային և եկեղեցական Ձեր կյանքը՝ արժանի գործերով նոր էջեր հավելելով համայնքային պատմությանը և մանավանդ փոխանցելով այդ ավանդները Ձեր զավակներին": Վեհափառը հորդորեց հայորդիներին պահպանել իրենց ազգային ինքնությունն ու լեզուն, հաստատուն մնալ իրենց հավատքի մեջ և անխախտ՝ հայրենի մեր երկրի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդեպ իրենց հավատարմության մեջ:

Նորին Սրբությունը նաև իր գնահատանքը հայտնեց թեմական առաջնորդին և թեմի սպասավորներին՝ իրենց ժրաջան ու նվիրյալ ծառայության համար: Նորաօծ եկեղեցուն Վեհափառն ընծայեց Սուրբ Էջմիածնից բերված Սուրբ Հաղորդության սկիհ:

Հավարտ իր խոսքի Հայոց Հայրապետը բարերար հայորդիներ Ալբերտ Սամուրգաշևին, Անդրեյ Նոր-Արևյանին և Վլադիմիր Պոպովյանին՝ ի գնահատություն եկեղեցու վերանորոգմանը բերած իրենց օժանդակության, Հայրապետական Սրբատառ Կոնդակով շնորհեց Հայ Եկեղեցու "Սուրբ Ներսես Շնորհալի" պատվո բարձր շքանշան:

Օծման արարողությունից հետո Վեհափառ Հայրապետն ուղևորվեց Դոնի Ռոստով, ուր հանդիսապետեց Ս. Խաչ հայկական եկեղեցու օծման արարողությունը:

Դարեր առաջ Հայաստանի պատմական Անի մայրաքաղաքից գաղթած հայորդիները, հաստատվելով Ղրիմում, իրենց հոգևոր կյանքի վերազարթոնքի փափագով կառուցում են Սուրբ Խաչ վանքը: Հետագայում վերահաստատվելով Դոնի հողում՝ հայերը վերստին սկսում են կառուցումը մեկ այլ Սուրբ Խաչ վանքի: 1783 թ. սեպտեմբերի 9-ին հայ համայնքի ջանքերով և օրհնությամբ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ

Հովսեփ արքեպս. Արղությանի կատարվում է վանքի հիմնարկեքը, իսկ օծումը կատարվում է 1792 թ.: 1924 թ. վանքը փակվում է, հետագայում ծառայեցվում որպես հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան: 2007 թ. ապրիլին տեղի իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ Սուրբ Խաչ եկեղեցին հանձնվում է Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմին:

Վեհափառ Հայրապետը Դոնի Ռոստով մեկնեց Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի Մեծ Սալա գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու օծման արարողությունից հետո: Եկեղեցու մատույցներում Վեհափառ Հայրապետին մեծ խանդավառությամբ դիմավորեցին հազարավոր հայորդիներ, ովքեր եկել էին ստանալու Հայոց Հայրապետի օրհնությունն ու հայրական պատգամը:

Մինչ արարողության սկսելը Ամենայն Հայոց Հայրապետին հանուն թեմի հոգևոր դասի և Դոնի Ռոստովի հայ համայնքի ողջունեց թեմակալ առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբության շնորհաբաշխ այցի և պատմական երկու եկեղեցիների օծման համար, որ պիտի նոր խանդավառություն և հույս պարգևի հավատավոր հայորդիներին՝ հրավիրելով ամենքին աղոթակից լինել հոգևոր դասին նորոգված և պայծառացած սուրբ տաճարի սրբագործման արարողության ընթացքին:

Շարականների, սաղմոսների և աղոթքների ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսն օծեց Ս. Խաչ եկեղեցու Սուրբ Սեղանը, այնուհետև Նավասարդ և Եզրաս Սրբազանները կատարեցին խորանի չորս սյուների և Մկրտության Ավազանի օծումը: Հավարտ արարողության Նորին Սրբությունն իր Հայրապետական պատգամն ու գնահատանքի խոսքն ուղղեց արարողությանը ներկա հազարավոր ռուսաստանաբնակ հայորդիներին. “*Սիրելիներ, այս եկեղեցու լույս Խորանից պիտի բաշխվեն ձեզ աստվածառաք շնորհները Սուրբ Հոգու, որպեսզի ամուր պահեք ձեր սրտերում լույս հավատքն ու աստվածսիրությունը և զորացնեք ազգային-եկեղեցական ձեր կյանքը՝ խարսխված Ավետարանական սուրբ պատգամների, մեր սուրբ հայրերի ժառանգության ու հայրենական ավանդների վրա: Եվ այս եկեղեցու Սուրբ Ավազանից Մկրտության շնորհներով և Սրբալույս Մյուռոնի դրոշմով պիտի ծնվեն մեր ժողովրդի հավատավոր նոր զավակներ՝ ապրելու հայրենասիրությամբ ու նվիրումով հանդեպ մեր Սուրբ Եկեղեցին, որ անսասանելի է՝ որպես “սյուն և հաստատություն ճշմարտության”: Թող այս սուրբ եկեղեցին միշտ օրհնության աղբյուր և տուն ապավինության լինի Ռոստովի հայ համայնքի համար: Նորաօծ այս եկեղեցին այսուհետ առավել օրհնությամբ պիտի լցնի ձեր ազգային-եկեղեցական կյանքը, որ պիտի արդյունավորեք հայրենանվեր և եկեղեցաշեն նորանոր իրագործումներով”,-* ասաց Նորին Սրբությունը՝ հորդորելով ներկաներին Քրիստոսով զորեղ պահել իրենց հավատը, հաստատուն մնալ իրենց հայրերի հոգևոր, ամուր հաստատած հիմների վրա, նախանձախնդիր լինել ազգային ավանդույթների, լեզվի և բարքերի պահպանության մեջ:

Նորին Սրբությունը նաև Հայրապետական իր օրհնությունը բերեց արարողությանը ներկա ՌԴ Ռոստովի մարզի նահանգապետ Վլադիմիր Չուբին: Ի նշան գնահատանքի Հայ Եկեղեցուն, մեր Երկրին ու ժողովրդին մատուցած օգտաշատ ծառայությունների և

հայ հոգևոր ու մշակութային ժառանգության հանդեպ հոգածու վերաբերմունքի, Վեհափառ Հայրապետը նրան շնորհեց “Ս. Սահակ-Ս. Մեսրոպ” պատվո բարձր շքանշան: Այս առիթով Հայրապետական Սրբատառ Կոնդակն ընթերցեց Տ. Վահրամ քահանա Մելիքյանը: Կոնդակում մասնավորապես ասված է. “*Այսօր առիթ ունենք Մեր բարձր գնահատանքը հղել Ձեզ՝ Ռոստովի հայկական Սուրբ Խաչ եկեղեցու վերաբացման ու բարեզարդման գործում Ձեր կարևոր ավանդի համար: Փառաբանական աղոթքն է Մեր շուրթերին, որ պատմական սրբավայրը, ամբողջապես նորոգված, վերստին կոչվում է սրբազան իր առաքելությանը՝ ծառայելու Ռոստովի հայ համայնքի հոգևոր ու ազգային կյանքի պայծառությանը, հոգևոր կենաց հացը մատուցելու բարեպաշտ հավատացյալներին և քրիստոնեական լույսը տարածելու մարդկանց հոգիներում* (տե՛ս էջ 30):

Շքանշանի հանձնումից հետո իր շնորհակալական խոսքն ասաց Ռոստովի նահանգապետը՝ անդրադառնալով նաև հայ և ռուս ժողովուրդների բարեկամությանը և Ռոստովի մարզում հայ համայնքի կարևոր դերակատարությանը:

Արարողությանը ներկա էին ՌԴ Ռոստովի մարզի մարզային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ՝ գլխավորությամբ Ռոստովի մարզի նահանգապետ Վլադիմիր Չուբի և Դոնի Ռոստովի քաղաքապետ Միխայիլ Չերնիշևի, Ռուս Ուղղափառ Եկեղեցու Ռոստովի և Նովոչերկասկի արքեպիսկոպոս Պանտելեյմոնը, ՌԴ Հարավային Դաշնային շրջանում ՀՀ գլխավոր հյուպատոս Արարատ Գոմցյանը, բազմաթիվ բարեպաշտ հայորդիներ:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐՄԵՆ ԵՎ ՆՈՒՆԵ ՍԱՐԳՍՅԱՆՆԵՐԻՆ “Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ” ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՑ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱՐՄԷՆ ԵՒ ՆՈՒՆԷ ՍԱՐԳՍԵԱՆՆԵՐ ՈՐ Ի ԼՈՆԴՈՆ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտագին բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ հաւատաւոր մեր ժողովրդի արժանաւոր զաւակներիդ:

Աստուածակառոյց Սուրբ Էջմիածնում, մեր նուիրական սրբօրրանում Սրբալոյս Միւռոնի օրհնութեան նախօրեակին ուրախութիւնն ունենք օծումը կատարելու Ձեր բարերարութեամբ կառուցուած Սուրբ Վարդան եւ Սուրբ Յովհաննէս Մկրտիչ մատուռ-մկրտարանի եւ այս առիթով գնահատանքի Մեր խօսքը բերելու Ձեզ, որ հաւատաւոր հոգով եւ հայրենանուէր ու ազգասէր ոգով ծառայում էք մեր Հայրենիքին ու ժողովրդին:

Մեծայարգ Տիար Սարգսեան, տարիներ առաջ լինելով Հայաստանի նորանկախ Հանրապետութեան Վարչապետ եւ ՀՀ դեսպան Մեծ Բրիտանիայում՝ Դուք աննուազ ջանքեր էք բերել հայրենի մեր պետականութեան ամրապնդմանն ու միջպետական կապերի ձեւաւորմանը, մեր երկրի առաջընթացին եւ աշխարհասփիւռ մեր ժողովրդի բարօր ու ծաղկուն գալիքի կառուցմանը: Ուրախութիւն է Հայրապետիս համար հաստատելը, որ Ձեր կեանքի ընթացքը Տիրոջ օրհնութեամբ արդիւնաւոր է ազգային-եկեղեցանուէր գործերի բարի ձեռքբերումներով, որոնց պսակը Սուրբ Վարդան եւ Սուրբ Յովհաննէս Մկրտիչ մատուռ-մկրտարանն է՝ գեղեցկակառոյց բարձրացած Մայր Տաճարի կողքին: Մյուռոնօրհնութեան շնորհանորոգ օրը իր դռները բացած հաւատա-

ցեալ ժողովրդի առջեւ՝ նոր աղօթատունը պիտի ծառայի մեր հոգեւոր կեանքի պայծառութեանը: Մատուռ-մկրտարանի սուրբ աւազանից Սուրբ Հոգու դրոշմով նոր ծնունդ պիտի առնեն մեր ժողովրդի զաւակները, որպէսզի իբրեւ անդամները Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ լինեն հաւատարիմ հետեւորդները մեր Տիրոջ եւ նրա Սուրբ Աւետարանի եւ իրենց արդար ու բարի գործերի արգասիքները բերեն հոգեւոր եւ ազգային մեր կեանքին:

Յարգարժան Տէր եւ Տիկին Սարգսեաններ, մեր Սուրբ Եկեղեցուն եւ հաւատաւոր ժողովրդին մատուցած Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մենք վստահ ենք, որ նոյն եկեղեցասիրութեամբ ու էջմիածնասիրութեամբ, քաջեռանդ ոգով Դուք պիտի շարունակէք Ձեր հաւատքը վկայել ազնիւ ու բարեպաշտ կեանքով եւ առաքինի գործերով:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը շնորհի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին կեանքի քաջառողջ ու արեւշող բազում օրեր եւ պարգեւի Ձեզ ամենայն բարիք եւ նոր յաջողութիւններ:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 27-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 502

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԼԱԴԻՄԻՐ ՉՈՒԲԻՆ “Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ” ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԼԱԴԻՄԻՐ ՉՈՒԲ ՈՐ Ի ՌՈՍՏՈՎ, ՌԴ

Յարգարժան պրն. Վլադիմիր Չուբ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ ռուս ժողովրդի արժանաւոր զաւակիդ, Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքները:

Այսօր առիթ ունենք Մեր բարձր գնահատանքը յղել Ձեզ՝ Ռոստովի հայկական Սուրբ Խաչ եկեղեցու վերաբացման ու բարեզարդման գործում Ձեր կարեւոր աւանդի համար: Փառաբանական աղօթքն է Մեր շուրթերին, որ պատմական սրբավայրը ամբողջապէս նորոգուած, վերստին կոչուում է սրբազան իր առաքելութեանը՝ ծառայելու Ռոստովի հայ համայնքի հոգեւոր ու ազգային կեանքի պայծառութեանը, հոգեւոր կենաց հացը մատուցելու բարեպաշտ հաւատացեալներին եւ քրիստոնէական լոյսը տարածելու մարդկանց հոգիներում:

Ձեր ազնիւ ու աստուածահաճոյ հովանաւորութեամբ նաեւ իր յետագայ գործունէութիւնն է շարունակելու հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամութեան թանգարանը, որ մեծապէս պիտի նպաստի նոր սերունդների կողմից հաւատակից մեր ազգերի պատմութեան ու բարեկամութեան արժեւորմանը՝ նոր ձեռքբերումներով հարստացնելու եւ բարեզարդելու դարերի ընթացքում նուիրագործուած եղբայրութիւնն ու ջերմ յարաբերութիւնները մեր երկրների ու ժողովուրդների:

Գովարժան է նաեւ Ձեր հետեւողական աջակցութիւնը Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ տնտեսական կապերի խորացմանն ու արդիւնաւորմանը եւ մեր երկու պետութիւնների բազմակողմանի հարաբերութիւնների առաւել զօրացմանը: Ձեր գործերով Դուք արժանապէս վաստակել էք անկեղծ սէրն ու երախտագիտութիւնը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի թեմակալ առաջնորդի եւ Ռոստովի հաւատաւոր հայութեան, որոնց ազնիւ փափագն է Հայրապետական պարգեւով գնահատուած տեսնել Ձեզ:

Ի գնահատութիւն մեր Եկեղեցուն, մեր Երկրին ու հաւատաւոր ժողովրդին մատուցած Ձեր օգտաշատ ծառայութեանց եւ հայ հոգեւոր ու մշակութային ժառանգութեան հանդէպ հոգածու վերաբերմունքի, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս Եպիսկոպոս Ներսիսեանի

խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած Իր օրհնութեան ներքոյ նորանոր յաջողութիւններ պարգեւի Ձեզ պատասխանատու Ձեր ծառայութեան մէջ՝ ի շինութիւն Ռուսիոյ օրհնեալ Երկրի եւ ի բարօրութիւն աստուածասէր ռուս ժողովրդի:

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ շնորհների եւ Բարձրեալի առատ ողորմութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 4-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 487

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԼՈՒՍԻՆ ԱՄԱՐԱՅԻՆ “Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵԱՐՈՊ” ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՁՆԻՒ ԼՈՒՍԻՆ ԱՄԱՐԱ ՈՐ Ի ՆԻՒ ԵՕՐՔ, ԱՄՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ մեր ժողովրդի սիրելի ու շնորհաշատ զաւակիդ:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար անդրադառնալ, որ երկարամեայ Ձեր նուիրեալ գործունէութիւնը մշակոյթի եւ երգարուեստի անդաստանում արդիւնաւորուած է նշանակալի ձեռքբերումներով, որոնք մեծապէս գնահատուել են հանդիսատեսների եւ մշակութասէր ու երաժշտասէր հասարակութեան կողմից: Աստուածաշնորհ Ձեր տաղանդի շնորհիւ Դուք արդարօրէն արժանացել էք միջազգային բազմաթիւ մրցանակների:

Մշակոյթին ծառայութիւն բերելու ազնիւ առաքելութեան ճանապարհին Դուք մշտապէս հաւատարմութիւն էք դրսեւորել հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ նախանձախնդիր յանձնառութեամբ շուրջ չորս տասնամեակներ Ձեր աղօթամատոյց երգեցողութեամբ մասնակից էք եղել տէրունաւանդ Պատարագի սրբազան արարողութեանց ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի Սուրբ Վարդան եկեղեցու երգչախմբի կազմում, ինչպէս նաեւ մասնակցութիւն ունեցել առաջնորդարանի կողմից կազմակերպուած գեղարուեստական միջոցառումներին: Ազգօգուտ ու եկեղեցաշէն ծառայութիւններով Դուք վաստակել էք ամերիկահայ համայնքի սէրն ու յարգանքը, որի վկայութիւնը հաւատաւոր հայորդեաց ազնիւ փափագն է՝ Ձեզ գնահատուած տեսնելու Հայրապետական պարգեւով:

Մշակոյթի եւ երգարուեստի անդաստանում Ձեր վաստակի եւ մեր ժողովրդին ու Եկեղեցուն մատուցած Ձեր բազմարդիւն ծառայութեանց բարձր գնահատանքով, ընդառաջ ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, նոր եռանդով ու ներշնչումներով լեցուն կեանքի երկար օրեր, որպէսզի շարունակէք արդիւնաշատ ծառայութեանց Ձեր աւանդը բերել երգարուեստի զարգացմանը եւ մեր ժողովրդի բարօրութեանը:

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ շնորհների եւ Բարձրեալի առատ ողորմութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 19-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 489

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՆԱՀԻՏ ԱՃԵՄՅԱՆԻՆ “Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ” ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՁՆԻՒ ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԱՃԵՄԵԱՆ ՈՐ Ի ՆԻՒ ԵՈՐՔ, ԱՄՆ

Հոգու բերկրանօք համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ հաւատաւոր հայուհուդ:

Մեծազնիւ տիկին Աճէմեան, աստուածպարգեւ Ձեր կեանքը արդիւնաւորուած է նշանակալի ձեռքբերումներով մշակոյթի եւ երաժշտութեան ասպարէզներում: Տասնամեակներ շարունակ Դուք, որպէս տաղանդաւոր եւ շնորհառատ ջութակահարուհի, բազմաթիւ ելոյթներով հանդէս էք եկել Միացեալ Նահանգների, Կանադայի, Եվրոպայի եւ աշխարհի այլ երկրների համբավաշատ բեմերում՝ հիացնելով Ձեր հանդիսատեսին բարձրարուեստ կատարումներով: Ձեր միջազգային մեծ ճանաչումն ու բացառիկ յաջողութիւնները գոհունակ հպարտութեամբ են լցրել սրտերը մեր ժողովրդի զավակների: Գովարժան նախանձախնդրութեամբ համերգային Ձեր ծրագրում Դուք ներառել էք նաեւ հայ երգահանների ստեղծագործութիւնները՝ երաժշտասէր հասարակութեանը հաղորդ դարձնելով հայ երաժշտութեան մեծարժէք գանձերին:

Մեզ համար առանձնակի ուրախութիւն է հաստատել նաեւ, որ Դուք մեծ նպաստ էք ունեցել նաեւ ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի համայնքային կեանքում՝ առաջնորդանիստ Մայր Տաճարում աղօթական երգեցողութեամբ մասնակցութիւն բերելով Սուրբ Պատարագի արարողութեանց եւ Առաջնորդարանի գեղարուեստական միջոցառումներին՝ վկայելով Ձեր հաւատքն ու նուիրումը մեր Սուրբ Եկեղեցուն:

Մեծապէս գնահատելով Ձեր ծառայութիւնները եւ եկեղեցանուէր ազնիւ ոգին՝ Հայրապետական այսու Կոնդակով, ընդառաջ ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի խնդրանքին, Սուրբ Վարդան եկեղեցու 40-ամեակի առիթով գոհունակ հոգով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Առ Բարձրեալը աղօթքով Տիրոջ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ։ Թող Աստուած քաջառողջ կեանք, արեւշատութիւն եւ ամենայն բարիք պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին։

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 23-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 493

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՔԵՅ ԱՐՄԵՆԻՆ “Ս. ՍԱՀԱԿ- Ս. ՄԵՍՐՈՊ” ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱԶՆԻՒ ՏԻԿԻՆ ՔԷՅ ԱՐՄԷՆ ՈՐ Ի ՆԻՒ ԵՈՐՔ, ԱՄՆ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Հայրապետիս համար ուրախութիւն է այսօր գնահատանքի արժանացնել հաւատաւոր հայուհուդ գործունէութիւնը արուեստի ասպարէզում եւ ԱՄՆ Արեւելեան թեմի ազգային-եկեղեցական կեանքից ներս: Շնորհաշատ երգչուհու Ձեր աստուածատուր տաղանդով Դուք մեծ յաջողութիւնների էք հասել երաժշտութեան անդաստանում, լայն ճանաչում ձեռք բերել կատարողական բարձր արուեստի շնորհիւ՝ տարիներ շարունակ նոր ձեռքբերումներով բարեզարդելով մշակութային Ձեր առաքելութիւնը:

Մենք տեղեակ ենք նաեւ Ձեր եկեղեցասէր ծառայութեանը: Երկար տարիներ ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդանիստ մայր տաճարում Սուրբ Պատարագի հոգեզմայլ երգեցողութեամբ եւ Առաջնորդարանի կազմակերպած գեղարուեստական միջոցառումներին մասնակցութեամբ զովելի ծառայութիւն էք բերել Տիրախնամ թեմին՝ արժանանալով հոգեւոր դասի եւ հաւատաւոր ժողովրդի սիրուն ու յարգանքին:

Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով սիրով ընդառաջում ենք ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հանապազ օրհնի ձեզ՝ պարգեւելով քաջառողջ կեանքի արեւշատ օրեր, բիւր բարիք եւ գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 24-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 491

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով սեպտեմբեր ամսին

"**Ս. Սահակ-Ս. Մեսրոպ**" շքանշանով պարգևատրվել է.
Աբրահամ Տերյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

"**Ս. Ներսես Շնորհալի**" շքանշանով պարգևատրվել են.
Սամվել Հայրապետյան (Արարատյան հայրապետական թեմ)
Չարլզ սարկավագ Հարսի (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Մայքլ Յարուքյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Սինան Սինանյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Վլադիմիր Պոպովյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Անդրեյ Նոր-Արևյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Ալբերտ Սումուգաշև (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)

Օրհնության գիր է տրվել.
ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Ս. Վարդան եկեղեցու ծխական համայնքին
ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ծխական համայնքին
Հովհաննես Հաննեսյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Խաչատուրյան դպրաց դասին (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Վլադիմիր Մոլիբորսկիյ (Ուկրաինայի հայոց թեմ)
Սերգեյ Սարգիսյան (Ուկրաինայի հայոց թեմ)
Ազատ Կիկոյան (Ուկրաինայի հայոց թեմ)
Երեմիա քահանա Մանյան (Ուկրաինայի հայոց թեմ)
Կանադայի հայոց թեմի "Կոմիտաս" երգչախմբին
Հարություն Սուրմալյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Սուրեն Բաղրամյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Վահան Անդրեասով (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Կարապետ Միրզոյանց (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Գուրգեն Հարությունյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Նատալիա Լեբեդևա (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Արա Միքայելյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Արմեն Միքայելյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Օլեգ Ծատուրյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Մերուժան Բրոյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Միքայել Գրիգորյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)

Խաչիկ Գևորգյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Արայիկ Հարությունյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Արթուր Դավթյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Արթուր Կարապետյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Հակոբ Ռեչելյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)

Ավագության պատիվ է տրվել
Տ. Երեմիա քահանա Մակյան (Ուկրաինայի հայոց թեմ)

Լանջախաչ կրելու իրավունք է տրվել
Գևորգ քահանա Արշակյան (Իրաքի հայոց թեմ)
Հայազատ քահանա Մարոկյան (Ռումինիայի հայոց թեմ)

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում Գիտելիքի օրվա առիթով կրթության ասպարեզի բարեջան ծառայողներին, նվիրյալ դասախոսներին ու մանկավարժներին, ուսանող և աշակերտ մեր սիրեցյալ զավակներին:

Գիտելիքի օրվա խորհուրդը լուսավոր է և ուրախարար, լեցուն կյանքի առաջընթացի հույսով: Այս ձգտումով ու լավատեսությամբ այսօր վերստին բացվում են հարյուրավոր կրթական հաստատությունների դռները՝ ուսուցանելու և կրթելու մեր զավակներին, որոնց պիտի վստահվի մեր ժողովրդի, մեր երկրի ու Հայրենիքի վաղվա օրը: Այն պիտի կերտենք բարօր ու երջանիկ, ծաղկուն՝ գիտությամբ ու մշակույթով, աստվածասեր հոգու հավատով ու կյանքով, մեր նախնյաց հավերժահայաց ժառանգությամբ:

Առ Աստված աղոթքով մաղթում ենք արգասավոր ուսումնական տարի, հայցում ենք քաջառողջություն, կորով ու եռանդ դասավանդողներին և ուսումնական գործի կազմակերպիչներին, ուսումնասեր հոգի, պայծառ միտք ու աննվազ ջանք սովորողներին:

Թող Տերը մեր Հիսուս Քրիստոս Իր շնորհի և օրհնության ներքո պահպանի ձեզ և առաջնորդի ձեր քայլերը, խաղաղ պահի մեր Հայրենիքը և համայն ժողովրդին այսօր և միշտ. Ամեն:

Ս. Էջմիածին,
1 սեպտեմբերի 2008 թ.

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առիթով Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Պատարագի ընթացքին կատարվեց Հանրապետական մաղթանք՝ Հայաստանի Հանրապետության անսասանության ու բարօրության համար: Մինչ մաղթանքը Հայրապետական իր շնորհավորական ուղերձը ներկաներին և համայն հայությանն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ տիար Սերժ Սարգսյանը, ԼՂՀ նախագահ տիար Բակո Սահակյանը, ՀՀ վարչապետ տիար Տիգրան Սարգսյանը, ՀՀ կառավարության անդամներ, բարձրաստիճան պետական այրեր, թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, 21 սեպտեմբերի 2008 թ.)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Օրհներգությամբ, խնդությամբ ու մաղթանքով է լեցուն այսօր Հայ Եկեղեցին Հայոց պետականության վերականգնման պանծալի տարեդարձի առիթով: Մեր բոլոր եկեղեցիներում, ինչպես քաղաքամայր Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նվիրական կամարների ներքո, այս պահին Հանրապետական մաղթանքի արարողությամբ միասնական աղոթք ենք բարձրացնում երկինք՝ հանուն Հայաստանի Հանրապետության, մեր Հայրենիքի ազատ, շեն ու բարգավաճ կյանքի և լուսավոր գալիքի:

Անկախության Օրվա տոնական խորհրդով, Հայրապետական օրհնությամբ ջերմորեն ողջունում և Մեր շնորհավորանքներն ենք բերում սրբազան Պատարագի արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության մեծարգո նախագահ տիար Սերժ Սարգսյանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մեծարգո նախագահ տիար Բակո Սահակյանին, պետական պատվարժան այրերին, Հայաստանում դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին, մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգևոր դասին և համայն հավատավոր մեր ժողովրդին ի Հայաստան, Արցախ և ի Սփյուռս:

Հայոց պետականության համար Հայ Եկեղեցին միշտ աղոթող է եղել: Քրիստոսի Ավետարանի քարոզությամբ, հայրենական ավանդների ու հիշատակների ուսուցմամբ Հայոց Եկեղեցին սնուցել ու խնամել է ազատության սերը իր զավակների սրտերում: Ջանացել է ապահով ուղիներով առաջնորդել ժողովրդին, պահպանել և հոգալ նրա անվտանգության մասին պետականության բացակայության դժվարին ժամանակներում՝ միշտ աղոթելով, որ Աստված մեր ժողովրդին ազատ կյանք տա, անկախություն պարգևի և պետականություն շնորհի:

Բոլոր ժողովուրդների կյանքում մեծագույն իրադարձություն է անկախ պետականության հռչակումը, քանզի անկախությունն ազդարարում է աստվածաշնորհ ազատության անմերժելի իրավունքը և հաստատում ազատ ապրելու կամքը ազգերի: Ի գին մեծ պայքարի ենք ձեռք բերել մեր տասնյոթամյա անկախությունն ու ազատությունը, աշխարհասփյուռ համայն հայության զոհողություններով և անմնացորդ ջանքերով: Այսօր վերարժևորելով մեր ժողովրդի մաքառումներն ու զոհաբերությունները՝ նույն միահամուռ ջանքերով պիտի նախանձախնդիր լինենք հայրենի պետության ապահովության և առաջընթացի համար՝ հաղթահարելով ներկա նեղություններն ու դժվարությունները: Մեզ է վիճակված այսօր հոգալ ազատ և անկախ Հայաստանի ներկայի և գալիքի համար: Մեր պետության զորացման, առաջընթացի ու բարօրության համար մեր ուղին կրկին պայքար պիտի լինի՝ խաղաղ կյանքի պայքար՝ աշխատանքով, արարումով, հոգևոր զարթոնքով, արվեստի, գիտության և մշակույթի զարգացումով, որոնցով մշտապես ճանաչելի է եղել մեր ժողովուրդը:

Անկախության օրվա նվիրական խորհրդով հանապազոր զորանանք հավատով, տոգորվենք հաստատուն կամքով և միմյանց հանդեպ սիրով, առ հայրենին որդիական նվիրումով մեկտեղենք մեր ուժերը, մեր եռանդն ու ջանքերը, կյանքի կոչենք նորանոր գրո հիշատակի արժանի գործեր, որպեսզի մեր Հայրենիքը լցվի շենությամբ ու նորոգվի պայծառությամբ՝ միշտ լինելով ու մնալով հույսն ու ապավենը աշխարհասփյուռ համայն հայության:

Աղոթենք մեր Հայրենիքի ազատության և անկախության համար, իրենց կյանքը վասն հայրենյաց զոհաբերած մեր ժողովրդի արի զավակների հոգիների համար, որ հանգչեն երկնային բարձունքներում խաղաղության մեջ, երանության մեջ: Աղոթենք, որ Շնորհաց Պարգևողն Աստված ունկնդիր լինի մեր միասնական հայցին, զորացնի մեզ մեր առաքելության մեջ և օրհնի մեր ջանքերը, օրհնի ջանքերը հայրենի իշխանությանց՝ գլխավորությամբ ՀՀ նախագահի: Թող Տերը Իր Ամենակարող Սուրբ Աջի հովանու ներքո անսայթաք առաջնորդի մեր ժողովրդին դեպի արդար հույսերի մարմնավորում, միշտ դեպի խաղաղ, բարօր, ուրախաբեր հանգրվաններ:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ, ընդ ամենեսեան. Ամէն:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 18-ին «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի շրջանակներում Ծաղկաձորում մեկնարկած «Աշխարհի հետ մեր ինքնությամբ. Հայաստանը համայն հայության հայրենիքն է» խորագրով համահայկական լրատվամիջոցների ղեկավարների համաժողովի մասնակիցներին Հայրապետական օրհնության իր խոսքը հղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որն ընթերցեց Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քհն. Մելիքյանը:

Հայրապետական ուղերձում ասվում է. «*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի շրջանակներում իրականացվող «Աշխարհի հետ մեր ինքնությամբ. Հայաստանը համայն հայության հայրենիքն է» խորագրով համահայկական լրատվամիջոցների համաժողովի բոլոր մասնակիցներիդ:*

Այսօր Մայր Հայրենիքում եք համախմբվել Հայաստանի և Սփյուռքի լրատվամիջոցների ներկայացուցիչներդ՝ համատեղ քննարկումներ ունենալու և հաղորդ դառնալու միմյանց գործունեությանը, խոհերին ու մտածումներին:

Մեր օրերում հասարակությունների կյանքում, ազգերի և պետությունների ներքին և արտաքին հարաբերություններում, աշխարհում տեղի ունեցող զարգացումներում մեծ և կարևոր տեղ ունեն զանգվածային լրատվամիջոցները: Ազգային մեր անդաստանում ևս կարևորվում է լրատվամիջոցների առաքելությունը՝ իրենց հրապարակումներով ծառայելու մեր ժողովրդի, մեր պետության առջև հառնող խնդիրների բարվոք լուծմանը, մեր մշակույթի արժևորմանը, հասարակական մտածողության մեջ ամրապնդմանը այն արժեքների, որոնք լուսավորել են մեր փառավոր պատմությունը և առաջնորդել մեր ժողովրդին ձեռքբերումների ու հաղթանակների:

Մաղթում ենք, որ այս գիտակցությամբ լրատվամիջոցների խմբագիրներն ու աշխատակիցները ի Հայաստան և ի Սփյուռս շարունակեն իրենց գործունեությունը և ջանադիր ծառայեն մեր ժողովրդին ու Հայրենիքին՝ մեր սրբազան արժեքների հանդեպ հավատարմությամբ և ազնիվ հոգով իրենց խոսքը ի սպաս դնելով ճշմարտության, արդարության և ամենայն բարյաց հաստատման:

Առ Աստված աղոթքով բարի ընթացք ենք մաղթում համաժողովի աշխատանքներին: Թող Ամենակարողն Աստված առաջնորդի ձեր ճանապարհը՝ պարգևելով ազգօգուտ հաջողություններ և ամենայն բարիք»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ ՆՎԻՐՎԵՑ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐՇԱՄԱԿԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԸ

Սեպտեմբերի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հյուսիսային Իտալիայից Հայաստան ժամանած մի խումբ ուխտավորների՝ գլխավորությամբ մոնսինյոր Դոն Ջուզեպպե Գիբերտի:

Հանդիպման ընթացքին մոնսինյոր Գիբերտին Նորին Սրբությանը ներկայացրեց Թուրինում պահվող Քրիստոսի վարշամակի պատմությունը և Թուրինի կարդինալ Սեվերինո Պոլետտոյի նախաձեռնությունը, որով վարշամակի կրկնօրինակները նվիրաբերվում են քրիստոնեական Եկեղեցիներին: Այնուհետև մոնսինյոր Դոն Ջուզեպպե Գիբերտին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին նվիրեց Թուրինում պահվող Հիսուս Քրիստոսի վարշամակի կրկնօրինակը:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով Ս. Էջմիածին այցելած ուխտավորներին, Հայրապետական իր օրհնությունն ու շնորհակալությունը հայտնեց նրանց թանկագին նվերի համար: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ Մայր Աթոռի թանգարանում պատանքի կրկնօրինակի ցուցադրումը հայ հավատացյալներին նույնպես առավել հաղորդակից կդարձնի Տիրոջը և կնպաստի նրանց հավատքի զորացմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաև Հայ և Կաթոլիկ Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերություններին՝ վերհիշելով Հռոմի Բենեդիկտ ԺԶ Պապի հրավերով այս տարվա մայիսին Վատիկան կատարած իր պաշտոնական այցը: Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց ներկաների հարցերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ՎՐԹԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(14 սեպտեմբերի 2008 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»

«Որ զանարատ բազուկս Քո ի Խաչին տարածեցեր, Քրիստոս Աստուած և Նշան Յաղթութեան ետուր մեզ»:

«Քրիստոս Աստված, Քո անարատ բազուկները տարածելով Խաչի վրա, մեզ տվեցի՛ր, շնորհեցի՛ր Նշանը հաղթանակի»:

Սիրելի հավատացյալներ,

Հայաստանյայց մեր Սուրբ Եկեղեցին Սուրբ Խաչին նվիրված չորս տոներ ունի՝ Երևման Սուրբ Խաչ, Գյուտ Խաչ, Վարագա Խաչ և վերջապես Սուրբ Խաչի Վերացման տոնը, որը նաև հինգ տաղավար տոներից մեկն է: Յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 11-17-ի միջև հանդիպող կիրակի օրը նշում ենք Սուրբ Խաչի Վերացման հիշատակությունը:

614 թ. Պարսից Խոսրով թագավորը գրավում է Երուսաղեմը, որը քարուքանդ անելով՝ սպանում և գերեվարում է քաղաքի տասնյակ հազարավոր բնակիչների: Պարսից թագավորը քրիստոնյաներին անարգելու և իրեն ենթարկելու համար գերեվարում է նաև Քրիստոսի Խաչափայտը, որը առաջին դարում հրաշքով գտնվել էր Հակոբոս Տեառնեղբոր կողմից:

Սույն անարգալից իրավիճակի հետ չհաշտվելով՝ 621 թ. Հերակլ կայսրը հարձակվում և Խոսրով Բ-ին ստիպում է հաշտություն կնքել՝ վերադարձնելով, ազատագրելով Տիրոջ հրաշագործ և փրկարար Խաչափայտը: Կայսեր այս արշավանքին մասնակցել են նաև երկու հայ զորավարներ՝ Վահան Խոռխոռունին և Մժեժ Գնունին: Հաղթական Հերակլ կայսրը Սուրբ Խաչափայտը նախ տանում է Կոստանդնուպոլիս և ապա փոխադրում Երուսաղեմ, ուր մեծ շուքով ու տոնախմբությամբ է ընդունվում հավատավոր ժողովրդի կողմից: Այսպիսով, սեպտեմբերի 14–ը հռչակվում է Խաչափայտի գերեդարձի հիշատակման օր, որով հաստատվում է Սուրբ Խաչի Վերացման տոնը (Խաչվերաց նշանակում է խաչի բարձրացում, ի վեր ընծայում որպես հաղթության նշան, Տիրոջ՝ Հիսուս Քրիսոսի Սուրբ Խաչափայտով մեզ ընծայված հավիտենական փրկության նշան):

Սիրելի հավատացյալներ, Հայ Եկեղեցին Սուրբ Խաչի տոնը նշում է հատուկ հանդիսավորությամբ, որը հաստատվել է 7-րդ դարում Սահակ Գ Ձորափորեցի (կթղ. 677-703 թթ.) կաթողիկոսի կողմից: Կիրակի երեկոյան եկեղեցու խաչերից մեկը զարդարելով բուրավետ ռեհանով՝ պտտեցվում է այն եկեղեցու չորսբոլորը հանդիսավոր

թափորով: Սուրբգրային ընթերցումներից հետո ծիսական հատուկ արարողությունների մաս է կազմում վարդաջրով նախօրոք ցողված ռեհանը ներկա հավատավոր ժողովրդին բաժանելը, որպեսզի այն իրենց օջախները տանելով՝ տանեն նաև Սուրբ Խաչի օրհնաբեր զորությունն ու պահապան ամրությունը՝ որպես Տերունական սրբարար և փրկարար նշխար մեր ընտանիքներին և մեր հարազատներին:

Սիրելի հավատացյալներ, Հռոմեական կայսրության շրջանում խաչը թերևս եղել է ամենաանարգալից պատժամիջոցը: Խաչ էին բարձրացվում այնպիսի հանցագործներ, որոնք սարսափելի չարագործներ և ոճրագործներ էին: Աստծո Որդին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս, մարդկային ցեղին առ ի փրկություն, հենց այդ անարգալից, սարսափելի և անըմբռնելի ցավի և չաչարանքներով լեցուն մահվան ձևն ընտրեց՝ ասելու. **«Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց»** (Հով. ԺԵ 13), և ի հավելումն Ավետարանական այս հրաշալի խոսքերի աղոթասաց վարդապետն ասում է. **«Որ վասն մեր ի չափաւորութիւն եկիր, անչափդ Աստուած»**: Ուստի Աստվածային զոհաբերության միակ և բացարձակ պատճառը Տիրոջ ունեցած անսահման և սրբակատար Սերն է, որն անսպառ աղբյուրի նման անընդհատ հոսում է տիեզերքում ի փրկություն և ի բարօրություն մարդկային ցեղի:

Այսպիսով, Աստծո Որդին մեզ հավասարվելով՝ զոհաբերվեց մեզ չարից ազատելու և պարգևելու համար Երկնային այն խաղաղությունը, որի կարիքն այնքան մեծ է և հրամայական հատկապես այսօրվա աշխարհում. **«Զխաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն Զիմ տամ ձեզ»** (Հով. ԺԴ 27):

Խաչն ամբողջովին փոխելով իր դատապարտության և անարգական իմաստը՝ ստացավ Նոր, Կենդանության, Փրկության, Զորության և հաղթանակի հավիտենական խորհուրդ-իմաստ, դարձավ այն աստիճանը, որով յուրաքանչյուր քրիստոնյա հնարավորությունն ունի բարձրանալու հասարակից կարևորագույնը, երկրորդականից առաջնայինը, նյութեղենից դեպի հոգևոր անգնահատելի արժեքները, որոնք մնայուն և ո՛չ անցողիկ արժեք ունեն: Ուրեմն **Խաչը կյանքի՝ քրիստոնեական սրբակենցաղ կյանքի Նոր և Անսպառ Կենդանության արժեքն ունի:**

Այդ իսկ պատճառով Հայ Եկեղեցում օգտագործվող խաչերը, եթե ուշիուշով զննեք, կտեսնեք, չեն կրում Խաչյալ Քրիստոսի պատկերը, որովհետև մենք հավատում ենք այն Խաչին, որի վրայից Քրիստոս Հարություն է առել, հաղթանակել է, մենք հավատում ենք այն Խաչին, որը ծաղկել և կենդանացել է Տիրոջ փրկարար զոհաբերությամբ, քանզի. **«Ես յաղթեցի աշխարհին»** (Հով. ԺԶ 33): Ուստի ամեն անգամ, երբ յուրաքանչյուր քրիստոնյա խաչակնքում է, դրանով ցանկանում է ասել, որ ինքը պատրաստ է իր հոգում ներառնել Տիրոջ սերը և մասնակիցը դառնալ Հիսուսի չարչարանքներին, որը գրավականն է մեր կյանքի հաղթության, երաշխիքն է հաջողությունների և առհավատչյան է հավիտենականության:

Խաչն այլևս մեր փառքն ու պարծանքն է, վասն զի չկա հարություն, չկա հաղթանակ և չկա հառաջընթացություն առանց խաչելության, չարչարանքի, ստեղծագործ և արգասաբեր աշխատանքի, առավելապես ծաղկեցնելու, կենդանացնելու, նորոգելու և մաքրագործելու մեր ներքինը՝ հոգևորը, որը ճշմարիտն է, մնայունն ու արժևորվածը, քանզի. **«Զի՞նչ օգուտ է մարդոյ, եթէ զաշխարհ ամենայն շահեսցի եւ զանձն իւր տուժեսցի»** (Մարկ. Ը 36):

Սիրելի հավատացյալներ, ահավասիկ կյանքի նորոգման և վերարժևորման Տերունական փրկարար նպատակի իրականացումն է, որ տեղի է ունենում Մարդացյալ Փրկչի կենարար և հրաշափառ Սուրբ Խաչի ճանապարհով: Խա՛չ, որը դառնում է աստիճանը դեպի փրկություն և Արքայություն տանող Աստվածակառույց ճանապարհի: Ահա թե ինչու հաճախ մեր եկեղեցու շարականներում ասվում է. **«Փա՛ռք սուրբ Խաչիդ, ալելուիա»**: Ամեն անգամ փառաբանելով Տիրոջ փրկագործ Սուրբ Խաչը, մենք իբրև քրիստոնյաներ և իբրև զավակները մեր մայրենի եկեղեցու, ի լուր աշխարհի հայտարարում ենք, որ ոչ միայն հավատում ենք, այլև բոլորանվեր հետևորդներն ենք Տիրոջ չարչարանաց միջոցով մեզ ընծայված աննախադեպ հաղթանակի, վկան մեր ժողովրդի, թեպետ դժվարին, սակայն փառավոր և հաղթական ողջ պատմության ընթացքի, սկսյալ Սրբոց Վարդանանց հրաշափառ և պատվարժան հերոսամարտից, մինչև Արցախյան Երկնատու հաղթանակների ամբողջական շարանը:

Անկասկած, մեր ժողովրդի պատմությունն իր ողջ ընթացքով, Հիսուսաշավիղ մի անքակտելի երթ է, նույնանման նաև Փրկարար Սուրբ Խաչին, քանզի ինչպես որ մեր Տերն անարգվեց և չարչարվեց, ինչպես որ Տերունական կենապարգև Սուրբ Խաչն ևս բազմիցս գերեվարվելով, անարգվելով, այլև բազում փորձությանց միջով անցնելով ի վերջո դարձավ Քրիստոսի Սուրբ Եկեղեցու սրբարար և փրկարար հավիտենական Խորհրդանիշ, նմանյալ Փրկչին, հայ ժողովուրդն նույնպես անցնելով այդ դժվարին, կենաց և մահու, այլև չարչարանաց ճանապարհով, ահավասիկ այսօր արժանապես ժառանգորդն է Աստվածընծա այդ հաղթական Ավետիսի, որպես առաջին քրիստոնյա պետությունը, որը ոչ այլ ինչ է, քան Երկնային նախախնամության իրագործումը, ևս մեկ անգամ հաստատելու սրբազան շարականագրի հրաշալի այն խոսքերը, թե. **«Արեգակն արդարութեան ի Հայաստան ծագեալ»:**

Սիրելի հավատացյալներ, Վերացման Սուրբ Խաչի այս նվիրական տոնի առիթով մեր մաղթանքն ու սրտաբուխ աղոթքն է, որպեսզի Խաչյալ Փրկիչը հավիտենապես մեզ արժանացնի բազում հաղթական նվաճումների կյանքի բոլոր ոլորտներում՝ մշտապես մնալով հարազատ և նվիրյալ զավակները Իր իսկ հիմնած եկեղեցու՝ հայոց սրբարան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Թող Սուրբ Խաչի զորությունն ու երկնաբաշխ օրհնությունը ամուր և պայծառ պահեն մեր երկիրն ու մեր զավակաց հոգիները մինչև ի կատարածն աշխարհի:

«Որ զանարատ բազուկս Քո ի Խաչին տարածեցեր, Քրիստոս Աստուած և Նշան Յաղթութեան ետուր մեզ, սովաւ զկեանս մեր պահեա՛»:

Շնորհք, Սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:

Տ. ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 սեպտեմբերի 2008 թ.)

«Երբ որովայնում չստեղծած Ես ընտրեցի քեզ
և դեռ արգանդից դուրս չեկած սրբացրի քեզ»:
(Երեմիա Ա 5)

Սիրելի բարեպաշտ հայորդիք, մարգարեական այս տողերը վերաբերում և պատշաճում են Սուրբ Կույս Մարիամ Աստվածածնին և բոլոր այն մարգարեներին, առաքյալներին և քրիստոնյաներին, ովքեր կենդանի Աստծո հետևորդներն են: Սուրբ Կույսին նվիրված օգոստոսյան և սեպտեմբերյան տոները Հայ Եկեղեցին մեծ խանդավառությամբ է տոնում: Վաղը Սուրբ Կույս Մարիամի ծննդյան փառավորյալ տոնն է: Սուրբ Աննայից և սուրբ Հովակիմից ծնվածով օրհնվեցին երկրի բոլոր ազգերը, և Իր ծնունդով կատարվեց Աստծու խոստումը՝ տրված նահապետներին և մարգարեներին:

Աստվածամոր ծննդյան լուրը տարածվեց ամբողջ Հրեաստանում, և բոլոր լսողներն օրհնեցին կենդանի Աստծուն, ինչպես մարգարեացել էր Եսային Սուրբ Կույսի և առաքյալների մասին. «Պիտի ճանաչվի նրանց զավակը ազգերի մեջ, և նրանց սերունդները՝ ժողովուրդների մեջ: Ամեն տեղ երբ տեսնեն, պիտի ճանաչեն նրանց և ասեն. «Սրանք Աստծու օրհնյալ զավակներն են»: Եվ ցնծությամբ պիտի ուրախ լինեն ի Տեր»: Եթե Աստծո մարգարեները, առաքյալները աշխարհի լինելուց առաջ ընտրվեցին, Աստված ընտրեց մեզ Քրիստոսի միջոցով, նախքան աշխարհի արարումը, որպեսզի մենք սուրբ և անարատ լինենք Նրա առաջ սիրով, ապա որքան առավել Սուրբ Կույսն է ընտրյալ, ով կոչվում է դրախտ աստվածային և արևելք իմանալի և ում մասին ասում է Սողոմոնը. «Շատ դուստրեր հարստություն ձեռք բերին, շատերն էլ սխրագործություններ կատարեցին, բայց դու գերազանցեցիր նրանց և անցար բոլորից: Քո մեջ կանացի կեղծ բարեհաճություն չկա և ոչ էլ սին գեղեցկություն»:

Դարեր շարունակ սուրբ Աստվածածնի այս առաքինություններին են հետևել մեր մայրերն ու քույրերը, փորձել են նմանվել իրենց վարքով ու կենցաղով՝ քաջ գիտակցելով, որ դա խաչի մի ճանապարհ է իրենց համար: Սուրբ հայրերի բազմաթիվ գրվածքներում ահա թե ինչպես է նկարագրվել Սուրբ Կույսը: Աստվածամոր միջոցով Խաչը ծագեց աշխարհում որպես զորության գավազան և կնիք ամենքի համար: Նրա միջոցով բացվեց կենաց ծառի ճանապարհը, վերցվեց բոցեղեն սուրը և հաստատվեց Մկրտության Ավազանը: Նա եղավ եդեմական շնչավոր դրախտ, որտեղից բխեց մեր Տեր Հիսուս Քրիստոս կենաց աղբյուրը՝ չորս գետերի բաժանված, ինչն ավետարանիչների քարոզչությունն է աշխարհի չորս կողմերում՝ լցված հավատով ու Սուրբ Հոգով: Սրբուհին եղավ Նոյյան տապան: Եվ եթե այն տապանը միայն մի ընտանիք ազատեց ջրհեղեղից, ապա Կույսի միջոցով ողջ աշխարհը փրկվեց:

Նա եղավ անկեզ մորենի, քանի որ Աստվածության հուրը բնակվեց նրա սուրբ որովայնում և չայրեց: Սուրբ Մարիամը ուխտի տապանակն է, որն իր մեջ կրեց կենդանի Աստուծո բանը, Ով ոչ միայն Իսրայելի որդիներին Սինայի անապատից դեպի Ավետյաց երկիրն առաջնորդեց, այլ ամբողջ մարդկային ցեղը՝ դեպի երկնային Երուսաղեմ:

Ամենասրբուհի Կույսը եղավ արևելք, որտեղից ծագեց արդարության Արեգակը և հալածեց մեր հոգիներից խավարը և անստվեր Լույսն առաքեց մահվան ստվերներում նստածներիս: Սուրբ Աստվածամայրն այն ոսկյա սափորն է, որն իր մեջ կրեց Հոր անժամանակ Խոսքը, կենաց Մանանան, որով ոչ միայն Իսրայելին կերակրեց, այլև ամբողջ աշխարհին: Սուրբ Կույսն ավելի վեր է, քան մարգարեները, առաքյալները, նախահայրերը, մարտիրոսներն ու վարդապետները և վեր, քան իշխանություններն ու պետությունները, սերովբեներն ու քերովբեները և ավելի վեր է բարձրացել, քան երկնային զորքերը: Ձիջում է նա միայն Արարչին, անեղ բնությանը, գերազանց և անեղնույթ Աստվածությանը: Սուրբ Կույս Աստվածածնի միջոցով ներվեց Ադամի անեծքը, և փարատվեց Եվայի տաժանելի երկունքը:

Սիրելի բարեպաշտ կանայք, թող Աստված Սուրբ Կույս Աստվածածնի ծննդյան հրաշալի խորհրդով Հայաստան աշխարհին պարգևի արժանավոր մանուկներ մեր երկրի ու Եկեղեցու համար: Բարեպաշտ քրիստոնյա հետևորդներ, ովքեր ժառանգելու են իրենց հայրերի Ավետյաց երկիրը, թող Աստվածածնի բարեխոսությամբ, Հայր Աստծու սերը, Տեր Հիսուս Քրիստոսի խաչի և հարության զորությունը և Սուրբ Հոգու առաջնորդությունը մեզ բոլորիս հետ լինի, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

Տ. ԴԱՎԻԹ ԱԲԵՂԱ ՔԱՐԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ԿՈՒՅՍԻ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(8 սեպտեմբերի 2008 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամեն»

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, նախապես մտածեցի, որ այսօր քարոզ խոսել պետք չէ: Եվ միտք չունեի քարոզ խոսելու, որովհետև խորհում էի՝ մեր տատիկներն են լինելու՝ արդեն տասնյակ տարիներով այս նույն Պատարագներին մասնակցած, նույն պատգամները լսած: Եվ այսօրվա խոսքերս կրկնություն պետք է լինեին: Բայց երբ տեսա այսքան մարդ, մղում ունեցա մտքերս ձեզ հետ կիսելու:

Սիրելիներ, ծննդյան տոն է այսօր: Մեր Սուրբ Կույս Աստվածածնի ծննդյան օրը: Այս առիթով շնորհավորում եմ բոլոր նրանց, ովքեր Սուրբ Կույսի անունն ունեն, ովքեր իրենց ծննդյան օրվանից Մարիամ են կոչվել: Բայց շնորհավորում եմ նաև բոլոր կանանց, որովհետև սուրբ Կույսի տոնը բոլոր կանանց տոնն է: Սիրելիներ, Պատարագի պահին մտածումս այս էր. Աստված աշխարհն ստեղծեց որպես տիեզերք, այսինքն կոսմոս. սա հունարեն բառ է և ներդաշնակություն է նշանակում: Սակայն մարդը իր առաջին իսկ քայլով խախտեց այդ ներդաշնակությունը: Եվ այդ մարդու անունը Եվա է: Բայց բազում սերունդներ եկան ու անցան, ու Աստված, տեսնելով որ մարդն ինքնուրույն անկարող է ներդաշնակությունը վերականգնել, նորից միջամտեց ու տվեց խոստման զավակին՝ Մարիամին: Իր ծնողները՝ Աննան և Հովակիմը, անժառանգ էին և խոստումով ստացան Մարիամին: Եվ Մարիամով մեր Տեր Աստված պիտի մարմնանար, մարդանար ու վերականգներ խախտված ներդաշնակությունը:

Սիրելիներ, երբ նայում ենք այսօրվա մեր կյանքին, մեր փոքրիկ այս աշխարհին, թե ամբողջ երկրագնդին, տեսնում ենք, որ գրեթե ոչ մի տեղ ներդաշնակություն չկա: Ու անգամ եթե փորձենք մեր հոգիներում նայել, կտեսնենք, որ մենք ինքներս մեզ հետ հաշտ չենք, ուր մնաց թե մեր շրջապատի հետ: Եվ այսօրվա տոնը, սիրելիներ, կանչ է, հրավեր է մեկ անգամ ևս մտածելու խախտված այդ ներդաշնակության մասին: Պողոս առաքյալն ասում է. «Մենք յուրաքանչյուրս տաճար ենք Սուրբ Հոգու»: Տաճար ենք միայն այն ժամանակ, երբ որ մեր հոգում ներդաշնակություն կա, որովհետև աններդաշնակության մեջ Աստված չի բնակվում: Ուրեմն Պողոս առաքյալը ցանկանում է, որ մեզանից յուրաքանչյուրը տաճար, եկեղեցի լինի: Եկեղեցի պիտի լինի մեզանից յուրաքանչյուրի ընտանիքը նաև, սիրելիներ:

Այսինքն, մեր հոգում հաստատելով ներդաշնակությունը՝ այն պիտի տեղափոխենք մեր ընտանիք: Եվ եթե յուրաքանչյուր ընտանիքում աստվածային այդ ներդաշնակությունը հաստատվի, ամբողջ երկրում ներդաշնակություն պիտի հաստատվի: Եվ ես ընտանիքից ելնելով, մայր ունենալով, խորին համոզում ունեմ, որ այդ ներդաշնակություն հաստատողը միմիայն մայրն է, որովհետև առաջինը, ով խախտեց ներ-

դաշնակությունը, կինն է, ով նաև կարող է այդ ներդաշնակությունը վերահաստատել: Շարականագիրը Սուրբ Կույսին նմանեցնում է անկեզ մորենուն: Բոլորիս քաջ հայտնի է, որ Հին Կտակարանում Մովսեսին երևաց անկեզ մորենին: Շարականագիրն ասում է, որ Սուրբ Կույսն է այդ անկեզ մորենին, որ իր մեջ ունենալով կրակը, աստվածային Լույսը՝ Տիրոջը, անկեզ մնաց: Ինչպե՞ս անկեզ մնաց. որովհետև Սուրբ Կույսը մաքրամաքուր էր, ինչպես ոսկին: Ոսկին կրակի մեջ չի այրվում, չի կորչում, այդպես էլ Սուրբ Կույսը: Եվ մեր յուրաքանչյուր հայ մայր, յուրաքանչյուր կին, կամ յուրաքանչյուր օրիորդ վաղը պիտի մայր դառնա, պետք է դառնա իսկապես այդ անկեզ մորենին: Այսինքն մաքրագործած իր անձը՝ պատրաստ լինի իր մեջ ընդունելու Սուրբ Հոգին, աստվածային կրակը: Եվ եթե իսկապես սուրբ է մայրը, անհնարին է, որ իր մեջ ձևավորվող պտուղը, զարգացող զավակը անսուրբ լինի: Ուրեմն այսօրվա տոնը առիթ է մեզ նորից մտածելու, նորից խորհելու՝ ո՞րն է մեր դերը այս կյանքում: Ես վստահ եմ, համոզված եմ, որ յուրաքանչյուր մարդու դերն այս կյանքում Տիրոջ ստեղծած արարչագործության շարունակությունն է, ամեն մեկս մեր դերում, մեր պաշտոնում ներդաշնակություն պահելն է:

Սիրելի մայրեր, հայկական եկեղեցիներում Խորանի վրա բազմած է Սուրբ Կույսը, բայց Հիսուս Մանուկը գրկում: Ամեն հայ կին կոչված է իր ընտանիքի մեջ Մարիամ լինելու իր մայրության գահին բազմած: Մայրությունը շատ սուրբ խորհուրդ է: Ուրեմն մտածեք այդ խորհրդի մասին: Թող այսօր Սուրբ Կույսն իր սրբության, իր մայրության խորհրդից մեկ կաթիլ կաթեցնի յուրաքանչյուրիս հոգիներում, որպեսզի կարողանանք իսկապես այդ խորհրդով, այդ զգացումով, այդ գիտակցությամբ ապրել մեր կյանքը: Չեմ ուզում այստեղ ցավ պատճառած լինել այն կանանց, ովքեր մայրության քաղցրությունը չեն ճաշակել: Բայց լավ իմացեք, որ մայրը միայն նա չէ, ով զավակներ է լույս աշխարհ բերում: Բազում մայրեր եմ տեսել, որ սեփական ժառանգ չեն ունեցել, բայց մայրության մեծ զգացումով, մեծ ապրումով իրենց կյանքը նվիրել են անմայր երեխաների: Երբ այստեղ չէի, արտերկրում էի ուսանում, տարիքով կանայք են եղել, որ ինձ համար մայր են եղել, և ավելի պակաս խնամք չեն տարել իմ հանդեպ, քան իմ սեփական մայրը:

Ուրեմն, սիրելիներ, յուրաքանչյուրդ ձեր կոչումի մեջ, ինչպես որ Աստված ձեզ կոչել է, հավատարիմ մնացեք և երբեք ու երբեք կյանքում եղած ուրիշ պատկերներ թող մեզ չշեղեն, այլ մեր նպատակակետը, մեզ առաջնորդող տեսիլքը թող միայն Սուրբ Կույսը լինի՝ իր Հիսուս Մանուկը գրկում: Թող մեր Սուրբ Կույսի բարեխոսությունը, իր մայրական օրհնությունը անպակաս լինեն յուրաքանչյուրիս հոգուց, յուրաքանչյուրիս ընտանիքից և մեր հայ ազգի կյանքից. Ամեն:

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆԸ

ՆԱԶԻԿ ԽԱՆՋՅԱՆ
Կենսաբանական գիտությունների դոկտոր

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԸ ‹‹ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ›› ԱՂՈԹԱՄԱՏՅԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ

10-րդ դարի հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու ‹‹Մատյան Ողբերգության›› անմահ ստեղծագործության՝ Ս. Մյուռոնին նվիրված ՂԳ գլուխը կոչվում է ‹‹Մեկնողական աղոթք Մյուռոնի սրբալույս յուղի մասին››: Աղոթքի մանրակրկիտ ուսումնասիրությունը, որը կատարվել է ‹‹Մատյան Ողբերգության›› 1000-ամյակի առիթով, նոր լույս է սփռում Հայ եկեղեցու Ս. Մեռոնի պատմության վրա:

‹‹Մատյան Ողբերգությունը››, ինչպես հայտնի է, գրաբարից ունեցել է մի շարք թարգմանություններ: Դրանցից Նարեկացու համերկրացի Վասպուրականցի բանաստեղծ Մկրտիչ Խերանյանի թարգմանությունը լույս է տեսել 1960 թ. Երևանում: Այդ հրատարակությունում ‹‹Մատյան Ողբերգության›› ՂԳ գլուխը, ինչպես նաև Նարեկի մի քանի այլ գլուխներ և մասեր (ՀԵ, ՂԲ և ՂԳ գլուխները ամբողջությամբ, ԼԳ, ԼԴ, ԻԶ, գլուխների որոշ մասերը) խորհրդային ժամանակների գաղափարախոսության հրամայականով չեն թարգմանվել: Սակայն այդ բացը հետագայում լրացվել է Ա. Մադոյանի կողմից և հրատարակվել ‹‹Մատյան Ողբերգության››՝ Մ. Խերանյանի թարգմանության 2003 թ. վերահրատարակության ժամանակ: Այդ թարգմանության վրա է խարսխված Ս. Մեռոնին նվիրված վերը նշված աղոթքի ներկա ուսումնասիրությունը:

Նարեկացու Ս. Մեռոնի բացատրական աղոթքը կազմված է 24 մասից, որոնք արտահայտված են աստվածաշնչային ոգով, երգեցիկ են ու բանաստեղծական, ինչպես ամբողջ երկը: Շրջանցելով դրանց բանասիրական, երաժշտական և հոգևոր մեկնաբանությունն ու բնագիտական տեսանկյունից առաջին անգամ ուսումնասիրելով նարեկյան այդ մի քանի էջերը, հայտնաբերում ենք մինչ այժմ անհայտ բազմաթիվ փաստագրություններ մեռոնագիտության համար: Բնականաբար, հարազատ լինելով իր ժամանակի հոգևոր աշխարհայացքին, ‹‹Աղոթք››-ը հիմնականում նվիրված է Ս. Մեռոնի հոգևոր էությանը: Սակայն այդ միայն հոգևոր թվացող էության մեջ այն պարունակում է նաև բովանդակային ամբողջականություն և նյութական-առարկայական մանրամասներ: Այդ մասին է վկայում նույնիսկ այս փոքրիկ հետազոտությունը: Այն ցույց է տալիս, որ ‹‹Աղոթք››-ը, ինչպես ամբողջ Նարեկը, այնքան խորն է, ընդգրկուն ու բազմաշերտ, որ բնագիտական բացահայտումների և մեկնաբանությունների երկար ճանապարհ ունի անցնելու՝ իր ծալքերում թաքնված ճշմարտությունները ի հայտ բերելու համար: Ստորև առաջին անգամ փորձ է արվում ներկայացնել Նարեկացու ‹‹Աղոթք››-ի բնագիտական ուսումնասիրության արդյունքում ստացված այն մեկնաբանությունները, որոնք վերաբերում են Ս. Մեռոնի ծագումնաբանության և բաղադրության մի քանի

հարցերին:

Նարեկացու Ս. Մեռոնին նվիրված աղոթքը, մասնավորապես Ս. Մեռոնի և Հին Ուխտի Օծման յուղի նյութերի համեմատության նարեկյան մեկնաբանությունը հնարավոր դարձավ վերլուծել՝ զինվելով մեռոնագիտության վերջին տարիներին ձեռք բերված գիտելիքներով: Հետևաբար մինչև Ս. Մեռոնի նարեկյան մեկնաբանության վերլուծությունը հարկ է հիշել, որ մեռոնագիտությունը աստվածաբանական մի ուրույն ուղղություն է, որն ուսումնասիրում է Ս. Մեռոնի ծագումը, զարգացումը, պատմությունը, ծիսական կանոնակարգերը, կառուցվածքային առանձնահատկությունները, գաղափարախոսությունը և Ս. Մեռոնի հետ առնչվող այլ հարցեր: Մեռոնագիտությունը, ինչպես Ս. Մեռոնը, ունի շատ խոր ակունքներ և սերտորեն կապված է Քրիստոսի անվան ու քրիստոնեական պաշտանմունքի հետ: Այն նոր զարգացում ապրեց հատկապես երջանկահիշատակ Գարեգին Առաջինի օրհնությունը ստացած «Հայ Եկեղեցու Սրբալույս Մեռոնը» (Ն. Խանջյան, Ս. Գալստյան, 2001 թ.) աշխատասիրության հրատարակմամբ և Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հրատարակված տարբեր աշխատանքների լույսընծայմամբ, ինչպիսիք են. «Սրբալույս Մյուռոնի բույսերի բնագիտական մեկնաբանություն» (Ն. Խանջյան, Ս. Գալստյան, 2001 թ.), «Սրբալույս Մյուռոնի ցանկերը Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում» (Ն. Խանջյան, Ս. Գալստյան, 2001 թ.): Դրանք համալիր հետազոտությունների ամփոփման արդյունք են և նորովի են լուսաբանում Ս. Մեռոնի բույսերի ժողովրդական անունների հիման վրա վերծանված և բուսաբանական գիտության անվանակարգի միջազգային օրենքով վերահաստատված բույսերի և նյութերի բնագիտական մեկնաբանությունները: Այստեղ կարելի է հիշել նաև, որ դրանցից ամենաառաջին՝ «Սրբալույս Մյուռոնի բույսերը» (Ն. Խանջյան, 1996 թ.) աշխատանքում արտահայտված «մեռոնագիտություն» և «մեռոնագետ» նոր բառերը հայերենում առաջին անգամ ամրագրվել են միայն 2002 թ. Սեդա Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարան»-ում:

Նարեկացու Ս. Մեռոնին նվիրված «Աղոթք»-ը սկսվում է սրբազան յուղով օծվածի, նախապարգևիչի և Օծյալի, այսինքն Քրիստոսի փառաբանությամբ և ընդգծում է այն հիմնական գաղափարը, որ Քրիստոսի օծումով է, որ մեզ է հասնում նրա լույսը՝ «հավասարասփյուռ արեգակի» «անհասանելի ճառագայթը»: Ահա մեկ քառատող աղոթքի Ա մասից.

Լույս բարի և ծագումն գովելի,
Երկրպագված փառավորություն.
Ահեղ և անգննելի, ամեն և ամեն ինչի մեջ:
. . . . . .
Քեզ միանալու ուխտ եմ անում,
. . . . . .
Հանուրի գովյալ թագավոր, Աստված բոլորի. . .

Եվ այնուհետև հաջորդ Բ մասում շարունակվում է «օծման շնորհի» մեծ խորհուրդը.

Ուստի մեկնությամբ

պարգաբանելով մեզ համար,
Անվախճան այս գանձը ու անփոխադրելի
հարստությունը,
Հիսուս Քրիստոս, երկնային արքա,
. . . . . .
Սկզբնաձիրդ մեր օծման շնորհի
Մեծախորհուրդ հրաշազարդության,
Քանզի Քո լույսը ճանաչեցինք,
Անհաս ճառագայթ, անսահման ծագում,
Հավասարասփյուռ արեգակ,

Այսպիսով, ըստ Նարեկացու՝ Հայ Եկեղեցու Ս. Մյուռոնը, որին անվանում է «անվախճան գանձ և անփոխադրելի հարստություն», սերտորեն կապված է Քրիստոսի՝ որպես օծման շնորհի նախապարգևիչի հետ:

Այնուհետև Նարեկացին աստիճանաբար բացատրում է Ս. Մեռոնի հիմքը հանդիսացող՝ ձիթապտղի ձեթի գործածությունը և աղոթքի երրորդ՝ Գ մասում կատարում է պատկերավոր ընդհանրացում տնտեսության համար այդ շատ կարևոր նյութի վերաբերյալ.

Արդ, ինչպես օրը թերի է առանց գիշերի,
Նույնպես է տնտեսությունն առանց հարկ եղած ձեթի, . . .

Հետադարձ հայացք ձգելով դեպի հին աշխարհ, դժվար չէ համոզվել, որ ձեթը, որը բազմիցս նշվում է «Աղոթք»-ում, ինչպես նաև ձիթենին, որը աստվածաշնչյան բույսերից և հին աշխարհի ժողովուրդների բնակության վայրերում շատ տարածված ու նշանակալից ծառերից էր, ուներ կարևոր գործածություն կյանքի տարբեր ոլորտներում: Ձիթենու հետ էր կապված նաև Երուսաղեմի պատմական Ձիթենյաց լեռը՝ կրակալավային ապարներով ոչ բարձր լեռնաշղթան, հին աշխարհի հայտնի սրբավայրը, որի մասին Նարեկացին «Աղոթք»-ի Ե մասում գրում է.

Ձիթենյաց լեռան վրա,
Ուր հետո կանգնեցին
Մարմնացած Աստծուդ ոտքերը,
Այն վերին հրեշտակների ձեռքով
Այստեղի պտուղներից օծվեց...

Այնուհետև Թ մասում շարունակելով՝ «Ձիթենյաց պարտեզ տանելով գրկեցեք ահավասիկ այս ընտիր նյութով...» տողերում ձեթը որակում է որպես «ընտիր նյութ»՝ հիշատակելով նաև հնում ձեթի ստացման ձևը՝ այն է. «Երկրի պտուղներից ճզմելով և քամելով» (մաս ԺԱ): Ի դեպ այդ հնավանդ ձևը այժմ էլ կիրառվում է ձիթապտղի, այսպես կոչված, տաք կամ սառը մամլման եղանակներով ձեթ ստանալիս:

Այստեղ տեղին է հիշել, որ ձեթ ստանալու նշված ձևն ունի հազարամյակների վաղեմություն: Այն հիշատակվում է դեռևս հին եգիպտական պապիրուսներում, իսկ Հունաստանում պեղված ձիթենու մամլիչներն ու ձեթի անոթները թվագրվում են Ն.Ք. III-

II հազարամյակներով: Ձիթապտղի ձեթը ստացվում է Ձիթենազգիների (Oleaceae) երկարակյաց ձիթենի եվրոպական (Olea europaea L.) տեսակից: Մնում է ավելացնել նաև, որ Ձիթապտղի ձեթը բնության մեջ հայտնի այն հազվագյուտ հեղուկ ճարպերից է, որ կազմված է միևնույն ճարպաթթվի (օլեաթթու) տրիգլիցերիդից, մինչդեռ մյուսները սովորաբար պարունակում են տարբեր ճարպաթթուներ: Դրանով էլ, ինչպես նաև վիտամինների մեծ քանակությամբ, ձիթապտղի ձեթը առանձնանում է մյուսներից իր օգտակար հատկություններով:

Ս. Մեռոնի հիմնական բույսի՝ ձիթենու և ձիթապտղից ստացվող ձեթի մասին Նարեկացու մեկնաբանությունը ամփոփենք Գ մասում արտահայտված հետևյալ տողերով.

Քանզի ինչպես սովորական, ոչ նվիրական
Յուղն է լուսավորում մարմնական աչքի տեսողությունը,
Նույնպես անիմանալի կերպով
Մարմինը լվանալով՝ հավատում ենք
թե սրբություն ենք ստանում
Այդպես յուղի օծումով հուսավառվում ենք,
. . . . . .
Հոգու զորություն ստացած. . .

Այսինքն, սովորականը կոչվում է ձեթ, որը լուսավորում էր մարմնական աչքի տեսողությունը, իսկ նվիրականը՝ յուղն էր օծության: Նարեկացին քաջ տարբերում է միմյանցից ձեթը և Հին Ուխտի Օծման յուղը, որը ճիշտ է, սկզբնավորվում է ձեթից, սակայն իր մեջ պարունակում է այլ բաղադրիչներ: Այդ մասին նա Ը մասում գրում է.

Աստծո ցույց տված խորհուրդը լուսաբանում է
Համեմատելով յուղեփողական գինու հետ՝
Զմուռսն առաքինության, առաջին յուղով հանդերձ,
Եվ զմուռս ու կնդրուկ մաքուր վարքի՝
Ամեն տեսակ անուշաբույր փոշիներով ու յուղով շաղախած ...

Այստեղ Նարեկացին նշում է Օծման յուղի երկրորդ բաղադրիչը՝ զմուռսը, որը խեժանյութ է: Ս. Մեռոնի կարևորագույն բաղադրիչը՝ բալասանը, որը նույնպես խեժանյութ է, չի հիշատակվում: Այս շատ կարևոր փաստագրությունը, ինչպես նաև բալասանի բացակայությունը ամբողջ «Աղոթք»-ում ենթադրելու տեղիք է տալիս, որ Նարեկացին կա՛մ պարզապես չի նշում բալասանը, կա՛մ Նարեկացու ժամանակ, այսինքն 10-րդ դարում, հավանաբար, Ս. Մեռոնը կարելի էր պատրաստել (կամ պատրաստում էին) բալասանին համարժեք զմուռսով, քանի որ Օծման յուղի զմուռսը դեռ չէր փոխարինվել Ս. Մեռոնի բալասանով:

Սա շատ կարևոր տեղեկություն է Ս. Մեռոնի ծագումնաբանական հարցերի ստուգաբանության համար, մանավանդ եթե նկատի ունենանք, որ Ս. Մեռոնի բոլոր՝ ներկայումս մեզ հայտնի մեկ տասնյակ ձեռագիր ցուցակներում զմուռսը ընդհանրապես բացակայում է, իսկ բալասանը համարվում է ամենակարևոր նյութը: Հիշենք, որ բալասանը այդ ցուցակներում, դրանցից ժամանակագրական առումով նույնիսկ ամենա-

հներից մեկը եղող՝ XV-րդ դարի մի ձեռագրում (Ձեռագիր թիվ 4994, Մաշտոց,1461թ.), առաջին նյութն է:

Մեռոնագիտության բնագավառում կատարված նորագույն ուսումնասիրությունները վկայում են, որ զմուռսը ստացվում է բուսական աշխարհի Բուրսերազգիների (Burseraceae) ընտանիքին պատկանող Կոմիֆորա կամ Բալզամադենդրոն (Commiphora Jacq.= Balsamadendron DC.) ցեղի տեսակներից:

Մի փոքր շեղվելով հիմնական նյութից՝ տեղին է նշել, որ բուսական աշխարհի Բուրսերազգիների ընտանիքը կոչվում է նաև զմուռսի ընտանիք, իսկ կոմիֆորա և բալզամադենդրոն բառերը հունարեն են և բառացի նշանակում են համապատասխանաբար ռետինակիր և բալզամածառ: Հայտնի է, որ Բուրսերազգիների, նաև այդ ընտանիքի Կոմիֆորա ցեղի ներկայացուցիչները արևադարձային և մերձարևադարձային բույսեր են և բնափայտի հատուկ զետեղարաններում կուտակում են յուղային խեժ: Վերջինս ծորում է բնափայտի արհեստական կտրվածքից և կախված տարբեր տեսակների քիմիական կառուցվածքից՝ պահպանվում է հեղուկ վիճակում որպես բալզամ, կամ պնդանում և դառնում է զմուռս: Բալզամներով հարուստ են նաև բուսական աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչներ, որոնք պատկանում են ամենատարբեր ընտանիքներին (մոտ 26 ընտանիքներ) և դրանք ունեն կիրառական նշանակություն ողջ աշխարհում ու գործածվում են տարբեր բնագավառներում. բժշկություն, օպտիկա, մանրադիտակային տեխնիկա և այլն: Անդրադառնալով Օծման յուղի երկրորդ կարևոր նյութին՝զմուռսին, հիշենք, որ Ս. Մեռոնի երկրորդ նյութը՝ բալասանը, նույնպես խեժանյութ է: Սակայն այն ոչ թե զմուռսն է, այլ, ինչպես վկայում են մեռոնագիտության նորագույն հետազոտությունները, բալասան կոչվող բալզամը: Այս խեժանյութը ստացվում է նույն զմուռսի ընտանիքի Commiphora ցեղի C. opobalasamum (L.) Engl. տեսակին պատկանող մշտադալար ծառից, որը բնության մեջ պահպանվել է Արաբական թերակղզու հարավ-արևմուտքում և Սոմալիում: Այն, ինչպես նաև այս ցեղի տարբեր տեսակներ (C. abyssinica Engl., C. shimperi Engl. և այլն) մշակվում են Պաղեստինում՝այսպես կոչված Մեքքայի բալզամ ստանալու նպատակով:

Նարեկացին նշելով Օծման յուղի նյութերը՝ զմուռսը, կնդրուկը, «անուշաբույր փոշիները» «Աղոթք»-ի ԺԱ մասում շարունակում է թվարկել դրանցից ևս մի քանիսը.

Ընտիր նարդոսը, եղեգնախունկը՝
Հալվեով խառնած,
Քրքումի հաճելի բույրով,
Փթթած ռղկույզի և ազնիվ գինու,
Ոչ սոսկ յուղի միությամբ
Պատշաճորեն պատկերացար...

Թվարկելով հիշյալ տողերի նյութերը՝ նարդոս, եղեգնախունկ, հալվե, քրքում, գինի և մտաբերելով Օծման յուղի համար հրահանգված (Ելից 23-25) նյութերը՝ զմուռս, կինամոն, խնկեղեգ, կասիա, համոզվում ենք, որ Նարեկացին չի կրկնում վերջինները, այլ նշում է Ս. Մեռոնին բնորոշները՝ նարդոսը, քրքումը և գինին: Սա արդեն Նարեկացու երկրորդ կարևոր վկայությունն է: Նարեկացին 10-րդ դարում Ս. Մեռոնի մեզ հայտնի սկզբնաղբյուրներից առաջինն է փաստագրում դրա մի քանի հատկանշական նյութե-

րը: Այս վկայությունը ավելի է արժևորվում, եթե կրկին հիշենք, որ Ս. Մեռոնի վերը հիշատակված թիվ 4997 ձեռագիր Մաշտոցը թվագրված է 1461 թվական, այսինքն 15-րդ դար: Այս փաստը հիմք է տալիս ենթադրելու, որ Հայ Եկեղեցին Նարեկացու ժամանակ՝ X-րդ դարում, օգտագործում էր արդեն ոչ թե Օծման յուղի, այլ Ս. Մեռոնի համար բնորոշ նյութեր: Հետևաբար կարելի է նաև եզրակացնել, որ 10-րդ դարում Հայ Եկեղեցու Ս. Մեռոնը իր բաղադրությամբ արդեն տարբերվում էր Ընդհանրական Եկեղեցու Օծման յուղից՝ իրեն հատուկ նյութերի առկայությամբ:

Վերը նշված նյութերից նարդոսի, քրքումի և գինու նշանակությունը Ս. Մեռոնի համար գնահատելիս անհրաժեշտ են որոշ բնագիտական բացատրություններ: Ինչ վերաբերում է «Աղոթք»-ում նշված եղեգնախնկին և հալվեին, ապա հայտնի է, որ խնկի այդ տեսակները չեն օգտագործվել ոչ Օծման յուղի և ոչ էլ Ս. Մեռոնի պատրաստման համար: Ստորև տրվում են որոշ տեղեկություններ նարդոսի, քրքումի և գինու մասին:

«Աղոթք»-ում նշված նարդոսը Ս. Մեռոնի մատենագիր ձեռագրերում առկա է «Սընֆուլ» արաբերեն բառով: Թիվ 6275 ձեռագրում այն «Սըմպուլ Հինտի» է, իսկ թիվ 2786 ձեռագրում այն ունի նաև «անուշահոտ արմատ է» հատկանշական բացատրությունը: Ս. Մեռոնի տպագիր աղբյուրներում այն արտահայտված է «Սիմպիլ հինտի» ձևով, որը լրացվում է «Նարդոս հնդկական» հայերեն համարժեքով:

Մեռոնագիտության վերը նշված աղբյուրները վկայում են, որ հանրահայտ նարդոսները հին աշխարհի ժողովուրդները գործածում էին թանկարժեք օծանելիքների պատրաստման համար: Դրանք ստացվում էին բուսական աշխարհի Կատվախոտազգիների (Valerianaceae) ընտանիքի տեսակներից, որոնց բնորոշ է հաճելի բույր, որը պայմանավորված է հատուկ եթերայուղի առկայությամբ: Դրանցից է, օրինակ, նաև բոլորին քաջ ծանոթ դեղատու կատվախոտը (Valeriana officinalis L.), որը մշակվում է դեղագործական նպատակներով: Եվրոպայում կելտական նարդոսը ստացվում էր Ալպերում տարածված կելտական կատվախոտից (Valeriana celtica L.), որը օգտագործում էին դեռ Հին Եգիպտոսում և Միրիայում որպես բաղնիքները հոտավետացնող բույս: Ս. Մեռոնի համար օգտագործվող հնդկական նարդոսը Հնդկաստանում հայտնի էր հնագույն ժամանակներից և նույնիսկ մշակվում էր արտահանման նպատակով: Այն ստացվում է Կատվախոտազգիների մեկ այլ ցեղի ներկայացուցչից՝ նարդոստախիս յատամանսի տեսակից (Nardostachys jatamansi DC.): Այս տեսակը բնության մեջ աճում է Նեպալի և Հնդկաստանի բարձր լեռնային շրջաններում՝ Հիմալայան լեռներում՝ 3000-3500 մ բարձրությունների վրա: Աժմ էլ այն հավաքվում է որպես տնտեսական նշանակության բույս: Այս բույսի մոտ 1 սմ հաստությամբ, մուգ դարչնագույն հոտավետ կոճղարմատը ունի դառը համ և պարունակում է 1-1.9% բարդ կառուցվածքի եթերայուղ: Վերջինս կիրառվում է դեղագործության, բժշկության, ինչպես նաև օծանելիքի արտադրության մեջ:

«Աղոթք»-ում նշված հաջորդ նյութը՝ քրքումը, Ս. Մեռոնի բոլոր ձեռագիր ցուցակներում արտահայտված է «Զաֆրան» պարսկերեն բառով, իսկ տպագիր ցուցակներում՝ նաև «Քրքում» հայերեն համարժեքով:

Յանովի քրքումը - Crocus sativus L. Հիրիկազգիների (Iridaceae) ընտանիքին պատկանող հնագույն մշակաբույս է: Այն հայտնի էր դեռ Հին Ասորեստանում, Հնդկաստա-

նում և Եգիպտոսում նի քանի հազարամյակներ Ն. Ք.: Այս բույսի վարսանդի գագաթնային մասը՝ եռաբաժան սպին, ունի հաճելի բուրմունք, քաղցրադառնավուն համ և կիրառվում է որպես համեմունք: Բաբելոնում, Պարսկաստանում և Չինաստանում քրքումի վառ դեղին գույնով էին ներկում թագավորական հագուստը: Չինաստանում նույնիսկ գործում էր օրենք ըստ որի՝ թագավորներից բացի քրքումի ներկը գործածողը ենթարկվում էր դաժան մահապատժի:

Բնության մեջ տարածված է քրքումի 80 տեսակ, որոնք հանդիպում են Հարավային Եվրոպայի, Միջերկրական ծովի ափամերձ և Հարավարևմտյան Ասիայի երկրներում: Սակայն ցանովի քրքումը ներկայումս հայտնի է միայն մշակության մեջ, և ենթադրվում է, որ առաջացել է իր վայրի ազգակիցների խաչասերումից: Այն արդյունաբերական մշակաբույս է, մշակվում է աշխարհի շատ երկրներում, այդ թվում Իսպանիայում և Ֆրանսիայում և գործածվում է որպես դեղին ներկանյութ և բուրավետ համեմունք՝ սննդի արդյունաբերության և հատկապես հրուշակագործության մեջ: Հայաստանում աճող վայրի քրքումների 2 տեսակներից մեկը՝ գեղեցիկ քրքումը (Crocus speciosa Bieb.), կարող է կիրառվել որպես համեմունքային բույս:

«Աղոթք»-ում նշված հաջորդ անուններն են «հասած ողկույզն» ու «ազնիվ գինին»: Գինին նշվում է Ս. Մեռոնի բոլոր ցուցակներում, թեև այն բացակայում է Օծման յուղի մեջ: Հայ Առաքելական Եկեղեցում գերադասվում է խաղողից ստացվող անարատ գինին:

Խաղողազգիների (Vitaceae) ընտանիքի մշակովի գիներեր խաղողը (Vitis vinifera L.) մարդու կողմից օգտագործվող հնագույն մշակաբույսերից է: Խաղողի մշակումը սկսվել է հազարամյակներ առաջ միջերկրածովյան ավազանի երկրներում, Առաջավոր և Միջին Ասիայում: Այդ մասին վկայող բազմաթիվ հնագիտական ապացույցներից ամենահինը վերագրվում է բրոնզե դարին: Հայաստանը խաղողի մշակության հնագույն կենտրոններից է, որի մասին վկայում են Կարմիր բլուրի և Էրեբունու պեղումներից հայտնաբերված խաղողի ածխացած սերմերը: Գիտնականները կարծում են, որ խաղողի հայկական հինավուրց տեսակների մեծ մասը սերվել է տեղական վայրի խաղողից:

Շարունակելով Ս. Մեռոնին նվիրված իր ձոնը՝ Նարեկացին «Աղոթք»-ի ԺԱ մասում գրում է.

Մանավանդ որ ոչ թե բազում և զանազան ծաղկանց
Խառնումով ու խմբակցությունով
Եվ բազմաբույլ այլայլումով՝
Օծման այս յուղը հրահանգեցիր
Ըստ հին ու ստվերական օրենքի,
Այլ դա օրինակ համարելով
Եվ ինքդ խառնվեցիր
Վերնալույս ձեթի այս մաքրությանը:

«Աղոթք»-ի այս հատվածում ուշադրության է արժանի «Օծման այս յուղը հրահանգեցիր ըստ հին ու ստվերական օրենքի» տողերը: Այսինքն այն օրենքի, որը այնքան պարզ արտահայտված է Հին Կտակարանի «Գիրք Ելից»-ի Օծման յուղի հրահանգի

հետևյալ տողերում. «Ա՛ռ քեզ պատվական համեմներ, զուտ զմուռս հինգ հարիւր սիկղ եւ նրա կեսի չափ՝ …անուշահոտ կինամոն ու երկու հարյուր հիսուն սիկղ անուշահոտ խնկեղեգն… Եվ… կասիա … ու մեկ հիմեն ձեթ, և սուրբ օծման յուղ պիտի անես այն՝ յուղագործի արհեստով բաղադրված» (Ելից 23-25):

«Աղոթք»-ի վերը նշված հատվածում հատուկ ուշադրության է արժանի նաև «Այլ դա օրինակ համարելով» տողը, որում ուղղակի նշվում է, որ Օծման յուղը օրինակ է հանդիսացել Ս. Մեռոնի պատրաստման համար: Սա Նարեկացու երրորդ կարևոր վկայությունն է, որում ուղակիորեն նշվում է, որ Օծման յուղը հանդիսացել է օրինակ և նախատիպ Ս. Մեռոնի համար: Կարևոր է և այն, որ ըստ Օծման յուղի և Ս. Մեռոնի բաղադրիչների զուտ բնագիտական հետազոտման արդյունքում ստացված եզրահանգման, Ս. Մեռոնի նախատիպը Օծման յուղն է, որը հաստատվում է և Նարեկացու աղոթքով:

Կրկին մի փոքր շեղվելով հիմնական նյութից՝ հարկ է նշել, որ մեռոնագիտության բնագիտական տվյալներով պարզվել է, որ Ս. Մեռոնի նախագաղափարը Հին Կտակարանում հրահանգվող Օծման յուղն էր: Վերջինիս հիմնական նյութը ձեթն էր, որին խառնում էին գլխավոր նյութը՝ զմուռսը, և մնացած համեմունքները՝ կինամոնը, խնկեղեգը և կասիան: Ս. Մեռոնի հիմնական նյութը նույնպես ձիթապտղի ձեթն է, որին ի տարբերություն օծման յուղի, ավելացնում են գլխավոր նյութը՝ բալասանը և մնացած նյութերը: Ընդ որում Օծման յուղի մեջ գործածավող 4 նյութերը Ս. Մեռոնի մեջ տասնապատկվում են և դառնում 40: Եվ թեև ակնհայտ է Օծման յուղի և Ս. Մեռոնի նյութերի մեծ տարբերությունը, սակայն ինչպես ցույց տվեցին բնագիտական ուսումնասիրությունները, դրանք ունեն կառուցվածքային ակնառու ընդհանրություն և քիմիական բնույթի միատիպություն, և կազմված են հեղուկ ճարպ - խեժանյութ - եթերայուղ սխեմայով:

Ամփոփելով նշենք այն հիմնական եզրահանգումները, որոնք բխում են «Աղոթք»-ից: Նախ արտահայտված է այն հայտնի միտքը, որ Օծման խորհրդի նախապարգևիչը «Հիսուս Քրիստոս, երկնային արքա»-ն է, իսկ Օծման յուղի և Ս. Մեռոնի հիմնական նյութը ձիթապտղի ձեթն է: Այնուհետև, նոր և հետաքրքիր փաստեր են Ս. Մեռոնի երկրորդ կարևոր նյութի՝ բալասանի բացակայությունը և զմուռսի առկայությունը, ինչպես նաև մյուս նյութերից նարդոսի, քրքումի, խաղողի գինու թվարկումը: Ս. Մեռոնի ծագումնաբանության տեսակետից կարևոր նորություն է այն վկայությունը, որ 10-րդ դարում Ս. Մեռոնը, հավանաբար, դեռ պատրաստում էին զմուռսով և ոչ թե բալասանով, թեև արդեն օգտագործում էին Ս. Մեռոնին բնորոշ վերը թվարկված նյութերը: Հիմնական եզրահանգումներից շատ կարևոր է նաև ուղղակիորեն արտահայտված այն միտքը, որ Ս. Մեռոնի համար օրինակ է հանդիսացել Օծման յուղը, որը հաստատված է նաև բնագիտական տվյալներով:

Այսպիսով, Նարեկացու Ս. Մյուռոնին նվիրված աղոթքի բնագիտական ուսումնասիրության ներկա փուլում առայժմ ի հայտ են եկել նոր և արժեքավոր վկայություններ Ս. Մեռոնի նյութերի վերաբերյալ, որոնք իրենց հերթին օգնում են լուսաբանելու Ս. Մեռոնի ծագումնաբանության և պատմության հետ կապված որոշ հարցեր: «Աղոթք»-ը հավանաբար իր մեջ դեռ շատ գաղտնիքներ ունի թաքցրած, որոնց մեկնաբանությունը մնում է ապագային:

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆԵՔԻ ԿԱՆՈՆԸ ՄԱՇՏՈՑ ԾԻՍԱՐԱՆՈՒՄ

Հայերեն ձեռագիր ժողովածուներում մեծ թիվ են կազմում Մաշտոց ծիսական մատյանները: Դրանց մեջ հատուկենտ են վաղագույն ընդօրինակությունները, որոնցում, սակայն, բացակայում է մեռոնօրհնեքի կանոնը, իսկ ուշ շրջանի Մաշտոցներում էլ միշտ չէ, որ այս կանոնն առկա է: Այն, անշուշտ, եղել է նրա խմբագրի՝ Մաշտոց Ա Եղիվարդեցու կազմած օրինակում ի թիվս այլ կաթողիկոսական կանոնների:

Հայոց Եկեղեցում ծիսական այս ժողովածուն գործածության մեջ է մտել վերջինիս կաթողիկոս ձեռնադրվելուց հետո (897 թ.): Եղիվարդեցու կազմած օրինակը մեզ չի հասել, սակայն նրա մեջ մտնող կանոնների մասին մենք կարող ենք պատկերացում կազմել ոչ միայն Գրիգոր Լուսավորչից մինչև Հովհան Մանդակունի հայրապետի՝ 14 կանոններ պարունակող "Կարգաւորութիւն աւրինութիւնաբեր ցուցակ" -ով[1], այլև վաղագույն Մաշտոցների նյութ-միավորներով:

Հայտնի է, որ Մաշտոց ծիսական ժողովածուում ամփոփված կանոնները ժամանակի ընթացքում ըստ դրանց ծիսական կիրառման բաժանվել են ու առանձնացվել. քահանաների համար "Մաշտոց ձեռաց" (Մկրտություն, դրոշմ, ամուսնություն, թաղում և քահանայական մյուս կանոնները), եպիսկոպոսների համար "Մաշտոց ձեռնադրութեան" (սարկավագի, դպրի, քահանայի ձեռնադրություն, գավազանի տվչություն, եկեղեցու օծում, քահանայաթաղ, այսինքն՝ եպիսկոպոսական իշխանությանը վերապահված կանոնները) ու կաթողիկոսական՝ "Հայր Մաշտոցը" (մյուռոնօրհնեք, եպիսկոպոսի ձեռնադրություն, թագավորի ու կաթողիկոսի օծման կարգը). կանոններ, որոնք վերապահված են և վերաբերում են բացառապես հայրապետական իշխանությանը:

Այսպիսի հստակ բաժանում մեզ հասած ձեռագրերում, ինչպես վաղ, այնպես էլ ուշ ընդօրինակություններում մենք չունենք: Մաշտոց ծիսարանը յուրահատուկ ժողովածու է, որքան էլ այն կանոնական է, այնուամենայնիվ, միատեսակ չէ: Հազվադեպ են անգամ միևնույն գաղափար օրինակից կատարված ընդօրինակությունների կանոնական նույնությունը: Քանի որ ձեռագիր Մաշտոցները սովորաբար կազմվում էին պատվիրատուի ցանկությամբ, ուստի ընտրված կանոններ էին ու քաղված էին տարբեր ընտիր և ստույգ օրինակներից:

Մաշտոցներից հնագույնը, թերևս, որ սերում է Մաշտոց Եղիվարդեցու կազմած օրինակից, Վենետիկի N 457 ձեռագիրն է: Ա. Մաթևոսյանը այն համարում է IX դ. գործ ու գրչի անթվական հիշատակարանը տեղադրել է այդ դարի թվաշարքում[2]: Մատյանը մեծադիր է, գրված է մագաղաթի վրա երկաթագրով, անզարդ է: Երբեմն գլխազարդերը

---

[1] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխ. Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 338:

[2] Անդ, էջ 45:

ոճավորված են նույն գրության թանաքով: Ընդօրինակությունը կատարվել է այդ դարին բնորոշ գրչությամբ, առանց տողադարձի, օգտագործված են այդ ժամանակ կիրառվող կետադրական նշանները՝ վերնակետը, որը գործածվում էր նաև միջնամասում ու բառավերջում, իսկ մտքի վերջում՝ վերջակետն է: Առոգանության նշաններից կիրառվել է շեշտը, այն էլ միայն մեկ անգամ: Պատվագրված են "թիւն" "թեան" "թեամբ" բառերի վերջածանցները:

Ձեռագրի գրիչը Գիորգ քահանան է, որը հավանաբար գրել է իր համար: Անվարժ գրիչ է Գիորգը, ուստի Մաշտոցն ընդօրինակել է բացթողումներով: Վրիպակաշատ էջերը սրբագրելիս գրիչը բառերի մեջ բաց թողնված մեկ կամ երկու տառերը ավելացրել է այդ բառերի գլխին կամ հաջորդ տողից դուրս:

Գիորգի ընդօրինակած Մաշտոցն իրոք IX դարի է: Դա բացատրվում է ոչ միայն ժողովածուում եղած հնագույն կանոնների առկայությամբ, այլև հաստատվում այս ձեռագրի հրատարակողի հիշատակարանի ձեռագրագիտական մանրամասն նկարագրությամբ[3]:

Այս Մաշտոցում կա 45 կանոն: Առաջին կանոնը Հովհան Մանդակունու՝ եկեղեցու հիմնարկեքի կանոնն է, ապա՝ նոր դուռ, սկիհ, մաղզմա, ժամհար, խաչ, աղի, հատի պատարագի, մկրտության, պսակի, թաղման, ապաշխարության ու ձեռնադրությունների կանոններ են: Գաղափար օրինակում ի թիվս այս հնագույն կանոնների եղել է նաև Մեռոն օրհնեքի կանոնը՝ "Կանոն խորհրդածութեան Սուրբ իւղոյն" (ստորին լուսացքում՝ "Միւռոն աւրհնել") խորագրով:

Քանի որ դեռ Հովհան Օձնեցի կաթողիկոսը (VIII դ.) իր "Վասն սուրբ միւռոնին" կանոնով մեռոնօրհնեքը զուտ հայրապետին վերապահված փակ կանոն է ամրագրել ու արգելում էր եպիսկոպոսներին ու քահանաներին Մեռոն օրհնել՝ "մի՛ ինքեամբ յանդգնեսցի աւրհնել"[4], գրիչն հայրապետի որոշմանը անհնազանդ լինելու մեղադրանքից խուսափելով բերում է կանոնի խորագիրը, սակայն չի ընդօրինակում այն. "Բայց մեք ոչ իշխեմք գրել, զի մի անհնազանդ գտանիցեմք Սուրբ Լուսաւորչի Աթոռոյն և մեծի հայրապետին մերոյ"[5]:

Մաշտոցի 45 քահանայական ու եպիսկոպոսական կանոններն, անշուշտ, մասն են կազմել Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսի խմբագրած ծիսական ժողովածուի: Չի բացառվում նաև, որ Գիորգ գրիչը Եղիվարդեցու կազմած Մաշտոցից արված գաղափար օրինակից ընտրությամբ դուրս է թողել մյուռոնօրհնեքի կանոնի հետ նաև կաթողիկոսական ձեռնադրության կանոնները ևս:

Մաշտոցի անվան Մատենադարանի հնագույն Մաշտոց ժողովածուն (ձեռ. N 1001, X դ.), ինչպես նաև XIII դարում գրված ծիսական ժողովածուները ընդօրինակվել են հենց Օձնեցու կանոնի պահանջներին համահունչ, ուստի դրանցում կաթողիկոսական իշ-

[3] Մայր ցուցակ ձեռագրաց Մատենադարանին ի Վենետիկ, հ. Գ, կազմեցին Հ. Բ. Սարգսյան և Հ. Գ. Սարգսյան, Վենետիկ, 1966, էջ 2-4: Այսուհետև՝ Ցուցակ ձեռագրաց Վենետիկի:

[4] Կանոնգիրք հայոց , հ. Ա., աշխ. Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 519-520: Այս մասին մանրամասն տե՛ս "Սրբալույս Մյուռոնի օրհնության կանոնը", Վ. Դևրիկյան, Սրբալույս Մյուռոն, Էջմիածին, 2008, էջ 49-59:

[5] Ցուցակ ձեռագրաց Վենետիկի, էջ 35:

խանությանը վերապահված այս կանոնը բացակայում է[6]:

Մաշտոցներում մեռոնօրհնեք պարունակող ձեռագրերը մենք կդիտարկենք ու կխմբավորենք ըստ մեզ հասած այդ կանոնի երկու վաղագույն խմբագրությունների:

Այս կանոնը վենետիկյան վաղ ձեռագրի "Կանոն խորհրդածութեան սուրբ իւղոյն" խորագրով մեր ձեռագրերում հանդիպում է ոչ հաճախ և դրանք էլ ուշ շրջանի ընդօրինակություններ են: Հիշյալ Մաշտոցներում այս կանոնն ունի "Մեծի աւուր Հինգշաբաթուն խորհրդածութիւն Սուրբ եւղոյն, զոր մեռոն կոչեն, որ է Հին Զատիկ աւրինականին և ի նորս փոխեցեալ Յիսուսիւ Քրիստոսիւ" խորագիրը:

Այս տարբերակի մեռոնօրհնեքի կանոնի ամենահին ձեռագիրը Մաշտոցի անվան Մատենադարանի N 965 ձեռագիրն է: Ընդօրինակման ժամանակը XIV դարն է: Քահանայական ու եպիսկոպոսական ձեռնադրության 65 կանոն է պարունակում Երևանում Դավիթ գրչի իր համար գրված Մաշտոցը: 23-րդը մեռոնօրհնեքի կանոնն է, որը զբաղեցնում է ձեռագրի 122բ-126բ էջերը և սկսվում է այսպես. "Ընդ առաւաւտոյն մտանէ եպիսկոպոսն ի սարկաւագացն և լուանա ձեռս…": Մաշտոցում, բացի այս կաթողիկոսական կանոնից, կա նաև թագավորի ձեռնադրության կանոնը (126բ-129բ): Երկսյուն բոլորգրով գրված, բազմաթիվ ճակատազարդերով ու կիսախորաններով, գեղեցիկ լուսանցազարդերով ու զարդագրերով ձեռագիրը Դավիթ գրիչն ավարտում է "…ի թ*հ*ուաբերութիւնս Հայոց Մեծաց ՊԶԱ (1432) …ի գա[ւառիս] Եղեգեաց ի Սույրբ [անապա]տս Երեան…"[7]:

Ուրծ գյուղում Մեսրոպ աբեղայի համար ընդօրինակված Մաշտոցի 24-րդ կանոնը մեռոնօրհնեքի խորհրդածությունն է: Կաթողիկոսական այլ կանոններ ձեռագրում չկան: Մաշտոցը բաղկացած է 58 քահանայական ու եպիսկոպոսական կանոններից: Կա նաև "Աւրհնութիւնաբեր ցուցակը" ու Մաշտոց Եղիվարդեցու վարք-հիշատակարանը: Խաչատուր գրիչն այն ավարտում է "…ի թուականութեանս Հայկազեանս տումարի ՋԻԲ(1474)… ի հոյակապ և հռչակաւոր գաւառս Արարատեան, ի գիւղս որ կոչի Ուրծ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի և Սուրբ Ստեփաննոսիս.."[8]:

Մինչև 1546 թ. պետք է ընդօրինակված լինի Մաշտոցի անվան Մատենադարանի մեկ այլ Մաշտոցը (ձեռ. N 998): Հովհաննես և Ստեփաննոս գրիչները Հովհաննես բաբունապետի պատվերով ընդօրինակում են 67 կանոններից կազմված Մաշտոցը, ուր կան նաև Սսի ձեռնադրության Մաշտոցներից վերցված կանոններ ըստ Հռոմեական Եկեղեցու եպիսկոպոսի, կաթողիկոսի, թագավորի ձեռնադրության ու մեռոնօրհնեքի երկու վաղ հայկական տարբերակ: Մեզ հայտնի Սսի կանոնի հետ նաև "Մեծի աւուր Հինգշաբաթուն խորհրդածութիւն Սուրբ եւղոյն, զոր մեռոն կոչեն, որ է Հին Զատիկ աւրինականին և ի նորս փոխեցեալ Յիսուսիւ Քրիստոսիւ" խորագիր ունեցող կանոնը[9]:

Մյուռոնօրհնության նման կանոն ունի նաև Սյունիքի Շատիկավանքում գրված և 64 կանոններից կազմված XVII դարի Մաշտոցը: Բացի քահանայական կանոններից այն

---

[6] Մատենադարան, ձեռ. 1001, էջ 1ա-184ա:

[7] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Գ, Երևան, 2007, էջ 1499, հմմտ ձեռ. 965, էջ 377ա, Կանոն ԻԳ :

[8] Նույն տեղում, էջ 1444, հմմտ. ձեռ. 958, 354ա: Կանոն ԻԴ 134ա-138ա:

[9] Նույն տեղում, հ. Գ, էջ 1763 ԻԲ կանոն:

պարունակում է եպիսկոպոսական՝ անագանոսի, ջահընկալի, դպիրների, սարկավագի, քահանայի և կաթողիկոսական՝ մեռոնօրհնեք, (78բ-80ա) ու թագավոր օրհնեքի կանոնները (80ա-83բ): Հավանաբար գրիչ Հովհաննես աբեղան Մաշտոցը գրել է իր համար: Ընդօրինակությունը գրիչը կատարել է անասելի դժվար պայմաններում, թշնամիների ավարառությունից ձեռագիրը անընդհատ փախցնելով: Այսուայնտեղ գրածը մի կերպ պահելով՝ ավարտում է այն՝ ասելով. "Դարձեալ յիշեցէք՝ զԹումա քահանայն, որ շատ անգամ ահիւ և դողութեամբ սպասաւորեցին և պահեցին Հայր Մաշտոց ի ձեռաց անաւրինաց, որ բազում անգամ շատ չարչարանք և տառապանք անկեանք ի ձեռս տաճկաց և մեք շնորհաւքն Քրիստոսի ոչ խոստացաք զՄաշտոցս, այլ ամրացուցեալ պահեցաք զսա"[10]: Ձեռագրում բացակայում է ավարտման թվականը հաստատող հիշատակարանային վկայությունը:

Մաշտոցների հատուկ խումբ են կազմում Կիլիկյան Մաշտոցները:

Կիլիկյան շրջանում այս ժողովածուն հարստանում է նոր կանոններով, շարականներով, գանձերով ու տաղերով: Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը թարգմանում ու ծիսական ժողովածու է մուծում Եփրեմ Խուրի Ասորու "Կանոն Մեծի Հինգշաբաթի Ոտնլուային" կանոնը, ավելի ուշ Ներսես Շնորհալու հանգստյան շարականները, Արարչական և Նորաստեղծեալ երգերն են ավելանում: Ավելին, ստեղծվում է նոր՝ Ներսես Լամբրոնացու խմբագրած Մաշտոցը, ուր հավասար կիրառման իրավունք են ստանում հայ-հռոմեական ծիսակարգից վերցված կանոնները: Հռոմեական Եկեղեցու թագավորի, եպիսկոպոսի ու կաթողիկոսական ձեռնադրության ու այլ կանոնների թարգմանիչն է Ներսես Լամբրոնացին: Այդ նոր կազմված օրինակից տարբեր ժամանակներում կատարվում են ընդօրինակություններ ոչ միայն Կիլիկիայում, այլև Հայաստանի մնացյալ վանքերում և հայկական գաղթօջախներում:

Ներսես Լամբրոնացու գրած օրինակից արված և կաթողիկոսական կանոնները պարունակող կիլիկյան ամենահին ձեռագիրը Սսի նշանավոր Մայր Մաշտոցն է, որ պահվում է Անթիլիասում (ձեռ. N 9): Մաշտոցի գրիչը, ժամանակն ու ընդօրինակման վայրն անհայտ են: Հայտնի է միայն պատվիրատուն՝ Կոստանդին Կեսարացի կաթողիկոսն ու ձեռագրի կազմողը՝ Ճոսլինը. "Երկրորդ Լուսաւորիչ Հայկազեան ազգիս Տէր Կոստանդին զանարժան և մեղաւոր ծառայս ձեր, զկազմող սորայ՝ զՃաւսլինս յիշեայ առաջի Քրիստոսի Տեառն մերոյ", - գրում է անհայտ գրիչը(1ա)[11]:

Գրված է բոլորգրով՝ ընտիր մագաղաթի վրա: Նկարազարդ է, ունի կիսախորաններ՝ գլխազարդերով, լուսանցազարդեր: Հետաքրքիր է նաև ձեռագրի արծաթյա կազմը: Ա փեղկին հայրապետական ու թագավորական օծման դրվագներն են, Բ փեղկին՝ եպիսկոպոսական օծման և Մյուռոնի օրհնության արարողությունն է: 8 աստիճանով և ամպհովանիով նստած է հայրապետը՝ ձեռքին Ս. Լուսավորչի աջը, երկու եպիսկոպոսներ՝ զույգ աջերով: Եպիսկոպոսներից մեկը ծնկի է իջած Սուրբ Մեռոնի կաթսայի առջև, վերևում աղավնակերպ Սուրբ Հոգին է ու Հայր Աստված[12]:

---

[10] Անդ, էջ 1770-1774, հմմտ. 999 236ա:

[11] Յուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, կազմեց Անուշավան վրդ. Դանիելյան, Անթիլիաս, 1984, էջ 97:

[12] **Անուշավան վրդ. Դանիելյան,** Յուցակ Անթիլիասի, էջ 96:

Սսի Մայր Մաշտոցը պետք է որ գրված լինի մինչև 1311 թ. Կոստանդին կաթողիկոսի Ս. Սոֆիայի տաճարում հրավիրված սինոհոդոսը (վկայություն կա ձեռագրի 69բ-70ա էջերում):

Այս Մաշտոցն ունի չորս կանոն. ա/ Մեռոնօրհնեք (2ա-67ա), բ/ Եպիսկոպոսի ձեռնադրության և թաղման կանոնները (67ա-139բ), գ/ Կաթողիկոսի ձեռնադրություն (140ա-81ա), դ/ Կարգաւորութիւն աւրհնութեան թագաւորի ըստ մեծի եկեղեցւոյն Հռովմայ (220ա), Լևոն թագավորի երդման գիրը (221բ): Վերջին կանոնի նյութերը թարգմանել ու գրել է Ներսես Լամբրոնացին: Այս կանոնով Սսի Մայր Մաշտոցը տարբերվում է մեզ հասած Աղթամարի Մայր Մաշտոցից: Սսի կաթողիկոսները մատյանի բաց էջերում իրենց գահակալության թվականներն են թողել՝ սկսած Կոստանդին Բ Լամբրոնացի կաթողիկոսից (1380 թ.) մինչև Կիրակոս կաթողիկոսը (1797 թ.):

Թեև անհայտ գրիչն արգելում է ձեռագրում որևէ բան ավելացնել (2ա) մեռոնօրհնեքի կանոնի սկզբում "Այս են նիւթք և պէտք Սրբալոյս Մեռոն"- ից հետո հետագայում, հավանաբար XVII դ. նոտրգրով թղթի վրա գրված ու ավելացված է Սրբալույս Մյուռոնի օրհնության հետ կապվող "Վասն թափորի զՍրբալոյս Մեռօնի արարողութեան ըստ ծեսի Հայաստանեայց Եկեղեցւոյ…" նյութը: Ձեռագրի այս երկրորդ կազմելու ժամանակ է ավելացվել նաև կաթողիկոսին նվիրված բանաստեղծությունը (181բ)[13]:

Բուն մեռոնօրհնեքը զբաղեցնում է 5ա-65բ էջերը ու սկսվում է այսպես "Յաւուր Մեծի Հինգշաբաթի ի ժամ Սուրբ Պատարագին զՍուրբ Մեռոնն թափեն յաման արծաթի...": Ուսումնասիրողները այս կանոնի մեջ մտնող նյութերը համարում են մինչև Լամբրոնացու խմբագրությունը գրված, ավելի ստույգ՝ մինչև IX դարը[14]:

Հին է նաև կանոնին նախորդող "Այս են նիւթք և պէտք Սրբալոյս Մեռոնին" մասը, ուր թվարկվում են Մյուռոնի օրհնության համար անհրաժեշտ անուշահոտ խնկելի բույսերը (մոտ 40): Քառասուն անուշահոտ նույնպիսի նյութեր է պարունակում նաև Ասորական Եկեղեցու Մյուռոնը:

Մեռոնօրհնեքի այս կանոնը պարունակող Մաշտոցներում առանձնանում է Էջմիածնի Մաշտոցը՝ "Մաշտոց օրհնութեան Սրբալոյս Միւռոնի, եպիսկոպոսի և կաթողիկոսի ձեռնադրութեան և օծման թագաւորի" խորագրով: Կիլիկյան ամենահին՝ Սսի Մայր Մաշտոցի նման այս ժողովածուն ևս ունի չորս կանոն՝ եպիսկոպոս օրհնեք, կաթողիկոսի ձեռնադրության և թագավորի, ինչպես նաև Մյուռոնի օրհնության:

Մեռոնօրնեքի կանոնին այստեղ ևս նախորդում է "Այս են նիւթք և պէտք Սրբալոյս Մեռոնին" հատվածը պալասանից մինչև ճապառնուկ քառասուն նյութերի հիշատակությամբ (75ա):

Էջմիածնի Մաշտոցի մեռոնօրհնեքի կանոնը ևս վերցված է Սսի Մայր Մաշտոցից: Ի տարբերություն կիլիկյան Մաշտոցի, այստեղ կանոնի սկզբում կա մեռոնօրհնեքի նկարը (75բ): Ձեռագիրը գրված է մագաղաթի վրա վարժ բոլորգրով երկսյուն գրությամբ, ամեն մի ընթերցված, աղոթք, սաղմոս, շարական սկսվում է գեղեցիկ բազմագունի գլխազարդերով, առատորեն օգտագործված է ոսկին: Յուրաքանչյուր կանոնի սկիզբ

---

[13] Նույն տեղում, սկսում է այսպես "Յորժամ ելանէ ի Վեհարանէն զգեստեալ հանդերձ բազմութեամբ եպիսկոպոսաց…" (3ա-4ա):

[14] **Վ. Դևրիկյան**, Սրբալույս Մյուռոն, էջ 57:

գեղեցիկ կիսախորաններով, վարպետությամբ արված զարդագրերով է: Պատվիրատուն Աղթամարից Ս. Էջմիածնում գահակալած Զաքարիա կաթողիկոսն է. "…տէր Զաքարիա կաթողիկոս և պատրիարք Վաղարշապատու մեծ քաղաքի…կենսատու Սուրբ Նշանէն Աղթամարայ սուրբ աթոռոյն…տիրեաց Սուրբ Էջմիածինս.."[15]: Ստեփաննոս գրիչը ընդօրինակում է այս ձեռագիրը "…ի Սուրբ Էջմիածինս առ ոտս Զաքարիայի և կաթողիկոսի Ամենայն Հայոց, ի խանութեան Ջահանշահի և ի թվականիս ՋԺ (1461)" [16].

Ընդօրինակելիս գրիչը նախօրոք նկարազարդման համար անհրաժեշտ տեղ է բաց թողել, ապա կարմրագիր երկաթագրով ու բոլորգրով սկսել համապատասխան կանոնը: Ձեռագրագիտական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամբողջ ձեռագիրն ավարտելուց հետո նոր գրիչը նկարել է նախ կիսախորանները, ապա արել գլխառաջի լուսանցազարդերն ու հանգուցագրով, թռչնագրով ու կենդանագրով կանոնների սկիզբը (76ա զարդագրերի առաջին տառի կենդանակերպ "Յ"-ի վերևի մասն անցնում է նկարազարդ խորանի վրայով):

Գրչական առումով առանձնապես հետաքրքիր է Մյուռոնի օրհնության կանոնի գրքառաջի ընդօրինակումը: Կանոնի սկիզբը "Յաւուր Մեծի Հինգշաբաթոջն ի աւուր զՍ. պատարագին զսուրբ մեռոնն" նախադասության "Յաւուր Մեծի" բառերը զարդագրված հանգուցագրեր են, "հինգշաբաթուջն ի աւուր" գրված է կարմիր, իսկ "աւուր զՍ. պատարագին" ոսկեգիր երկաթագրով: Այդպես է եղել նաև գաղափար օրինակում: Քանի որ գաղափար օրինակին հարազատ մնալը գրչության արվեստի պարտադիր սկզբունքներից էր, ուստի ընդօրինակման ժամանակ էջը էջին, տողը տողին արտագրելու ու գրատեսակների նույնությունը պահպանելու պահանջը երբեք չէր խախտվում: Երկաթագիրը ի տարբերություն բոլորգրի շատ տեղ էր զբաղեցնում, դրանով գրելը բավական դժվար էր: Ուստի նախադասությունն ամբողջապես տեղավորելու համար "աւուր" բառը գրվել է կցագրով, "զսբ" պատվագրությունը գրել է "Ջ" տառի գլխիկի մեջ ու վրան պատվագրման նշան դրել[17]:

Գրիչը բավական դժվարանում է գրքառաջների զարդագրերը ու երկաթագրով հաջորդ երկու նախադասությունները գրելիս: Զարդագրերն անհավասար են, գնալով փոքրանում են, երբեմն չեն տեղավորվում մեկ տողում, ուստի զարդագրի թանաքով տեղափոխվում են կարմիր երկաթագրով հաջորդ տողի սկիզբ[18] (51ա Կաթողիկոսական կանոնի սկիզբ):

Մաշտոցում կան նաև Աստվածածնի (2բ) ու ևս չորս թեմատիկ նկարներ՝ եպիսկոպոսի (11բ), կաթողիկոսի (50բ), Մեռոնի (75բ) և թագավորի օրհնության (112բ):

---

[15] Մատենադարան, ձեռ N 4997 135աբ: Հմմտ. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էր 154-155: Այսուհետև ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Բ: Զաքարիա Աղթամարցին կաթողիկոս չի ընտրվել, այլ Ս. Էջմիածնում Ջահնշահի աջակցությամբ գահ է բարձրացել ժամանակի Գրիգոր Ջալալբեկյան կաթողիկոսի փոխարեն (տե՛ս **Հ. Հայրապետյան**, Վաղարշապատի Մաշտոցը, "Էջմիածին", 1994, Զ-Է, էջ 60) :

[16] Մատենադարան, ձեռ.N 4997, էջ 136բ: ԺԵ դարի հիշատակարաններ, մ. Բ, էջ 156: Հմմտ.

[17] Մատենադարան, ձեռ. 4997, էջ 76ա:

[18] Անդ, էջ 51ա:

Եթե գրքառաջներում նկարազարդելիս տեղի պակասի պատճառով առանձին անհարթություններ կան, ապա բուն բնագրում գլխազարդերն ու լուսանցազարդերն արված են մեծ վարպետությամբ: Ընդօրինակելիս գրիչն օգտագործել է կարմիր, կապույտ թանաքները, քիչ չեն նաև ոսկեգրով արված հատվածները, որոնք անջատում ու ընդգծված են դարձնում հայրապետին վերապահված աղոթքները և ընթերցվածները արարողության ընթացքում: Կարմրագիր ու կապույտ են եպիսկոպոսներին վերաբերող օրհնություններն ու աղոթքները:

Իրապես կաթողիկոսական Մաշտոց է այս ձեռագիրը: Մագաղաթը սպիտակ է ու բարակ, գիրը հստակ է ու անթերի, շքեղ նկարազարդված: Վաղարշապատում գրված այս ձեռագրի գրչության արվեստին քաջատեղյակ Ստեփաննոս գրիչը իրավամբ ընդունվում է նաև Մաշտոցի նկարազարդող ու անգամ նույնացվում է Ստեփաննոս Աղթամարցի կաթողիկոսի հետ[19]:

Զաքարիայի Ս. Էջմիածնից հեռանալուց հետո ձեռագիրը կաթողիկոսի հետ հայտնվում է Աղթամարում, ապա տաս տարի անց Աղթամարի կաթողիկոսության նորընտիր Ստեփաննոս Աղթամարցի կաթողիկոսի պատվերով ընդօրինակվում է մի Մաշտոց: Ստեփաննոս կաթողիկոսը ձեռագրի ընդօրինակությունը վստահում է եղբորը՝ Ներսես եպիսկոպոսին: Գրչական արվեստում հմուտ է Ներսեսը, սովորել է Աղթամարի վարդապետարանում, աշակերտել է գրիչ Մինասենց Թումային և Հայրապետ փիլիսոփային: Մաշտոցի գլխավոր հիշատակարանում, ի թիվս միաբանության այլ անդամների, գրիչը հիշում է "նաև զուսուցիչն մեր Մինասենց տէր Թումային, որ բազմաթիւ աշխատանք կրեաց ի վերայ մեր և զտէր Հերապետ փիլիսոփայն, որ շատ նեղութիւն կրեցին ի վերայ մեր"[20]:

Մաշտոցը գրված է թղթի վրա, բոլորգրով: Ներսես եպիսկոպոսի բոլորգիրն ավելի խոշոր է, երբեմն փռված, ուստի ավելի շատ տեղ է զբաղեցնում, քան նախագաղափար ձեռագրի՝ Ստեփաննոսի հարթ ու գեղեցիկ բոլորգիրը: Դրա համար էլ թեպետ այդ երկու ձեռագրերն իրենց չափերով գրեթե նույնն են, և ընդօրինակություններն էլ բնագրային առումով միմյանցից շատ քիչ տարբերություններ ունեն, Ներսես գրչի ընդօրինակությունն ավելի շատ էջեր է զբաղեցնում:

Մեզ հետաքրքրող կանոնը այս Մաշտոցում զբաղեցնում է 104ա-21Օբ էջերը: Ինչպես Էջմիածնի Մաշտոցում, այստեղ ևս կանոնին նախորդում է "Այս է նիւթ սրբազան Մեռոնին" (102ա էջ), որը, սակայն, Մեռոնի մեջ մտնող նյութերի պարզ թվարկում չէ միայն: Այստեղ բնագիրը այլ է և՛ անուշահոտ բույսերի ու ծաղիկների քանակի թվարկումով (28), և՛ բովանդակությամբ, ուր համառոտ ներկայացվում է Մյուռոնի օրհնությանը նախորդող պատրաստության շրջանը: Գաղափար օրինակի նման է, թերևս, միայն գրչի այդ էջի հիշատակագրությունը[21]: Մեռոնօրհնեքի հիմնական կանոնն իր մեջ եղած նյութ միավորների առումով բնագրային ոչ մի շեղում չունի:

Յուրաքանչյուր կանոն գաղափարի նման սկսվում է երկաթագրով, որն այստեղ, ի տարբերություն Էջմիածնի Մաշտոցի, երկշարք է: Օգտագործվել է կարմիր և երբեմն նաև ոսկեգույն թանաք: Նախագաղափարի համեմատ այստեղ քիչ են նաև լուսանցա-

---

[19] **Հ. Հայրապետյան**, նշվ. աշխ. էջ 66, 60:

[20] ԺԵ դարի հիշատակարաններ, մ. Բ, էջ 310:Հմմտ. ձեռ. 5702, էջ 241բ:

[21] Մատենադարան, ձեռ. 5702, էջ 102ա:

զարդերը ու բազմառճ զարդագրերը: Գրքառաջի գլխազարդերը կա՛մ ամբողջովին թռչնագիր են, կա՛մ սկսվում են թռչնագրով ու ավարտվում հանգուցագրով:

Նկարազարդումը կատարվել է ձեռագրի ընդօրինակման հետ միաժամանակ: Մոռացվել ու բաց են մնացել որոշ աղոթքների ու շարականների գլխազարդերը (145ա, 173բ): Ծաղկողը պահպանել է նախագաղափարի նկարազարդման հնարքները: Պատվիրատուի պահանջով գրվել են Էջմիածնի օրինակի բոլոր կանոնները, նույնն են յուրաքանչյուր կանոնի կիսախորանները և դրանց նախորդող էջերին թեմատիկ պատկերները (թվով 5), սակայն այլ է կատարման տեխնիկան ու վարպետությունը:

Ի տարբերություն Էջմիածնի Մաշտոցի, այս Մաշտոցի նկարազարդողն էլ հայտնի է: Այդ մասին վկայություն կա կաթողիկոսի ձեռնադրության նկարի տակ. “ԶԿարապետ նկարող և զուսուցիչն իմ՝ Մինաս յիշեցէք ի Քրիստոս”[22]: Մինաս ծաղկողի աշակերտը՝ Կարապետ նկարիչը, իր գործի գիտակն է ու տաղանդավոր, հմուտ վարպետ է, թեև այս Մաշտոցը չունի ոսկու այն փայլն ու շքեղությունը, ինչ Զաքարիա կաթողիկոսի համար գրված Մաշտոցը:

Փաստորեն, Մաշտոցի անվան Մատենադարանի N 5702 ձեռագիրը Էջմիածնի Մաշտոցից ոչ միայն ընդօրինակման նյութով, այլև Կարապետ նկարչի նկարազարդման տեխնիկայով է տարբերվում: Երկու ձեռագրերն էլ Վասպուրականի մանրանկարչական դպրոցին են պատկանում:

Գրիչն ավարտում է այն “ի թուականութեան Հայկազեան տօմարի Ջ ու Ի (1471թ), յամսեանն Արեգի ԻԵ (25)”[23]:

Այդ նույն տարում Աղթամարում Կարապետ ծաղկողը նկարազարդում է նաև Մինասենց Թումայի մյուս աշակերտի՝ Հայրապետի այլ գաղափար օրինակից ընդօրինակած Մայր Մաշտոցը[24]:

Կիլիկյան Սսի Մայր Մաշտոցից են սերում նաև XVI դարի մի քանի Մաշտոցների ձեռնադրության կանոնները, որոնք պարունակում են կաթողիկոսական միայն երեք կանոն՝ եպիսկոպոսի, կաթողիկոսի ձեռնադրության կանոնները ու մեռոնօրհնեքի կանոնը: Դրանց մի մասը ևս գրվել են կաթողիկոսների պատվերով:

Մաշտոց ձեռնադրության № 7043 ձեռագրի ժամանակն ու տեղն անհայտ են: Գրված է բոլորգրով, թղթի վրա: Գրիչը հավանաբար Մխիթարն է: Նկարազարդ է: Կիսախորանների, լուսանցազարդերի ու զարդագրերի հետ ձեռագրում կան նաև թեմատիկ նկարներ, որոնք դրված են յուրաքանչյուր կանոնից առաջ: Մաշտոցում կա երեք կանոն, համապատասխանաբար երեք նկար՝ եպիսկոպոսաց ձեռնադրություն (6բ), կաթողիկոսական ձեռնադրություն (52բ) և մյուռոնօրհնեք (78բ)[25]:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող այս նույն ձեռագրից է կատարված նույն ժամանակի գրչական հանգամանքներն անհայտ մեկ այլ ձեռնադրության Մաշտոց (ձեռ. № 1090): Ձեռագիրը նախորդից տարբերվում է միայն թեմատիկ նկարների

[22] Անդ, հմմտ. 5702, էջ 70բ:

[23] Անդ, էջ 311:Հմմտ.անդ, էջ 242ա:

[24] Մատենադարան, ձեռ. N 4775:

[25] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 1043:

բացակայությամբ[26]:

Սուրբ Սարգիս վանքում Մկրտիչ գրիչը Մանվել արքեպիսկոպոսի համար ընդօրինակում է մի Մաշտոց ձեռնադրության: Ձեռագիրը գրված է նոտրգրով թղթի վրա ուրվագծային երկուական ճակատազարդերով, դրանց համապատասխան լուսանցազարդերով ու մեկ թռչնագիր զարդագրով, որով սկսվում է մյուռոնօրհնեքի կանոնը: 116 թերթ ունեցող այս Մաշտոցի մեզ հետաքրքրող կանոնը զբաղեցնում է 29ա-64ա էջերը: Ամբողջապես վերցված է Զաքարիա կաթողիկոսի Էջմիածնի Ձեռնադրության Մաշտոցից, տարբերվում է միայն եպիսկոպոսական կանոնի մեջ մտնող երկու լրացուցիչ նյութերով: Ինչպես Մատենադարանի № 1043 (45բ, 32ա) և N 1090 ձեռագրերի այս կանոնում, այստեղ ևս դրանք "Սահմանք և աւրինադրութիւնք" ու "Զգուշութիւն" միավորներն են[27]: Մանվել եպիսկոպոսի համար գրված Մաշտոցում բացակայում է Մեռոնի պատրաստման մեջ մտնող նյութերի ցանկը: Մկրտիչը ձեռագիրն ավարտում է "…ի դուռն Սուրբ Սարգսի զաւրավարին, ի կաթողիկոսութեան տեառն Միքայէլին, առաջնորդ տեղւոյս տէր Փիլիպոս արհեպիսկոպոսին, բռնակալութեան Թահմահ շահի, ի թվականիս ՌԴ (1555)"[28]:

Այս նույն դարի մեկ այլ Մաշտոց ձեռնադրության էլ է պահվում Մաշտոցի անվան Մատենադարանում: Դրանում բացակայում են գրչության հանգամանքները: Այն պարունակում է նույն կանոնները, ինչ Մկրտիչ գրչի գաղափար օրինակում. երեքն էլ կաթողիկոսական կանոններ են: Ի տարբերություն N 1087 ձեռագրի, Սսի Մաշտոցից վերցված մյուռոնօրհնեքի կանոնին (64ա-93ա) այստեղ նախորդում է "Այս են նիւթք և պէտք Սրբալոյս մեռոնին" ցանկը (62բ-63ա): Այս ցանկը կա նաև վերը նշված երկու Մաշտոց ձեռնադրություններում (ձեռ. 1043, 77բ- 8ա) ձեռ. № 1090, 62բ-3ա): Մաշտոցն այս նկարազարդ է՝ երկու կիսախորանով ու մեկ ճակատազարդով, լուսանցազարդերով և թռչնագիր ու հանգուցագիր զարդագրերով[29]:

Այս նույն գաղափար օրինակից է գրված նաև XVI դարի մեկ այլ Մաշտոց ձեռնադրություն, որը նախորդ ձեռագրից, որի գրչության տեղն ու ժամանակը հայտնի չեն, տարբերվում է ոչ միայն նկարազարդմամբ (բոլոր երեք ճակատազարդերը, բուսական ու թեմատիկ՝ կաթողիկոս, եպիսկոպոս, լուսանցազարդերն և թռչնագիր ու հանգուցագիր զարդագրերն արված են մանուշակագույն թանաքով), այլև կազմողի հիշատակարանով, որը վկայում է, որ այն գրվել է կաթողիկոսի պատվերով. "Ով սուրբ հայրապետ, յիշեցէք զանարժան կազմող գ/հրոցս, սուտանուն Յակոբ յիշեցէք: Ի թվականութեանս ՌԽԸ (1599)[30]: Հիշատակարանը ցույց է տալիս նաև, որ ձեռագիրը գրված պետք է լինի մինչև 1599 թվականը:

Կաթողիկոսի պատվերով է գրված ու նույն բովանդակությունն ունի նաև Էջմիածնի 1616 թ. Մաշտոց ձեռնադրությանը: Ընդօրինակված է բոլորգրով թղթի վրա: Գրիչը Առաքել երեցն է, պատվիրատուն՝ Մելքեսեթ կաթողիկոսը: Նկարազարդ է, յուրաքանչ-

---

[26] Անդ, ձեռ. 1090:

[27] Մատենադարան, ձեռ. N 1087, էջ 107ա-113ա: Ձեռ.N1090, 35բ-40բ:

[28] Անդ, ձեռ. N 1087, էջ 113ա: Ձեռագիրը հնարավոր է գրված լինի Երևանում:

[29] Անդ, ձեռ. N 1090:

[30] Անդ, ձեռ. N 2507, էջ 88ա:

յուր կանոնի սկզբում թեմատիկ նկարներն են կաթողիկոսի ձեռնադրության (7բ), մյուռոնօրհնեքի (39բ) և եպիսկոպոսի ձեռնադրություն (85բ): Ունի մեկ կիսախորան, երկու ճակատազարդ ու բուսական լուսանցազարդեր և հանգուցագիր զարդագրեր:

Մյուռոնօրհնեքի կանոնի վերջում Առաքել երեցի հետևյալ հիշատակարանն է. "Ով սրբազան հայրապետ, որժամ մեռոնն աւրհնես, զսուտանուն և զանպիտան զԱռաքել Հրէցս յիշես, որ բազում աշխատութեամբ գրեցի զսա ի վայելումն տէր Մելիքէսէթ կաթուղիկոսին, ի թվականիս Հայոց ՌԿԷ (1616)"[31]:

Եփրեմ վարդապետը (ապագա կաթողիկոսը), որ աշակերտել էր Սիմեոն կաթողիկոսին և "ի նմանէ ունիմ ուսանիլ զգիրս, որ մեծաւ երկամբ և աշխատութեամբ ուսոյց ինձ զարհեստ նօտարութեան", Սիմեոն կաթողիկոսի համար 1779 թ. էջմիածնում ընդօրինակում է Մաշտոց ձեռնադրության, որպեսզի վերջինս "…յաւուրս իւր վայելեսցէ կատարելով զկարգս և զօրհնութիւնս սրբազնագործօղս և յետ փոխման իւրոյ յաշխարհէ// յետագայ յառաջնորդողքն զԱթոռս Սուրբ…"[32]: Ընդօրինակվել է հին օրինակների հիման վրա արված ճշտված օրինակից. "…ձեռնարկեալ ի հին օրինակսն և զգուշութեամբ մեծաւ սրբագրեալ…դիւրացուցեալ գրեցոյց": Կաթողիկոսը այս ձեռագիրն ընդօրինակել է տալիս Եփրեմ վարդապետին երկու օրինակից: Եփրեմ վարդապետն ավարտում է "…ի ՌՄԻԸ (1779) թուոջ մերում և ի մայիսի ամսոյ Ի (20)"[33]:

Մայր Աթոռի "սրբարուեստ նկարակերտի"՝ Երեմիա արքեպիսկոպոս Օշականցու վարպետությամբ արված այս նկարազարդումը՝ ծաղիկները, խաչը, կիսախորաններն ու ճակատազարդերը, լուսանցազարդերը, թռչնագիր ու կենդանագիր զարդագրերը բազմագունի ու ոսկեզօծ են:

Մաշտոցում հիշատակություն կա Սիմեոն կաթողիկոսի վախճանման մասին (76բ-77բ), ինչպես նաև կից 3 թերթի վրա շղագրով գրված է Գևորգ Դ կաթողիկոսի օրոք տպագրության նախապատրաստվող Մաշտոց ծիսական ժողովածուում մեռոնօրհնեքի կանոնի ու Մյուռոնի պատրաստման մեջ մտնող նյութերի օգտագործումը կապված Գևորգ Չորրորդ կաթողիկոսի հետագայում կատարած դիտողությունների հետ[34]:

Ծերունազարդ հասկում՝ 1810 թ. հայրապետ դարձած Եփրեմ կաթողիկոսը օգտվում է այս Մաշտոցից:

Մաշտոցի անվան Մատենադարանում է պահվում նաև Եփրեմ վարդապետի ընդօրինակած այս Մաշտոցի երկրորդ օրինակը: Այն նախորդ օրինակից տարբերվում է միայն խորագրով. "Մաշտոց ձեռնադրութեան կաթողիկոսի և հայրապետի Հայոց ազգի, նաև օրհնութեան Սուրբ Մեռոնի, գրեալ յԵփրեմ եպիսկոպոսէ, և ծաղկեալ յԵրեմիա եպիսկոպոսէ, ի վայելումն տեառն Սիմէօն կաթողիկոսի, յամի Տեառն 1779 և Հայոց թուին ՌՄԻԸ (1779), ի Սուրբ Էջմիածին"[35]:

Սսում գրված մեկ այլ Մաշտոցի գաղափար օրինակից է արվել Հարություն Նոր Ջուղայեցու՝ Սանկտ Պետերբուրգում պահվող ընդօրինակությունը, որն ընդգրկում է

[31] Մատենադարան, ձեռ. N1088 85ա: 39ա-85ա:

[32] Մատենադարան, ձեռ. N 2891, էջ 73ա-73բ:

[33] Անդ, էջ 74բ:

[34] Անդ, էջ 78 թերթին կպած:

[35] Անդ, ձեռ. N 2892, էջ 5ա:

մասնավոր վարդապետության տաս աստիճանների տվչությունը, ինչպես նաև եպիսկոպոս և կաթողիկոս ձեռնադրելու, Սրբալույս Մեռոնի օրհնության կանոններ պարունակող վերը նշված խմբագրությունները:

Կաթողիկոսի ձեռնադրության կանոնի վերջում գրիչն ավելացնում է. “Գիտասջիր ո՛վ պատուական եղբայրք իմ, քանզի օրինակ, զոր գտանք հարմայ Սըսայ կաթողիկոսացն էր եւ մեր անգործ լինելոյ առի օրինակեցի, թէ պակաս կամ սղալ գտցի ի սմա, անմեղադիր լերուք , քանզի օրինակն այսպես էր”[36]: Գրիչը նոտրգրով ընդօրինակված իր Մայր Մաշտոցն ավարտում է 1751 թ. “Աւարտեցի ի կողմանս Յուսիսոյ, յերկիրն ը-Ռուսաց, յարքայանիստ քաղաքն Սանկտա Պիտրոբուրխ, յամի փրկութեան մերոյ ՌԷՃԾԲ (1752), ներամսեանն յուլիսի 23, իսկ ըստ Հայոց թվին ՌՃԲ (1715), ի յամսեանն Մարագա 13…Յարութիւն Պետրոսեան”[37]:

Կիլիկյան շրջանում մեռոնօրհնեքի փակ կանոնը ի թիվս կաթողիկոսական այլ կանոնների սկսում է հանդես գալ նաև ընդհանուր Մաշտոցներում քահանայական ու եպիսկոպոսական կանոնների հետ:

Կիլիկյան այս խմբի ձեռագրերից իր բովանդակային հարստությամբ առանձնանում է Վենետիկի N 1173 ձեռագիրը: Այն ընդօրինակվել է 1345 թվականին Սսի եկեղեցում Ս. Գրիգոր Լուսավորչի աջի սպասավորի՝ Գրիգոր եկեղեցապանի ընտիր գաղափար օրինակից. “Ի խնդրոյ շնորհազարդ եւ աստուածասէր …տէր Յովաննիսի արհիեպիսկոպոսի, աթոռակալ Սրբոյ առաքելոյն Բարդողոմէոսի” տեր Սարգիսի աշակերտ Գրիգոր դպիրը: Պարունակում է հայ և լատին ծիսակարգերից վերցված 103 կանոն: Գրիչ Գրիգորը ծաղկողն է նաև այս ձեռագրի, որն ունի բազմաթիվ կիսախորաններ ու ճակատազարդեր. “…ի թագաւորութեան Հայոց Կոստանդեա, ի հայրապետութեան տեառն Մխիթարայ, ի յարքայանիստ մայրաքաղաքս ի Սիս, ընդ հովանեաւ Սուրբ Ստեփաննոսի Նախավկայի, որոյ Գունդուստապլի եկեղեցի անուանի”[38]:

Այստեղ Մեռոնօրհնեքին նվիրված հատուկ երկու նյութ կա, մեկը 334բ էջում է՝ “օրհնութիւն Մեռոնի” (լուսանցքում “Մեռոնաւրհնէք”): Աղոթքն է “Երդմնեցուցանեմ զքեզ նիւթ ձիթոյ…”[39] և “Կանոն աւրհնութեան Սրբոյ Մեռոնին. այսպէս արասցեն” 353ա-ում նույնն է, ինչ Սսի Մայր Մաշտոցի կանոնը[40], բացի սրանցից նույնն են նաև “Այս են նիւթք և պէտք սրբալոյս մեռոնին” ստացման համար նախատեսվող նյութերը՝ պալասանի փայտից մինչև ճապուռ[41]:

Վենետիկում պահվող այս օրինակի նման Մաշտոցի անվան Մատենադարանի N 973 Մաշտոցը պետք է որ ընդօրինակված լինի Գրիգոր եկեղեցապանի օրինակից: Գրված է Պողոս արքեպիսկոպոս Եվդոկիացու պատվերով: Գրիչը, ժամանակն ու տեղն անհայտ են: Գրչական տվյալներից ելնելով՝ այն ընդօրինակված պետք է լինի XVI դարում, վարժ բոլորգրով, նկարազարդ է: Վենետիկյան օրինակի նման ունի կի-

---

[36] Անդ, ձեռ. N 1067, էջ 91ա:

[37] Անդ, 99բ:

[38] **Բ. Սարգիսյան,** Մայր ցուցակ ձեռագրաց ի Վենետիկ, հ. Գ, էջ 192:

[39] Անդ, էջ 176:

[40] Անդ, էջ 183-185:

[41] Անդ, էջ 182-183:

սախորան ու բազմաթիվ ճակատազարդեր, բուսական ու թռչնային լուսանցազարդեր: Պարունակում է 103 կանոն և Վենետիկի N 1173 ձեռագրի նման ավարտվում է Հայրապետների ցանկով, որը Գրիգոր Լուսավորչից հասնում է մինչև Մխիթար Գառնեցի: Բացակայում է նախագաղափարի հիշատակարանը, որը մկրատված է[42]:

Վենետիկի N1173 Մաշտոցի ու Երևանի Պողոս Եվդոկիացու (ձեռN 973) օրինակից է սերում Հայ հռոմեական 59 կանոններից կազմված Մաշտոցը, որը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (ձեռ. N 1026): XIV դարում գրված մատյանում անհայտ են մնում գրչության հանգամանքները: Գրված է բոլորգրով, թղթի վրա, ունի ուրվագծային լուսանցազարդեր ու զարդագրեր: Պարունակում է եպիսկոպոսական ու կաթողիկոսական արարողակարգի կանոններ, բացակայում է միայն կաթողիկոս ձեռնադրելու կանոնը (թերթն ընկնելու պատճառով): Մեռոնօրհնեքի կանոնը մտնում է Կիլիկյան խմբի մեջ (273բ-277բ)[43]:

Սսի Մայր Մաշտոցից են վերցված նաև Ամասիայում 1550-1551 թթ. Աստվածատուր դպրի ու Մինաս սարկավագի ընդօրինակության մեռոնօրհնեքի, կաթողիկոսի և եպիսկոպոսի ձեռնադրության կանոնները: Եպիսկոպոսական կանոնի սկզբում գրիչն ընդօրինակել է նաև 1311 թ. Կոստանդինի հրավիրած սինոհոդոսի վկայությունը (90ա): Բացի այս նյութերից Մաշտոցում կան նաև դռնապանի, սարկավագի, դպրի, քահանայի ձեռնադրության կանոնները:

Մաշտոցի ընդօրինակումը տևել է մեկ տարի երեք ամիս: Առաջին երկու կանոնները գրել է Մինաս սարկավագը "…ի թվին ՌԼԹ (1590), փետրվարի ԻԱ (21)": Աստվածատուր դպիրն ու Մինաս սարկավագը, հաղթահարելով դժվարությունները "չար և դառն ժամանակիս …զի որ ի ներքս հարկաց էաք, ոչ կարէաք ըստ իշխանութեամբ կալ", կատարում են Պետրոս արքեպիսկոպոս Կարկառեցու պատվերը: Ձեռագիրն ավարտում են "…ի արքայանիստ մայրաքաղաքն ի յԱմասիայ, ընդ հովանեաւ Սուրբ Ակոբայ եկեղեցոյն, ի թվականութեանս Հայոց ՌԽ (1591), ի մայիս ամսոյ ԺԱ (11) կատարեցաւ"[44]:

Կաթողիկոսական կանոններ կան Սպահանում գրված 1651-1656 թթ. Աղամալի, Խաչատուրի և Հովհան Տաթևացու ընդօրինակած 74 կանոններ պարունակող Մաշտոցում: Զաքարիա Քանաքեռցին Հովհանավանքում սպասավորելիս մեծ ցանկություն է ունեցել ունենալու Մաշտոց Սևանցու կազմած այս ժողովածուն ու խնդրել է պարոն Խոջասարին "գտեալ զբովանդակն և ի մի վայր գումարեալ …գրել ի հալալ և յարդար վաստակաց իւրոց"[45]: Կոստանդնուպոլսում բնակվող Խոջասար Բաբերթացին կատարում է իր խոստումը ու Աղամալ և Խաչատուր գրիչներին Սպահանում հանձնարարում է հին և ընտիր օրինակներից գրել այն ու նվիրում է Արագածոտնի Հովհանավան-

[42] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, կազմեց Օ. Եգանյան, Երևան, 2007, էջ 1535-1544: Մեռոնօրհնեքի կանոնը ձեռագրի 267բ-8բ, 287բ, 288ա-304բ էջերում: Այսուհետև Մայր ցուցակ Մատենադարանի, հ. Գ:

[43] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 1026:

[44] **Անուշավան վրդ. Դանիելյան**, Ցուցակ Անթիլիասի, էջ 474-475 /ձեռ. 167, էջ 26բ, 123ա/:

[45] Մայր ցուցակ Մատենադարանի, հ. Գ, էջ 1413, հմմտ. ձեռ. 953, էջ 495բ:

քին ի հիշատակ[46]:

Ձեռագիրը նկարազարդ է եկեղեցու հիմնարկեքի, ձեռնադրության, Քրիստոսի մկրտության, օրհնություն պսակի և քահանայաթաղի թեմատիկ նկարներով, բազմաթիվ ճակատազարդերով ու կիսախորաններով, որոնք արվել են Ս. Նիկողայոս վանքում Հայրապետ ծաղկողի ձեռքով ձեռագրի ընդօրինակման հետ միաժամանակ: 3բ էջի Հիմնարկեք նկարի տակ ծաղկողը գրում է "…աւարտեցի զսուրբ գիրքս Մաշտոց ի հայրապետութեան տեառն Փիլիպոսին և ի թագաւորութեան պարսից Շահ [Ա]պասին, ընդ հովանեաւ Սուրբ Նիկողայոսի" (3բ)[47]:

Մեկ տարի անց Զաքարիա վարդապետի ցանկությամբ Հովհան քահանա Տաթևացին ձեռագրում ավելացնում է այլ կանոններ, որոնք նորից գրվում են Սպահանում. "…յամի հազարերորդի հարիւրորդի հնգիւ թուոց յաւելուածի (1656)…չոգանք ի Շօշ քաղաք, որ այժմ ասի Իսպահան…մեծաւ աշխատութեամբ …ի տեղաց-տեղաց գումարեալ զբազում օրինակսն հաւաքեցանք ի մի…": Մեծ դժվարությամբ հավաքված ու ձեռք բերված այս կանոնների թվում էին նաև եպիսկոպոսի, կաթողիկոսի, թագավորի ձեռնադրության ու Մյուռոնի օրհնության հնագույն կանոնները[48]:

Մյուռոնի օրհնության հնագույն այս կանոններից շեղվում է XVIII դարի ընդօրինակությամբ մեզ հասած մի փոքրիկ ձեռագիր, որն ունի միայն "Կանոն Սրբալոյս մեռոն օրհնելոյ" կանոնը: Այն գրված է թղթի վրա, նոտրգրով: 23 թերթերում այս կանոնի երեք մասերն են. "Յաղագս պատրաստելոյ զնիւթ մեռոնի", որն սկսվում է "Յառաջագոյն պարտք է պատրաստել և ժողովել զծաղկունս… (1բ -2ա) [Յորժամ հանդերձեալ լինին օրհնել զՍուրբ մեռոնն]՝ Յորժամ հանդերձեալ լինին օրհնել զՍուրբ մեռոնն, այսպէս առնեն . ի միում պատշաճաւոր աւուր… (2բ)" և "[Կ]անոն Սրբալոյս մեռոն օրհնելոյ (3ա-18ա)՝ [Յ]որժամ հանդերձեալ լինին օրհնել զմեռոնն աստուածագործ…": Անթվական, գրիչն ու տեղն անհայտ այս կանոնն, ինչպես տեսնում ենք, տարբերվում է մեզ հայտնի այս կանոնի երկու հին տարբերակներից ու արժանի է ուշադրության[49]:

Միգուցե ավելի վաղ՝ XVII դարում է մեռոնօրհնեքի կանոն մտել նաև "Վասն թափորի զՍրբալոյս Մեռօնի արարողութեան ըստ ծեսի Հայաստանեայց Եկեղեցւոյ, ըզգուշութեամբ հաւաքեալ և կարգեալ ի բանասիրաց առ ի զարդ և ի փառս սրբոյ Սիօնի գլխոյ եկեղեցեայց սրբոյ գահին Կիլիկիոյ: Նախ յերեկոյին սկզբան թափօրի արարողութեան այսպէս կատարի" միավորը[50]:

Հայոց Եկեղեցու ծիսական կարգ մտած այս ժողովածուն, որ գործածության մեջ է մտել Մաշտոց Եղիվարդեցու կաթողիկոս ձեռնադրվելուց հետո (897թ.), ինչպես տեսնում ենք, հետագա դարերում ավելի է հարստացվել նոր նյութերով:

Կիլիկյան շրջանում ընդհանուր Մաշտոցից անջատվել են կաթողիկոսական կանոնները, կազմվել Կաթողիկոսական ձեռնադրության Մաշտոցներ ըստ պատվիրա-

---

[46] Անդ, էջ 1411, հմմտ. ձեռ. անդ, էջ 33բ:

[47] Անդ, էջ 1412, հմմտ.անդ,էջ 3բ, 133բ, 392բ:

[48] Անդ, էջ 1409, ԾԵ-ԾԹ կանոնները:

[49] Անդ, էջ 1775, հմմտ. ձեռ. N 1000, 1ա-18ա:

[50] **Անուշավան վրդ. Դանիելյան**, Ցուցակ Անթիլիասի, էջ 96: Սկսում է այսպես. "Յորժամ ելանէ ի Վեհարանէն զգեստեալ հանդերձ բազմութեամբ եպիսկոպոսաց…" (3ա-4ա):

տու կաթողիկոսի ցանկության՝ չորսական ու երեքական կանոններով: Երկու դեպքում էլ պարտադիր էր մեռոնօրհնեքի կանոնի առկայությունն իր երկու հին տարբերակներից որևէ մեկով: Կիլիկյան ընդհանուր Մաշտոցներում և դրանցից ընդօրինակված այլ ձեռագրերում, ի թիվս քահանայական կանոնների ու եպիսկոպոսական ձեռնադրության կանոնների, թեև ոչ միշտ, բայց հանդիպում են միայն հայոց կաթողիկոսին վերապահված ու արարողակարգի մեջ մտնող կանոնները: Այդ կանոններից Մաշտոցներում ավելի հազվադեպ է հանդիպում կաթողիկոսական փակ կանոն համարվող մեռոնօրհնեքի կանոնը, այն էլ ընդօրինակվում է որպես մաս Մաշտոց Եղիվարդեցու ստեղծած Մաշտոց ծիսական ժողովածուի:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԸ ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Ինչպիսի վեհ խորհուրդ, ի՞նչ հրաշալի զորություն մի բուռն հասարակ յուղի մեջ: Սկսած այն օրից, երբ առաջին անգամ մեր լեռները բարձրացավ Տիրոջ առաքյալը և խաչակնքեց այս երկրին, երբ նորակառույց Իջման տաճարի բեմը բարձրացավ Տիրոջ այն մեծ խոստովանող մեր Ս. Լուսավորիչը և յուր կենդանի աջով Ս. Մյուռոն օրհնեց նորահավատ հոտի համար՝ անթիվ անգամ կրկնվել է նույն խորհուրդը և Աստվածային Հոգվո այդ չնաշխարհիկ զորությունը օրհնյալ յուղի միջնորդությամբ նորանոր սերունդներ է վերածնել հավիտենական կյանքի համար, ժառանգաբար մեկից մյուսին անցնելով՝ իբրև ամենաթանկագին ավանդ, իբրև հայ ժողովրդի հոգևոր միության ամենանվիրական երաշխիք: Եվ ամեն անգամ, երբ Ս. Իջման տաճարում Մյուռոն է օրհնվում Ս. Լուսավորչի աջով, և հին Մյուռոնը նորի հետ խառնվում Լուսավորչի հաջորդի ձեռքով, զգում է յուր հոգու խորքում հայ քրիստոնյան, որ ամփոփվեցավ այդտեղ, նորոգվեցավ և կրկին պիտի ծավալի ի Սփյուռս ամբողջ աշխարհի ժառանգական այն մեծ շնորհը, որ այդպիսով մի նոր հանգույց ևս ավելացավ հների վրա ու երկարեց յուր և յուր ժողովրդի գաղափարական կյանքի թելը[1]:

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

Հայոց եկեղեցական ավանդությունը Հայոց Մյուռոնը բխեցնում է այն յուղից, որը պատրաստեց Մովսես մարգարեն: Միջնադարյան հայկական ձեռագրերում այնքան տարածված «Յաղագս պատմութեան սուրբ եւ աստուածային իւղոյն» գործում ներկայացվում է այն հաջորդայնությունը, որով Մովսեսի պատրաստած յուղը հասավ մինչև Հիսուս, և թե ինչպես Թադեոս առաքյալը այն Հայաստան բերեց և ապա գտավ Լուսավորիչը՝ միախառնելով իր օրհնած Մյուռոնին:

Ինչպես այս պատմության մեջ է ասվում, Մովսեսի պատրաստած այս յուղը իսրայելացիներն իրենց հետ Ավետյաց երկիր բերեցին, և երբ կառուցվեց Երուսաղեմի տաճարը, պահեցին այնտեղ մինչև այն ժամանակ, երբ քահանայապետն էր Զաքարիան: Վերջինիս սպանությունից հետո նրա կինը՝ Եղիսաբեթը, այս յուղը իր հետ է վերցնում,

[1] <<Արարատ>>, 1897, էջ 388:

երբ փախչում է անապատ՝ փրկելու համար նոր ծնված Հովհաննես Մկրտչին, քանի որ Հերովդեսը հրամայել էր կոտորել մինչև մեկ տարեկան բոլոր մանուկներին: Երբ Եղիսաբեթը ևս զոհ է գնում Հերովդեսի զինվորներին՝ հասցնելով սակայն փրկել մանկանը, այս յուղը գտնում է այն մեղավոր կինը, ով Բեթանիայում այդ յուղով այնուհետև օծելու էր Հիսուսին[2]: Ինչպես Ավետարանում է ասվում, «Երբ Հիսուս եկավ Բեթանիա, Բորոտ Սիմոնի տունը, նրան մոտեցավ մի կին, որ մի շիշ թանկարժեք յուղ ուներ և թափեց այն Նրա գլխին, մինչ Նա սեղան էր նստել» (Մտթ. ԻԶ 6, հմմտ. նաև Մրկ. ԺԴ 3-9, Հովհ. ԻԲ 1-8):

Թադեոս առաքյալին երբ վիճակվում է քարոզել Հայաստանում, իր հետ բերում է այդ յուղը, որով Եդեսիայում բժշկում է Աբգար թագավորի որդուն, և Աբգարը հավատում է ու քրիստոնյա դառնում: Թադեոս առաքյալը հայոց Սանատրուկ թագավորի մոտ Արտազ գնալիս, Տարոնով անցնելիս երկնային ազդմամբ այդտեղ եղրդենու մի ծառի տակ է պահում այս յուղով լի շիշը, ինչպես նաև իր հետ Հայոց աշխարհ բերած աստվածամուխ Սուրբ Գեղարդով մի աղբյուր է բխեցնում և շարունակում ճանապարհը դեպ Արտազ, ուր և նահատակվում է:

Սուրբ յուղը այստեղ պահված է մնում մինչև Հայոց Դարձը: Կեսարիայից Հովհաննես Մկրտչի և Ս. Աթանագինեսի մասունքները Տարոն աշխարհ բերած Հայոց Լուսավորիչը, երբ հիմնում է Մշո Սուրբ Կարապետի վանքը, այնուհետև տեսնում է մի լույս, որը կամարաձև իջնում է այն վայրում, ուր եղրդենու տակ այս յուղն էր ամփոփվել: Լուսավորիչը գտնում է այս յուղը, և «իւղն այն աստուածային ոչ պակասի և ոչ թերանայ մինչև ցայսօր, վասնզի Հոգին Սուրբ է ի նմա, և որք հաւատով կան առաջի սուրբ իւղոյն, առնուն զխնդրելին իւրեանց, մանաւանդ որք երկիւղիւ և հաւատով սպասաւորեն նոցա ի փառս Քրիստոսի Աստուծոյ, որ է օրհնեալ, Ամէն»[3]:

Սուրբ Գրիգորն այստեղ նաև մի վանք է կառուցում, ուր ամփոփում է Հովհաննես Մկրտչի մասունքներից, որի համար այս վանքը անվանվում է Եղրդուտի Ս. Հովհաննես:

Մովսես մարգարեի պատրաստած յուղի՝ Թադեոս առաքյալի կողմից Հայաստան բերվելու մասին հիշատակվում է նաև Եղրդուտի վանքի կոնդակում, որը թվագրված է 1445 թվականով և վերագրվում է Գրիգոր Ժ Ջալալբեկյանց Մակվեցի կաթողիկոսին: Այս կոնդակում ասվում է, որ կաթողիկոսը վերահաստատում է Եղրդուտի վանքի ունեցած հողային իրավունքները, ինչպես նաև թվարկվում են այն բնակավայրերը, որոնք գտնվում են հիշյալ վանքի հոգևոր իրավասության ներքո: Կոնդակի սկզբում համառոտ ներկայացվում է վանքի պատմությունը և թվարկվում են այնտեղ պահվող սրբությունները: Դարձյալ հիշվում է Թադեոս առաքյալի՝ Հայաստան բերած օծության յուղը, և շեշտվում է, որ դա Մովսես մարգարեի պատրաստած յուղն է: Ինչպես կոնդակում է ասվում. «Նախ ի սուրբ Շիշ իւղոյս, զոր Մովսէս օրհնեաց եւ օծեաց զմարգարէսն և զքահանայս եւ զթագաւորսն: Եւ Սամուէլ մարգարէն օծ զԴաւիթ եւ զայլ մարգարէսն: Եւ կինն պոռնիկ եհեղ ի վերայ գլխոյն Քրիստոսի եւ Յիսուս յետ Խաչելութեան

[2] Տե՛ս Երևանի Մատենադարան, ձեռգ. հմր. 2547, թերթ 168բ-172բ:

[3] Նույն տեղում, թերթ 172բ:

օրինեաց եւ ետ յառաքեալսն եւ Սուրբն Թադէոս բերեալ եդ աստ»[4]:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, հիշվում է այն շիշը, սրվակը, որում պահվել է Մովսեսի օծած և իրարահաջորդ փոխանցմամբ մինչև Թադեոս առաքյալին հասած յուղը:

Այս վանքը, պայմանավորված նրա հետ կապված պատմական ավանդություններով, ունեցել է հետևյալ չորս անվանումները.

ա. Ս. Հովհաննեսի վանք, քանի որ այս վանքը հիմնելիս Գրիգոր Լուսավորիչը այստեղ է ամփոփել Հովհաննես Մկրտչի մասունքներից:

բ. «Ս. Շիշ իւղոյ վանք», քանի որ «աւանդութեան համեմատ Բարթուղիմէոս և Թադէոս առաքեալները իրենց հետ Հայաստան կը բերեն եւ եղրդի կամ եղրդուտի ծառի արմատին մերձ կը պահեն փիւնիկեան ձեռագործ կանաչ գոյնով այն շիշը, որուն մէջ կը գտնուի եղեր այն իւղը, որով Մովսէս՝ մարգարէները, Սամուէլ՝ Դաւիթ, Մագդաղինացին՝ Քրիստոս և Քրիստոս՝ առաքեալները կ՚օծէ»[5]:

գ. Եղրդուտի վանք, որովհետև «վերոյիշեալ իւղն ու անոր հետ եղած միւս սրբութիւնները-կենաց փայտէն մաս մը, Մարիամ Մագդաղենացիին ճկոյթը, Ս. Յովսէփ Աստուածահօր աջը եւ համանուն Արեմաթացիին բազուկը Հայաստանի առաքեալները եղրդուտ ծառի տակ կը պահեն եւ հրաշքով երևան կու գան»[6]:

Վենետիկի Մխիթարյան հայրերից Ներսես Սարգիսյանը, 19-րդ դարի առաջին կեսին ճանապարհորդելով Հայաստանում, եղել է նաև այս վանքում և այնտեղ աճող եղրդենու մասին գրում է. «Առ որմովք մենաստանին՝ արտաքոյ է մատուռն փոքրիկ և առ նմա ծառ եղրդուտի»[7]:

Գեղամ Տեր-Կարապետյանը (Մշո Գեղամ) այս ծառի մասին գրում է. «Եղրդուտը մշտադալար ծառ մըն է, միջակ մեծութեամբ՝ փոքրասարաս ծառերու տեսակէն: Մինչեւ հիմա կապրի այս ծառուկը՝ վանքին արեւելքը՝ տաճարին քովիկ, մշտահոս աղբիւրի մը շալակ, իր խնկէնի շուքով: Գրեթէ միակն է իր տեսակին մէջ՝ Սիմի այդ շղթային վրայ ու մասնաւոր խնամքով կը պահպանուի: Բոլորտիքը ցանկով ու պատով պատսպարուած է, արմատին քովեր ցան ու ցիր կմնան խաչքարերու նշխարներ և դերբուկները վաղաշէն մատուռի մը: Նուիրական է եղրդուտը՝ մանաւանդ հայ կնիկներու եւ աղջիկներու, ցաւագար հիւանդներու, որոնք՝ ամէն ատեն երբ այցելեն՝ լաթերով պիտի պատանեն անոր ոստն ու տերեւը, ցաւն ու չոռը հոն թողլու համար եւ կը տանին ջերմեռանդութեամբ անոր դալարի տերեւները ու թփերը՝ իբր բուժիչ ախտերու եւ հիւանդութեանց: Կանաչութիւնը այս ծառի խորհրդաւոր մէկ հմայքը կը կազմէ ուխտաւոր երկիւղած ժողովրդին, որ դարերէ ի վեր դիւթեր է ծառերու սոսափիւնէն, ջերմուկներու խոխոջէն, եւ բարձանց ու խորոց սրբութիւններէն»[8]:

դ. Արծվաբեր Ս. Նշանի վանք: Համաձայն ավանդության՝ այս վանքում է պահվել

---

[4] **Հ. Հ. Ոսկյան,** Տարոն Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 109: Եղրդուտի այս կոնդակի մասին տե՛ս նաև **Գ. Բաղալյան**, Տարոնի Ս. Հովհաննեսի (Եղրդուտի) վանքի 1441 թվականի կոնդակը, «Էջմիածին», 1997, էջ 88-105:

[5] **Հ. Հ. Ոսկյան,** Տարոն-Տուրուբերանի վանքերը, էջ 93-94:

[6] Նույն տեղում, էջ 94:

[7] **Հ. Ն. Սարգիսեան,** Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 236:

[8] **Գեղամ Տէր-Կարապետյան**, Տարօնի վանքերը, աշխտ. Հ. Պետրոսյանի, Երևան, 2003, էջ 143:

Քրիստոսի խաչափայտի մի մասունքը՝ թանկարժեք մի մասնատուփի մեջ փաթաթված մետաքսյա ծածկոցներով: Ասվում է, որ վանքի շրջակա գյուղերից մի այլազգի, որ սպասավորում էր այս վանքին և շահել էր միաբանների վստահությունը, մի օր գողանում է մասնատուփի մեջ գտնվող այդ մասունքը, որը ծածկված էր թաշկինակներով, մտածելով, որ եթե մասնատուփն այդքան թանկարժեք է, ապա որքան առավել ևս թանկարժեք կլինի նրանում մետաքսի մեջ պահվող մասունքը: Երբ նա տուն է հասնում, ուրախ-ուրախ բացում է մետաքսը և տեսնում, որ նրանում մի փայտի կտոր է պահված: Զայրացած այն նետում է տան թոնիրը և այնտեղից ելած բոցը այրում է ողջ տունը, Կենաց խաչափայտի մասունքը, սակայն, չի այրվում, և մի արծիվ գալիս է, կրակի միջից հանում մասունքը և տանում դնում է եղրդենու վրա, որին գիշերները լույս է իջնում, և միաբանները գալիս ու վերստին վանք են տանում այն[9]:

Թադեոս առաքյալի կողմից օծության յուղի Հայաստան բերելու մասին գրում են նաև 13-րդ դարի հայ մատենագրության նշանավոր դեմքերից Վանական վարդապետը և Վարդան Արևելցին:

Վանական վարդապետը (1181-1251 թթ.) իր նշանավոր «Գովեստ հայ ազգի» գործում ասում է. «Երբ Թադեոս առաքյալին վիճակվեց Հայաստան աշխարհը, տրտմեց և ասաց. «Այդ երկիրը ցուրտ է, և մարդիկ՝ բիրտ»: Եվ ասացին. «Մի՛ ընդդիմացիր Սուրբ Հոգուն»: Եվ նրան տվեցին օծման յուղը, որ օրհնել էր Քրիստոս, և գեղարդը: Եվ ուրիշ ազգեր չունեն այս պարծանքը՝ մեր Մեռոնը, որ հանապազ և միշտ նույն շնորհն ունի»[10]:

Վարդան Արևելցին էլ իր նշանավոր «Աշխարհացույցում» գրում է. «Եղրդուտի վանքը Սուրբ Հովհաննեսն է, ուր կա Սուրբ Հովհաննեսի (Մկրտչի) մասունքներից և յուղի շիշը, որը բերեց Թադեոս առաքյալը»[11]:

Համաձայն Հայոց Եկեղեցու հնավանդ աղբյուրների՝ օծության այս յուղն է, որ այնուհետև խառնվում է Լուսավորչի օրհնած հայոց առաջին Մյուռոնին և Սրբալույս Մյուռոնին միաշաղախված՝ առաջին անգամ ցոլանում է Հայոց Դարձի ժամանակ՝ Արածանիի ջրերում:

Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ քրիստոնեության առաջին հունդերը ցանվեցին Հայոց աշխարհում՝ անշիջանելիորեն առկայծելով մինչև Հայոց ընդհանրական դարձը, երբ Հայոց աշխարհի Լուսավորիչը Վիրապից ելնելուց Վաղարշապատի հնձաններում հավաքված ժողովրդին պահքով և ճգնությամբ նախապատրաստելուց հետո, արդեն որպես հայոց քահանայապետ մկրտելու էր Տարոն աշխարհում՝ Արածանիի ջրերում, որտեղ Սրբալույս Մյուռոնի հեղմամբ վերստին ցոլաց այն լույսը, որն իջել էր և որով գծագրվել էր հայոց եկեղեցիների Մայր Տաճարը՝ Սուրբ Էջմիածինը:

Սուրբ Գրիգորի՝ Արածանիի ջրերում կատարած մկրտության և այդ ժամանակ իջած լույսի մասին Ագաթանգեղոսը գրում է. «Իսկ երբ լրացավ պաս կատարելու

---

[9] Տես նույն տեղում, էջ 144-149, Հ. Ոսկյան, նշվ. աշխտ., էջ 96-97:

[10] Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 533:

[11] Աշխարհացույց Վարդանայ վարդապետի, Քննական հրատարակութիւն Հ. Պէրպէրեանի, Փարիզ, 1960, էջ 20:

տրված ժամկետը, երանելի Գրիգորը առավ աշխարհաբանակ զորքը և իրեն՝ թագավորին, նրա տիկին Աշխենին, մեծ օրիորդ Խոսրովիդուխտին, ամենայն մեծամեծներին և բանակի բոլոր մարդկանց, առավոտյան այգը լուսանալուն պես Եփրատ գետի ափը տարավ և այնտեղ մկրտեց առհասարակ ամենքին՝ հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու:

Երբ բոլոր մարդիկ ու թագավորը իջնում էին այնտեղ՝ Եփրատ գետի ջրերի մեջ մկրտվելու, Աստծուց սքանչելի հրաշք երևաց, քանզի գետի ջրերը կանգնելով ետ դարձան: Սաստիկ լույս երևաց լուսավոր սյան նման և կանգնեց ջրերի վրա, ու նրա վրա՝ տերունական խաչի կերպարանքը. և լույսն այնքան ծագեց, մինչև որ արգելեց ու նվաղեցրեց արեգակի ճառագայթները: Օծության յուղը, որ Գրիգորը մարդկանց վրա էր թափում, գետի մեջ շրջան կատարելով, մարդկանց շուրջն էր պտտվում: Ամենքը զարմացած օրհնություն էին տալիս ի փառս Աստծու: Օրվա երեկոյան հրաշքը աներևույթ եղավ, և նրանք դեպի վեր՝ ավան վերադարձան: Նրանք, որ այն օրը մկրտվեցին, ավելի քան տասնհինգ բյուր էին, արքունական զորքից»[12]:

Այս մկրտության և իջած լույսի մասին հիշատակվում է նաև Հայոց Դարձին վերաբերող մի շարք պատմությունների հավաքածու՝ Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմություն» գործում, որն ամբողջացել է 7-8-րդ դարերում: Այս պատմության մեջ ասվում է, որ գալով Տարոն և ավերելով Դեմետրեի և Գիսանեի մեհյանները և այդ տեղում ամփոփելով Հովհաննես Մկրտչի մասունքը, ուր ապա Սուրբ Կարապետի վանքն էր կառուցվելու, այնուհետև «քրիստոսազարդ օծմամբ Գրիգորը մկրտեց նրանց և Սուրբ Երրորդությանը հավատացողներ դարձրեց: Այդ նույն ժամանակ Տերը հրեղեն սյան տեսքով մեծ լույս իջեցրեց մկրտվածների վրա, որը ամբողջ երեք ժամ կանգնած մնաց այդ սխրալի քահանայագործության ընթացքում, ապա աներևույթ եղավ և ծածկվեց տեսողությունից: Այնտեղ մկրտվածների թիվը շուրջ հինգ հազար էր»[13]:

Արածանիում մկրտությունը գրական ներշնչման աղբյուր է եղել նաև հաջորդող դարերի հեղինակների համար: Ներսես Շնորհալին «Վիպասանութիւն» անվանվող և մինչև իր ժամանակը հասցրած հայոց պատմության չափածո վերաշարադրանքում գրում է, որ երբ Սուրբ Գրիգորը օծության յուղը լցնում է գետը,

Յերկնից լուսոյ սիւն երեւեալ,
Արեգական գերազանցեալ[14]**:**

13-14-րդ դարերում ստեղծված մի տաղում Գրիգոր Լուսավորչի՝ Արածանիում կատարած մկրտությունն այսպես է ներկայացվում.

Ապա քահանայն մեծ ծաւալէր զորդէգրութեան միռոնն
աստուածազարդ ձեռաւքն.
Ով ըսքանչելեացս, շուրջ բազմութեան նա [միւռոնը]
իւրովին խաղայր եւ քրիստոնեայս

---

[12] **Ագաթանգեղոս,** *Հայոց պատմություն, աշխտ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 465:*

[13] **Հովհաննես Մամիկոնյան,** Տարոնի պատմություն, աշխտ. Վ. Վարդանյանի, Երևան, 1989, էջ 46:

[14] **Ներսես Շնորհալի,** Վիպասանութիւն, աշխտ. Մ. Մկրտչյանի, Երևան, 1981, էջ 78:

կնքեր,

Բիւրուցն բազմաց մի կաթ եւղոյն ոչ պակասեաց
այսաւր, այլ բաւականացաւ[15]*:*

Սրբալույս Մյուռոնի օրհնության և կիրառության մասին հաջորդ հիշատակությունը վերաբերում է յոթերորդ դարի սկզբին, երբ ծանր վիճակ էր ստեղծվել Հայոց Եկեղեցու համար: Բյուզանդական կայսրությունը, չկարողանալով իրեն ենթարկել Հայոց Եկեղեցին և պարտադրել քաղկեդոնական դավանանքը, իր քաղաքականությունը փորձում է առաջ տանել եկեղեցական պառակտում առաջ բերելու և տարբեր թեմեր հայոց հայրապետական իշխանությունից զրկելու միջոցով: Այս հարցում առանձնակի եռանդ է ցուցաբերում Մորիկ կայսրը, որի իշխանության շրջանում, երբ Հայոց կաթողիկոսն էր Մովսես Բ Եղիվարդեցին (կթդ. 574-604 թթ.), հաստատվում է մի հակաթոռ կաթողիկոսություն, որին փորձ է արվում ենթարկեցնել Հայոց Եկեղեցու՝ Բյուզանդական կայսրության տարածքում գտնվող թեմերը՝ Հայոց հայրապետական իշխանությանը թողնելով միայն պարսկական տիրապետության ներքո գտնվող նահանգների թեմերը:

Մովսես Եղիվարդեցու վախճանվելուց հետո քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով հնարավոր չի լինում նոր կաթողիկոս ընտրել: Պարսից արքունիքում բարձր հեղինակություն ձեռք բերած Սմբատ Բագրատունի Վրկանաց մարզպանի ջանքերով, սակայն, հնարավոր է լինում գումարել ազգային եկեղեցական ժողով, ուր կաթողիկոս է ընտրվում Աբրահամ Ա Աղբաթանեցին (կթդ. 607-615 թթ.): Նորընտիր հայրապետը Հայոց Եկեղեցու դավանանքին հավատարիմ մնալու երդմնագիր է վերցնում այս ժողովին ներկա բոլոր այն եպիսկոպոսներից ու հոգևորականներից, ովքեր մինչ այդ միառժամանակ ենթարկվել էին բյուզանդական ազդեցությանը:

Աղբաթանեցու ընտրության մասին գրող Ուխտանես պատմիչն այնուհետև ասում է, որ նախորդ՝ Մովսես Եղիվարդեցի կաթողիկոսի վախճանվելուց հետո նոր Մյուռոն չէր օրհնվել, և կաթողիկոսական աթոռի տեղապահ Վրթանեսը Հայոց Եկեղեցու թեմերին բաշխել էր կաթողիկոսարանում եղած Մյուռոնը: Այս ընտրությունից հետո ժողովի մասնակիցները նորընտիր հայրապետից խնդրում են օրհնել նաև նոր Մյուռոն, որը վերցնելով՝ այնուհետև տանում են իրենց թեմերը[16]:

Ուխտանեսի Պատմության այս հատվածից հստակորեն երևում է, որ Հայոց Եկեղեցում արդեն յոթերորդ դարի սկզբում Մյուռոնի օրհնությունը վերապահված էր բացառապես Հայոց հայրապետին և որ Մյուռոնի այս բաշխումը խորհրդանշում է նաև Հայոց Եկեղեցու և ժողովրդի հոգևոր միասնությունը, որի համար մինչ այդ խախտված մի շարք եկեղեցական կարգերի և հայրապետական իշխանության վերահաստատումն սկսվում է նոր Մյուռոնի օրհնությամբ և Հայոց Եկեղեցու թեմերն ուղարկելով:

Սրբալույս Մյուռոնի հետ կապված հաջորդ վկայությունն առնչվում է թոնդրակյան շարժմանը: Ինչպես արդեն նշեցինք, պավլիկյանները, մերժելով եկեղեցական նվիրապետությունը և խորհուրդները, չէին ընդունում նաև Մյուռոնով կատարվող օծությունը, և պավլիկյանների դեմ գրված քննադատությունում Հովհան Օձնեցին հատուկ անդրադառնում է Մյուռոնի ներգործող զորությանը, որը շեշտվում է նաև Նարեկի ՂԳ գլխում: Համանման ձևով Գրիգոր Մագիստրոսն է գրում, թե թոնդրակեցիները «Եւ

[15] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. հմր. 7782, ԺԴ դ., թերթ 172ա-174ա:

[16] **Ուխտանես եպիսկոպոս,** Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1881, էջ 67:

զիւղն սրբազան... արհամարհելով զնա, եւ ծաղր առնելով, կատականս առնեն»[17]:

9-10-րդ դարերում խմորված մյուռոնամերժ նման ընթացքի մասին տեղեկանում ենք ոչ միայն հայ մատենագիրների՝ նրանց դեմ ուղղված թղթերից և տարբեր գործերի համապատասխան հատվածներից, այլև Ստեփաննոս Օրբելյանի «Սյունիքի պատմության» քառասունութերորդ գլխից, որն ունի հետևյալ վերնագիրը. «Յուրաբերդի ավերման և նրա վերաշինումն արգելող անեծքի մասին»: 915 թ. Տաթևի վանքը Յուրաբերդի բնակիչների կողմից ավերելու մասին պատմիչը գրում է. «Մի օր էլ, գիշերվա մի անսպասելի ժամի գալով՝ սկսեցին կողոպտել եկեղեցին, արհեստանոցներն ու կրոնավորների բնակարանները: Որոնեցին եպիսկոպոսին, որ սպանեն, բայց չգտան: Ապա ծերերից ոմանց սրի քաշեցին, իսկ ուրիշներին փախուստի մատնեցին: Ինչ էլ որ գտան, վերցրին, գնացին Յուրաբերդ: Տարան նաև մեռոնն արծաթե սափորով ու քարափից թափեցին»[18]:

Պատմիչի այս խոսքերից երևում է, որ նրանք Մյուռոնի ամանը միայն կողոպուտի համար չէ, որ վերցրել են, այլ մյուռոնամերժ նույն մտածողությամբ է, որ ոչ թե տեղում թափել են Մյուռոնը, այլ որպես ժխտողական մի արարողություն՝ տարել և քարափից ներքև թափել:

Սրբալույս Մյուռոնի կիրարկման մասին հաջորդ երկու վկայությունները կապվում են Պետրոս Ա Գետադարձի (կթդ. 1019-1058 թթ.) հետ: Պետրոս կաթողիկոսը 1021 թ. Տրապիզոն է գնում և հանդիպում այնտեղ գտնվող բյուզանդական Վասիլ Բ կայսրին: 11-րդ դարի պատմիչ Արիստակես Լաստիվերցին, ապա և 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրում են, թե ինչ հրաշք է տեղի ունենում այնտեղ Աստվածահայտնության տոնին, երբ Հայոց կաթողիկոսը Սրբալույս Մյուռոնը հեղում է գետի ջրերի մեջ:

Հայոց Մյուռոնի հեղմամբ գետի՝ տեղում պտույտ տալու և երկնքից իջած լույսի մասին մինչ այս հրաշքը գրել էր դեռևս Ագաթանգեղոսը: Ներսես Շնորհալին ևս գրում է, որ երբ Ս. Գրիգորը հայոց Մյուռոնը հեղում է Արածանի գետը

Եւ զանարին գետ դարձուցեալ,
Կարկաջասահ շրջան առեալ,
Լայնատարած դաշտ ծաւալեալ...[19]

Վերը հիշված տաղում ևս ասվում է՝ «ջուրն զետեղեալ շրջան առնոյր»[20]:

Եվ ահա նույն այս հրաշքը կրկնվում է նաև Պետրոս հայրապետի ժամանակ: Ինչպես գրում է Լաստիվերցին. «Իսկ Հայտնության օրը, ընդունված կարգով, բարեպաշտ քրիստոնյա թագավորներն ու իշխանները, եկեղեցու առաջնորդներին հավասար, նրանց հետ ոտքով պիտի գնան դեպի ջուրը ու այնտեղ կատարեն Քրիստոսի մկրտության խորհուրդը. ահա այդ օրը թագավորը հրամայեց Պետրոս հայրապետին ջուր օրհնել ըստ մեր կանոնի, իսկ հոռոմների եպիսկոպոսներին, որոնք այնտեղ պա-

---

[17] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, հրտ. Կ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 154:

[18] **Ստեփաննոս Օրբելյան,** Սյունիքի պատմություն, աշխտ. Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 222:

[19] **Ներսես Շնորհալի**, Վիպասանութիւն, էջ 77-78:

[20] Երևանի Մատենադարան, ձեռ. հմր. 7785, թերթ 172բ:

տահեցին, ըստ իրենց կանոնի: Երբ հայրապետը Մյուռոնը ջուրը լցրեց, հանկարծակի ճառագայթող լույսի ցնցուղներ դուրս ելան ջրից. այդ տեսան առհասարակ բոլորն էլ և փառաբանեցին Աստծուն, և մեր հավատի զորությունը բարձրացավ»[21]:

Այս պատմության առավել ընդարձակ նկարագրությունը գտնում ենք Կիրակոս Գանձակեցու Պատմությունում: Պատմիչը նույն այս հրաշքի մասին գրում է, որ Աստվածահայտնության տոնին «Պետրոս հայրապետին իր ժողովրդով կանգնեցրին գետի վերևը, իսկ իրենք կանգնեցին ներքևը՝ այն մտքով, որ հայերի օրհնությունը թերակատար էին համարում, քանի որ իրենք ներքև կանգնելով՝ հայերի օրհնած ջուրը վերստին կօրհնեն: Մի սպիտակ աղավնի էլ վարժեցրել էին, որ գար մտներ ջուրը ու վեր թռչեր, որով անձանոթներին կխաբեին, թե Սուրբ Հոգին իջավ աղավնու նմանությամբ:

Պետրոս հայրապետի աղոթքի ժամանակ գետի ջուրը դարձավ դեպի վեր, ու չափազանց պայծառ լույս ծագեց, որ արեգակի ճառագայթները աղոտացրեց: Եվ երբ նրանց աղավնին եկավ մտնելու ջուրը, ինչպես որ վարժված էր, հանկարծ մի արծիվ խոյանալով առավ աղավնին ու թռավ»[22]: Սրբալույս Մյուռոնի հեղմամբ գետը այսպես ետ դարձնելու համար է, որ Պետրոս հայրապետը ստանում է «Գետադարձ»՝ գետը ետ դարձնող անունը:

Սրբալույս Մյուռոնի՝ Գետադարձին վերաբերվող երկրորդ հիշատակությունը ևս կապվում է գետի, այս անգամ, սակայն, հայրենի Ախուրյանի հետ: Բագրատունյաց թագավորության վերացումից հետո բյուզանդական Մոնոմախ կայսրը, ցանկանալով վերացնել նաև Հայոց հայրապետական աթոռը, իր մոտ է հրավիրում Հայոց հայրապետին, ինչպես որ մինչ այդ խաբեությամբ կանչել և չէր թողել, որ ետ վերադառնա երիտասարդ Գագիկ թագավորը: Պետրոս կաթողիկոսը, հասկանալով կայսեր նպատակը, ի նշան իրենից հետո կաթողիկոսական իշխանության շարունակականության և փոխանցականության՝ գալիք սերունդներին ի պահ է տալիս նախորդ սերունդներից ավանդված հայոց Մյուռոնը: Այս մասին Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Այդ տարին՝ 1049 թ., հունաց Մոնոմախ կայսրը Հայոց հայրապետ Տեր Պետրոսին նամակ գրեց՝ հրավիրելով իր մոտ՝ Կոստանդնուպոլիս: Պետրոսը հոժար կամքով համաձայնեց գնալ, բայց մտածեց, որ «Գուցե հույները ինձ այլևս չթողնեն վերադառնալ Արևելք»: Դրա համար նա իր հայրապետական աթոռին տեղապահ նշանակեց ամենագովելի Տեր Խաչիկին: Նա մտածեց նաև Մեռոնի՝ Հայաստանյայց Եկեղեցու օրհնյալ ձեթի մասին: Ախուրյան գետում երկաթե ամանների մեջ շուրջ չորս հարյուր լիտր Մեռոն պահեց՝ վախենալով, որ այն հոռոմների ձեռքը կանցնի: Նա այդ բանն արեց գիշերվա պահին, Անի քաղաքի դռան մոտիկ տեղում: Այդ Մեռոնը մինչև օրս էլ պահած կա»[23]:

Սուրբ Էջմիածինը հաստատվեց Լուսավորչի տեսիլով, և շուրջ հազարամյա դեգերումներից հետո Հայոց Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածնում վերահաստատվելը վերստին սկսվեց տեսիլների մի շարքով:

Տեսիլները հայ կյանքում հոգևոր բարձր ապրումների և ազգային անկատար իղձերի՝ մոտավոր ապագայում իրականացված տեսնելու արտահայտություններն են: Այդ-

---

[21] **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, թրգմ. Վ. Գևորգյանի, Երևան, 1971, էջ 9-10:

[22] **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, աշխտ. Վ. Առաքելյանի, Երևան, 1982, էջ 77:

[23] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխտ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1991, էջ 115:

պիսին են և Թովմա Մեծոփեցու Հիշատակարան-Պատմությունում տեղ գտած տեսիլները:

Ինչպես որ Սիմեոն ծերունին մահ չպետք է տեսներ, մինչև չտեսներ մարդկության Փրկչին, այնպես էլ, Սիմեոն ծերունու հետևողությամբ, Թովմա Մեծոփեցին է ասում. «Եւ ինձ մահ ոչ տացէ Աստուած, մինչև բացեալ տեսից զդուռն Էջմիածնի» (Աստված ինձ մահ չի տա, մինչև բացված չտեսնեմ դուռն Էջմիածնի)[24]:

Տեսիլների այս շարքում Ս. Էջմիածինը և այնտեղից տարածվող Սրբալույս Մյուռոնը իրար հետ են ներկայացվում իրար հաջորդող այս երկու տեսիլներում. «Եւ ի նոյն աւուրքն Բ (2) ոմանք եկեալ առ իս, Բ (2) տեսիլս պատմեցին: Մինն ասէ. «Կամար աղեղան նման՝ ելեալ յարեւելից ի հիւսիս, յարեւմուտս եւ ի հիւսիսոյ ի հարաւ, եւ լուսաւորեալ պայծառացաւ աշխարհս ամենայն. և ձայն եղև, եթէ սկիզբն եղև ազգիս նորոգման»: Եւ միւսն ասէ, եթէ «յԷջմիածնի բեմն նստեալ էիր, եւ վարդով զգոգդ լցեալ ունէիր, եւ ամենայն ազգս Հայոց եկին, ի վարդէն առին, եւ վարդն ոչ պակասեցաւ»: Եւ ասեմ. «Ճշմարիտ մեռոնն է այն, որ տարածելոց է յազգս ամենայն» (Եվ այդ նույն օրերում երկու հոգի եկան ինձ մոտ և երկու տեսիլ պատմեցին: Նրանցից մեկն ասաց. «Աղեղի նման կամար ելավ արևելքից հյուսիս, արևմուտք և հյուսիսից հարավ և լուսավորյալ պայծառացավ աշխարհս ամենայն: Եվ ձայն եկավ, թե եղավ սկիզբն ազգիս նորոգման»: Եվ մյուսն ասում է, թե «Էջմիածնի բեմում նստած էիր, և գոգդ վարդով լցված ունեիր, և ամենայն ազգս հայոց եկան և այդ վարդից առան, և վարդը չպակասեց»: Եվ ես ասացի. «Ճշմարիտ մյուռոնն է այն, որ տարածվելու է մեր ողջ ժողովրդի մեջ»)[25]:

Ս. Էջմիածին-Սրբալույս Մյուռոն փոխկապվածությունն ենք գտնում Մեծոփեցու Հիշատակարան-Պատմության՝ Հայրապետական Աթոռի՝ Ս. Էջմիածնում վերահաստատվելը ներկայացնող շարադրանքին հաջորդող հատվածում: Մեծոփեցին գրում է, թե հայրապետական աթոռի վերահաստատությունից հետո մի ծերունի ասում է. «Ահա կանթեղ մի կախեցաւ յերկնից և լուսաւորեալ պայծառացաւ աշխարհս ամենայն»: Տեսիլի բացատրությունում էլ ասվում է. «Կանթեղս այս Էջմիածինն է, որ բազում ժամանակաց հետէ խաւարեալ էր և այժմ ողորմեցաւ Աստուած և կամի լուսաւորել»[26]: Այս խոսքերով վերստին այն գաղափարն է արտահայտվում, որ Էջմիածնի պայծառությամբ է պայմանավորված ողջ Հայոց աշխարհի պայծառությունը:

Հայրապետական Աթոռի վերահաստատության պատմությունը Մեծոփեցին եզրափակում է դարերի՝ իրար հաջորդած տևական մի ընդմիջումից հետո Ս. Էջմիածնում վերստին կատարված մյուռոնօրհնության հետևյալ հիշատակությամբ. «Եւ հասաք ի Սուրբ Պենտէկոստն՝ յաւուր գալստեան և իջման Հոգւոյն Սրբոյ յառաքեալսն: Եւ մեծահանդես ժողով արարեալ՝ օրհնեցաք զաստուածագործակ Մեռոնն, եւ բաժանեցաք ընդ ամենայն ազգս Թորգոմեան»[27]:

Քանի որ Հայրապետական Աթոռի հաստատումը և Կիրակոս Ա Վիրապեցու (կթող. 1441-1443 թթ.) ընտրությունը տեղի է ունեցել նույն 1441 թ., ուստի Մյուռոնի այս օրհ-

---

[24] **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն, աշխտ. Լ. Խաչիկյանի, Երևան, 2002 էջ 237:

[25] Նույն տեղում, էջ 240:

[26] Նույն տեղում, էջ 253:

[27] Նույն տեղում, էջ 255:

նությունն էլ տեղի է ունեցել նույն 1441 թ., քանի որ այն անմիջապես հաջորդել է կաթողիկոսական ընտրությանը:

Սրբալույս Մյուռոնի օրհնության գեղեցիկ մի նկարագրություն ենք գտնում Գրիգոր ԴարանաղցուՊատմությունում, ուր և արտահայտվել է Մյուռոնի՝ առանց կրակ եփելու ժողովրդական ըմբռնումը: 1620-ական թթ. կատարված այս մյուռոնօրհնության նկարագրության մեջ Դարանաղցին գրում է, որ ինքը և մյուս հավաքվածներն այդ օրը ականատեսն են դառնում Սուրբ Մյուռոնի սքանչելի եփմանը առանց հրի և կայծակի: Ասում է, որ երբ հին Մյուռոնի մակարդը լցնում են նոր Մյուռոնի մեջ և Լուսավորչի Սուրբ Աջով խառնում, բեմի վրա յոթնաձալ գորգի վրա դրված կաթսան սկսում է եռալ, և նրա միջից ելնող գոլորշին տարածվում է մառախուղի քուլաների նման: Դարանաղցին գրում է, որ իր սառած ձեռքերը Մյուռոնի կաթսայի վրա է տաքացնում: Նույն ձևով, երբ Երևանին տիրող Դավութ աղան է ձեռք տալիս կաթսային, թվում է, թե թոնրի է ձեռք տվել, և հիացած, ի լուր ամենքի ձայնում է, թե՝ հավատացի այն ամենին, ինչ որ ասվում է հայոց Մյուռոնի մասին:

Սրբալույս Մյուռոնի այս պանծացումը և ժողովրդական պաշտամունքը նույն և անգամ առավել մեծ չափերով արտահայտվելու էր և հաջորդ դարերում՝ իր գրական ամփոփ արտահայտությունը գտնելով Սիմեոն Երևանցու Ս. Էջմիածնին և Մյուռոնին նվիրված քարոզներում:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Կանաչ Մյուռոնի այն փոքրիկ կաթսան մի ակնթարթի մեջ մեծանում՝ անեզր, լայնատարած մի ծով է դառնում, որ ողողում է հայաբնակ ողջ աշխարհը, դրախտի բուրմունք, երկնային ամենառատ շնորհ սփռելով ամեն տեղ՝ նույն շնորհն անխտիր մեծատան ապարանքում և թշվառ պանդուխտի հալածանաց հարկի տակ. շնորհաբաշխ այդ Սուրբ Մյուռոնի ամեն մի կաթիլ հայ մանուկների ճակտին դրոշմած՝ դարձնում է նոցա լուսակեզ գառներ և Ս. Լուսավորչի փարախը ժողովում, Անմահ երկնավոր Գառան շուրջ[1]*:*

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

Դարեր շարունակ Սրբալույս Մյուռոնով դրոշմված հայի համար այն առանձնակի նվիրական խորհուրդ է ունեցել՝ դառնալով ազգային-հոգևոր գլխավոր սրբություններից մեկը, որն արտացոլվել է նաև ժողովրդի ընդհանուր հոգեբանության ու մտածողության մեջ, ինչպես նաև կենցաղում:

Հայ մարդը, ինչպես ասում է «Էն խաչը վկա», նույն ձևով նաև ասում է. «Էն կանաչ Մեռոնը վկա»: Փոքրիկ երեխայի անմեղությունն ու դալարությունը շեշտվում են «Մեռոնի հոտը դեռ գալիս է» արտահայտությամբ, իսկ երբ ակամա մի կեղտոտ բանի են ձեռք տալիս, շփվում կամ էլ անգիտությամբ ինչ-որ ոչ ուտելի բան են ուտում, իմանալուց հետո իսկույն ասում են՝ «Մեռոնվելիք եղանք», այսինքն՝ Մյուռոն է հարկավոր, որ վերստին մաքրվենք, սրբվենք[2]:

Երջանկահիշատակ Գարեգին Առաջինի բնորոշմամբ՝ «Հայց. Եկեղեցւոյ Միւռոնը հայութեան կնի՛քն է դարձած՝ ըլլալէ ետք կնիքը Ս. Հոգւոյն: Միւռոնով պայծառացած ճակատին համար կը՛ըսենք. «հայո՛ւ ճակատ». միւռոնուած մանուկի համար կը՛ըսենք. «հայո՛ւ որդի». երբ մկրտութենէն անմիջապէս ետք երեխան դրոշմի օծումն ընդունի իր ճակատին՝ կ՛ըսենք. «Ահա հիմա հայացաւ»[3]:

Մյուռոնն այնքան նվիրական և սրբագործող համարում է ունեցել, որ երեխային

---

[1] «Արարատ», 1897, էջ 387:

[2] Տե՛ս **Կ. Գաբիկյան,** Բառգիրք սեբաստահայ գավառալեզվի, Երուսաղեմ, 1952, էջ 400:

[3] **Գարեգին Բ Կաթողիկոս**, Հող, մարդ և գիր, Անթիլիաս, 1991, էջ 170:

կնքելու բուն եկեղեցական խորհրդին զուգահեռ ժողովուրդը կատարել է և իր արարողությունները, որոնք դարերով հարատևել են Հայկական լեռնաշխարհի ազգագրական տարբեր հատվածներում:

Մկրտության ժամանակ երեխային հագցվող զգեստը կոչվել է «Մեռոն լաթ»[4], այսինքն՝ Մյուռոնով կնքելու ժամանակ հագցվող շոր, որով մկրտության խորհրդում առանձնացվել և շեշտվել է հենց Մյուռոնի գաղափարը: Եթե քրիստոնեական խորհրդաբանությամբ մկրտությունը մայրական արգանդից մարմնավոր ծնունդին հաջորդող հոգևոր ծնունդն է Եկեղեցու ավազանից, ապա հայ մարդու համար այն նախ եղել է երեխայի կնքվելը Մյուռոնով: Երվանդ Լալայանի վկայությամբ Արցախի Վարանդայի գավառում մինչ եկեղեցում կատարվում էր մկրտությունը, երեխայի մանկաբարձը (տատմերը), մկրտության ավազանից մի փոքրիկ շշով մյուռոնաջուր վերցրած՝ շտապում է տուն, նրանով լվանում ծննդկանի՝ մոր ձեռքերը, որպեսզի մյուռոնաջրով մաքրված ձեռքերով մայրը գրկի Մյուռոնով կնքված իր մանկանը[5]:

Տարածված հաջորդ արտահայտությունը և սովորությունը մեռոնահան անելն է: Տարբեր բարբառներում տարբեր կերպ է այն կոչվել. Սեբաստիայում Մեռոնեն հանիլ, Գանձակում՝ Մեռոնը վեր հանել, մի շարք այլ վայրերում՝ մեռոնջրեն հանել և այսպես շարունակ[6]:

Մեռոնահան է անվանվում մկրտությունից հետո երեխային առաջին անգամ լողացնելը: Երեխան, եթե տղա է, լողացնում են երեք, իսկ եթե աղջիկ է՝ յոթ օր հետո: Այս մի քանի օրը երեխային չեն լողացնում, որպեսզի Մյուռոնը մարմինը լավ պատի. «աղեկ մը անցնի»: Աղջկան յոթ օր հետո են լողացնում, որ ամաչկոտ և պարկեշտ լինի՝ Մյուռոնը երեսին շատ մնա: Այս պատճառով էլ որևէ աղջկա հետագայում ազատ պահվածքի համար մեղադրելիս ասում են, թե այնքան է համբուրվել, որ երեսի Մեռոնը լուծվել, գնացել է:

Վարանդայի գավառում Մյուռոնից հանելը Ե. Լալայանն այսպես է նկարագրում. «Երեք օրից հետո տատմայրը նորից է գալիս և «երեխայի մեռոնը վեր անում»: Քթի տակը աղոթքներ շշնջալով՝ լվանում է երեխայի Մեռոն քսած տեղերը մի մաքուր ամանի մեջ, հետո լողացնում է նրան մաքուր ջրով, առանց սապոնի, և ջուրը ածում թոնիրը»[7]:

Ի տարբերություն աղջկա, տղային ավելի շուտ են լողացնում, որ «ճակտով ըլլի, չամնչէ»[8]: Երեխային լողացնելու ջուրն էլ կոչվում է մեռոնաջուր, քանի որ այդ այն ջուրն է, որ առաջին անգամ է շփվում երեխայի մյուռոնված տեղերին: Մյուռոնի հետևողությամբ որոշակի զորություն է վերագրվում և այս ջրին: Անթույլատրելի է համարվում այն պարզապես թափելը, այլ լցնում են թոնիրը կամ օջախը, քանի որ ժողովրդական հավատքով սրբություններ են նաև այս երկուսը: Շատ շրջաններում մեռոնաջուր անվանվող այս ջրին մաքրագործող հատկություն է վերագրվել. կամ առանձին շշով պա-

---

[4] **Կ. Գաբիկյան,** Բառգիրք, էջ 399:

[5] Տե՛ս Ազգագրական հանդես, հտ. Բ, Շուշի, 1897, էջ 125:

[6] Տե՛ս Ազգագրական հանդես, հտ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 282:

[7] Ազգագրական հանդես, 1897, Թիֆլիս, Բ գիրք, էջ 149:

[8] Տե՛ս Ազգագրական հանդես, հտ. Ա, Շուշի, 1895, էջ 271:

հել են և նրանով ցողել այն ամանները, որոնք շունն ու կատուն են լիզել, ինչպես նաև եթե մեջը մուկ է ընկել ու որևէ անմաքուր բան է թափվել, կամ էլ շաղախել են հողով և այդ հողով շփել: Հատկանշական է նաև, որ մեռոնաջուրը սովորական հողին չեն խառնել, այլ հանքային որևէ բաղադրություն պարունակող և գույնով ու բուժիչ հատկությամբ առանձնացող և ժողովրդի կողմից տարբեր հատկանիշներ վերագրվող հողին[9]:

Թոնիրը՝ օջախը, ընտանեկան սրբության և հաստատունության խորհուրդն ունի, և մի շարք վայրերում մյուռոնաջուրը լցրել են թոնիրը: Նման ձևով, եթե տվյալ բնակավայրում եկեղեցի չի եղել և կամ հնարավոր չի եղել երեխային եկեղեցի տանել, թոնրի վրա են մկրտել[10]:

Սրբալույս Մյուռոնով է պայմանավորված նաև հայկական ընտանիքներում կնքահորը՝ քավորին ընծայվող բացառիկ հարգանքն ու պատիվը: Պատահական չէ, որ շատ դեպքերում քավորն ու Մյուռոնը միաժամանակ են հիշվում: Ժողովրդական առածներից մեկում, որպես մարդկային ուրացումի և դավաճանության ամենաանարգ արտահայտություններից մեկը, ասվում է. «Քավորը փոխիլ, Մեռոնը կոխիլ»[11]: Այսինքն՝ քավորից հրաժարվողը մեծագույն սրբությունը՝ Մեռոնն էլ ոտնատակ կտա:

Բարեբախտաբար, սակայն, Մյուռոնով միմյանց հոգևոր կապով միացած քավորն ու սանիկը հիշվում են գլխավորաբար դրական համատեքստերում: XVI դարի հեղինակ Մարտիրոս Խարասարցու «Տաղ կնքտուքի և տղարուքի, կնքահօր և սանի» բանաստեղծությունը գեղարվեստական անդրադարձ է եկեղեցում կատարվող երեխայի մկրտության և նրան հետևող կնունքի ժողովրդական տոնախմբության: Բանաստեղծությունը խորհրդանշական կերպով սկսվում է հետևյալ մաղթանքով, որը կրկնվում է նաև յուրաքանչյուր քառատող տան վերջում.

Աստուած օգնէ այս կնքահօրն և իւր սանին...[12]

Բանաստեղծությունը մի կենդանի և հոգեբուխ նկարագրություն է մկրտության արարողության.

Էրէցն գայ և կնքահայրն ի տաճարին,
Ընդ նա ասէ՝ Խոստովանեա զյանցանս քոյին...

Այնուհետև գալիս է մկրտության և դրոշմի խորհրդավոր պահը.

Նա քահանայն զջուրն արկանէ յաւազանին,

---

[9] Տե՛ս **Կ. Գաբիկյան,** Բառգիրք, էջ 400: Տե՛ս նաև Ազգագրական հանդես, 1897, Շուշի, գիրք Բ, էջ 148, 1898, Թիֆլիս, գիրք Դ, էջ 89:

[10] Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1897, գիրք Բ, էջ 148:

[11] **Ա. Տ. Ղանալանյան,** Առածանի, Երևան, 1960, էջ 275:

[12] Ուշ Միջնադարի հայ բանաստեղծությունը, հտ. Ա, էջ 150:

Շիշ եւ օծման, պայծառ սուրբ խաչն յաջոյ ձեռին,
Որ արկանէ զՄեռոնն ի ջուրն ըստ օրինին,
Աստուած օգնէ մեր կնքահօրն և իւր սանին:

Ինչպես ասացինք, ժողովրդական առանձնակի մի ծես էր մկրտված երեխային տուն հասցնելը, ուր ուրախության բացված սեղանն էր սպասում.

Տանին ի տուն, զինք պաշտելով ճանապարհին,
Ամեալ մարդիկ բազում երթան առ նա բազմին,
Ցնծութեամբ տօնախմբեն շատ այր և կին.
Աստուած օգնէ մեր կնքահօրն և իւր սանին:
Ի հօրով մօրով սնանի, ասեն, 'ն ըմպեն զգինին...

Միջնադարյան մի խորհրդավոր հայրեն կա, որում ասվում է.

Իմ կըճատիկ* արուխ-մարուխ**
Քեռ կըճատ թիվքերը վեր վերու,
Ոտերացըդ տուր զօրութիւն.
Սարէ-սար կայ գընալու,
Սուսուն* ծաղիկ կայ քաղելու,**
փունջ կապելու, տուն բերելու,
Թառ քեավուրոչ օղօրկելու,
կանաչ Մեռոն համբուրելու[13]**:**

Ինչպես օրորոցային երգերում է մայրը դիմում զավակին, այստեղ ևս ասվում է, թե ի՛մ փոքրիկ գեղեցիկ, թևերդ վեր բարձրացրու՝ ծաղիկ հավաքելու, փունջ կապելու, քավորին ուղարկելու և կանաչ Մյուռոնը համբուրելու:

Ինչպես տեսնում ենք, այստեղ իրար են զուգորդվել իմաստային առումով որոշակի ընդհանրություն ունեցող երեք հասկացություն՝ ծաղիկները, Մյուռոնը, որի համար անհրաժեշտ են լեռնային բազմազան այս ծաղիկները, և քավորը, որին մեծ դեր է վերապահված երեխայի Մյուռոնով կնքվելու գործում: Փոքրիկ այս հայրենը ժողովրդային մի ընկալումն է պես-պես ծաղիկներով պատրաստվող Մյուռոնի, որի օրհնությունը ժողովրդի կողմից ավարտվում էր նոր Մյուռոնի տաք կաթսան համբուրելով:

---

* կարճ
** գողտրիկ
*** գեղեցիկ, սիրուն
[13] Հայրեններ, աշխատասիրությամբ Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1995, էջ 785:

ՈՒՂԵԳՐԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆԸ

ԿԻՐԱԿՈՍ ՂԱԶԱՆՉՅԱՆ

ՈՒԽՏԱՎՈՐԻ ՆԱՄԱԿՆԵՐ
ՆԱՄԱԿ Զ.[1]

ԷՋՄԻԱԾԻՆ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

1868, հոկտեմբեր

Աշնան միջին ամիսն եմք և օդերու յարմար ժամանակում. հովեր փչում են անուշիկ և զով: Առաւօտեան արեւու ճառագայթ սփռեր է իր լոյս, գոյն և ջերմութիւն ի վերայ խորհրդաւոր դաշտին Եղիվարդի, Մուղնի, Օշական, Աշտարակ, Վաղարշապատ և այլ գիւղերի, հաւք և թռչունք երգում են քաղցրիկ բնական նուագարանով, վճիտ առուակներ հոսում և կարկաչում են և օձապտոյտ գնում են:

Այգեաց և պարտիզաց ծառեր, տունկեր, ծաղիկներ և խոտեր փայլում են գոյնզգոյն և գիշերային ցօղերու մարգարտանման հատիկներ բերում են ի տես: Ոչխարներ, գառներ և այլ կենդանիք մայում են գնալ արածիլ դաշտեր և ձորեր, հովիւք և հովուուհիք փչում են իրենց սրինգներ:

Մեր կարաւան յետ երկարօրեայ յոգնութեան՝ կը տեսնէ Էջմիածնի գմբէթներ դաշտի մէջ փայլած. ի՞նչ ուրախութիւն: Ոմանք կը խաչակնքեն զուարթ և ջերմեռանդ երեսով, ոմանք երգում են եկեղեցւոյ անուշիկ երգեր: Վերջապէս խիստ զուարթ կերպիւ կը հասնիմք այն աղբիւր, և հանգիստ կառնէ կարաւան, ուրկից կերևի ամբողջ դաշտն Էջմիածնի և Վաղարշապատի:

Ի Կարին միացած էին մեզ Տիգրանակերտի, Քարբերդի և Էրզրումի ուխտաւորք ևս. մեր թիւ կը հասնէր 80ի, ջորեպանք և ***գլավուղ*** 100ի մօտ:

Քարբերդցի Եագուպեանի հետ յառաջացանք կարաւանի օթևան ճարելու համար, վասն զի լսած էինք ուխտաւորաց բազմութիւնը, վանուց հիւրանոցներ և վրաններ լցուիլը, և Վաղարշապատի շատ մը տուներու վարձու բռնուիլը:

Հասանք ի Ս. Էջմիածին սեպտեմբեր 23ին՝ Վարագայ Խաչի պահոց երեքշաբթի օրն. (Ս. Միւռոնի օրհնութիւն պիտի կատարուէր կիւրակէ օր): Ահա ինչ կը տեսնեմք. բազմութիւն ուխտաւորաց եկեալ շատ մը քաղաքներէ, Պարսկաստանէ, Ռուսիայէ և Թուրքիայէ. լցուած էր բոլոր սենեակները և վանուց կողմէ պատրաստեալ վրանները:

Գտանք հիւրընկալ Ներսէս վարդապետը և խնդրեցինք բնակարան, և առինք «***եղբա՛ր, չի մնաց***» պատասխանը, յաւելցնելով, թէ ուշացել էք և պէտք է երկու պզտիկ

[1] Հրատարակվում է ըստ **Կիրակոս Ղազանչյան**, Ուղեգրական նամակներ, Կ. Պոլիս, 1869 թ., էջ 68-82: Հեղինակը 1868 թ. արևմտահայ ուխտավորների մի խմբի հետ Ս. Էջմիածին է եկել՝ ներկա լինելու Գևորգ Դ Կաթողիկոսի (կթղ. 1866-1882 թթ.) կատարած մյուռոնօրհնությանը [հրտ.]:

խուցով գոհանաք: Մութ, խոնաւ և փոքր էին և հազիւ կը բաւէր մեր կարաւանի գոյքերը լեցնելու:

Բախտը կամ ուխտաւորաց ջերմեռանդութիւնը օգնելով, պատեհ հանդիպմամբ ներկայացանք Վեհ. Ս. Կաթողիկոսին Ամենայն Հայոց Գէորգ Դի ի գաւիթ եկեղեցւոյն, ուրկից կանցնէր բազմութեամբ:

Նորին Վեհափառութիւնը, լսելով հեռաւոր երկիրներէ և Թուրքիոյ ներսերէ այսքան ուխտաւոր գալը, շատ ուրախ եղաւ, և Օսմանեանց վրայ յատուկ խնամք ունենալով՝ իսկոյն հրամայեց հիւրընկալ Հայր Սուրբին պարպել ճեմարանը, մէկ կողմը յատկացնել Կարնեցւոց և Երիզացւոց, միւս կողմը Քարբերդցւոց և Տիգրանակերտցւոց[2]. անմիջապէս կատարեցաւ հրաման Վեհափառի, և կարաւանը ուրախութեամբ տեղաւորեցաւ: Դպրոցի մահճակալներն ալ յատկացաւ ուխտաւորաց[3]: Ուխտաւորաց բազմութիւնը արդեն խոնեալ էր, որոց թիւը մինչև 30.000ի կը հասնէր: Այս թուոյն ենթակայ չէ Ռուսիոյ մի վաշտ զօրքը, պաշտօնեայներ, միաբանութիւն վանուց, Վաղարշապատի 1000 տուն երկրագործ հայեր և շրջակայ գիւղօրէից պարսիկներ, հայեր և առևտրական գործով գալողներ:

...Ս. Միւռոնի օրհնութիւնն սկսած էր Վարագայ Խաչի կիրակիէն 40 օր յառաջ, որ ամեն ժամերգութենէ վերջ կը կարդան, շաբաթ օրը կատարեցաւ Վեհափառի տօնախմբութեան հանդէսը խիստ շքեղ կերպիւ, գիշերը՝ հրախաղութիւն և այլն: Վեհափառը եկեղեցիէն ելլելուն բոլոր զօրքեր բարևի կայնած, նուագարանք, երգեր և ճառեր կը յաջորդէին, կեցցէներու ձայներ և ***հուրրա***ներ օդը կը թնդացնէին:

Կիւրակէ առաւօտ եկեղեցւոյ ժամերգութիւնը լրացաւ սովորապէս մինչև «***Հայր մերն»*** «Խորհուրդ խորհին», և եկեղեցին աւարտեցաւ. յայտարարեցին թէ մէկ ժամ վերջ[4] պիտի սկսի Պատարագը և Միւռոնի օրհնութիւնը:

Կէս ժամ վերջ ուխտաւորք խոնած էին եկեղեցւոյ գաւիթը, տանիքները և այլուր: Զօրքեր շարուած էին հրացան ի ձեռին բարևի: Ահա երևեցաւ Վեհափառ Հայրապետն զգեստաւորեալ թանկագին կերպասիւք, և ընդ նորա զգեստաւորեալ երկոտասան եպիսկոպոսունք ծանրագին զգեստներով, թագերով և գաւազաններով:

Վեհափառի գլխին կար մի ամպհովանի զարդարուն, որ բռնած էին չորս յատուկ անձինք՝ երգելով մտան յեկեղեցի. Վեհափառը պատարագիչ էր: Ահա սկսաւ Պատարագի խորհուրդը. 12 եպիսկոպոսունք ունէին ի ձեռին Ս. Մասունքներ և Միւռոնի աղաւնակերպ անօթը և ծաղկանց հիւթը:

Պատարագը սկսեց խիստ շքեղ և բացառիկ հանդիսով. բոլոր վարդապետք և քահանայք, դպիրք և այլ եպիսկոպոսունք զգեստաւորեալ էին եկեղեցական շքեղ հա-

---

[2] Բոլոր ներկայ գտնուողք ծիծաղեցան, երբ Վեհափառը հրաման ըրաւ հիւրընկալ Հայր Սուրբին, որ իր սենեակը պարպէ և յատկացնէ մեզի, և ինք հիւր ըլլայ Աբէլ Սրբազանին իբր պատիժ Օսմանցոց յարգ չի տալուն համար. քիչ մը վերջ բազմեցանք ընդարձակ և կահաւորեալ սենեակը:

[3] Վեհափառը ամեն պարագայի մէջ կը նախադասէր Օսմանեան հայերը, որոյ շնորհիւ վայելեցինք հանգստութիւն և ամեն կերպ դիւրութիւն: Միաբանութիւնն ալ յատուկ յարգանք կը տածէր օսմանցի հայերուն նկատմամբ:

[4] Աթոռի սովորութիւն է հանդիսաւոր օրեր առաւօտեան ժամերգութիւնը և Պատարագի արարողութիւնը զատել և երկուքի մէջ մէկ ժամ միջոց տալ (թէյ խմելու և նախաճաշ ընելու):

մազգեստներով։ Բոլոր խորաններ զարդարեալ էին խաչերով, Աւետարաններով և ծաղիկներով. եկեղեցւոյ բիւրեղեայ բոլոր ջահեր և արծաթեայ կանթեղք լուսափայլ աննման տեսարանով։

Զօրաց սպաներ հագած էին մեծ համազգեստներ, և զօրքեր նոր զգեստներով, կարգ կարգ բաժնուած էր եկեղեցւոյ մէջ տեղեր, դուռներ, գաւիթներ և վանքի բոլոր շէնքերու կարգեր և պարսպաց դուռները։ Պատարագը լրանալու մօտ Առաքելոցի ատեն սկսեց Վեհափառ պատարագիչը բարձր ձայնիւ ***նս առաւել ամէնողորմած կայսրն ամէնայն Ռուսաց*** և այլ տիտղոսներով, և ապա թագուհին և գահաժառանգը և այլ կայսերազունս յիշատակել[5]։

Վեհափառը խօսեց կարճ և ազդու մի քարոզ, օրհնեց կայսրութիւնն Ռուսիոյ և Օսմանեան, օրհնեց ազգը, Եկեղեցին, միաբանութիւնը, ուխտաւորները, դրուատեց օսմանցի հայոց հեռաւոր երկիրներէ ջերմեռանդութեամբ եկած ըլլալնին. համառօտիւ բացատրեց Միւռոնի արարողութիւնը և ո՛ր թուականէն սկսիլը, և կրկին օրհնութեամբ վերջացուց։ Ապա սկսեց Միւռոնի օրհնութիւնը[6] և լրացաւ չորս ժամէն (Պատարագի սկիզբէն մինչև ցաւարտ)։

Ի համբոյր ուխտաւորաց դրուած էր տօնի օրէն յառաջ և վերջը Միւռոնի խալկինը որ ուխտաւորք կը համբուրէին։ Կիւրակէն լմնցաւ. երկուշաբթի առաւօտէն ուխտաւորք սկսան վերադառնալ, մինչև երեք օր համարէ, թէ ուխտաւոր չէր մնացած։ Նոյնպէս վերադարձաւ մեր կարաւան և մեք մնացինք մի քանի օր, քանզի բազմութեան մէջ չունէինք դիւրութիւն ամեն կողմ պտըտելու, վանուց և շրջակայից առարկայք տեսնելու։

Յայնժամ ազատ կերպիւ տեսանք վանքի բոլոր շէնքերը, եկեղեցւոյ անօթները և զարդերը, գիրքերը, մօտակայ երեք վանքերը, շիրիմները, Վաղարշապատ գիւղը և եկեղեցին, մեծ անտառը, մօտակայ մի քանի գիւղերը և այլն։

Սոյն հանդիսի ներկայ էին Տ. Մկրտիչ վարդապետ Խրիմեան և Երեմիա վարդապետ, որք եկած էին եպիսկոպոսութեան բարձր աստիճան ընդունելու։ Մեք շատ կը փափաքէինք տեսնել նաև ձեռնադրութեան հանդէսը, մանաւանդ Հայրիկի ձեռնադրութիւնը, դժբաղդաբար չլրացաւ մեր փափաք[7] և մեք վերադարձանք ի Կիւմրի։

...Մեք վայելեցինք համակրութիւն Վեհափառից և միաբանութիւնից, ի մասնաւորի Ս. Աբէլ և Պետրոս եպիսկոպոսներից, հիւրընկալ Ներսէս վարդապետից (այժմ եպիսկո-

---

[5] Ռուսահայոց եկեղեցիներում կայ մի տպեալ թուղթ, որ կը մնայ խորհրդատեղի մէջ. պատարագիչ վարդապետ կամ քահանայ նախ պարտի յիշել կայսրն, կայսրուհին և կայսերազունք և ապա Կաթողիկոսը, որոյ կը հետևին նաև դպիրք։

[6] Միւռոնի օրհնութիւնը 40 օր կը տևէ. 39 օր առաւօտներ եպիսկոպոսունք և քահանայք կը կարդան Մարգարէից, Առաքելոց թուղթերը, Աւետարան, Նարեկ, Շարական, Սաղմոս, Մաղթանք և այլն, որ մէն մի օր կը տևէ մի ժամ. 40րդ օրը կը լրանայ, և կը նմանի Ծննդեան տօնի առաւօտ (յետ ի ջրօրհնէք) ի արարողութեան, «Առաքելոց աղաւնոյ» ըսելով հին Միւռոնը կը լեցնէ Վեհափառ պատարագիչը՝ պատրաստ խալկինի մէջ և ապա խալկինի բերանը կը գոցուի։

[7] Վեհափառը ճաշի մը ատեն յայտարարեց իր յոգնած ըլլալը, և հազիւ 20-25 օրէն կրնալ ձեռնադրելը։ Հայրիկը մեզ ըսաւ, թէ «մի սպասէք»։ Ձմրան մոտենալը և ճանապարհներու երկիւղը, Վեհափառի յոգնութիւնը, զրկեցին զմեզ մի այդպիսի շքեղ հանդէս տեսնելու։

պոս):

Տեսանք Ռուսիայի 30-40 քաղաքներէ շատ հայեր, որոնց մէջ կային բարձր դիրքի տէր անձինք, ուսումնականք, վաճառականք, որ խիստ կը յարգէին թրքահայերը:

Տեսանք Նիկոլ իշխանը, Տփխիսի փոխարքային տեղապահը, որ եկաւ Էջմիածին շատ ***սանսանաթով***[8], գնաց եկեղեցի և անտի Վեհարան մեկնեցաւ մէկ ժամէն: Տեսանք կայսերական գերդաստանէ մի դշխոյ, որ գալով՝ գնաց եկեղեցի և անտի Վեհարան, ապա շրջեցաւ կրկին վանուց շատ կողմերը, ջերմեռանդութեամբ համբուրեց սրբոց նշխարքը, և երկու ժամէն մեկնեցաւ: Տեսանք Խրիմեան Հայրիկը, Երեմիա վարդապետը, Պոլսեցի Ռէիսեան Մկրտիչ պէյը, և այլ շատ ազգայինք զանազան տեղերէ. տեսանք առարկաներ, նոր տեսակ ծառեր, պտուղներ, սիրամարգ, բրինձի մշակութիւն և այլն, տեսանք Երևանը, Վաղարշապատը, Օշականը, Աշտարակը, Մուղնին և այլ նշանաւոր գիւղեր, տեսանք Ս. Էջմիածինը և շատ ուրիշ վանքեր, տեսանք Կաթողիկոսաց շիրիմներ, ոմանք գմբէթաձև, ոմանք գրքաձեւ, կերպ կերպ արձանագրութեամբ: Ամենէն պարզն է Ներսէս Ե.ի գերեզմանը, հրապուրիչ և խորհրդաւոր[9]: Տեսանք, շրջեցանք, վայելեցինք, ուխտեցինք, վերջապէս դարձանք գոհ և ուրախ սրտիւ: Կը փափաքիմ, սիրելի ընթեցողք, որ դուք ալ պատեհութիւն ունենաք վայելելու մի այսպիսի Ս. Աթոռի տեսութիւն, որ լի է բազում հին և նոր յիշատակներով, որոնց նկարագրութիւնը պէտք է լեցունէ ամբողջ հատորներ[10], մենք հազիւ կրցինք գրել այսքան մը և անցանք ի Կիւմրի, որ է Աղէքսանդրապոլ:

Հրատարակության պատրաստեց
Վանուհի Եղիշյանը

---

[8] Ռուսահայք սալթանաթ բառի տեղ կը գործածեն սանսանաթ, այսինքն շքեղութիւն:

[9] Բոլոր ուխտաւորք կզմայլէին այս գերեզմանին, որ Էջմիածնի եկեղեցւոյն գաւիթն է, և է մի պարզ մարմարիոն, որ պիտի պատմեմ նորին կենսագրութեան մէջ:

[10] Անշուշտ, հատորներ կը լեցունէ, եթէ պէտք ըլլայ գրել վանից պիւտճէն, նիւթական ելումուտ, վարժարանաց և ուսումնարանի ծրագիր, աշակերտաց թիւ և ուսման եղանակ, թանգարանի և մատենադարանի հին գրեանց ցանկեր, արձանագրութիւնք, յիշատակարաններ, միաբանութեան դրութիւն, Պալաժէնեայի թարգմանութիւն, վանուց նիւթական և նուիրական հարստութիւն, Օսմանեան սուլթաններու և այլ կառավարութեանց ֆէրմաններ և այլն:

ՄԻՍԱՔ ԱՐԱՄՅԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՍԱԼԻԱՆԻՑ ԴԵՊ ԷՋՄԻԱԾԻՆ

[Ս. Մյուռոնի օրհնությանը նվիրված հատվածը][1]

ԺԸ

Մյուռոնօրհնության նախընթաց օրը: Սարսափելի մրրիկ: Ուխտավորների անել դրություն: Սրվանձտյանի եպիսկոպոսական առաջին պատարագը: Ուխտավորների բազմությունը:

Մեր այցելությունների հետևյալ օրը Ս. Լուսավորչի Վիրապից դուրս գալու հիշատակն էր, բայց միևնույն ժամանակ Ս. Միւռոնի օրհնության նախատոնը: Այս օրվանից է սկսում այն դրությունը, որ ուխտավորը ստիպված է հրաժարել յուր անկախությունից և յուր գոյությունը խառնել ուխտավոր բանակի գոյության հետ:

Հույս ունեինք, որ այդ տոնին, ինչպես ուղեկից ընկերիս՝ պ. Ա. Ծատուրյանցի սրտաբուխ բաղձանքն էր, հանդիսավոր հոգեհանգիստ կկատարվի «Հայրենյաց պաշտպան» կաթուղիկոսի քնարանի վրա[2]: Տարաբախտաբար հասարակաց ակնկալությունը ունայն անցավ: Երևի զբաղմունքի շատությունն էր, կամ որ առավել հավանական է՝ եղանակի խառնակությունն էր, որ արգելեց Հոգևոր Տիրոջ[3] ժամ իջնել և գերեզմանի օրհնությունը կատարել:

Եվ հիրավի, այդ օրը մի այնպիսի սարսափելի մրրիկ էր բարձրացել, որ ամեն բան ավերում, ապականում ու տապալում էր: Կարծում էինք, թե Բաքվի դառնաշունչ խազրին է կամ բևեռական սառնամանիքի բորեասը, որ շղթաները խորտակելով՝ կատաղած հարձակվել է Արարատյան դաշտը տակն ու վրա կործանելու: Այդպիսի սաստկությամբ մրրիկ միմիայն լինում է Շամախի երկրաշարժից առաջ: Մի փոշի էր բարձրացել, որ ամեն բան ծածկել էր: Աչք բանալ չէր լինում:

Ընթերցողը, հարկավ, կերևակայե, թե այս սարսափելի մրրկի ժամանակ ի՞նչ էր ուխտավորների հալը, որոնք հարկադրված էին բացօթյայում հանգրվան ունենալ: Ամեն մարդ, որ հարկի ու խուցի տեր էր, անհնարին կերպով սեղմվել էր, որ նրանց էլ ծածկոց տա. բայց չէ, անկարելի էր տեղավորել: Չկար երկրագնդիս երեսին մի կետ, մի վայր, որտեղ տարագիր ու նժդեհ հայը բնակություն է հաստատել, որ յուր ներկայացուցիչը չունենար այս աշխարհախումբ ամբոխի մեջ: Բոլոր Վաղարշապատը յուր ըն-

---

[1] Հրատարակվում է ըստ **Միսաք Արամյանց**, *Ճանապարհորդություն Սալիանից դեպի Էջմիածին* (Ուխտագնացություն Մյուռոնի օրհնության և եպիսկոպոսական ձեռնադրության առիթով), Թիֆլիս, 1887 թ., էջ 150-165: Նկարագրվում է 1886 թ. Մակար Ա Թեղուտցի կաթողիկոսի կատարած Մյուռոնօրհնությունը [հրտ.]:

[2] Նկատի ունի Ներսես Ե Աշտարակեցու (կթղ. 1843-1845 թթ.) շիրիմը, որը գտնվում է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի զանգակատան առջև [հրտ.]:

[3] Նկատի ունի Մակար Ա Թեղուտցի կաթողիկոսին (կաթ. 1885-1891 թթ.) [հրտ.]:

դարձակ տարածությամբ թվում էր, թե համասփյուռ հայության աշխարհահանդես էր: Քանի՞ տարազ տիպարների, զգեստների, սովորությունների և բնավորությունների: Ո՛վ որ կամենում է ուսումնասիրել և ճանաչել հայությունը, նա անպատճառ պարտավոր է Ս. Մյուռոնի օրհնության Էջմիածին գնալ: Դուք այստեղ կիմանաք, թե ի՞նչ մեծ զորություն կա ուխտագնացական սովորության մեջ: Կիմանաք, թե ինչի՞ օլիմպիական և կորնթական տոները հին հույների համար այնքան սիրելի ու նվիրական էին: Եթե հին հեթանոսության ավանդություններից մի բան, որ քրիստոնեական շրջանում էլ տևողություն ունենալով, Հայաստան ժողովրդի բախտի վրա մեծ ներգործություն է ունեցել, դա ուխտագնացության սովորությունն էր: Այս գեղեցիկ և փրկավետ հատկությունն է միջնորդ եղել, որ տարագիր նժդեհության մեջ Հայկա զավակին հիշել է տվել յուր խնկելի նախնիքների օրորանը, գործարանը և քնարանը, ազգերի պաշտելի երրորդությունը:

Մրրիկը քանի գնում, խռովում էր: Բայց ո՞վ էր նայում նրա սաստկության. ամեն ուխտավոր շտապում էր համբուրել, արտասուքով ոռոգել Գրիգորյան նվիրավայրի յուրաքանչյուր սրբությունը և տեսնել, ինչ որ նրա փառքն ու պարծանքն է համարվում հեռվից, Հայաստանի խորքերից եկած ջերմեռանդ սրտերի համար[4]:

Պատմում էին, որ առաջվա ժամանակները, ներկա հանդեսի նման դեպքերում, վանքական կառավարությունը լճի ափերին, Ներսիսյան անտառում վրաններ սարքելիս է եղել: Այս անգամ չգիտեմ ինչի այսպիսի կանխահոգություն չէր եղած: Բարեբախտաբար մրրիկը ոչ միայն տարափ անձրև չբերավ, այլ բոլորովին խաղաղեց և սիրուն արևի գորովալից երեսը բանալով՝ ամենքի տխրամած սրտերը ուրախացրեց պայծառ ու ջեռուցիչ լուսով:

Այդ օրվա պատարագիչն էր Սրվանձտյան Սրբազանը: Սովորության համեմատ, որ նորընծա եպիսկոպոսը առաջին Պատարագը մատուցանելով Ս. Իջման սեղանի վերա, Էջմիածնի միաբանության հյուրասիրում է ճաշկերույթով, այդպես էլ Հ. Սրվանձտյանը հրավիրել էր միաբանության: Միաբանության հետ հրավիրված էին շատ ուխտավորներ, մանավանդ հեռավոր տեղերից և Տրապիզոնի վիճակից եկածները: Ճաշի ժամանակ հյուրասիրող սրբազանը յուր կենաց բաժակի առաջարկության վերա մի գեղեցիկ և հոգեբուխ ատենաբանություն արեց, որ ամենքի վերա խորին տպավորություն թողեց: Մեզ այնպես էր թվում, թե մեր առաջ կանգնած են Կոմիտասը[5] և Ալիշանը և հայրենի սրբությունները և հիշատակները դրվատելու համար պայքար են մտել: Պետք է ասած, որ Սրվանձտյանը, ինչպես յուր բոլոր աշխատասիրությունների մեջ, այստեղ ևս առավել սրտի հետ էր խոսում, քան մտքի:

---

[4] Ուխտավոր բանակը Մայր Աթոռի սրբություններին երկրպագություն տալուց հետո երամ-երամ դիմում էր Ճեմարանի շինությունը տեսնելու և մխիթարվելու: Դռները ամեն կողմերից բացարձակ գտնելով, հեղեղի նման ներս էր վազում և մտնում էր ամեն տեղ: Ես զարմանում էի, թե ինչպես կարելի է թողնել, որ այդ ահագին, մերձավորապես 15 հազար հոգի ամբոխի բազմությունը անարգել ազատությամբ ել ու մուտ գործե Ճեմարանի նման շինության մեջ: Եթե դրա հատակները կարծր քարից և ամուր երկաթից էլ լինին, այդ խուժան ամբոխի «եմենիների», «լապչինների», «խունդուռաների, «ջիզմեների», «քոշերի», «նալբնների» և «տրեխների» շփվելուց կմաշվեին, ուր մնաց տախտակները, որոնք առանց այն էլ պինդ տեսակից չեն: Այս երևույթի պատճառը ես ստիպված էի վերագրել աններելի անհոգության Ճեմարանի վարչության կողմից, որովհետև ուրիշ բանավոր պատճառ դժվար էր գտնել...

[5] Նկատի ունի Կոմիտաս Ա Աղցեցուն (կաթ. 615-628 թթ.) [հրտ.]:

Համառոտությամբ անցնենք երեկոյան ժամանակ հանդիսավոր թափորով կաթուղիկոսի՝ Վեհարանից ժամ իջնելը: Այդ հանդեսը միևնույն կարգն ուներ, ինչ որ մի շաբաթ առաջ տեսանք և որի պատկերը ներկայացրել ենք ընթերցողին: Այս անգամ մեզ զարմացնողը ուխտավորների բազմությունն էր: Տաճարի ընդարձակ բակում մի տեղ չկար, որ ամբոխը բռնած չլիներ: Այր ու կին, ծեր ու տղա, շինական ու քաղաքացի, բոլորը իրար էին խառնված ու խռնված: Տանիքները, պատուհանները, ծառերի ոստերը, մինչև անգամ շինությունների կարնիզները բռնված էին: Մի խոսքով չկար մի կետ, որտեղից կարելի լիներ տեսնել թափորական հանդեսը, որ ժամվորի կանգնելու կռվան չլիներ: Երևանից բերված և Վեհարանի դռնից մինչև տաճարի դուռը երկու կարգով կանգնած զորքի վաշտն էր և նրանց հրացանների կոթը, որ խառնիճաղանջ ամբոխի հեղեղը մի կերպ բռնում էր և թափորի համար երկու-երեք կանգուն լայնությամբ ճանապարհ պահում: Վա՜յ նրան, որ անզգուշությամբ այդ ամբոխի ոտի տակը մնար. փրկությունը անհնար էր: Վանքի բակը ածու-ածու բաժանված մի գեղեցիկ բուրաստան էր ներկայացնում մեր աչքին, երբ մենք մի շաբաթ առաջ մտանք այս հրապարակը, բայց այժմ այս բոլորը ամբոխի ոտի տակ կոխկռտվել ու ապականվել էր:

Ինչպես անցյալ շաբաթ, այս անգամ ևս երեկոյան ժամերգության կցորդեցին գիշերային ժամի պաշտամունքը: Ժամից հետո սկսվել էր այն ուրախությունը, որ սովորաբար մեր ուխտագնացության հատկանիշն է: Ամբողջ Վաղարշապատը յուր ընդարձակ շրջապատով անտխրական խնջույքի և ցնծության հանդիսարան էր դարձել: Ուխտավորները, խումբ-խումբ բաժանված, զվարճանում էին իրենց երկրի սովորության տարազով: Օդը թնդում էր ուրախության աղաղակներով, և ձեր ականջը մերթ խլացնում էին, մերթ պարուրում այն բոլոր ձայներով, որ Գողթան մուսաները հնարել էին ժողովրդական երաժշտության, նվագերգության և պարի համար: Ո՛ւր նայում էինք՝ անտխրական խնդություն էր տիրապետած, և ո՛չ մի տեղ չնկատեցինք, որ այդ ուրախությունը պատշաճի սահմանից անցած լիներ: Իհարկե, ուրախացող խմբերի մեջ ամենից առավել աչքի էր ընկնում Թիֆլիսի համքարի ուրախության պատկերը: Այս բոլորը խամ մարդու վերա փոքր-ինչ օտարոտի տպավորություն է թողնում, բայց փոքր-ինչ անցնելով և խորը թափանցելով այս երևույթի մեջ՝ զգում է, որ անարատ է և անսեթևեթ, բնական է ու անկեղծ և լավ տպավորություն է անում:

Այս տեսարանի մեջ մեզ վերա ամենից լավ տպավորություն արավ այն մխիթարական երևույթը, որ վանքի կողմից ի չարն չէր գործ դրվում ժողովրդի ջերմեռանդությունը և ուխտավորը բռնադատված չէր քսակը բաց պահելու, որ ամեն մի քայլում նրա ճանապարհը կտրող և փուշի նման գանձանակը աչքը խոթող տիրացուի կամ մղդուսու տաղտկալի հրավերից ազատվի: Արդարությունը պահանջում է խոստովանել, որ այս կետում մի տեսակ վեհանձն հարաբերություն էր տիրում Մայր Աթոռի և ուխտավորների մեջ: Վանական տնտեսության կառավարիչների և ո՛չ մեկի բերանից մի ակնարկ անգամ չլսեցինք, որ ուղղված լիներ դեպ ուխտավորների ժլատությունը: Այնինչ, այս մասին բոլորովին տեղիք կար գանգատվելու: Չկարծեմ, որ Էջմիածինը այդ ուխտավորներից այնքան արդյունք ստացած լիներ, որ նրանց կերածի, խմածի, ապականածի, կոտրած-թափածի ծախքը ծածկեր: Նվիրատվության կողմից առատաձեռն էին Նոր Նախիջևանից, Ղզլարից և Աստրախանից եկող ուխտավորները:

ԺԹ

Ս. Մյուռոնի օրհնությունը: Նրա նշանակությունը հայի համար: Պատմական մի ակնարկ: Օրհնության հանդեսը: Ժամավորի նեղությունը: Օրհնության արարողությունները և կարգը: Հին ու նոր ուխտավորի փափագը: Նկարագրիս նպատակը:

Վերջապես լուսացավ այն խորհրդավոր առավոտը, որ մեր ուխտավոր իղձերի կատարն ու պսակն էր:

Հունիսի 15-ն էր, և Ս. Էջմիածնի հիմնարկչի տոնը[6]: Եղանակը այնքան հրաշալի էր, որ ամենևին մոռացնել էր տվել նախորդ օրվա մրրիկի արհավիրքը: Արարատյան բոլոր դաշտավայրը մի արտասովոր շարժողության մեջ էր: Ուխտավորների աշխարհախումբ բանակը առանց այն էլ մեծ էր, բայց դարձյալ նոր-նոր գունդերով ստվարանում էր մոտակա գյուղերից և Երևանից եկող ուխտավորներով:

Բոլորովին իրավամբ էր նկատել պ. Ա. Երիցյանը 1882-ի Ս. Մյուռոնի օրհնության առիթով, որ այդ հանդեսը ո՛չ միայն հոգևոր, այլև ազգային ժողովրդական բաղձալի ուրախություն է, և ամեն հայի համար մի վսեմ և խորհրդավոր նշանակություն ունի[7]: Մեր այսօրվա կյանքի քաղաքական պայմանների մեջ, երբ հայը՝ Լոնդոնից սկսած մինչև Ճավա և հեռավոր Հնդկաստան, հյուսիսային բևեռից մինչև արևադարձները, ամենուրեք ձիգ ու ցրիվ են եղած, Ս. Մյուռոնի օրհնությունն է, որ որպես Ս. Էջմիածնի հայրապետական աթոռի անբռնաբարելի իրավունք, ամեն տեղերի հայերին կապում է ի մի և ամենքի աչքերը դարձնել է տալիս դեպի ազգային-եկեղեցական ընդհանուր կենտրոնը, դեպի սքանչելի տեսլյան վեհավայրը և Հայաստանյայց ուխտի լուսասփյուռ տաղավարը:

Համազգական աթոռի նահատակության գնով նվիրագործված իրավունքի մեջ է ծածկված ազգիս ընդհանուր միության հավիտենական գաղափարը, և այս է պատճառը, որ Ս. Մյուռոնի օրհնության ժամանակ Ս. Էջմիածնի լայնարձակ գավթում բարեպաշտ հայերի աշխարհախումբ բազմությունը՝ Հնդկաստանից, Ռուսիայից, Պարսկաստանից, Թուրքիայից, մի խոսքով՝ երկրագնդիս բոլոր ոլորտներից, որտեղ հայը յուր հոգևոր միության բարբառով աղոթում է. «Մի՛ յամօթ առնէր զմեզ, այլ արա՛ ընդ մեզ ըստ հեզութեան Քում և ըստ բազում ողորմութեան Քում»:

Ս. Մյուռոնը դեռևս հին ժամանակներում մեր ժողովրդի հոգևոր և բարոյական կյանքում մի առանձին և խորհրդավոր նշանակություն է ունեցել: Հայ ժողովուրդը մի շարք առածներ, անեծքներ և օրհնություններ ունի Մյուռոնի վերաբերմամբ: «Սրա ճակատին կասես թէ մյուռոն չլինի քսած». «Բերածդ մեռոնդ վկա». «Մեռոնիցդ ամաչիր», «Ափսո՜ս էն մեռոնը, որ ճակատիդ են քսել» և սրանց նման շատ խորհրդավոր խոսքեր հայ ժողովրդի համար առաքինության և անբարոյականության աստիճաններ որոշող գաղափար են: «Նամուս», «ամոթ» և Միւռոն հոմանիշ բառեր են: Միջնադարյան հույները, որ մեղադրում էին մեզ որպես հերետիկոս՝ վերջին օծման խորհուրդը մահվան ժամանակ առանձին չկատարելու համար, լավ նկատել էին, թե ո՛ր աստիճան ազգայնացած ու ժողովրդականություն էր ստացած հայերի մեջ Ս. Մյուռոնը և նրա օրհնության հանդեսը: Այս էր պատճառը, որ ԺԲ դարում Բյուզանդիայի Կիռ Էմմանուել կայս-

---

[6] Նկատի ունի «Սրբոյն Գրիգորի Լուսավորչին մերոյ ելն ի Վիրապին» տոնը [հրտ.]:

[7] **Ա. Երիցյան,** «Արձագանք», 1882, հմր. 13, Ս. Մյուռոնի օրհնությունը:

ը, կամենալով միացնել Հայաստանյայց Եկեղեցին Օրթոդոքսի հետ, մեզ առաջարկած ինը խնդիրների մեջ հինգերորդը վերաբերում է Ս. Մյուռոնին. «Զի առնիջիք զՄիւռոն ձիթով ի ծառոց»[8]: Հույները պահանջում էին, որ մենք Ս. Մյուռոնի օրհնությունը չկատարենք մեր սովորությամբ, այլ նրանց նման գործածենք միմիայն ձիթենյաց պտղի յուղը: Ներսես Շնորհալին հերքում էր այդ առաջարկությունը՝ առարկելով, թե քահանայական օրհնությունն ու աղոթքներն են, որ միացնում են ձիթո նյութի հետ Աստվածային շնորհքը, և թե ոչինչ առավելություն կամ թերություն չէ, եթե գործածական ձեթը ծառի պտղից լինի կամ բույսի:

Այսպես թե այնպես, բայց Ս. Մյուռոնի օրհնությունը այսօր Հայաստանյայց Եկեղեցուն հատուկ ամենահին ծեսերից մինն է: Դրա կատարման համար իսկապես որոշված ժամանակ չկա, կատարվում է միշտ, երբ վիճակներում և Մայր Աթոռում սպառվում է Ս. Մյուռոնի պաշարը: Մեր դարում սովորաբար կատարվում է չորս-հինգ տարին մի անգամ, թեև ռամիկ ժողովրդի մեջ ընդհանրացած է այն կարծիքը, որպես թե յոթը տարին մի անգամ է կատարվում: Մեր մատենագրության մեջ տեղեկություն չկա, թե որքա՛ն անգամ օրհնած են Դավիթը, Դանիելը, Եփրեմը, Կարբեցին կամ Ներսես V-ը՝ յուր տասնչորս տարվա քահանայապետության ժամանակ: Հայտնի է միայն, որ Մատթեոսը յոթնամյա կաթուղիկոսության ժամանակ մի անգամ օրհնած է, իսկ հանգուցյալ Գևորգ IV-ը տասնվեց տարվա հայրապետության ընթացքում չորս անգամ է կատարած՝ 1868, 1872, 1877 և 1882թ., ուրեմն միջին թվով չորս տարին մի անգամ: Ներկա Վեհ. Կաթուղիկոսի օրով անցյալ տարվա կատարվածը առաջինն էր: Նույնպես առաջին անգամն էր, որ հանդեսը հունիս ամսին էր նշանակված. սովորաբար կատարվում է կա՛մ մայիս և կա՛մ սեպտեմբեր ամիսներին:

Ս. Մյուռոնի օրհնության հանդեսը իսկապես սկսված էր նախորդ օրվա նախատոնակով, բայց Մյուռոնի պղնձյա մեծ կաթսան զտված ձեթով լցրած արդեն 40 օր էր, որ դրված էր ավագ սեղանի բեմի վրա: Նրա բերանը ծածկված էր կափարիչով և քողարկված յոթնագունյա և յոթնապատիկ քողով: Կափարչի վրա դրված էր մի մեծ ու ճաճանչավոր խաչ, որ արծաթափայլ պատվանդանը Ս. Էջմիածնի տաճարն էր ներկայացնում:

Թեև Ս. Մյուռոնի օրհնության հանդեսը նկարագրված է մեզանում առավել ճարտար ու կենդանի գրչով[9], բայց կարծում ենք, որ մեր նկարագիրն ավելորդ չի լինիլ. բավական է, եթե արդեն եղածը ընթերցողի միտը բերե:

Առավոտյան ժամերգությունը արդեն մինչև լուսանալը վերջացել էր: Ժամը ուղիղ վեցն էր, որ Տաճարի քաղցրահնչուն զանգակների նվագը ավետում էին Պատարագի ժամը: Ամեն ուխտավոր աշխատում էր տաճարի մեջ մի տեղ բռնել, որ հանդեսը, ինչպես ասում են, գոնե մի աչքով էլ տեսնե: Բայց կարելի՞ էր արդյոք այդ և մի այդպիսի խաժամուժ ամբոխ տեղավորել կարգով: Տաճարի ներքին դրությունը մեզ հայտնի է: Բարձր սյուները, Ս. Իջման սեղանը, հայրապետական աթոռները սեղմում են ավագ սեղանի տեսարանը, որտեղ կատարվում է օրհնության կարգը: Այժմ այդ տեսարանը ավելի սեղմված է. Ս. Իջման սեղանը և հայրապետական աթոռները շրջապատած են

[8] «Ընդհանրական թուղթք». տիպ. Երուս., երես 157:

[9] **Ա. Այվազյան**, Հանդես օրհնության Ս. Մյուռոնի, «Արձագանք», 1882, հմր. 15:

ամուր և միահարթ տախտակամածով, որ խուժան ամբոխի ամեհի ալիքներից բախվելով՝ չխորտակվին: Այս անհարմարություններին միանում է մի առավել մեծ անհարմարություն: Իջման տաճարը վերնատուն չունի, ինչպես քաղաքների եկեղեցիները ունին, որ կարող լիներ առավել մեծ բազմություն տեղավորել իր մեջ, մանավանդ իգական սեռի բազմությունը, որ ներկա հանդեսի նման դեպքերում խառնակության, խռովության և ժխորի գլխավոր պատճառն է դառնում[10]:

Մինչև ժամերգության սկսելը տաճարը դատարկ է. նախ թափորը պիտի անցնի, որ ժամավորին ներս թողնեն, ապա թե ոչ անհնարին է: Դռները ամրացրած են կրկնակի. դրսից պահպանում են զինվորները: Մտրակ է, որ անխնա և անաչառ չորս կողմը շառաչում է, և դարձյալ անհնար է լինում գրոհ ամբոխի խռման առաջն առնել: Տաճարից դուրս զինվորներին է հանձնված կարգապահությունը, ներսում՝ Թիֆլիսի համքարներին: Կարգադրված է, որ հեռավոր տեղերից եկողներին նախապատվություն տրվի, իսկ մնացածներին՝ երկրորդ, երրորդ տեղերը աստիճանաբար:

Բայց ահա՛ զանգակները մի նոր եղանակով հնչում են: Հեռվից լսվում է «Խորհուրդ խորին»-ի ձայնը: Մեր երկու անգամ տեսած թափորը շարժվում է նույն ճանապարհով, որ բաց են պահել երկու կարգ շարված զինվորների շղթան: Հրացանները ողջունում են թափորը, որ այս անգամ առավել հանդիսավոր է և փառավոր և գալիս է ուղղակի Վեհարանից: Ահավասիկ մեկ ձեռքը պարկեշտորեն կուրծքի վերա դրած և մյուս ձեռքին արծաթագունդ գավազանով՝ կարմիր կապան հագին՝ կաթուղիկոսական ***շաթիրները***, որ մեր կաթուղիկոսներին Պարսից շահերի կողմից տրված արտոնությունների մնացորդն է: Նրանց ծանր քայլերին հետևում է ճերմակ շապիկները հագին դպիրների խումբը, որի դպրապետի կորովալիր ձայնը «Խորհուրդ խորինի» գեղգեղանքներն է դուրս բերում զգացված և ոգևորված կրծքի խորքերից: Ի՞նչ հրաշալի ձայն: Դպիրներին հետևում են երկու կարգով տեղական և ուխտավոր քահանաները, աբեղաները և վարդապետները՝ ամենքը շուրջառազգեստ: Այս կարգի մեջ ընթանում են խաչերը, խաչվառները և կերոնները: Նրանց ետևից չորս ավագ սարկավագներ՝ սաղավարտները գլուխներին և արծաթափայլ տապանակները ձախ ձեռքում՝ հավասար աղեղներով (ամպլիտուդա) և ներդաշնակ հետընթաց խնկարկում են սուրբերի մասունքներին և հայրապետական քողին: Տասներկու եպիսկոպոսներ՝ բոլորովին զգեստավորված, երկու կարգով բերում են Մայր Աթոռի սրբությունները. աջ կողմից՝ աստվածամուխ Գեղարդը, ծաղիկների հյութը, Պետրոս առաքյալի ճկույթը, Արիստակես Հայրապետի Աջը, Գետադարձի խաչը, Թովմաս առաքյալի Աջը, Բալասանը, Թադեի Աջը և Աղավնին՝ հին Մյուռոնով:

Սրանց ետևից շապկազգեստ չորս դպիրներ բռնած ունին հայրապետական քողը, որի երկու կողմից բարձրացած կրում են կաթուղիկոսական ձողաբարձ խաչը և գավա-

[10] Կհուսանք, որ ներկայումս, Էջմիածնի տաճարի շինության մտադրության ժամանակ, այս կարևոր հանգամանքը ուշադրության կառնվի: Այդ տաճարում կարելի է մի ընդարձակ, այո, մինչև անգամ կրկնահարկ վերնատուն շինել՝ առանց տգեղացնելու ներքին տեսարանը: Սրա հետ, կարծում ենք, առավել նպատակահարմար կլինի, եթե Իջման սեղանի կաթուղիկեն շարժական լինի, և Մյուռոնօրհնության հանդեսը կատարվի միջին չորս սյուների մեջ՝ ժամանակավոր շինված տախտակամածի վերա, ինչպես կատարում են Թիֆլիսի Մայր եկեղեցում Ռտնալվայի հանդեսը: Ս. Մյուռոնի կաթսան ուղղակի կարելի է զետեղել Իջման սեղանի վերա՝ համապատասխան տեղում: Դրանով հանդեսի տեսարանը տասնապատիկ կբացվի և պատճառ կլինի կարգ-կանոն և հանդարտություն տիրապետելուն:՝

զանը: Քողի ետևից շառագույն ամպովանու տակ գալիս է Վեհափառ Կաթուղիկոսը՝ տյառնագրելով աշխարհախումբ բանակը այն ճաճանչավոր քառաթևյան նշանով, որի մեջ ամփոփված է Կենաց փայտի Ս. Մասունքը: Վեհափառը զգեստավորված է պատարագչի զգեստով: Երկու եպիսկոպոսներ, որոնք պիտի սպասավորեին, կերպասյա ճերմակ շապիկներով, բազպաններով և փորուրարներով բարձրացրած կրում են հայրապետական ամենածանրագին շուրջառի քղանցները: Ամպհովանու չորս անկյուններից գնում են քշոցակալները, քշոցները՝ մեղմիկ բախելով, իսկ ետևից կաթուղիկոսական գավազանակիրը՝ հովվապետական ցուպը բարձր պահած: Թափորական հանդեսը փակում են այն ուխտավորները, որոնց արտոնություն է շնորհված հանդեսի ժամանակ՝ եկեղեցում նախադաս տեղ բռնելու: Բոլոր թափորը ներկայացնում էր մի շքեղ և փառազարդ տեսարան. Մայր Աթոռը հանդես էր հանել յուր գանձերի բոլոր ճոխությունը, փառքը և հպարտությունը:

Հազիվ թափորը մտնում է եկեղեցի, Վեհափառը, որպես պատարագիչ, բարձրանում է Ավագ սեղան, և դպիրները բռնում են իրենց տեղերը, և ահա՛ ուխտավոր ամբոխը հեղեղի նման վերա է տալիս ներս վազելու: Անցքերը պաշտպանող զորքերի շղթան տատանում, երերում է այդ սարսափելի հեղեղի անդիմադրելի ալիքների առաջ: Շղթան խորտակվում է, և չէ անցնում մի քանի րոպե և տաճարը լցվում է մի այնպիսի խառնիճաղանջ բազմությամբ, որ եթե վերևից ասեղ ձգեին, ինչպես ասում են, գետին չէր ընկնիլ: Մի տեղ, մի կետ չկար, որ ամբոխը հեղեղած չլիներ: Միմիայն Ավագ խորանի բեմն էր ազատ, այն ևս մասունքակիր եպիսկոպոսների շղթան էր, որ վեցն աջ կողմից, վեցը ձախ՝ բռնած էր աստիճանների վերա խռնված ամբոխը: Ի՞նչ սարսափելի աղաղակ է բարձրացել. կարծեք օվկիանոս էր խռովում, և նրա ամեհի ալիքները, սարսափելի շառաչյունով ժայռերին զարնվելով, հետ էր գնում: Առաջ գավառապետը, հետո Վեհափառ պատարագիչը հորդորում են խուժանը, որ խաղաղի, հանդարտվի: Բայց կարելի՞ է արդյոք հնազանդել. ամբոխը կորցրած է ինքնազսպության զորությունը. նա անպայման ենթարկված է նույն րոպեին նրա ամբողջ զորությունը համակած անզուսպ ցանկության. որի սիրտն է գնում, որը նվազում է, որը թուլանում է: Բայց ո՞վ կարող է դրանց դուրս բերելով ազատել. անցք, ճանապարհ ամենևին չկա. շարժվել՝ նշանակում է առավել ճնշվել քրտինքը քամող ջխտիչի տակ: Արարողություններին և ընթերցվածներին ունկնդիր լինելու մասին մտածել անգամ կարելի չէ: Խռովեալ օվկիանոսի սարսափելի աղաղակի և ժխորի մեջ ամեն ձայն խեղդվում է: Ընկերիս սիրտը գնաց. նրան մի կերպ ազատեցին: Դպիրներից մինը նվաղեց. անհնարին է լինում նրան բախող ալիքներից դուրս հանել և ժամավորների գլխով սեղան հրել: Ես զգում եմ, որ նվաղում եմ, մատս սաստկությամբ կրծում եմ, որ զգայությունս արթուն մնա: Հազար վերստ կտրել, ինչ է՝ Մյուռոնի օրհնությունը տեսնել և նվաղի՞լ: Չէ, լավ է մեռնել, բայց գոնե բաց աչքով տեսնել: Եթե իմ նման մարդը, որ պիտի իմանա քիչ թե շատ զսպել և նախապաշարմունքներից ազատ մնալ, այսպես է տրամադրված, հապա ամբոխը ի՞նչ դրության մեջ պիտի լինի: Ամենևին չեմ կարող մեղադրել նրան, որ պատրաստ է ամեն բան ոտնահարել, միայն թե տեսնե Մյուռոնի եփ գալը...

Խառնակությունը սարսափելի է. բայց առավել սաստկացնում են բեմից տեղատարափ նետված սառույցի կտորները: Հապա ***փալանով*** պճնազարդված կանայք. դրանց պատճառած խառնակությունը առավել վատթար է: Յուր ժամանակին չեն եկել և հար-

մար տեղ չեն բռնել, այժմ՝ Պատարագի ժամանակ, մինչդեռ ամբոխը հեղեղել է եկեղեցին և շարժելու հնար չկա, նրանց առաջ մղելու համար անխնա հարվածող մտրակների շառաչյունը ճգնում է անհնարին սեղմված ժամավորը ճեղքել և անցք բանալ: Երկաթե ամուր վանդակները տապալում են: Ճարպիկները բարձրացել են տաճարի տանիքը և մեծ կաթուղիկեի պատուհաններից են նայում: Որքա՜ն սրտոտություն... Նրանցից մեկը անզգուշությունից սահի և վայր ընկնի՝ մեծ կտորը ականջը կմնա...

Պատարագը շարունակվում է այս խռովության և աղմուկի մեջ: Բայց ահա՛ վերաբերումը կատարվեցավ. ձայնում են «ողջույնը»: Վեհափառ պատարագիչը, դառնալով դեպի ժամավորները, բազմում է սեղանի աջ կողմում՝ Հայրապետական աթոռի վերա: Սկսում են օրհնության կարգը: Երգում են և կարդում են օրհնության սաղմոսներ, աղոթքներ և Ներսես Շնորհալու «Որ յառաջագոյն» շարականը: Մասունքակիր եպիսկոպոսները հետզհետե կարգով կարդում են սահմանված մարգարեական գրքերը, ավետարանները և թղթերը: Դպրական խումբը սկսում է երգել Հոգույն Սրբո Իջման նվիրյալ շարականներ: Մայր Աթոռի լուսարարապետը զգուշությամբ վեր է առնում Մյուռոնի կաթսայի վրայից ճաճանչավոր մեծ խաչը, յոթնագույն քողը և կափարիչը: «Այսօր ցնծամք երկրաւորքս» շարականի վերջին հատվածի վերա Վեհափառ Կաթուղիկոսը կաթսայի մեջ խաչաձև թափում է հետզհետե ծաղիկների հյութը և Բալասանը. իսկ «Առաքելոյ Աղաւնոյ»-ի վերա՝ հին Մյուռոնը: Այդ միջոցին դրսի զանգակները և քշոցները ուժգին ու ներդաշնակ հնչում են: Ժամավորի սիրտը տենդային շարժման մեջ է և թրթռում է, որ սպասած երևույթը հայտնվելու վերա է. նա լարել է յուր տեսողության բոլոր ուժերը: Նույն րոպեին նրա գոյության միակ ձգտումը, փափագը և նպատակն է՝ չնվաղիլ, որ բաց աչքով տեսնե Ս. Մյուռոնի տյառնագրությունը Ս. Գեղարդով և Ս. Լուսավորչի հրաշազոր Աջով, որոնց զորությամբ որպես թե եփ պիտի գա: Եվ ահա՛ Վեհափառ Հայրապետը ձայնով սկսում է տյառնագրել Ս. Մյուռոնը՝ նախ Կենաց փայտը ընկղմելով, հետո աստվածամուխ Գեղարդը և ապա Ս. Լուսավորչի Աջը և ամեն անգամ խաչաձև խառնելով: «Օրհնեսցիներ»-ը Հոգևոր տերը ինքն է ասում, իսկ երկոտասան եպիսկոպոսները մեղմորեն ձայնակցում են: Սարկավագը խնդրում է Վեհափառի օրհնությունը և նորաեփ օծյալ յուղի շնորհքը ուխտավորների վերա: Վեհափառ Կաթուղիկոսը կնքում է հանդեսը «պահպանիչով» և դառնում է դեպի Սեղանը՝ գոհության Պատարագը մատուցանելու:

Բոլոր հանդեսը, սկսած թափորից մինչև տյառնագրությունը, մոտ երեք ժամ տևեց: Ես լարել էի իմ բոլոր ուշադրությունը՝ իմանալու, թե ո՛ր աստիճան ուղիղ է ժողովրդի ավանդությունը, թե կաթսայի Մյուռոնը Գրիգոր Լուսավորչի Աջով տյառնագրելիս ու խաչաձև խառնելիս «միջի հյութը եռ է գալիս և գոլորշի է արձակում»[11]: Արդարությունը պահանջում է խոստովանել, որ մեր հոգևորականության կողմից ամենևին ձգտում չէ էլ եղած, որ այս հրաշապատում ավանդությունը հաստատ պահվի: Բայց նայելով մեր աշխարհիկ գրողների վկայության, ես էլ մի տեսակ հավատ էի տածում, որ այս ավանդությունը ճշմարիտ իրողություն է, մանավանդ որ բնական օրենքների նկատմամբ աներկմիտ էի այս տեսակ երևույթի հնարավորության մասին: Սակայն ուղիղն ասեմ, իմ ներկայությամբ կատարված մյուռոնօրհնության ժամանակ ես այս երևույթը

[11] **Մ. Թաղիադյանց**, Ճանապարհորդություն ի Հայս, երես 107 և **Ա. Երիցյան**, Ս. Մյուռոնի օրհնությունը, «Արձագանք», 1882, հմր. 13:

չտեսա՝ չնայելով, որ կաթսայից շատ հեռու չէի և տեսարանը բոլորովին բաց էր իմ աչքի առաջ: Գուցե տոթն էր կամ խոնջությունս, որ թուլացրել էին զգայարաններս, մանավանդ՝ տեսողությունս:

Եվ հիրավի, եթե մի քանի վայրկյան ևս ավել տևեր նեղված դրությունս, անպատճառ կնվաղեի: Բախտի բերմամբ այդ միջոցին ինձանից մոտիկ խմբված փափկասուն տիկիններից մինի սիրտը գնալով՝ անցնելու ճանապարհ ճեղքեցին նրա համար և ինձ, որպես բժշկի, թրևեցին օգնություն հասցնելու: Իհարկե, դժվար չէր օգնելը. թարմ օդի կենդանացուցիչ հորձանքի մեջ ինքնին կվերականգներ շնչառության և երակների շարժման կանոնավոր կարգը, և ոգեսպառ հիվանդը կկենդանանար: Ինչ որ էլ է, բայց պարտավոր եմ խոստովանել, որ այդ հիվանդը, որին կանչված էի օգնելու, իմ անփորձանք ազատվելուն պատճառ եղավ: Այդ ոգեսպառ տիկնոջ սթափեցնելով, հազիվհազ հասա բնակարանս և բոլորովին ուժասպառ և քրտնաթաթախ՝ ընկա անկողնակալիս վերա: Միաբանական ճաշի զանգակը սթափեցրեց ինձ: Ես ուրախությամբ այդ օրը ճաշելուց էլ կհրաժարվեի, բայց կամենում էի տեսնել միաբանության ճաշը՝ Հոգևոր Տիրոջ սեղանակցությամբ: Հավաստիացնում էին, թե Վեհափառը իջնելու է սեղանատուն: Ակնկալությունս սնոտի անցավ, և նա չեկավ և երեկոյան ընթրիքին: Երևակայությունս ինձ հեռու-հեռու էր տանում: Կարծես ես համակված էի 1882 թ. ուխտավորի զգացած վշտով, թե «ինչի՞ այն երեկո Ամենայն Հայոց Պատրիարք Կաթուղիկոսը մեծ ճաշկերույթ չպիտի ունենար՝ եկավոր երևելի հայերին և հայուհիներին, հեռավոր ու մոտավոր գյուղերի տանուտերներին ու քեղխուդաներին հրավիրելով: Որքա՞ն հոգևոր մխիթարություն պիտի պատճառեր ուխտավորներին և որքա՞ն սերտ կապով պիտի կապեր նրանց Վեհարանի հետ... Երևակայությունս նկարագրում էր, թե ի՞նչ տպավորություն պիտի գործեր 20-25 հազար հոգուց բաղկացած ուխտավոր բանակի վերա, եթե նույն երեկո Վեհափառ Հայրապետը, շրջապատած բարձրաստիճան եկեղեցականներով և ազգիս երևելիներով, յուր բարձր կոչման համաձայն՝ փառքով այցելեր Ղազարապատը և այն տեղերը, ուր բանակ էին դրել հեռավոր տեղերից խմբված ուխտավորները: Հռովմեական կաթոլիկության մեծ ուժը արդյոք այսպիսի հանդեսների մեջ չէ՞ ծածկված»[12]:

Վշտացած ուխտավորի դիտողության առաջին կետը փոքր-ինչ վիճելի է, բայց երկրորդը բոլորովին ճշմարիտ է: Ես համոզված եմ, որ մի քանի հոգեշունչ և սրտաբուխ մխիթարական խոսքեր զորավոր սպեղանի կարող էին լինել և սփոփել ու ամոքել կսկիծը և մորմոքը այն կապույտ-կարմիր պալարների, որ մտրակների շառաչը և հրացանների կոթերը թողել էին ուխտավորների մարմնի վերա: Բայց դրա հակառակ՝ Տիրոջ խոսքը ծավալելու նախանձախնդիր ճարպիկ մարդորսները մտել էին խուժան ամբոխի մեջ և, ո՛վ հանդգնություն, նույնիսկ Ս. Իջման տաճարի դռան, Ներսես V-ի քնարանի մոտ զետեղել էին իրենց արկղերը և Բիբլիական ընկերության հրատարակություններն էին վաճառում: Բարեբախտաբար, նկատեցին այս լրպշի հանդգնությունը և դուրս վռնդեցին նրանց: Սակայն կարելի՞ էր արդյոք իսպառ հեռացնել դուրսը գտնված ամբոխի հաղորդակցությունից... Այո՛, կարելի էր, եթե Մայր Աթոռը ունենար յուր հրատարակությունները՝ Հայաստանյայց զավակի հոգևոր և բարոյական պահանջներին

[12] **Գ. Ե.,** Թիֆլիսից Էջմիածին, «Արձագանք», 1882, հմր. 30:

համապատասխան բովանդակությամբ: Քանի որ այս չկար, մարդորսների գործունեության ասպարեզը լայնարձակ էր, մանավանդ որ նրանց «օջախը» հեռու չէր...

Երեկոյան հրավառություն կար, որ բավականին ակնապարար տեսարան ուներ, և բազմությունը զվարճացնում էր: Նույն զուռնան, նույն երգերը, նույն պարերը և խաղերը, որ նախընթաց երեկոյին տեսանք, կրկնվում էին և այս երեկո, միայն առավել աշխույժով և առավել եռանդով: Պատճառը պարզ էր: Ուխտավորը, յուր սրտի ուխտը կատարված տեսնելով, Ս. Մյուռոնի կաթսան ուխտադրյալ անգամ համբուրելով, իրավունք էր համարում ուրախանալ: Երեկվա ուրախությունը նախատոնակ էր. ցնծությունը այսօր էր, Մյուռոնի օրհնությունից հետո: Թափառելով այդ ուրախացող խմբերի շուրջը՝ ակամա ձեր սիրտն էլ ուրախանում է, մանավանդ տեսնելով, որ այդ ***քեֆի*** մեջ պատշաճի սահմանից դուրս եկող մի անվայել բան չէ պատահում: Կեսգիշերն անցած էր, որ հրավառության կանթեղները և լապտերները նվազած առկայծում էին: Նրանց առկայծող լույսի հետ էլ նվազում էին ուրախացող ամբոխի ավյուն ու եռանդը, և ուխտավոր բանակը կամաց-կամաց քուն էր մտնում, իհարկե, Աստվածաշեն հարկի աստեղազարդ խորանի տակ:

Հրատարակության պատրաստեց
Վանուհի Եղիշյանը

ԱԶՆԻՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

Գևորգ Դ կաթողիկոսի (կթղ. 1866-1882 թթ.) շնորհիվ 1868 թ. սկսում է հրատարակվել Մայր Աթոռի «Արարատ» պաշտոնական ամսագիրը, ուստի նախախորհրդային շրջանում Ս. Էջմիածնում կատարված Մյուռոնի օրհնության արարողությունների բոլոր նկարագրությունները գտնում ենք «Արարատի» համապատասխան համարներում:

Ստորև ներկայացնում ենք Ս. Մյուռոնի օրհնության ժամանակագրությունը ըստ «Արարատի» այդ համարների, որոնցում գտնում ենք կենդանի արտացոլումը կատարված օրհնության և ժողովրդի բարեպաշտ ու ջերմ զգացումների:

1868 թ. մյուռոնօրհնությունը կատարվել է Վարագա խաչի տոնին, որն այդ տարի սեպտեմբերի 29-ի կիրակին է եղել: Այս մյուռոնօրհնությունից երկու շաբաթ առաջ կատարվել է նաև եպիսկոպոսական ձեռնադրություն:

«Արարատում» տպագրված հոդվածում, որը վերնագրված է «Հանդէս օրհնութեան Սրբալոյս իւղոյն Միւռոնի», ասվում է, որ օրհնությունից առաջ «Տաճկաստանէն մեծ բազմութիւն ուխտաւորաց հասան ի Սուրբ Էջմիածին», որոնց միանում են նաև Արևելյան Հայաստանից ու Ռուսաստանի տարբեր կողմերից եկած ուխտավորները[1]: Մեծ շուքով և հանդիսավորությամբ կատարված օրհնության նկարագրությունում ի մասնավորի ասվում է. «Զինուորական նուագարանները թէն կերգէին ի հեռուստ ժողովուրդը զբօսացնելու և հոգևորական հանդիսի յառաջը ճանապարհ բանալու, բայց բազմութիւնը այնքան խիտ էր երկու կողմից, որ զինուորք չէին կարող նոցա մղումը յետս ամփոփել, որք ջերմեռանդութեամբ սրտի կփութային ի համբոյր սրբոց մասանցն: Հազիւ տաճարին մէջ ևս բազմութիւնը ճեղքելով այս դասակարգութեամբ և այսպիսի շքեղութեամբ հանդիսի Վեհափառ Հայրապետը ելաւ ի Սեղան և Պատարագն սկսաւ:

Ո՛չ երբէք արդարև քաղաքական հանդէսները կնմանին եկեղեցական հոգևոր հանդիսից փառաւորութեանը և մեծ վայելչութեանը, որոնք մարմնաւոր զուարճութիւններով մարդկան բազմութիւնը կզբօսացնեն և նախնի մեծագործութեանց յիշատակներով նոցա ուշը կդարձնեն աշխարհքի փառաց ունայնութեան վրայ, մինչդեռ Եկեղեցական հանդէսները իրենց այսպես գերօրինակ շքովն ու փառաւորութեամբ ոչ միայն հաւատացելոց բազմութեան սրտի փափագը կձգտեն դէպ յուրախութիւն ըստ մարմնոյ և ի լուր հոգևորական երգոց քաղցրութեան, այլև նոցա հոգեկան սէրը և քրիստոնէական հաւատոյ զօրութիւնը կբորբոքեն հոգեպէս յԱստուածպաշտութիւն, և ի վայելս շնորհացն Աստուծոյ և ողորմութեան. և նախնական աստուածպաշտութեանց և կարգաց սրբութեան վսեմութիւնը կներկայացնեն բազմութեան աչքին, որով նոցա քրիստոնէական ջերմեռանդութիւնը և հաւատքը կենդանի կմնայ առ Աստուած և առ Սուրբ Եկեղեցին:

---

[1] «Արարատ», 1868, էջ 56:

Այս էր ահա՛ ժողովրդոց այսչափ բազմութեան հաւատոյ և Աստուածպաշտութեան շարժառիթը, որոնք հեռաւոր տեղերէ դիմեցին յԱթոռս ի տես հանդիսի օրհնութեան Սրբալոյս Միւռոնի և յարժանաւորութիւն շնորհաց Հոգւոյն Սրբոյ ի ձեռն աղօթից և խնդրուածոց առ Աստուած վասն շինութեան աշխարհի և հաստատութեան Սրբոյ Եկեղեցւոյ։ Ճանապարհի նեղութիւնը, երկարութիւնը ոչ ինչ էր նոցա հոգեկան ջերմեռանդութեան յառաջը, իսկ Աթոռոյս մէջ շաբաթներով մնալը՝ աւելի ուրախութիւն։

Պատարագի սկզբէն մինչև վերջը եկեղեցին ծայրէ ծայր լիքն էր ժողովրդովք, երբ որ ողջունէն յառաջ Սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը սկսաւ և իւղոյ կաթսայն բացուեցաւ, հանդիսատես բազմութեան հոգւոյ աչքը ևս կարծես թէ նոր բացուեցաւ. ծովու ալեաց նման յառաջ ու յետ կշարժէր բազմութիւնը Եկեղեցւոյ մէջ և նոցա ջերմեռանդութիւնը տեսնողի աչքէն արտասուք կթափէր։

Աղօթից կարգը աւարտելէն ետքը Վեհափառ Կաթուղիկոսը տասն զգեստաւորեալ եպիսկոպոսաց հետ դարձաւ առ ժողովուրդն՝ շրջապատելով զկաթսայն, իւրաքանչիւր մասունքներով կարգաւ և առանձին առանձին օրհնեց զսուրբ իւղն, խառնելով նորա հետ հին Միւռոնն, ծաղկանց նիւթերն և բալասան, և խաչիւ և աւետարանաւ կնքելով զայն անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, օրհնեց զբազմութիւնը, և գեղեցիկ ատենաբանութեամբ բացատրեց Սրբալոյս Միւռոնի շնորհաբաշխութիւնները, որ ի ձեռն խորհրդոց Եկեղեցւոյ կմատակարարուի հաւատացելոց և նովաւ կորդեգրուին Հօր Աստուծոյ ամէն քրիստոնեայ հաւատացեալք։

Ապա ողջոյն տալով ուխտի եկեղեցւոյն և ամենայն բազմութեանն, Պատարագը սրբագործեց, ու նովին հանդիսիւ հոգևորական ուխտի, որով եկել էր յԵկեղեցին, գնաց վերստին ի Կաթողիկոսարանն՝ ժողովրդոց արտաքին բազմութիւնը հազիւ ճեղքելով զօրաց կանոնաւոր հսկողութեամբն ճանապարհի երկու կողմից ևս։

Շատ հանդիսաւոր հրավառութիւն եղաւ նոյն գիշերը զինուորական նուագարաններով ի զբօսանս ժողովրդոց, և յուրախութիւն բոլոր ուխտաւորաց, բայց ճշմարիտ քրիստոնէի ուրախութիւնը և հոգեկան մխիթարութիւնն էր միմիայն Սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը, որ կշարժէր բազմութեան հեռաւորաց և մերձաւորաց սրտի ջերմեռանդութիւնը, որոնք երեք օր տիւ և գիշեր անընդհատ կդիմէին ի համբոյր կաթսային՝ արժանանալով հոգեկան շնորհաց օրհնութեան և մասանցն սրբոց, որք բազմացրած էին սեղանի յառաջ»[2]։

Հինգ տարի անց՝ 1872 թ. Գևորգ Չորրորդը կատարում է հաջորդ մյուռոնօրհնությունը, որի նկարագրությունում ասվում է. « Մեր Ս. Եկեղեցւոյ գլխաւոր և փառաւոր հանդէսներէն մին լինելով Ս. Միւռոնի օրհնութիւն, անշու՛շտ, ամենայն Հայոց սիրտք ի թունդ կբարախէին և բոցավառ ի խանդ կանձկային նոյն հանդիսի տեսութեան և շնորհացն մասնակցութեան, այլ առ այնչափ բազմութեանն անձկութիւն Տաճարիս կճմլէին մեր Վեհ. Հայրապետի սիրտը, բայց և այնպէս գիտաց Նորին Ս. Օծութիւն հանդիսատես կացուցանել և մխիթարել միանգամայն բազմութիւնը և ըստ կարելւոյն գոհացնել։

Առաւօտեան ժամերգութեան աւարտմանէն իբր մի ժամ զկնի՝ Մաղթանաց հանդէսն եղև ըստ սովորութեան, յորում երկու ճառեր կարդացուեցան։

Յետ իբր միոյ ժամու հնչեցին Ս. Պատարագի զանգակները, յայնմ միջոցի Վեհ. Հայ-

[2] Նույն տեղում, էջ 58-60։

բապետ և երկոտասան Արքեպիսկոպոսունք և Եպիսկոպոսունք կզգեստաւորէին ի Վեհարանն:

Խորհուրդ խորին երգելով՝ հանդէսն ելաւ ի Վեհարանէն, որոյ վսեմութիւն և մեծապայծառ և փառաւոր ճոխութիւն, դպրաց սրտաշարժ եղանակք և զանգակահարութեանց դղրդիւն՝ երկնից արձագանք կտային, և ժողովրդեան հոգեզուարթ և ջերմեռանդ զգացմանց և խնդամիտ և մխիթարեալ կերպարանաց ի տես՝ սիրտք ազգասէրք և հոգեռանդք փղձկեալ յարտասուս կշարժէին: Ոհ, գեղեցիկ էր օրն, զուարթ և պայծառ օդն, ախորժելի եղանակն, հիասքանչ և վսեմագոյն հանդէս, իսկ ժողովուրդն խուռն՝ միանգամայն սիրտ ի խինդ և ի թունդ ոգևորեալ և յափշտակեալ ի սէր Աստուծոյ և ի պարծանս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ մերոյ»[3]:

Գևորգ Չորրորդի կատարած երրորդ մյուռոնօրհնությունը տեղի է ունենում 1878 թ.: Այն մի փոքր հետաձգվում է ռուս-թուրքական պատերազմի պատճառով, որի համար էլ շատ ուխտավորներ չեն կարողանում գալ Մայր Աթոռ, և կատարված օրհնության մասին տրվում է միայն հետևյալ ծանուցումը. «Ի 4-ն Յունիս ամսոյ կատարուեցաւ Ս. Միւռոնի օրհնութիւնը:

Թէեւ անցեալ 1877 թուականի աշունքում պիտի կատարուէր յիշեալ հանդէսը եւ ըստ այնմ պատրաստութիւնքը կհոգացուէին, այլ սակայն հանրածանօթ վերջին պատերազմը կանխեց եւ արգելառիթ եղաւ, մի եւ նոյն ժամանակ անհրաժեշտ հարկը, ինչպես նաեւ ուրիշ նշանաւոր շատ պատճառներ ստիպեցին սովորական եղած հրաւէրները ելլն. համառօտել եւ կատարել Ս. Միւռոնի օրհնութիւնը, բայց եւ այնպէս Երեւանէն եւ Ս. Էջմիածնի շրջականերէն դիմած եւ հաւաքուած մեր սիրելի եւ բարեպաշտ Հայ եղբարց բազմութիւնը խիստ շատ էր եւ անշուշտ 10 000 անձինքէն աւելի կլինէին:

Արդարև, մեծ ցաւ է ամեն Հայերուն, որ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ գլխաւոր եւ փառաւոր արարողութիւններէն մինը եղող Ս. Միւռոնի օրհնութիւնը այս անգամ այսպէս կատարուեցաւ, սակայն չեմք երկբայիր, որ ամեն Հայ կրնայ առաւել կամ նուազ կերպով ինքնին կշռել ներկայիս բազմատեսակ եւ խուռն հանգամանքները եւ ըստ այնմ կսիրէ ներողամիտ լինել»[4]:

Գևորգ Չորրորդը իր վախճանման տարում՝ 1882 թ., հասցնում է կատարել Մյուռոնի չորրորդ օրհնությունը՝ նախորդից չորս տարի անց, որը վերստին կատարվում է մեծ հանդիսավորությամբ և շուքով, որի նկարագրությունից բացի «Արարատում» շեշտվում է նաև Ս. Մյուռոնի ունեցած համազգային համախմբող բացառիկ դերը և նշանակությունը. «Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ մեծաշուք, սրտագրաւ եւ նուիրական հանդէսներէն մին եւ նշանաւորն է Ս. Միւռոնի օրհնութիւնը, զոր կը կատարէ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, եւ ըստ արդի բազմացրիւ ելլն. հանգամանաց Ազգիս, հարկաւ Միւռոնօրհնութեան հանդէսը Հայ ժողովրդեան համար ունի ինչպէս կրոնական, նոյնպէս ազգային եւ բարոյական վսեմ, խորհրդաւոր եւ համազգային նշանակութիւն եւս:

Ս. Էջմիածինը իւր իբր հազար վեցհարիւրամեայ բազմարկած գոյութեան ընթացքում, ինչպէս շատ պարագայից մէջ, նոյնպէս մանաւանդ վերջին դարերում ըստ ազգայ-

[3] «Արարատ», 1872, էջ 207:

[4] «Արարատ», 1878 , էջ 273:

նոյն եւ ըստ կրօնականին նուիրական դիրք բռնած է եւ փրկութեան խարիսխ հանդիսացած կեդրոնական պարտաւորութեամբք լծորդեալ, առ որ մինչեւ ցայսօր գրաւուած եւ յառած են քաղաքականապէս քայքայեալ եւ ի սփիւռս աշխարհի տարացրուեալ հայ ժողովրդեան աչքն ու միտքը, որովհետեւ եղած է միանգամայն բարոյական եւ կրօնական կապ, որ պահպանել է Հայ ազգի միութիւնը՝ պատահելով եւ յաղթելով բազմախուռն փորձութեանց խոչընդոտներու եւ ձախորդութեանց։ Չպետք է մոռանալ, որ այն բարձր դիրքն ու նուիրականութիւնը, որը Ս. Էջմիածին երկար դարերէ ի վեր ունեցել է եւ ունի, ծնունդ եւ հետեւանք է այն կրօնական եւ բարոյական բարձր հեղինակութեան եւ մեծ ազդեցութեան, որ գործել է Նա Հայ ազգի կրօնական եւ ազգային կեանքի վերայ։

Հայ ազգը իւր Եկեղեցւոյ, Քրիստոնէական կրօնի եւ ազգութեան եւ նոցա պաշտպանութեան դասերը միասին է սովորել, ուստի նա իւր ներքին եւ արտաքին բոլորանուէր ջերմեռանդութեամբ Ս. Եկեղեցին արեամբ չափ պաշտելով եւ պաշտպանելով, պաշտած է համարում իւր ազգութեան փրկարար ապաստանարանը։

Այս եւ շատ մի այսպիսի ուղիղ եզրակացութեան կգար, անշուշտ, ամեն մի փոքր ի շատէ զարգացած ու Հայի անցեալ ու ներկայ կեանքի պատմութեան տեղեակ անձն, եթէ յաջողեր նմա ականատես լինել այն բիւրաւոր հայ բազմութեանը, որ վերոյիշեալ տպաւորութիւններից եւ զգացումներից ստիպեալ՝ շտապած էր ներկայ լինելու Ս. Միւռոնի օրհնութեան ազգային-կրօնական հանդիսին աստ ի Մայր Աթոռս, եւ այս առթիւ հեռաւոր եւ մերձաւոր ազգայինք միմեանց հետ կծանօթանային, միմեանց վերայ քիչ-շատ ականատես՝ գաղափար կկազմէին իրերաց, հետ սիրալիր գրկախառնութեամբ մի նոր յարաբերութեամբ կշաղկապուէին եւ միմեանց վերայ կգուրգուրային։

Դառնանք այժմ հանդիսի նկարագրութեանը։

Ռուսաստանի, Պարսկաստանի, Տաճկաստանի եւ այլ հեռաւոր եւ մերձաւոր քաղաքներէ եւ գիւղերէ ամեն կարգի եւ աստիճանի մերազնեայ ուխտաւորք դեռ մայիսի սկիզբէն սկսած էին գալ ժողովուիլ աստ ի Մայր Աթոռս այնպիսի բազմութեամբ, որ Ս. Միւռոնի օրհնութեան նախընթաց օրը Ս. Էջմիածնի ո՛չ միայն հիւրատուններն ու Միաբանից մեծ մասի սենեակներն, ինչպես նաեւ ուրիշ զանազան խուցեր եւ տնակներ լցուած էին նրանցով, այլ եւ Վաղարշապատի մէջ չկար տուն, յորում միջին թուով իջեւանած չլինէին 15-20 եւ աւելի հոգի։ Ս. Էջմիածնի ներքին եւ արտաքին պարսպաց ներսն ու դուրսը վրաններով ծածկուելուց յետոյ տակաւին Վաղարշապատի հրապարակներն ու փողոցները կվխտային արանց, կանանց, մեծաց եւ փոքունց խուռն եւ խիտ բազմութեամբ տեղական եւ շրջակայ գիւղօրէից բնակչօք հանդերձ, որոց ամենից թիւը հաւանականագոյն էր կարծել, որ երեսուն հազարից աւելի էր։

... Դպիրք, սրտաշարժ եղանակով կերգէին «Որ զշնորհս աստուածային» շարականը։

Զանգակները կհնչէին։

Բազմութիւնը չորս կողմը՝ հրապարակում եւ կտուրներում, մինչեւ ծառերի վերայ խռնուած էր։ Բարեպաշտ ժողովրդեան եւ ուխտաւորաց հոգեսքանչ զմայլմանց եւ զգացմանց արտափայլումը արտասուաց հեղեղներով խառնուած մի սրտաշարժ տեսարան

կներկայացներ։ Եւ հանդիսի վեհութեան հետ օդոյ պայծառութիւնը եւս դաշնակցած էր»[5]։

«Կովկասի Հայք և Ամենայն հայոց կաթողիկոսությունը 19-րդ դարում» երկհատոր աշխատության հեղինակ Ալեքսանդր Երիցյանը ևս համանման ձևով է ներկայացնում 1882 թ. մյուռոնօրհնության հանդեսը, որին ներկա է եղել նաև ինքը. «Վանքի պարիսպը և խուցերի կտուրները լիքն են ահագին բազմությամբ. մոտ 15 կամ 20 հազար հոգի հնդկաստանցի և մոլդավացի, վանեցի և նորնախիջևանցի, իսպահանցի և պոլսեցի, ամեն տեղի հայք խուռն դիզվել են՝ հանդեսը մանրամասնաբար տեսնելու։ Տարբեր-տարբեր բարբառներով եղած միմյանց հարցուփորձը խառնվում է Երևանի գյուղերից եկած մայրերի ուսերքին շալակած մանուկների լացի և ծվոցի հետ և դառնում բոլորը մի խուլ ձայն, մի տարօրինակ աղմուկ։ Մի վաշտ ռուսաց զորք նվագարանով հանդերձ՝ շարված է երկու կարգ՝ Վեհարանից մինչև եկեղեցվո դուռը և արգելում է ժողովրդի ալյաց առաջ ընթանալու և հանդեսի ճանապարհը փակելու։ Եվ որովհետև եկեղեցվո մեջ հազիվ երկու հազար հոգի կարող է տեղավորվել, վասն որո մուտքը տոմսակներով է։ Այդ տոմսակները բաժանվում են ձրի նախընթաց օրերում գլխավորապես այն անձանց, որոնք եկած են ավելի հեռավոր երկրներից»[6]։

Երկու անգամ՝ 1886 և 1890 թթ. Սրբալույս Մյուռոնի օրհնություն է կատարում Մակար Ա Թեղուտեցին (կթղ. 1885-1891 թթ.)։ 1886 թ. կատարված օրհնության մասին «Արարատը» գրում է. «Միւռոնօրհնութեան նախընթաց երեկոյեան Նորին Վեհափառութիւնն եկեղեցական թափորով եկաւ եկեղեցի՝ օրհնելով շուրջանակի համախմբեալ ժողովրդեանը, որոնք խռնուած էին վանքի գաւթում տանեաց և մինչև անգամ ծառերի վերայ։ Կարգ էին պահպանում Երևանից բերուած զինուորները՝ իրանց սպաների առաջնորդութեամբ երկու կարգ պատնէշ կանգնելով Վեհարանի դռնից մինչև Տաճարի դուռը։ Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ կատարուեց ցայգապաշտօն մինչև «Հարցը»ը։ Առաւօտեան ժամերգութիւնից յետոյ ժամը 6-ին սկսուեց Ս. Պատարագը։ Նորին Վեհափառութիւնն, որ էր նաեւ աւուր պատարագիչն, Վեհարանում զգեստաւորուած երկոտասան եպիսկոպոսաց նախընթացութեամբ, որք կրում էին Սուրբ Միւռոնի օրհնութեան յատկացեալ սրբութիւնները, եկեղեցական շքեղ թափօրով եկաւ եկեղեցի և սկսուեց Սուրբ Պատարագը։ Երկոտասան եպիսկոպոսք սեղանի վերայ, յաջմէ և յահեկէ Նորին Վեհափառութեան զգեստաւորեալ կանգնած էին։ Սուրբ Պատարագը շարունակուեց մինչև «Ողջոյն»ը, այնուհետև Նորին Վեհափառութիւնն դառնալով դէպի Սուրբ Միւռոնի կաթսան շրջապատեալ եպիսկոպոսներով երես առ ժողովուրդն, սկսեց Միւռօնի օրհնութիւնը. ժողովրդեան զմայլմանը և հոգեկան բերկրութեանը չափ չկար, որ արտայատուում էր խուլ մնչմամբ։ Ի ձայն զանգահարութեանց կատարուեց Ս. Միւռօնի օրհնութիւնը։ Նորին Վեհափառութիւնն համբուրելով Ս. Միւռօնի կաթսան՝ դարձաւ շարունակել Ս. Պատարագը՝ Ողջոյնը հաղորդելով ջերմեռանդն ժամաւորաց։ Պատարագը աւարտելուց յետոյ Վեհափառ Հայրապետը դարձեալ զգեստաւորուած երկոտասան եպիսկոպոսաց նախընթացութեամբ, եկեղեցական թափօրով վերադարձաւ Վեհարան՝ օրհնելով խռնեալ ժողովրդեանը, այնուհետև ուխտաւորք սկսան համբուրել Ս. Միւռօնի

[5] «Արարատ», 1882, էջ 208-210։

[6] «Արձագանք», Տփղիս, 1882, մայիսի 16, հմ. 3, էջ 195։

կաթսան առանձին իմն ջերմեռանդութեամբ և անժոյժ ոգևորութեամբ:

Սուրբ Միւռոնի օրհնութեան օրը եղանակը անհամեմատ զով էր և խոնեալ բազմութիւնը հոգեկան մխիթարութիւնից յետոյ, մխիթարւում էր զինուորական երաժշտութեան ունկնդրութեամբ: Ս.Պատարագից յետոյ միաբանութեան սեղանում ճաշ տրուեց բազմաթիւ պատուաւոր հիւրերին, և Գերաշ. Տ. Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեան ատենաբանեց ըստ խորհրդոյ աւուրն որ էր Ս. Էջմիածնի տօնը և Ս. Միւռոնի օրհնութիւնը:

Ինչպես նախընթաց, նոյնպես և այս երեկոյեան ճրագալոյց կար, և ճեմարանի երգեցիկ աշակերտք ու զինուորական երաժշտութիւնը փոփոխակի երգելով ու նուագելով մեծ բաւականութիւն էին պատճառում ուխտաւորաց: Մեծ և հոգեզմայլ տպաւորութիւն գործեց աշակերտների հանգստեան աղօթքը, որ կատարուեց զանգակատան առաջ. ժողովուրդը խորին ունկնդրութեամբ աղօթակից եղաւ»[7]:

Մեծ թվով ուխտավորներ են եկել հատկապես 1890 թ. մյուռոնօրհնության ժամանակ: Արարողության՝ «Արարատի» նկարագրությունում այս մասին ասվում է. «Սեպտեմբերի 30-ին, ինչպես հրատարակված էր թե՛ «Արարատ» ամսագրում և թե՛ այլ պարբերական հրատարակությանց մեջ, տեղի ունեցավ Մայր Աթոռում ամենանշանավոր ազգային եկեղեցական հանդեսը, այն է Սրբալույս Մեռոնի օրհնությունը, որպիսին ոչ մի քրիստոնյա եկեղեցի չունի: Ազգային է այս հանդեսը , որովհետև ամբողջ հայ ազգի համար նա մեծ է և սուրբ և չունի տեղական տոնախմբության կերպարանք, այլ հանրազգային է, որովհետև չի կատարվում որևէ գավառի կամ նահանգի ազգայնոց ներկայությամբ, այլ միշտ գրեթե ամեն տեղերից հայ ազգի անդամները ներկա են գտնվում այդ մեծ եկեղեցական առանձին աստվածային առանձնաշնորհության հանդեսին: Սույն կերպարանքը կրում էր վերոհիշյալ հանդեսը այս տարվա սեպտեմբերի 30-ին: Ուխտավորաց բազմությունը այս անգամ շատ մեծ էր:

Թեև դժվար է թիվը ճշտությամբ որոշելը, բայց ըստ երևույթին այն պետք է 20000-ից ավելի լիներ: Ոչ միայն Ռուսաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի հայ հասարակությունք ունեին իրանց ներկայացուցիչները այստեղ, այլև Ռումանիայից, Բուլղարիայից և Ջավա կղզուց էլ կային ներկայացուցիչք հայ գաղթականության:

Արդեն մութ էր, և դարձի հանդեսը լուսավորում էր Մայր Աթոռի գրադարանի տանիքից էլեկտրական արեգակը: Տեսարանը շատ գեղեցիկ էր, քանի որ ներկա գտնվող ժողովուրդը ներկայացնում էր գույնզգույն բազմություն՝ ժողովված աշխարհիս ամեն ծայրերից: Ամբողջ գիշեր տեղական երաժշտությանց և երգերի ձայները լսելի էին: Ոչ միայն եկեղեցու և մերձակա բակերն էին լիքը բազմությամբ, այլև Տաճարի արտաքին պարիսպների բոլոր շրջապատը և հրապարակներն էին զբաղեցրել ուխտավորները, որոնց մեծ մասը տեղավորված էր բացօթյա սայլերի, կառքերի և վրանների տակ»[8]:

Սրբալույս Մյուռոնը երկու անգամ օրհնում է Խրիմյան Հայրիկը (կթող. 1892-1907 թթ.) 1897 և 1903 թթ.: Այս երկու արարողություններն էլ, սակայն, տեղի են ունենում ծանր պայմաններում: 1897 թ. մյուռոնօրհնությունը պետք է տեղի ունենար 1896 թ., սակայն այն հետաձգվում է Արևմտահայաստանում սկսված կոտորածների պատճառով, որի

[7] «Արարատ», 1886, էջ 281-283:

[8] «Արարատ», 1890, էջ 585:

համար 1897 թ. արարողությունն էլ որոշվում է կատարել բավական համեստ ձևով, որովհետև համիդյան ջարդերը շարունակվում են նաև 1897 թ.: Խաչվերացի տոնին՝ այդ տարի սեպտեմբերի 14-ին, սակայն երբ կատարվելիք օրհնությունից քառասուն օր առաջ Ս. Մյուռոնի կաթսան դրվում է Մայր Տաճարի բեմում, լուրը տարածվում է և բազմահազար ուխտավորներ են գալիս. «Անշուշտ, այսպիսի մեծ հանդեսների ժամանակ Մայր Աթոռում ամեն կողմից խմբված տեսնել հայ ժողովրդին, մի անգամ ևս ականատես լինել հայ քրիստոնեի ջերմեռանդության, մի անգամ ևս հավաստիանալ, որ նա սերտ կերպով կապված է Լուսո մոր՝ Ս. Էջմիածնի հետ, մի հոգեզմայլ բերկրություն պիտի պատճառեր յուրաքանչյուր հայի, որչափ ևս առավել մեր Եկեղեցվո Գլխո՝ Ազգիս Վեհափառ Հայրապետին: Պետք է ասել, որ թեպետ և պաշտոնական ծանուցումն չէր եղել, ինչպես հայտնի է «Արարատի» անցյալ համարից, բայց և այնպես, ուխտավորների մի մեծ բազմություն էր ժողովվել, մանավանդ Ալեքսանդրապոլի, Ղարսի և Ախալցխայի գավառներից, որոնց ժողովուրդը մի գեղեցիկ սովորությամբ, օրինակելի կերպով ջերմ է դեպի ուխտագնացություններն: Սակավ էին այլ գավառներից եկողներն, մինչ կարելի է ասել շրջակա և մերձավոր տեղերի հայ ազգությունն հեղեղի նման թափել էր Մայր Աթոռ: Մայր Աթոռի հյուրատունն, միաբանության նոր շինության սենյակների մի մասը և մոտ քառասուն զինվորական վրաններ միայն ուներ հյուրընկալ մասնաժողովը, որոնք, հարկավ, բավական չէին բոլոր հյուրերին ներս ընդունելու, ուստի և բազմաթիվ ուխտավորներ, ինչպես և միշտ, հարկադրված էին տեղավորվել Վաղարշապատ գյուղում և կամ մնալ բացօթյա»[9]:

1903 թ. մյուռոնօրհնությանն էլ նախորդում է Հայոց Եկեղեցու ունեցվածքի բռնագրավման՝ ցարական որոշումը, որի դեմ ընդվզեց ողջ հայությունը: Օրհնության արարողությունը սկզբնապես ծրագրված էր կատարել սեպտեմբերի 29-ին՝ Վարագա խաչի տոնին, սակայն իշխանությունները, վախենալով, որ հավաքված ուխտավորների կողմից այն կարող է վերածվել հակացարական ցույցի, Կովկասի փոխարքա Գոլիցինի միջոցով օգոստոսին հրահանգում են հետաձգել Մյուռոնի օրհնությունը[10]: Խրիմյան Հայրիկը, սակայն, պատվիրում է օրհնությունը կատարել ժամանակից շուտ՝ օգոստոսի 24-ին:

Օրհնության հանդեսի՝ «Արարատի» նկարագրության մեջ անուղղակիորեն ասվում է, որ արարողությունը նման լարված պայմաններում է անցել. «Ժամանակի փոփոխութիւնը անակնկալ էր: Հրաշափառ հանդէսը սկսուեց և կատարուեց ի ներկայութեան 14 արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների և բազմաթիւ վարդապետների. հաւաքուեց ուխտաւորների մեծ բազմութիւն: Հանդիսի նախորդ երեկոյեան, որ էր կիրակնամուտ, տեղի ունեցաւ գիշերային հսկում, իսկ միւս օրը՝ Ս. Պատարագին՝ սրբալոյս իւղի օրհնութիւնը: Պատարագիչն էր Տ. Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանը, իսկ հանդիսադիրը՝ ազգիս Վեհափառ Հայրապետը: Ս. Պատարագն արդէն սկսուած էր, երբ Նորին Ս. Օծութիւնը զգեստաւորուած հանդիսաւոր կերպով տաճար իջաւ՝ իւր շուրջն ունենալով տասներկու եպիսկոպոս, որոնք նոյնպէս զգեստաւորուած էին օրուայ հանդիսին վայել

[9] «Արարատ», 1897, էջ 389:

[10] Տե՛ս Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, հտ. Է, Խրիմյան Հայրիկը և ցարական բռնապետությունը, Երևան, 2000, էջ 59:

շքեղութեամբ, շուրջառազգեստ վարդապետներ և ուխտաւոր քահանաներ։

Ս. Պատարագի մատուցումը ընդհատուեց Ողջոյն-ից առաջ և սրբազնագոյն Հայրապետը, գլուխ անցած եպիսկոպոսաց դասին, սկսեց Ս. Միւռոնի օրհնութեան ահեղ խորհուրդը»[11]։

Օրհնության արարողությանը հաջորդող և Մայր Աթոռում կատարված իրադարձություններին վերաբերող լուրերի շարքում ևս ակնարկվում է այս մասին. «Մյուռոնօրհնության Ս. հանդեսին ուխտավորներ եկել էին միայն ամենամոտիկ գյուղերից, իսկ հեռավորները հեռագիրներով և մասնավոր գրություններով ուղղված հանուն Վեհափառ հայրապետի շնորհավորում էին եկեղեցական այդ մեծ հանդեսի կատարումը»[12]։

Այդ օրերին կատարված մյուռոնօրհնությունը մեկ անգամ ևս հավաստեց հայության հաստատակամությունը իր իրավունքների պաշտպանության համար և կապվածությունը իր Մայր Եկեղեցուն, որն ակնարկելով՝ «Արարատի» թղթակիցը գրում է. «Ս. Մյուռոնօրհնության հանդեսը խորը տպավորություն թողեց ուխտավորների վրա։ Շատերը զգացված արտասվում էին»[13]։

Ինչպես նախորդ օրհնությունների, այնպես էլ 1912 թ. տեղի ունեցած արարողության նկարագրություններում առանձնակի է շեշտվում, որ Ս. Էջմիածինը և անգամ ողջ Վաղարշապատը հազիվ են կարողանում տեղավորել եկած բազմահազար ուխտավորներին. «Մյուռոնօրհնությունը, լինելով Հայաստանյայց Եկեղեցու մեծաշուք և նվիրական-կրոնական հանդեսներից մեկը, գրավել էր ուխտավորների ահագին բազմությունը, որ շտապել էր Ս. Էջմիածին՝ ներկա լինելու Ս. Մյուռոնի օրհնության այս մեծաշուք կրոնական հանդեսին։ Կրոնական-ազգային հանդեսները հայ ժողովրդի հատվածների փոխադարձ հարաբերության և ծանոթության ամենագեղեցիկ միջոցներից մեկն են։ Հայ ժողովրդի հեռավոր և մերձավոր որդիները, համախմբվելով Էջմիածնում, տեսնում են միմյանց, ծանոթանում են միմյանց կացության հետ։ Հեռավոր հյուսիսի հայը, որ կտրված է բուն երկրից և յուր լեզվով, արտաքինով, նիստ ու կացով հետզհետե հեռանում է մայր ժողովրդից ու եկեղեցուց, տեսնելով հայրենի սրբությունները, կրոնապես կարծես կրկին վերածնվում է։ Այս պատճառով էլ հասկանալի է, թե ինչու դեռ օրեր առաջ Ռուսաստանի և Կովկասի զանազան վայրերից երկաթուղին ուխտավորներ էր բերում Ս. Էջմիածին այնպիսի բազմությամբ, որ Մյուռոնօրհնեքի դեռ նախընթաց օրերին ոչ միայն վանքի հյուրատունն ու միաբանության սենյակներն էին լցված, այլև ճեմարանն ու այդ նպատակով պատրաստած մյուս հարակից բոլոր տեղերը։ Վաղարշապատում դժվար կարելի էր ճարել մի տուն, որ մի քանի հյուր չունենար։ Չնայած այս բոլորին, այնուամենայնիվ, ուխտավորների մեծագույն մասը անց էր կացնում բաց երկնքի տակ։ Վանքի բակն ու պատերի տակը լցված էին ուխտավորների խմբերով, տպարանի և բաղնիքի միջև գտնված ընդարձակ հրապարակը ամբողջապես զբաղված էր, քիչ չէր նաև այնպիսիների թիվը, որոնք Վաղարշապատի հրապարակում էին լուսացնում։ Ուխտավորների մեծ մասը, բնականաբար, Էջմիածնի շրջակա գյուղերից էին և մոտակա գավառներից. Ալեքսանդրապոլից, Շիրակից, Հին Նախիջևանից, Սուրմալուի գյու-

[11] «Արարատ», 1903, էջ 713։

[12] «Արարատ», 1903, էջ 715։

[13] Նույն տեղում, էջ 713։

ղերից: Հեռավորների մեջ աչքի էին ընկնում իրենց քանակով թիֆլիսեցիները, ախալցխացիները և ախալքալաքցիները: Չտեսնված բազմություն էր եկել Նոր Նախիջևանի շրջակա հայ գյուղերից: Այդտեղ կարելի էր տեսնել հայկական բոլոր տարազներն ու հայկական բոլոր բարբառները: Քաղաքական աննպաստ պայմանների պատճառով Տաճկաստանից համարյա մարդ չէր եկել»[14]:

1912 թ. մյուռոնօրհնությունը քանի որ արդեն անցնում է որոշակիորեն հանգիստ և խաղաղ պայմաններում, «Արարատի» նկարագրությունում արդեն շեշտվում է, թե ինչ հուզումնալից և բարեպաշտ մթնոլորտ էր տիրում օրհնության արարողությանը նախորդող և հաջորդող օրերին. «Թեև եկեղեցու դրսում և ներսում կարգապահության համար ամեն միջոց ձեռք առնված էր, բայց և այնպես, երբ պատարագը վերջացավ, շատ դժվար էր պահել ջերմեռանդ ժողովրդի առաջխաղացումը, որ ցանկանում էր Ս. Մյուռոնի կաթսան տաք-տաք համբուրել. ծովի ալիքի նման հետ ու առաջ էր շարժվում ամբոխը: Այդ օրը ամբողջ գիշերը ժողովուրդը գունդ առ գունդ դիմում էր եկեղեցի՝ համբուրելու համար Ս. Մյուռոնի կաթսան: Լուսարարապետը միաբան վարդապետներից հերթապահություն էր նշանակել կաթսայի մոտ:

... Երեկոյան վանքի բակում մեծ հրավառություն կար, եղանակն էլ շատ նպաստավոր էր: Ամբողջ բակը լիքն էր զբոսնող բազմատարազ և բազմերանգ ուխտավորներով. գերակշռողը գյուղացի տարրն էր: Գյուղացի հասարակ ժողովրդին մեծ բավականություն էին պատճառում հրանոթները, որոնք իրենց բազմապիսի գունեղ կրակե լեզուներով և կայծերով, իրենց վեր ու վայր սլացումներով, պայթյուններով ու հազարավոր հրային աստղիկների բաժանումով դեպի իրենց էին գրավում ուխտավորների աչքերն ու ուշադրությունը: Մինչև ուշ գիշեր երկսեռ ժողովուրդը զբոսնում էր վանքի բակում: Հետևյալ օրը՝ երկուշաբթի, ուխտավորներից շատերն սկսեցին վերադառնալ իրենց տեղերը՝ տանելով հետները քաղցր հիշողություններ Ս. Էջմիածնի մասին: Երեքշաբթի վանքում համարյա ուխտավոր չէր մնացել, բացի Տփղիսի կուսանաց անապատի կույսերից, որոնք Էջմիածնից մեկնելու էին շրջակա պատմական վայրերը տեսնելուց հետո»[15]:

Վեց-յոթ տարին մեկ կատարվող Մյուռոնի օրհնությունը այնուհետև պետք է տեղի ունենար 1918-1919 թթ., որը, սակայն, չի կատարվում Առաջին աշխարհամարտի, Հայոց Մեծ եղեռնի և սկսված ռուսական հեղափոխության պատճառով, երբ նորանկախ Հայաստանը միայնակ դիմագրավում էր արտաքին ռազմական սպառնալիքներին և արտաքին նույն գործոններով պայմանավորված ներքին ճգնաժամային կացությանը:

Ահա այս պատճառով Ս. Մյուռոնի հաջորդ օրհնությունը հնարավոր է լինում իրականացնել միայն 1922 թ., երբ խորհրդային իշխանության հաստատմամբ դադարեցվել էր «Արարատ» ամսագրի հրատարակությունը:

---

[14] «Արարատ», 1912, էջ 884-885:

[15] «Արարատ», 1912, էջ 889-90:

ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԸ ՕՏԱՐԱԶԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՈՒՂԵԳՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սրբալուսյ Մյուռոնի առանձնակի դերը և հոգևոր նշանակությունը հայ ժողովրդի կյանքում շեշտվել ու արտահայտվել է ոչ միայն հայ հեղինակների՝ Ս. Մյուռոնին նվիրված ստեղծագործություններում և օրհնության արարողությանը ներկա ուխտավորների նկարագրություններում, այլև օտար հեղինակների դավանական բնույթի հարցումներում, թղթերում, մի շարք գործերում, ինչպես նաև Հայաստանով անցած ուղեգրողների գրառումներում:

Առաջին նման վկայությունը վերաբերում է չորրորդ դարին: Հայոց Վրթանես Հայրապետին (կթղ. 333- 341 թթ.) ուղղված Երուսաղեմի Մակար Հայրապետի թղթում հիշատակություն կա նաև Մյուռոնի օրհնության մասին[1]:

Հաջորդ դարերի մի շարք վավերագրերում Հայոց Եկեղեցում Մյուռոնի օրհնության վերաբերյալ հարցերը արծարծվում են դավանաբանական քննարկումների շրջագծում: Այսպես՝ Հովնան Դամասկացուն վերագրվող մի թղթում որպես մեղադրանք հայերին ուղղվում են մի շարք հարցեր՝ կապված Ս. Մյուռոնի օրհնության հետ[2]:

11-րդ դարի մատենագիր Անանիա Սանահնեցին «Ընդդեմ երկաբնակաց» հակաճառական գործի «Վասն մեռոնին» և վերջինիս հաջորդող «Վասն բաղարջի» գլուխներում է համանման ձևով անդրադառնում Հայոց Եկեղեցում Ս. Մյուռոնի օրհնության հետ կապված քննադատություններին[3]:

Հնչած այս քննադատություններին ուղղված պատասխանների շարքում առանձնակի տեղ է գրավում Ներսես Շնորհալու «Գիր հավատո խոստովանության» թուղթը: Շնորհալի Հայրապետը այն գրել է ի պատասխան Կիլիկիայի դուքս Ալեքս Ասոխի միջոցով Բյուզանդական կայսրության կողմից Հայոց Եկեղեցուն ուղղված հարցումների:

Այս թուղթը պահպանվել է թե՛ Շնորհալու թղթերի շարքում և թե՛ ամբողջապես բերված է Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմությունում»[4]:

Ալեքս Ասոխի կամ նրա միջոցով հույների՝ հայերին ուղղված հարցումների բնագիրը թեև չի պահպանվել, սակայն Շնորհալու պատասխանների հիման վրա կարելի է վերականգնել այն, քանի որ Շնորհալին ոչ թե ընդհանրապես ներկայացրել է հայոց դավանանքը, այլ ուղղակիորեն պատասխանել է ուղղված հարցումներին, որոնց շարքում կարևոր տեղ է գրավում Մյուռոնին վերաբերող հարցումը և վերջինիս պատասխանը, որի

---

[1] Տե՛ս **Մակար Հայրապետ**, Կանոնական թուղթ, «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1904, էջ 410-411:

[2] Տե՛ս «Լույս», Կ. Պոլիս, 1906, էջ 1125- 1126:

[3] Տե՛ս **Անանիա Սանահնեցի**, Աստվածաբանական երկեր, աշխտ. Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2000, էջ 299-302:

[4] Տե՛ս **Ներսես Շնորհալի**, Ընդհանրական թուղթ, Երուսաղեմ, 1871, էջ 87- 107, ինչպես նաև **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 94-113:

սկզբում Շնորհալին ասում է. **«Դարձյալ գրությունում գրված է, թե մեր մեռոնը բուսական ձեթից է»**[5]: Բերված նախադասության ընդգծված այս հատվածը վկայում է, որ Շնորհալին գրել է ի պատասխան բյուզանդական կողմի ուղղած հարցման:

Մյուռոնի օրհնության հարցը արծարծվել է նաև հայ-վրացական եկեղեցական հարաբերություններում: Շնորհալու նման մի թուղթ էլ գրել է Մխիթար Գոշը՝ պատասխանելով Վրաց Եկեղեցու կողմից ուղղված հարցումներին, այդ թվում և Մյուռոնի օրհնությանը վերաբերող հարցերին[6]:

Ինչ վերաբերում է ուղեգրական հիշատակություններին, նրանցում նկարագրվում է օրհնության արարողությունը և հայերի՝ Ս. Մյուռոնի հանդեպ պաշտամունքի հասնող վերաբերմունքը:

Անհրաժեշտ է նշել, որ ուղեգրություններում Էջմիածինը անվանվում է Ուչ Քիլիսե՝ երեք եկեղեցիների վայր: Մայր Տաճարի հետ Ս. Հռիփսիմեն, Ս. Գայանեն և Ս. Շողակաթը թեև չորս եկեղեցիներ են կազմում, սակայն միջնադարում Ս. Էջմիածինը անվանվել է երեք եկեղեցիների վայր երկու պատճառով: Նախ որովհետև Ագաթանգեղոսի պատմությամբ վկայված Լուսավորչի տեսիլքում հիշվում է երեք վկայարանների կառուցման մասին, և երկրորդ՝ Ս. Շողակաթ եկեղեցին Նահապետ Ա Եդեսացի կաթողիկոսի կողմից հիմնովին վերակառուցվեց 17-րդ դարի վերջին և մինչև այդ Շողակաթ էր անվանվում Ս. Էջմիածնի Մայր Տաճարը: Ուստի 18-րդ դարից է, որ երեք եկեղեցիները դառնում են չորս, սակայն ավանդույթի ուժով Ս. Էջմիածնին շարունակվում է տրվել երեք եկեղեցիների վայր անվանումը: Այս հանգամանքը նշվում է նաև եվրոպական ուղեգրողների կողմից:

Այսպես. 1816 թ. Ս. Էջմիածնում եղած անգլիացի դիվանագետ Ջեյմս Մորիերը գրում է. «Ուչ Քիլիսեում կամ երեք եկեղեցում, ինչպես ասվում է թուրքերենով, թեև թվով չորսն են»[7]:

Անգլիացի մեկ այլ դիվանագետ՝ Վիլյամ Աուզլեյը, ով 1812 թ. եղել է Ս. Էջմիածնում, ասում է, թե թուրքերը այս վայրը վաղուց անվանում են «Յուչ կամ Ուչ Քիլիսա «երեք եկեղեցիներ», որովհետև այս անունը հիշատակվում է Թեմուրի պատմության մեջ՝ գրված մոտ չորս հարյուր տարի առաջ Շերիֆ Ալի Յեզրիի կողմից»[8]:

Սուրբ Մյուռոնի օրհնության ուղեգրական նկարագրություններում արևելյան գունեղությամբ և տարբեր ավանդությունների ու անգամ ֆանտաստիկ պատմությունների միահյուսմամբ առանձնանում են 17-րդ դարի առաջին կեսի հեղինակներ Քյաթիբ Չելեբիի (1609-1656 թթ.) և Էվլիլիա Չելեբիի նկարագրությունները:

Քյաթիբ Չելեբին համարվել է Օսմանյան կայսրության 17-րդ դարի ամենակրթված անձնավորություններից մեկը: 17-րդ դարի առաջին կեսի թուրք-պարսկական պատերազմների ընթացքում օսմանյան բանակի կազմում նա 1634 թ. մասնակցել է Երևանի պաշարմանը, ուստի Ս. Մյուռոնի և ընդհանրապես Հայաստանում եղած պատմությունների մասին նա ուղղակիորեն լսել է հենց Արարատյան դաշտում: Նրա «Ջիհան նյումա» (Աշխարհի հայելի) երկը թուրքերեն առաջին աշխարհագրական գործն է, որը նա ավարտել և օսմանյան արքունիք է ներկայացրել 1648 թ.: Ծավալուն այս աշխատանքի՝ Հայաստանին նվիրված բաժնում նա ևս Էջմիածինը անվանելով Ուչ Քիլեսե՝ գրում է. «Այս եկե-

---

[5] **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, էջ 103:

[6] Տե՛ս **Մխիթար Գոշ**, Թուղթ առ վրացիսն, աշխտ. Պ. Մուրադյանի, «Գանձասար», հ. Ա, Երևան, 1996, էջ 370:

[7] **Հովհ. Հակոբյան**, Ուղեգրություններ, հ. Ա (1800-1820 թթ.), Երևան, 1934, էջ 327:

[8] Նույն տեղում, էջ 457:

ղեցում կան շատ քահանաներ: Սրանք ամեն տարի գարնանը հավաքում են բազմատեսակ ծաղիկներ, լցնում մի մեծ կաթսայի մեջ և վրան ջուր լցնելուց հետո մի քանի գորգերով ծածկում են բերանը»:

Քառասուն օր այդ ծաղիկների վրա կարդում են հայտնի աղոթքներ: Այդ քառասուն օրվա ընթացքում եկեղեցու տաքությունից ջուրը եռում է, և ստացվում է նեբիզի[9] նման մի հյութ, որի զտելուց հետո ստացված ծաղկաջուրը վաճառում են մսխալը մեկ ոսկով: Այդ ջուրը քսում են իրենց մեռյալների երեսին, աչքերին, բերանին և քթին: Նրանք հավատում են, թե երկնքից հրեշտակներն են եկել և եռացրել այդ ջուրը: Այդպիսի ջուր պատրաստվում է նաև Աղթամարի եկեղեցում: Այդ երկու տեղից բացի ուրիշ ոչ մի տեղում չի պատրաստվում»[10]:

Հաջորդ ուղեգրողը վաճառական Էվլիլիա Չելեբին է: Նա 17-րդ դարի հիսունական թվականներին անցնելով Հայաստանով՝ Ս. Էջմիածնում ներկա է եղել Ս. Մյուռոնի օրհնության արարողությանը, որի մասին երկու անգամ հիշատակում է իր ճանապարհորդության երկու տարբեր հատվածներում: Նախ նա գրում է Ս. Մյուռոնի կաթսայի մի գորգի մասին՝ վերջինիս վերագրելով գերբնական և առասպելախառն տարբեր հատկություններ, և ասես դրանցով պայմանավորում Ս. Մյուռոնի հրաշագործ զորությունը: Ինչպես ինքն է գրում. «Այստեղ ամեն տարի 40-50 հազար մարդ է հավաքվում, մինչև անգամ գալիս են Ֆրանգստանից: Այստեղի լեռան ամենաբարձր գագաթի վրա՝ կանաչազարդ մարգագետնում, նրանք փռում են իրենց հնագույն գորգը: Այստեղի լեռներում աճող բոլոր ընտիր տեսակի ծաղիկները, բույսերը և խոտերը հավաքում և լցնում են մի մեծ կաթսայի մեջ: Մի եռոտանի են դնում գորգի վրա և շատ ուժեղ կրակ վառում: Այնուհետև այդ կերակուրը բաժանում են իրար մեջ, շատերը շնորհավորության համար տանում են մինչև Ֆրանգստան: Մյուսները տեղն ու տեղը ուտում են և հաճույք ստանում: Նվաստս վարդապետից հարցրեց նկարագրվածի գաղտնիքը: Նա ասաց. «Աստված վկա. Քրիստոս մոր արգանդից բաժանվել է այս գորգի վրա: Իսրայելացիներից վախենալով՝ թաքնվել են մի քարայրի մեջ, խոտեր հավաքել և սրա (գորգի) վրա մի մեռելի կենդանացրել: Իսրայելի բոլոր որդիներին հրաշք ցույց տալու համար բաժանել է այս գորգի վրա եփված կերակուրը»[11]:

Չելեբին գրում է, որ Էջմիածնի հոգևորականներից մեկն այս գորգի մասին իրեն ասել է, թե այն «մետաքսից է, բայց ոչ բամբակից և ոչ էլ բրդից. մի տեսակ մոխրագույն խոշոր գորգ է և շատ ծանր է: Նվաստիս կարճ խելքովը այդ գորգը պատրաստվել է Կիպրոս կղզում գտնվող մի տեսակ քարից: Այդ քարը թանկով (թոքմաք) ծեծելիս քաթանի նման է դառնում: Հետո դրանից թել են մանում և թաշկինակներ, շապիկներ ու հագուստներ պատրաստում և իբրև նվեր ուղարկում Ստամբուլ՝ փադիշահին ու այաներին»[12]: Չելեբին ասում է, որ երբ այդ կտորից պատրաստված հագուստը կեղտոտվում է, այն կրակի մեջ են գցում, որից հետո հագուստը մաքրվում է:

Ինչ վերաբերում է Մյուռոնի օրհնությանը, այս մասին էլ նա գրում է. «Այս վանքում է

---

[9] Արմավից և չամիչից քամված խմելիք՝ շուրուբ (ծնթ. Ա. Սաֆրաստյանի):

[10] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, **Է. Չելեբի**, Ջիհան նյումա, աշխ. Ա. Սաֆրաստյանի, հրտ. Բ., Երևան, 1964, էջ 26-27:

[11] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հր. 4-րդ, Էվլիա Չելեբի, աշխ. Ա. Սաֆրաստյանի, Երևան, 1967, էջ 69:

[12] Նույն տեղում:

պատրաստվում միրուն- յաղը (մեռոն), որն իսկապես տարօրինակ է: Մի մետաքսյա գորգի վրա դնում են կաթսան, տակը կրակ են վառում և եփում են կաթսայի մեջ լցված բույսերն ու ծաղիկները: Կրակը գորգի վրա չի ազդում և նույնությամբ մնում է : Հետո այս բույսերի ջուրը, այսինքն՝ յուղը, լցնում են հատուկ ամանների՝ կումկումների (գյուգում) մեջ և իբրև շնորհավորանք տանում են Ֆրանգստան, իսկ այնտեղից ուխտի են գալիս այս վանքը: Այդ յուղը գործ են ածում տարբեր հիվանդությունների, վերքերի համար››[13]:

Այստեղ ամենայն հավանականությամբ նա նկատի ունի նվիրակների միջոցով Մյուռոնը Եվրոպա տանելը, ինչպես նաև մյուռոնօրհնության ժամանակ աշխարհի տարբեր կողմերից ուխտավորաբար Ս. Էջմիածին գալը:

Արևելք, այդ թվում և Հայաստան Եվրոպական երկրների ճանապարհորդների, գիտնականների և դիվանագետների այցելությունները առավել հաճախադեպ են դառնում 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կեսին, երբ Պարսկաստանում և Թուրքիայում եվրոպական պետությունները մրցակցում և պայքար էին մղում իրենց ազդեցությունն ընդլայնելու համար: Այս ուղևորությունների ընթացքում նրանց մեծ մասը անցել է Ս. Էջմիածնով, որը պայմանավորված է թե՛ Մայր Աթոռի՝ ողջ Արևելքով սփռված հայ ժողովրդի կյանքում ունեցած հոգևոր իշխանությամբ ու քաղաքական ազդեցությամբ և թե՛ այն հանգամանքով, որ Ս. Էջմիածինը գտնվում էր Թուրքիայից Պարսկաստան անցնող ճանապարհին, և Արաքս գետն անցնելով և Արարատյան դաշտով դեպ Թավրիզ ու Թեհրան գնացող եվրոպացի ճանապարհորդները անպայմանորեն ցանկացել են լինել նաև այստեղ:

Ուղեգրական ընդունված նկարագրություններով մանրամասն տեղեկություններ հաղորդելով իրենց այցելած երկրների ժողովուրդների կյանքի, սովորույթների, մշակույթի, կրոնական պաշտամունքների մասին, նրանք բնականաբար գրել են և Ս. Էջմիածնի, և այդ թվում նաև Ս. Մյուռոնի՝ հայ ժողովրդի կյանքում ունեցած հոգևոր նշանակության մասին:

Հայաստանով անցած ճանապարհորդների ուղեգրությունները վեց հատորով ծրագրել էր հրատարակել Հովհ. Հակոբյանը 1930-ական թթ., սակայն այդ հատորներից լույս են տեսել միայն առաջինը և վեցերորդը, որոնք համապատասխանաբար ընդգրկում են 13-16-րդ դարերը և 19-րդ դարի առաջին երկու տասնամյակները[14]:

Հայաստանով անցած ճանապարհորդների ուղեգրությունների՝ Ս. Էջմիածնին վերաբերող հատվածները ի մի է բերել և հրատարակել բարեհիշատակ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը «Ս. Էջմիածինը ուղեգրություններում» մեծադիր հատորում, ուր յուրաքանչյուր ուղեգրության համապատասխան հատվածը բերված է գրության բնագրի լեզվով[15]:

Ստորև կներկայացնենք ուղեգրական այդ հատվածներում Ս. Մյուռոնի մասին եղած հիշատակությունները:

1701 թ. Արևելք իր ճանապարհորդության շրջանակում Հայաստան եկել և Նահապետ Ա Եղեսացի կաթողիկոսի գահակալության շրջանում Ս. Էջմիածին է այցելել ֆրանսիացի

---

[13] Նույն տեղում, էջ 121:

[14] **Հակոբյան Հովհ.**, Ուղեգրություններ, հտ. Ա, ԺԴ-ԺԶ դդ., Երևան, 1934, 504 էջ, **Հակոբյան Հովհ.**, Ուղեգրություններ, հտ. Զ, ԺԹդ. (1800-1820թթ.), Երևան, 1934, 986 էջ:

[15] Տե՛ս The Etchmiadzin Chronicles, աշխտ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի, Մուղնի հրատարկչություն, 2003, 872 էջ:

նշանավոր բուսաբան Ժոզեֆ Պիտոն դը Դուռնֆորը (1656-1708 թթ.): Իր տպավորությունների մասին նա գրում է «Ուղեգրություն Արևելք կատարած ճանապարհորդության» (Relation d'un voyage du Levant) գրքում, որտեղ ներկայացնում է Սևծովյան երկրների, Հայաստանի, Վրաստանի, Պարսկաստանի, Միջին Ասիայի հին և նոր շրջանների պատմությունը: Ս. Մյուռոնի օրհնության՝ բացառապես Հայոց կաթողիկոսին վերապահված լինելու մասին նա գրում է. «Հնում հայերի մեջ միայն Պատրիարքն ուներ Ս. Յուղը կամ Մյուռոնը պատրաստելու իրավունքը, որը հեղուկ բաղադրություն է կամ անուշահոտ յուղ: Նա Մյուռոնով ապահովում էր Պարսկաստանի և Թուրքիայի բոլոր նահանգներին: Նույնիսկ հույներն էին այն վերցնում մեծ ակնածանքով, և սովորաբար ասում էին, թե Երեք եկեղեցիներից դուրս է գալիս սուրբ յուղի մեկ աղբյուր, որը ոռոգում է ողջ Արևելքը: Պատրիարքն այն ուղարկում էր հայ արքեպիսկոպոսներին և եպիսկոպոսներին, որպեսզի նրանք տարածեն և գործածեն Մկրտություն և Վերջին Օծում կատարելու համար»[16]:

Դուռնֆորի նկարագրությունից երևում է, որ նա տեղյակ է եղել նաև Ս. Մյուռոնի պատրաստության և օրհնության արարողությանը, որի մասին ամենայն հավանականությամբ տեղեկություններ է հավաքել Ս. Էջմիածնում եղած ժամանակ: Մյուռոնօրհնության մասին նա գրում է. «Մյուռոնի պատրաստությունը սկսում են Ծաղկազարդի երեկոյան ժամերգությունից, որը տևում է մինչև Ավագ Հինգշաբթի օրվա Պատարագը: Մյուռոնը կաթսայի մեջ եփելու համար չեն գործածում ո՛չ սովորական փայտ, ո՛չ ածուխ, և այդ կաթսան ավելի մեծ է, քան անկելանոցի կաթսան: Այն եփում են օրհնված փայտերով և նույնիսկ այնպիսի իրերով, որոնք գործածվել են եկեղեցիներում, ինչպես՝ հին նկարներ, մաշված զարդեր, պատռված և շատ հաստ գրքեր. այս բոլորը նախատեսված է այդ ծիսակատարության համար: Այս կրակը պետք է որ շատ լավ չբուրի, բայց յուղը խնկում է նրա մեջ խառնված բույսերով և անուշահոտ նյութերով: Պարզ հոգևորականները չեն, որ աշխատում են այս հիասքանչ բաղադրության պատրաստման համար, այլ հենց ինքը՝ Պատրիարքը՝ տոնական հագուստով, և ամենաքիչը երեք բարձրաստիճան հոգևորականների օգնությամբ, որոնք նույնպես կրում են եպիսկոպոսական հագուստ. նրանք միասին աղոթքներ են կարդում ծիսակատարության ողջ ընթացքում»[17]:

Ս. Մյուռոնի պատրաստության կրակի մեջ գցվող առարկաների մասին տարօրինակ այս հիշատակությունը ամենայն հավանականությամբ արձագանքն է այն ըմբռնման, որ Մյուռոնի կաթսան ինքն իրեն եռում է հրաշալի ձևով, առանց կրակի:

Սրբալույս Մյուռոնի մասին հաջորդ հիշատակությունը նույն այս շրջանում գտնում ենք մեկ այլ ֆրանսիացի ուղեգրող և նշանավոր արևելագետ Մատյուեն Վեյսիեր դը լա Քրոզի մոտ: Իր գիտական գործունեությունը սկսելով Ֆրանսիայում՝ նա այնուհետև, սակայն, բողոքականություն է ընդունում և հաստատվում Գերմանիայում՝ դառնալով Բեռլինի թագավորական գրադարանի տնօրեն: Նա կազմել է «Գերմաներեն-հայերեն», ինչպես նաև «Գերմաներեն-Ղպտերեն» և «Գերմաներեն-ասորերեն» բառարաններ: Նրա «Քրիստոնեության պատմությունը Հնդկաստանում» (Histoire du Cristianisme des Indes) ուղեգրական բնույթի գործում հետևյալ հիշատակությունը կա Ս. Մյուռոնի մասին. «Բայց ես չեմ կարող ինձ զրկել Մյուռոնի մասին խոսելուց, որով իրապես արևելյան գրեթե բոլոր ժողովուրդները Խորհուրդ են կատարում: Սա բալասանի կամ անուշայուղի մի տեսակ է, որն

[16] Տե՛ս նույն տեղում, էջ 629:
[17] Տե՛ս նույն տեղում:

օգտագործում են ոչ միայն մկրտության համար, այլ նաև զանազան այլ նպատակներով: Նրանք համարում են Մյուռոնի օրհնությունը որպես մի անկապտելի և սրբազան օրհնություն: Հայոց Եկեղեցու Հայրերից Գրիգոր Նարեկացին, ով ապրել է 10-րդ դարում Բարձր Հայքում [այսպես] իր ստեղծագործությունների մեջ ունի Մյուռոնին նվիրված հատուկ մի ճառ, որտեղ այդ բալասանի գովաբանությունները այնքան են բարձրացվում, որքան Հաղորդությունը վաղ եկեղեցու հայրերի ստեղծագործություններում»[18]:

Կղեմես Գալանոսից վկայակոչելով հայ մատենագրությունից Ս. Մյուռոնի մասին հետևյալ վկայությունը՝ «Մարմնի աչքերով հաղորդության մեջ ենք տեսնում հաց և գինի, իսկ հավատքի և մտքի աչքերով մենք այդպիսով ընդունում ենք Հիսուս Քրիստոսի մարմինը և արյունը» խոսքերը, Քրոզը որպես ընդհանրացում գրում է. «Սա բավական է ճանաչելու համար մի խորհուրդ, որը հատուկ է Արևելքին և անծանոթ Հռոմեական Եկեղեցուն»:

Ս. Մյուռոնի մասին հիշատակություններ ենք գտնում և ամերիկյան բողոքական միսիոներ Էլի Սմիթի և Հ. Դվայթի «Միսիոներական ուսումնասիրություններ Հայաստանում. ներառյալ ուղևորություն Փոքր Ասիայով, Վրաստանով և Պարսկաստանով» (Missionary Researches in Armenia. Including a journey throught Asia Minor, and into Georgia and Persia) Լոնդոնում 1834 թ. հրատարակված գրքում:

Այս գործը գրված է ուղեգրական նամակների ձևով: Հեղինակները, ընդունելով Ս. Մյուռոնի բացառիկ նվիրականությունը հայ ժողովրդի կյանքում, այս մասին գրում են որոշակի քամահրանքով և ժխտողականությամբ, քանի որ ընդհանրապես չեն ընդունում եկեղեցական նվիրապետության և նվիրագործման հետ կապված մի շարք հանգուցային ծեսեր և խորհուրդներ: Ս. Մյուռոնի մասին գրում են. «Մյուռոնը սրբազան յուղ է, այն օգտագործվում է հաստատման (նախահաղորդության), ձեռնադրության և մի շարք այլ արարողությունների ժամանակ և հայերի գլխավոր սնահավատություններից մեկն է»[19]: Որպես ասվածի իբրև թե հավաստում, գրում են, որ հայերը հավատում են, թե Մյուռոնի օրհնության գլխավոր արարողության ժամանակ այն ինքն իրեն եռում է և կատարում են հետևյալ համեմատությունը. «Մյուռոնի եռալը Էջմիածնի համար իսկապես այն է, ինչ Երուսաղեմի համար Սուրբ Գերեզմանից ելնող լույսը, թեև ավելի քիչ սնահավատություն է պահանջվում հավատալու նախորդին, քան թե վերջինին»:

Պայմանավորված իրենց աշխարհայացքով, որով հրաշքները փորձում են բացատրել բնական երևույթներով, հնարավոր են համարում Ս. Գերեզմանից լույսի ծագումը ոչ թե որպես այնտեղից լույսի բխում, այլ որպես թե այնտեղ առկա ֆոսֆորային լուսարձակում: Համանման մոտեցմամբ էլ ասում են, թե հնարավոր է, որ Մյուռոնի օրհնության ժամանակ կաթսայի մեջի յուղը եռա՝ պայմանավորված նրա մեջ լցված բույսերի բաղադրությամբ:

Ս. Մյուռոնի մասին գրում է նաև անգլիացի ուղեգրող Էդմունդ Սպենսերը 1836 թ. իր ուղեգրությունը ներկայացնող «Ճանապարհորդություն Արևմտյան Կովկասով, ներառյալ շրջագայություն Իմերեթիայով, Մինգրելիայով, Թուրքիայով, Մոլդավիայով, Գալիցիայով, Սիլեզիայով և Մորդավիայով 1836 թվականին» (Travels in the Western Caucasus, including a tour through Imeritia, Mingrelia, Turkey, Moldavia, Galicia, Silesia and Moravia in 1836) երկհատոր գրքի առաջին հատորում, որը Լոնդոնում լույս է տեսել 1836 թ.: Ս. Մյու-

[18] Նույն տեղում, էջ 644:

[19] Նույն տեղում, էջ 248:

ռոնի մասին Սպենսերը ասում է, որ այն հուդայիզմից է փոխանցված: Նման բնորոշման համար, ըստ երևույթին, հիմք է ծառայել այն հանգամանքը, որ Մյուռոնի արարողությունը բխեցվում է օծության յուղի պատրաստման մասին Մովսեսին տրված պատվերից և Մովսեսի՝ ըստ այդ պատվերի պատրաստած օծության յուղից: Ս. Մյուռոնի պատրաստության և բաշխման մասին Սպենսերը գրում է. «Այս սրբազան յուղը պատրաստվում է միայն յուրաքանչյուր հինգ տարին մեկ, մեծ գաղտնիությամբ, Հայոց հռչակավոր Էջմիածնի վանքում, որը գտնվում է Արարատ լեռան ստորոտում: Այն պատրաստվում է Կովկասյան վայրի լեռներից հավաքված 40 բույսերի ու ծաղիկների հյութից (քամվածքից) և պատրաստման արարողությունը տևում է քառասուն օր: Ապա թանկագին խառնուրդը մեծ հանդիսավորությամբ տրվում է Հայոց Եկեղեցու՝ աշխարհի բոլոր կողմերում գտնվող վարդապետներին: Ասում են, որ այն հոգին բժշկելու և հավիտենական կյանքին նախապատրաստելու գերբնական զորությամբ է օժտված»:

Ս. Մյուռոնի մասին եղած տարաբնույթ ավանդություններին և պատմություններին Սպենսերը ավելացնում է ևս մեկը՝ Ս. Մյուռոնը միախառնելով ջրհեղեղյան հիշատակների հետ և ըստ այդմ անվանելով աշխարհի հնագույն խառնուրդ հեղուկը, գրում է. «Լինելով աշխարհում ամենահին խառնուրդը, նրա բաղադրությունը ասվել է [հայերի] մեծ նախահոր՝ Նոյի կողմից իր հետնորդներին»[20]:

Անգլիացի մեկ այլ ուղեգրող՝ Ջոն Յուսշերը (1816-1889 թթ.) «Ճանապարհորդություն Լոնդոնից Պերսեպոլիս. ներառյալ շրջագայություններ Դաղստանում, Վրաստանում, Հայաստանում, Քուրդիստանում, Միջագետքում և Պարսկաստանում» (A journey from London to Persepolis. Including Wandering in Daghestan, Georgia, Armenian, Kurdistan, Mesopotamia, and Persia) գործում, որը լույս է տեսել Լոնդոնում 1865 թ., դարձյալ շեշտում է, որ Հայոց Եկեղեցում Մյուռոնի օրհնությունը վերապահված է կաթողիկոսին. «Միայն կաթողիկոսը, որպես Եկեղեցու գլուխ, իրավունք ունի նշանակել եպիսկոպոսներ և պատրաստել սրբազան յուղը, որն օգտագործվում է մկրտության ժամանակ օծման համար»[21]:

20-րդ դարասկզբին Ս. Էջմիածին այցելել և Ս. Մյուռոնի մասին գրել է դարձյալ անգլիացի ուղեգրող Էդվարդ Արթուր Բրայլեյ Հոդգեթսը (1859-1932 թթ.) իր «Ճանապարհորդություն Հայաստանով. Ուղեգրություններ Բալկաններով, Թուրքիայով, Կովկասով և Պարսկաստանով շրջագայություններից» (Round about Armenia. the record of a journey across the Balkans, through Turkey, the Caucasus, and Persia) գրքում, որը Լոնդոնում լույս է տեսել 1916 թ.: Ս. Մյուռոնի մասին նա գրում է. «Այս տաճարում է պահվում սրբազան յուղը, որով ամեն մի ճշմարիտ հայ, ուր էլ որ նա լինի, պետք է օծվի իր ծննդյան և ամուսնության առիթով և իր մահից առաջ: Յուղը, որն օրհնվում է Եկեղեցու գլուխ հանդիսացող կաթողիկոսի կողմից, պարբերաբար առաքվում է աշխարհի բոլոր կողմերը, որտեղ հայկական եկեղեցիներ կան»[22]:

Մեջբերված այս հատվածում, ինչպես տեսնում ենք, մեկ ակնհայտ անճշտություն և մեկ շփոթություն կա: Անճշտությունը այն է, որ ամուսնության ժամանակ Պսակի խորհուրդը կատարելիս Մյուռոնով օծում և դրոշմում չի կատարվում, իսկ շփոթությունն էլ այն է, որ Վերջին օծման կամ Հաղորդության խորհուրդը անգլիացի հեղինակը շփոթել է

[20] Նույն տեղում, էջ 294:
[21] Նույն տեղում, էջ 281:
[22] Նույն տեղում, էջ 334:

Մյուռոնով կատարվող օծման հետ: Նաև հնարավոր է, որ հոգևորականների դեպքում Ս. Մյուռոնով կատարվող Վերջին օծումը նա ենթադրել է, թե կատարվում է բոլոր վախճանվածների համար:

1848 թ. Ս. Էջմիածնում տեղի ունեցած Մյուռոնի օրհնությանը ներկա է եղել ռուս պատմաբան Անդրեյ Մուրավյովը և օրհնության արարողությունը ներկայացրել է իր երկհատոր «Հայաստան և Վրաստան» աշխատության Ս. Էջմիածնին նվիրված բաժնում առանձին մի գլխով, որը վերնագրված է «Մյուռոնի եփման արարողությունը»[23]:

Արարողության նկարագրությունից բացի Մուրավյովը ևս շեշտում է, թե ժողովրդական ինչպիսի խորին ջերմեռանդություն է տիրում օրհնության ողջ ընթացքում: Մյուռոնօրհնությունը այդ տարի, ինչպես նշում է Մուրավյովը, տեղի է ունեցել Խաչվերացի տոնին, և օրհնության արարողությունները սկսվել են նախորդ օրը՝ շաբաթ երեկոյան: Նա նկարագրում է, թե ինչպես ողջ հոգևորականությունը թափոր կազմած գնում է դեպ Վեհարան՝ Մայր Տաճար առաջնորդելու Ներսես Աշտարակեցուն և ապա ամպհովանու ներքո և Մայր Տաճարի զանգերի ղողանջներով ուղեկցում դեպ եկեղեցի, ուր կարճ արարողություն է կատարվում և ընթերցվում են մի շարք աղոթքներ:

Հաջորդ օրը՝ կիրակի առավոտյան, արդեն մատուցվում է Ս. Պատարագ, և տեղի է ունենում բուն արարողությունը: Նկատի ունենալով ժողովրդի իրարանցումը, Ս. Մյուռոնի կաթսային հնարավորինս մոտենալու ցանկությանը և նեղվածքի պատճառով առաջացող հրմշտոցը՝ նա գրում է, թե օրհնության արարողությունը իր վրա թողնում է բավականին ճնշող տպավորություն:

Մուրավյովը ասում է, որ չիմանալով հայերեն, ինչպես նաև Հայոց Եկեղեցու ծեսը և արարողությունը, կարողացել է որսալ և հասկանալ միայն մի քանի հիմներգեր և աղոթքներ, որոնք թե՛ մեղեդիով և թե՛ կատարման եղանակով հիշեցրել են համանման արարողությունը Ռուսաց Եկեղեցում, իսկ արարողության ընդհանուր ընթացքը նրան բացատրել են Մայր Աթոռի միաբանները, որի հիման վրա նա թվարկում է, թե ինչ աղոթքներ են ասվել և ինչ ընթերցվածներ են հնչել՝ կապված Ս. Մյուռոնի օրհնության հետ: Նա շեշտում է, որ Մյուռոնի օրհնության արարողությունը իր վրա կրում է խորին հնության դրոշմ և գալիս է Երուսաղեմի Մայր եկեղեցուց, որտեղից փոխանցվել է և մյուս ժողովրդներին:

Հնում ընդունված ավանդույթով Մյուռոնի օրհնությունը տեղի է ունեցել Իջման Ս. Սեղանին, որի պատճառով ժողովրդի խմբվելու տեղն ավելի է փոքրանում և Մուրավյովի բնորոշմամբ արարողությունը որքան առաջ էր ընթանում, այնքան հնարավոր չէր լինում լսել այն աղմուկի պատճառով: Նա նաև ընդգծում է եկեղեցական արարողության ժամանակ կաթողիկոսին վերապահված բացառիկ իշխանությունը, երբ եպիսկոպոսները հայրապետին սպասավորում են այնպես, ինչպես սարկավագները քահանային:

Արարողության նկարագրությանը զուգընթաց ներկայացնում է, թե ինչպես է մեծանում և ժողովրդի հուզմունքը, թե ինչպես են մարդիկ ձգտում մոտենալ Ս. Մյուռոնի կաթսային՝ հավատալով, որ նրանում Մյուռոնը հրաշալի ձևով եռում է ինքն իրեն:

Նա նկարագրում է նաև Ս. Մյուռոնի կաթսան՝ ասելով, որ հատուկ ծածկոցով ծածկված և արարողությանը նախորդող վեց շաբաթների ընթացքում այն դրված է եղել խորանին և ամեն օր մի հոգևորական Ս. Ավետարան է ընթերցել կաթսայի առջև:

---

[23] Տե՛ս **А. Муравьев,** Грузия и Армяния, հտ. 2-րդ, 1848, էջ 184-207:

Մյուռոնի օրհնության այսպես հանդիսավոր կատարելը Մուրավյովը բացատրում է այն հանգամանքով, որ օրհնությունը կատարվում է մի քանի տարին մեկ և որ Ս. Էջմիածնից այն տարածվում է ողջ աշխարհով սփռված հայերին, որ օրհնությունը կարող է կատարել միայն կաթողիկոսը, որով ապահովվում է Հայոց Եկեղեցու միասնականությունը։

Ս. Մյուռոնի օրհնությանը տարբեր կողմերից մեծ թվով ժողովրդի հավաքվելը նա բացատրում է Մյուռոնի առանց կրակ եփվելը տեսնելու ձգտմամբ, իր իսկ բնորոշմամբ՝ այս հրաշքը տեսնելու ցանկությունը ուխտավորներին հավաքում և բերում է Հայաստանի բոլոր կողմերից։

Մուրավյովը նաև գրում է, թե ինչպես Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցը և մյուս եպիսկոպոսները թափոր կազմած բերում են Ս. Գեղարդը և մյուս բոլոր այն սրբությունները, որոնցով կատարվում է Մյուռոնի օրհնությունը։ Մոտեցող այս թափորի դիմաց գտնվող ժողովրդի հուզմունքը նա ներկայացնում է որպես հավաքվածների հուզմունքից եռալ՝ նման բառախաղով նկատի ունենալով և Ս. Մյուռոնի եռալը։

Նա նաև նշում է, թե արարողության ընթացքում ընթերցվում են Հիսուսի ոտքերը մեղավոր կնոջ օծելու և ընդհանրապես ավետարանական այնպիսի հատվածները, որոնք ուղղակիորեն կապված են յուղով օծման հետ։

Նույնը վերաբերում է և օծման հետ կապված Հին Կտակարանի հատվածներին։ Այնուհետև եպիսկոպոսները կարդում են Մյուռոնի օրհնությանը վերաբերող աղոթքները, որոնցից վերջինը կարդում է ինքը կաթողիկոսը, և բոլոր այս աղոթքներում հայցվում է, որ Ս. Հոգին իջնի նոր օրհնվող Մյուռոնի վրա։ Այսպիսով, ինչպես երևում է Մուրավյովի մեկնաբանություններից, նա բավականին լավ է հասկացել օրհնության ընթացքը և հոգևոր խորհուրդը։

Նաև բավականին հանգամանալից և կենդանիորեն է նկարագրում ծաղկահյութի ու բալասանի լցնելը, ինչպես և Ս. Մյուռոնի տյառնագրելը Ս. Խաչով, Ս. Գեղարդով և Ս. Լուսավորչի աջով, ինչպես և օրհնությունը մնացյալ մասունքներով։ Նշում է, որ այդ օրհնությանը հաջորդում է ամենահանդիսավոր պահը, երբ սպասում են հրաշքի կատարմանը՝ Մյուռոնի կաթսայի ներսում եռալուն։ Աղմուկ-աղաղակը այնքան է ուժգնանում, որ շատերը ընկնում են սկսված հրմշտոցից։

Ավետարանական ընթերցվածները արարողության ընթացքի հետ շարունակական զուգահեռի մեջ ներկայացնող Մուրավյովը գրում է, որ Մյուռոնի օրհնությունը ավարտվում է Մարկոսի Ավետարանի այն հատվածի ընթերցմամբ, ուր Հիսուս առաքյալներին իշխանություն է տալիս բժշկելու հիվանդներին յուղով օծմամբ։

Ս. Պատարագը շարունակվում է, որի ընթացքում առաջ են մղվում հավաքվածները՝ համբուրելու Ս. Մյուռոնի կաթսան՝ բարեպաշտորեն զգալով եռալուց առաջ եկած տաքությունը։

Այսպիսով, թե այս և թե ուղեգրական մյուս նկարագրությունները առավել ամբողջացնում են Ս. Մյուռոնի օրհնության մասին հայ մատենագրության մեջ առկա վկայությունները, միաժամանակ ցույց տալով, թե այն ինչպես է ընկալվել և մեկնաբանվել եվրոպական հեղինակների կողմից։

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐԸ՝ ՍՈՒՐԲ ՄՅՈՒՌՈՆԻ ՄԱՍԻՆ

- Ա -

Ինչպես բազմիցս ասացինք, այսպիսին է սուրբ ժողովի խորհուրդը և այսպիսին են մեր մեջ առկա իմացական տեսությունները, որոնք [դրսևորվում են] քահանայապետաբար սրբազնագործված հաղորդության և սուրբ ժողովի մեջ: Բայց սա նույնական է Մյուռոնի մկրտության նվիրագործությանը, որ մեր առաջնորդները կատարողություն են անվանում: Արդ, համաձայն կարգով դիտված սրբազան պատկերների, քահանայապետական տեսությամբ բարձրանանք դեպ նրա մասերը:

(...) Եվ հետո քահանայապետը, վերցնելով յուղը, դնում է աստվածային սեղանի վրա, որ ծածկված է սրբազան տասներկու թևերով, և բոլորի հետ սուրբ ձայնով սրբազանորեն քաղցրաձայնում է՝ աստվածընկալ մարգարեների շնչով: Եվ նրա վրա աղոթելով՝ սրբորեն կատարվում է ամեն տեսակ քահանայապետական նվիրագործությունների սրբազան օծությունը:

Արդ, իր Աստվածությամբ սրբազնաբար ներգործող ներհայեցողական վերառաքման այս սրբազնագործությունը արտահայտությունն եմ համարում սուրբ հայրերի մտքի գաղտնի սրբազնության և անուշահոտության, որ աստվածայնորեն հրամայվում է սրբազան հայրերին ի ցույց չհանել աստվածային լավի և անուշահոտ նմանության այս գաղտնիքն ի սեր սնոտի փառքի: Քանզի աստվածային գաղտնիքները և մտքից վեր անուշահոտ վայելչությունները միայն իմացականորեն (ոգեղինապես) են երևում՝ համաբնույթ լինելով իմանալիներին (ոգեղեն էակներին, հրեշտակներին), ըստ իրենց անձի մեջ [եղած] առաքինի, անապական պատկերների: (...) Ուրեմն՝ հիրավի աստվածային խորհրդակատարները իրենց մեջ անսասանորեն տարրացնելով գերագույապես անուշահոտ և իմացական (ոգեղեն) վայելչությունները՝ իրենց մեջ եղած աստվածանման առաքինություններից և ոչ մեկը չեն ցուցադրում ի տես մարդկանց: Այլ իբրև պատկեր, սրբազնորեն նայում են աստվածային յուղին, որ ծածկված է եկեղեցու (ժողովականների) մեջ: (...)

Այսուհետև (...) բացելով վարագույրը՝ նրան նայենք ինչպես այն կա՝ ըմբռշխնելով հայտնաբար փայլատակող երանելի լույսը, որ իմանալիների (առթած) անծածուկ անուշահոտությամբ է լցրել մեզ: Քանզի յուղի չերևացող նվիրագործությունը, որի շուրջն [են հավաքված] քահանայապետերը, անհաղորդելի է նրանց կամ անտեսանելի, բայց մանավանդ թափանցելով մինչև նրանց և դառնալով շատերին անտեսանելի, նրանցից քողարկվում է սրբազնաբար և բազմությունից անջատվում է քահանայապետաբար: Քանզի աստվածային այրերի ամենասրբազան ճառագայթները, իբրև իմանալիներին տոհմակից (էակներ), սրբորեն և անընդմիջաբար լուսափայլելով և իմանալիների (ոգեղեն էակների) օգնությունը նրանց անսքող բուրելով՝ նվաստության պատճառով առաջ չեն գալիս, այլ նրանցից, որպես թաքուն իմանալի բաներ տեսնողներից՝ անկերպ, անարատ թևավոր (էակներից), քողարկվում են: Սրանց սրբազան օրինակով էլ նվաստագույն

(սպասավորների) բարեզարդ դասը վեր է բարձրանում նրանց (վերին դասի) սրբազան համեմատությամբ: (...)

Արդ, մեր կողմից ասված այս բազմաթիվ խոսքերից հետո, ինչպես կարծում եմ, ավելորդ է նույն խոսքերի շուրջը պտտվել և այդ իսկ պահին չտեսնել քահանայապետին, որ աստվածայնորեն տասներկու թևերով ծածկել է աստվածային Մյուռոնը և ամենասուրբ նվիրագործումն ու նրա վրա սրբազնագործվածին: Եվ այժմ ասենք, որ յուղի անուշությունն ըստինքյան բաղադրված է անուշահոտ նյութերից՝ իր մեջ փարթամորեն ունենալով նրանց անուշահոտ որակը, որին հաղորդվածներն անուշահոտությունն ընդունում են համաձայն նրա մեջ եղած անուշահոտ հաղորդության զորության: Եվ հոժար ենք, որ աստվածպետականագույն Հիսուս գերագոյական անուշահոտության իմացական բաշխումով մեր միտքը լցնի աստվածային վայելչանքով: Քանզի նյութական անուշահոտության օգնությունը բարեկիր է դարձնում և բազում վայելքի հետ միասին սնուցում է հոտոտելիքի ընտրողականությունը, եթե անուշահոտությունն այդ անվնաս և չափավոր է, և մեր իմացական զորությունները՝ նվաստ, ստորնագույն բաներից պահում է առանց ապականության՝ շնորհիվ ընտրելու կարողության բնավորական առաջնորդության, համաձայն աստվածագործական չափի և դեպ Աստվածություն դարձած համաբնույթ մտքի՝ լինել աստվածպետական անուշահոտության պաշտպանության տակ և սրբազան կրքերով համակված՝ լիալրվել աստվածային կերակուրով: Ապա ուրեմն, յուղի անուշահոտության խորհրդանշական բաղադրությունը, իբրև անկերպ [իրողությունների] կերպավորում, հենց Հիսուսին է կարգորոշում աղբյուրացուցիչը լինել ի ճոխ պաշտպանություն աստվածային անուշահոտությունների և, աստվածպետական բաների համեմատ, աստվածատեսակ մտքին բուրել (հաղորդել) աստվածային նյութերը: Սրա շնորհիվ իմացական (զորությունները) բարի կրքերով (հույզեր) վայելչացած և սրբազան պաշտպանությամբ լցված՝ իրենց մտքով հպվում են իմանալիին, համաձայն աստվածային հաղորդության անուշահոտ բաշխումի: (...)

Եվ դեռ ավելին՝ աստվածագույնն այն է, երբ աստվածային յուղով օծվում է ամեն տեսակ սրբազան նվիրագործություն, ըստ ասվածի հաստատապես ցույց տալով, որ Սրբվածը սրբում է՝ համաձայն ամենայն աստվածպետական բարերարության: Այդ պատճառով և սրբազան աստվածածնելիության յուղի նվիրական պարգևն ու շնորհը նվիրագործվում է աստվածային սրբությամբ: Ուստի, ինչպես կարծում եմ, քահանայապետը, սրբագործող ավազանի մեջ խաչատեսակ հեղումով լցնելով յուղը և մտահայեցողական աչքով, նույնիսկ խաչի մահվան շնորհիվ, տեսությանը մատչելի դարձնելով Հիսուսին, որ հանուն մեր աստվածածնելության (աստվածանալու) ընկղմվել է նույն Աստվածությամբ և անըմբռնելի իջմամբ: Եվ մենք՝ համաձայն նրա գաղտնախորհուրդ խոսքի մկրտվածներս, հին ընկղման ապականացուցիչ մահվանից բարեվայելչորեն վեր ենք բարձրանում և նորոգվում աստվածային ու հավիտենական գոյության համար: (...)

Ս. Դիոնիսիոս Արիսպագացի

‹‹Եկեղեցական քահանայության մասին››

- Բ -

Օ՜հ, ուրեմն, հեռացիր աշխարհից, որ վաղ ես արթնացել, բաժանվել սրա արհավիրքներից, թոթափվելով ձերբազատվիր այս ախտալից աշխարհի կեղևից: Ըմբշամարտիկի նման մերկացի՛ր, օծվի՛ր Քրիստոսի յուղով, որպեսզի ախոյանի ձեռքերը չկառչեն քեզնից:

Եղիշե (Ե դ.)
«Խրատ մենակյացներին»

-Գ -

Ձեթը Քրիստոսի օրինակն է, և քահանան, որ օծում է խորանը, Քրիստոսի օրինակն է, որն իրենով սրբում էր բոլոր արարածներին և օծում թագավորներին ու քահանաներին, ինչպես ինքն իրեն: Իսկ զմուռսի ծաղիկը [պետք է լինի] 500 սիկղ, հիրիկը՝ 500, կինամոնը՝ 250, և եղեգի խունկը՝ 250, որովհետև մարդը չորս նյութից է [բաղկացած]: Զմուռսի ծաղիկը օդի նման է՝ մարմնի կենդանությունը պահպանելու համար, հիրիկը համապատասխանում է մարմնի ջերմոտ և հրագին մասին՝ ըստ աստվածային շինվածքի իրենց մեջ ունենալով հազարյակի կատարյալ թիվը: Իսկ կինամոնը հողի նման է, և եղեգի խունկը՝ ջրի՝ իրենց հնգաչափ ծավալով ամփոփելով հազարյակի կեսը: Իսկ ձեթը դարձյալ օրինակն է մեր մտքի, որ օրինակն է Քրիստոսի, քանզի Քրիստոս Եկեղեցու գլուխն է: Արդ, մտքից ավելի ի՞նչ լուսափայլ և լուսատու բան կա մեր մեջ:

Դավիթ Հարքացի (Զ դ.)
«Մովսեսի պատրաստած յուղի մասին»

- Դ -

(...) Իսկ ի՞նչն եմ քահանայական խոսք ու ձեռք կոչում. այն, ինչ Սուրբ Հոգու նույն առհավատչյան է, նաև վստահեցնում ոմանց՝ մերձենալ և ապավինել իբրև բարձրագույն և աստվածաբնակ նյութերի: Ես սուրբ յուղի հեղման մասին եմ ասում, որով, նախկինում, աստվածային Հոգին անցնում էր քահանաներին և թագավորներին, ներգործում նրանց վրա: Եվ ամենուրեք բոլորի մեջ էլ այս յուղով պարգևաբաշխ Հոգին գտնում է իր կատարյալ խորհուրդը: Ճիշտ այնպես, ինչպես մեր մարդկային բնությունն է երկու տեսակ, այդպես էլ երկպատիկ ու նորոգող Սուրբ Հոգին է մերձենում մեզ. նյութականությամբ զվարճացնում է զգայականը, քանի որ «Յուղը,- ասում է մարգարեն,- զվարթացնում է» (Սաղմ. ՃԳ 15), իսկ իր զորությամբ զորացնում է մեր հոգեկանը. «Հրամայիր,- ասում է,- Աստված, քո զորությամբ զորացնել այն, ինչ հաստատեցիր մեր մեջ» (Սաղմ. ԿԷ 29): Եվ որպեսզի որևէ մեկին կասկածելի չթվա իր գործի իրողությունը, սկզբից մարմնավոր տեսքով եկավ հանգչելու իր ազգակցի վրա՝ կամենալով այդպես երևալով աշխարհին առհավատչյա լինել իր աներևույթ գալստյան համար, իսկ աշխարհը չկամեցավ աչքի տեսածը դարձնել սրտի տեսողության ճանապարհ: Սա հենց այն է, ինչ Տերն ասում էր, թե՝ «Աշխարհը չի կարող ընդունել Նրան, որովհետև չի տեսնում և չի ճանաչում Նրան, բայց դուք տեսնում եք, որովհետև ձեզ մոտ է բնակվում» (Հովհ. ԺԴ 17):

Այդպես էլ, ահավասիկ, մենք՝ առաքյալների խոսքով Ամենասուրբ Երրորդության հավատացյալներս, ընդունում ենք, որ փրկագործության միջոցները՝ եկեղեցիները, սե-

դանները, խաչերը, պատկերները, օծված են յուղով, և հավատում ենք, որ նրա (յուղի) հետ այդ միջոցներին է անցել աստվածային զորությունը (...):

Հովհան Գ Օձնեցի (կթղ. 717-728 թթ.)
«Ընդդեմ պավլիկյանների»

Պարտ և արժան է հայրապետին օրհնել Սուրբ Մյուռոնը, այսինքն՝ անուշահոտության յուղը, ինչպես նաև՝ յուրաքանչյուր եպիսկոպոսի՝ մեկ անգամ Զատկի հինգշաբթի օրը, որպես և հրամայված է: (Պարտ և արժան է) քահանաներին նրանցից ընդունել և նրանով օծել սեղանները, եկեղեցիները և խաչերը, մկրտվածներին մատուցել միայն որդեգրության օծություն, որ լինում է մկրտությունից հետո օծման համար: Այն չպետք է խառնել այլ նյութերի հետ, և թող քահանան չհանդգնի օրհնել այն:

Հովհան Օձնեցի
«Կանոններ», Թ

- Ե -
ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ
Բան ՂԳ
Գ

(...) Որովհետև ինչպես սուրբ ավազանի լուսարանում մարմնի լվացումով հավատում ենք, որ մեր անձը սրբություն ստացավ, այդպես էլ հուսով լիալրված՝ յուղի օծումով գտնում ենք, որ աներկբայությամբ Սուրբ Հոգու զորությունն ենք ստանում ամբողջապես: Եվ ինչպես տերունական հրամանովդ նախավճռում էիր ախտացյալների մեղքերի օրհնաբանելի քավությունը, իսկ դրան չհավատացողներին հրաշք բժշկություն պարգևելով՝ մարմնական ակներևությամբ, նրանց հավատարիմ վկաներ էիր հաստատում անդարձների համար, այդպես էլ փրկության լույսով կատարյալ այս յուղը մեր վրա հեղվելով՝ օծում է մեր արտաքին խորանը, բայց աներևութաբար մտնելով՝ նորովի կենդանածնում է մեր ներքին մարդը (...):

Զ

Եվ արդ, քանզի Քոնն են շնորհները, և Քեզ են վայելում գոհաբանությունները, օրհնաբանյալ Որդի Աստծու, Դու ինքնին, բարենշմար դրոշմով, յուղավորական, խնկապատար, զմռսալիր աղաչանքներս պատճառ դարձրու Քեզ փառաբանելու և ինձ՝ մեղապարտիս՝ առիթ բժշկվելու: Տեր Հիսուս, այս լուսանյութ ձեթը մոտեցրու աներևույթ վերքերիս և այս մահացու խոցավերքի վրա մի կաթիլ կաթեցրու Քո օրհնության փրկավետ յուղից սիրուդ անապակ գինու հետ (...):

ԺԱ

Իսկ այս նյութի իմաստը խորախորհուրդ և էապես հրաշալի մեկնաբանություն ունի, քանզի երկբայական փութով չի փոխում իր տեղը և ոչ էլ նենգությամբ լքում իր բնակատեղին, որովհետև այն չի մաքրվում օճառով և ոչ էլ ընդդիմակա մի բանով արտաքսվում: Քանզի ինչ որ է գույնի որակը անփոփոխ և անհրաժեշտ մարմնի էության համար.

[մարմնի], որ լինելով գոյության է կոչում և չլինելով՝ ապականում, այսպիսի հարաբերությամբ էլ յուղի զորությունն իր կերպարանքով զգեստավորվողին զուգական միասնությամբ մեզ հաղորդեցիր, Տեր Հիսուս Քրիստոս, գոյի ինքնիսկույթին և օրինակին լծակցելով. որովհետև աչքի տեսանելիքին և մտքի բաղձանքին անմատչելի եղածին մեր առջև բերելով՝ կերպավորվեցիր՝ պտուղները մզել-ճզմելով՝ զարմանալի հրաշագործությամբ պատրաստվեցիր մեզ մատակարարվել: Մանավանդ օծության այս յուղը կարգադրեցիր հորինել ոչ թե զանազան ծաղիկների մի խմբակցություն կազմած բյուրաթիվ խառնուրդից, համաձայն հին ու ստվերական (հինկտակարանյան) բազմաբուրմունք այլայլությունների, այլ իբրև օրինակ այն փոխելով՝ Դու Ինքդ խառնվեցիր վերնալույս ձեթի այս մաքրության մեջ: Ու թեպետ անճառելի են Քո քաղցրության համեղությունները, որոնք անհամեմատելի են [մատչելի] բաներին, թող որ դաշտի ծաղկին և հովտի շուշանին, ընտիր նարդոսին և հալվեով խառնված եղեգնախունկին, ազնիվ գինով ճոխացած քրքումի բուրմունքին, ոչ թե սոսկ յուղի միությամբ պատշաճորեն օրինակեցիր փառավորյալ անքնին անունդ, որ ամենայն ինչ լիալրում ես և որևէ բանի կարիք չունես (...):

Աստծուն որդեգրված Սողոմոն օծյալի հետ երգում եմ երկնավոր փեսայիդ՝ հարսի բերանով բարեբան գոհաբանություն՝ համբուրելով մտքի ըղձանքի մեջ Քո յուղի բուրմունքը բոլոր խունկերից ավելի և, համաձայն իմաստուն և աստվածաբան Ավետարանչի հոգելից խոսքի, հավիտենական կյանքի խոսքն ունեցողի նման, Քեզ հետ Քո յուղի բուրմունքի հետքով ընթանանք՝ մեր երեսը լվանալով կյանքի ջրով, որ վեր է այս տեսանելի երկնքից, և մեր գլուխներն օծելով երկնային անախտական յուղովդ՝ Քո առջև կանգնենք ուրախությամբ, զվարթորեն և ոչ թե տխրությամբ:

ԺԲ

Այս խնկելի, պաշտելի, երանելի յուղը սենյակիս սյանը և կամ գլխիս մազերին նպաստամատույց շնորհ չի բերի, եթե տերունական կենսատու Խաչովդ չտյառնագրվի: Այս զարմանահրաշ լույսի օրհնության յուղը հրեաներին, հնդիկներին, սկյութացիներին, բարբարոսներին, հելլեններին և շնգալուխ սոսկավիթխարի խուժադուժ ազգերին, ազատ տիրոջը և ծառայածին, ստրուկին քրիստոնյա է դարձնում, կնքում Քո անվամբ, Սուրբ Հոգուդ ընծայում և երկնավոր Հորդ հարազատ որդի հռչակում: Բազմատեսակ են սրա հրաշագեղ կերպերը՝ պատշաճեցված նախ նյութին և ապա՝ զորությանը: Քանզի ինչպես փայտեղեն անոթը, քանի դեռ (յուղով=ձյութով) օծված չէ, դյուրությամբ շեղվում է և անպետք դառնալով՝ անարգվում, այդպես էլ սրանով չօծված մարդը հեշտությամբ խորտակվում է, և անհաղորդ լինելով Քեզ, չի լուսավորվի: Սա Քո մատն է, Հիսուս, որով հրաշքներ ես զարմանագրում (...):

ԺԴ

Սա բարետեսիլ օծում է նաև բռնամարտիկ, մերկամրցանակ ըմբիշների համար, որպես զորավոր ճգնավորական հնարք՝ սատանայի ճիրանների [համար] անորսալի դարձնող, դևերի և ախտերի ահարկու ախոյան (...): Օծության այս զարհուրելի անունն այնքան ահավորություն ունի, միանգամայն և սրբություն, յուղավորական խնկարկութ-

յուն, որ ինչպես երկրայիններիցս և ոչ մեկը չի համարձակվում Աստված հորջորջվել, այլ աստվածային, նույնպես մարմնավորներս Քրիստոս անունը չենք դնում մեր անձին, այլ՝ քրիստոնյա, որ անկրելի էր Մկրտչի՝ [Սուրբ] Հոգին ջրերի միջոցով հրավիրողի (Մատթ. Գ 11) վաղնջական մեծության համար, որովհետև, ասում էր, ես Օծյալ չեմ, այլ Նրա առջևից առաքվածը (Հովհ. Ա 20): Սրանով էին շրջում առաքյալները, որոնք, իբրև Աստծու ձեռքի հարազատ ազգակիցներ, սրանով էին առաջնորդվում, քանզի յուղով էին օծվում և, առանց մարդկային հնարքների, Քո անվամբ բժշկում: Որովհետև ինչպես խավարը լույսից, ցավը՝ առողջությունից, գիշերը՝ ցերեկից և մահը՝ կյանքից, այնպես էլ այս տիրապարգև Բանից չարի բոլոր զորությունները մերժվում, խափանվում են, իսպառ ոչնչանում: Քանզի ինչպես զազրելի ճանճերը և փոքր զեռունները այս նյութից, իբրև մահվան դեղից, ոչնչանալով պակասում են, այնպես էլ օրհնության շնորհի լրությամբ այս յուղը զորանալով՝ վանում է չարքերին, պատռում չարի մուրհակները և մահվան վճիռը բեկանում: Առանց օծման օժանդակության կատարյալ չէ [մկրտության] ավազանը: Փրկության այս դեղը տրվեց ավազակներից մահացու վերք ստացած մարդուն (տես՝ Ղուկ. Ժ 30-34) (...): Այս յուղին փափագելով՝ Դավիթը, որպես պտղալից ձիթենի, Աստծու տան մեջ է հարակայում (Սաղմ. ԾԱ 10), լքելով թլփատությունը՝ դրանով մկրտության շնորհն է գուշակում:

Եվ ինչու՞ եմ ես այս մասին խոսում և կարծում, թե ընդհանրականին հասա, ինչին անկարող են նույնիսկ վերինները՝ բացատրելու այս խորհրդի մասնավոր պարագաները, ուր մնաց թե՝ իսկությունը (...):

ԻԴ

Հեզության այս յուղը համբարձման և խոնարհության տնական օրինակն ու նմանությունն է, մեկին իբրև կակուղ պատառ է մատուցվելով ջամբվում՝ իբրև հավասարակշիռ և բարեհարմար Խոսքի կերպարանք, մինչդեռ բոլոր եղանակների, հոսանուտ, ստորածորելի նյութերի մեջ՝ գերափառ, վերնաճեմ, հրաշափառ խորհրդի պատկեր է, որովհետև մորթե մի ամանի մեջ լցված լինելով՝ նույնիսկ գինու և ջրի նման թացությամբ չի ապականում այն, այլ իր պատշաճ սահմանի մեջ պահում: Այսպես ընդունելով Քո բարիքների անհավասարելի առավելությունը, կենդանի Աստծու Որդի, սրբանվեր այս օծումը դեմքիս առջև դրոշմում եմ Քո արյամբ և շնչիս բնության մեջ Քո Հոգով հաստատում՝ մտքիս հավատարիմ խորհրդով, թե այս պտղի յուղը հավիտենապես պետք է հայտնվի նորոգափայլ, բազմաճաճանչ ճառագայթումով լույս պարգևելով ի փառս Գալիքի (...):

Ս. Գրիգոր Նարեկացի

- Զ -

Մյուռոնի մասին դարձյալ ասում եք, թե ձեթը ձիթենու չէ: Արդ, մի՞թե [Սուրբ] Հոգու շնորհները ձիթենու ձեթից զորավոր չեն, մի՞թե ամենակալ չէ Սուրբ Հոգին և չի տիրում բոլորին, և բոլորը (Նրանով) նոր արարածներ չեն: Այդպես էլ և՛ ձիթենու, և՛ ընկույզի, և՛ բևեկնի, և՛ շուշմայի, որին մենք կնճութ ենք անվանում, և՛ ամենայն ինչի մեջ անխափան հանգչում են Սուրբ Հոգու շնորհները: Սուրբ Ավազանի մկրտությունը կատարվում է

ինչպես Հորդանանի ջրերի մեջ, այնպես էլ մնացյալ բոլոր ջրերում, ինչպես Սուրբ Հոգու շնորհները հանգչում են ձիթենու ձեթի մեջ, քանզի զորությունը ոչ թե ձիթենունն է, այլ՝ Սուրբ Հոգունը: Իսկ եթե պատվականության համար վիճենք, ապա Մովսեսը կովերի յուղը ավելի պատվական համարեց, քան ցանկացած յուղ:

Արդ, իր պատվականության համար կովերի յուղը օգտագործում են այն ունեցողները: Եվ հիմարություն է պնդել, թե որքան քիչ է նրա մեջ երկրավոր (կենդանական) նյութը, այնքան մեծ է նրա մեջ Աստուծո զորությունը: Եվ եթե ոչ, ապա ինչո՞ւ խաչը ոսկուց կամ պատվական քարերից չպատրաստեց, այլ՝ փայտից, որպեսզի Աստուծո զորությունը երևա և ոչ թե նյութի պատվականությունը: Ինչո՞ւ անարգ քարայրի և մսուրի մեջ բազմեց և ոչ ոսկեձեղուն տաճարի և ականակուռ բազմոցի մեջ. որպեսզի ամենայն ինչի մեջ Աստուծո զորությունը մեծարվի և ոչ թե՝ նյութի առավելությունը, նաև՝ Աստուծո փառքը հռչակվի խղճուկ և ստորին երկրավոր առարկաների միջոցով. ինչպես տխմար և տգետ առաքյալներին ընտրեց և նրանցով Իր զորությունը ցույց տվեց աշխարհին: Այդպես էլ ամեն տեսակ ձեթով. [այն] դրվում է սուրբ սեղանի առջև, և սուրբ նշանով՝ Քրիստոսի փրկական Խաչով, հայրապետական ձեռքը, քահանայական դասակցությամբ աղոթելով օրհնում է, և Սուրբ Հոգին հանգչում է (նրա վրա), և ձեթը լցնում Իր աստվածային շնորհքով՝ կատարելությամբ օծելու համար ավազանում մկրտվողներին, ինչպես Ինքը խոստացավ, թե ուր որ երկու կամ երեք հոգի Իմ անունով հավաքվեն՝ Ես այնտեղ եմ, նրանց մեջ (Մատթ. ԺԸ 20):

Եվ դարձյալ ասում է. «Ինչ որ Իմ անունով խնդրեք հավատքով, կստանաք» (Հովհ. ԺԶ 23): Ապա ուրեմն՝ ուղիղ հավատք է պետք ու ճշմարիտ աղոթք, և կկատարվեն Աստծուն (առաքված) բոլոր խնդրվածքները. (և սա) ոչ թե այս կամ այն ձեթի, այլ միայն Աստուծո հաճելի նրանց շնորհիվ, ովքեր (հավատքով-Հ. Ք.) կխնդրեն Նրանից, անխտիր կօրհնվի և կսրբվի ամեն տեսակ ձեթ՝ սուրբ մկրտությունը կատարելու համար, ինչպես ամեն տեսակ ջուր կիրարկվում է մկրտության ավազանում՝ Հորդանանի նմանությամբ: Իսկ եթե մեկը համառի պնդել, թե օրենքը հրամայում է ձեթը ձիթենուց պատրաստել, ապա նախ այս կասենք, որ Հրեաստանում ձիթենու ձեթը շատ էր, այդ պատճառով էլ կարգադրեց հեշտ գտնվողը պատրաստել և ոչ թե այլ պատճառով:

Դարձյալ նկատենք. եթե օրենքներից մեկը հարկադրված ես կատարում, պարտավոր ես նաև բովանդակ օրենքը կատարել, ինչպես Պողոս [առաքյալն] է ասում Գաղատացիներին հղած [թղթում]: Եթե բոլորը (օրենքները - Հ. Ք.) պարտադիր չէ կատարել, (ապա նրանցից) մեկը՝ նույնպես, սակայն հոգևորը կատարում ենք ավելիով, ինչպես Ավետարանից հրաման ստացանք: (...)

(...) Իսկ դուք, այս պատվիրանը զանց առնելով, միայն ձիթենու ձեթն եք վկայաբերում, ինչը հիշատակելը մեծ բան չէ, և անտեսելն էլ ամենևին չի վնասում, որովհետև ամեն տեսակ ձեթ Աստծունն է, ինչը օրհնում ենք Քրիստոսի սուրբ Խաչով, ինչով հիշատակվում է Տիրոջ կենարար մահը, և աղոթելով տյառնագրում, կնքում ենք այն (յուղը), ընդունում է Սուրբ Հոգու շնորհները և մկրտվածներին լիալրում է սուրբ օծությամբ (...):

Իսկ հույները, այս զորավոր պատվիրանները թողած, հիշում են ձիթենու ձեթը, ինչը մեկն իսկ չի հիշում, որովհետև Դիոնիսիոս Արիսպագացին հիշում է միայն յուղը՝ քահանայապետի կողմից Մյուռոնի օրհնությունը կատարելիս, բայց չի հիշում նրա այս

կամ այն անունը: Նույնպես և Տիրոջ եղբայր Հակոբոսը ասում է, թե յուղով օծում են նաև փրկական Խաչը՝ Տիրոջ անունով (Հակ. Ե 14), որ օրհնում է յուղը, որ (սակայն) մնում է իբրև յուղ: Ուրեմն՝ ոչ թե ինքը՝ յուղը զորություն ունի առանց Տիրոջ անվան. քավ լիցի, այլ Տիրոջ անունն է զորացնում յուղը: Ինչպես նաև Պողոսն է ասում, թե՝ «Ամենայն ինչ սրբվում է Աստծո խոսքով և աղոթքով» (Ա Տիմոթ. Դ 5): Ահավասիկ, չասաց այս կամ այն (բանը), այլ՝ «ամենայն ինչ»: Իսկ դուք ձիթենու ձեթն եք հիշում, իբր թե Աստված միայն նրան է իշխանություն տալիս և ուրիշ բաների՝ ոչ (...): Բայց մենք արձանագրում ենք, թե Աստծո զորության համար ամեն տեսակ ձեթ մեկ է: Եվ ինչպես Մյուռոնի օրհնությունը ընդունել ենք մեր Սուրբ Լուսավորչից և Սուրբ Սահակից, այդպես էլ կատարում ենք մինչ այժմ և կատարելու ենք միշտ:

Ամեն տարի, երբ օրհնում ենք Մյուռոնը, հին Մյուռոնը խառնում ենք նորի մեջ և այնպես օրհնում: Սուրբ Գրիգորից և սուրբ Սահակից սկսած մինչև այսօր նույն Մյուռոնը շարունակվում և գալիս է մինչև այժմ՝ միշտ ընդունելով Սուրբ Հոգու շնորհները՝ սուրբ օծությամբ շնորհագործում Ավազանի մեջ մկրտվածին՝ Հոր և Որդու անվամբ. Որդու կամավոր և կենարար մահվամբ, Սուրբ Հոգով, քանզի սրա մեջ է հավատքով իրագործվում Սուրբ Մկրտությունն ու մեր միավորվելը միասնական Սուրբ Երրորդության հետ, որին փառք և զորություն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից (...):

Անանիա Սանահնեցի (ԺԱ դ.)
«Հակաճառություն ընդդեմ երկաբնակների»

- Է -

(...) Բայց երբ օրհնում ենք Խաչը և վրան ջուր ու գինի ենք հղում, ոչ թե քարն ու փայտը դարձնում ենք արքայության որդիներ, այլ Քրիստոսի Խաչի օրինակն ենք դրոշմում նրանց վրա (...):

Եվ ինչո՞ւ է քեզ անարժան թվում Մյուռոնը մերձեցնել Խաչին. քանզի Քրիստոս (Ինքը) Խաչին բևեռվեց, և (այդ) անարժան չհամարվեց, այլ սրբեց այն և տվեց հավատացյալներին՝ որպես պահապան, ապա ի՞նչ վնաս բան կա, եթե Մյուռոնը մոտեցնենք Խաչին:

Տեր Գևորգ Հայոց Հայրապետի (կթղ. 1058-1059 թթ.)
և հոգեշնորհ փիլիսոփայի պատասխան թուղթը
ասորիների պատրիարք Հովհաննեսին

- Ը -

(...) Իսկ երբ ընդունողների (հավատացյալների) տկարության պատճառով Հոգու տեսանելի շնորհները նվազեցին, հենց նույն Հոգուց շարժված՝ գեղեցկապես հիմնակարգեցին, որպեսզի ընթերցվեն հոգեկիր մարգարեների, առաքյալների և ավետարանիչների խոսքերը ստեղծված Խաչի դիմաց (...) և Խաչի վրա կողահոս բխման նմանությամբ Խաչը լվան ջրով և գինով և որպես Հոգու սրբության օծություն՝ այն դրոշմեն Մյուռոնով (...):

Եվ եթե հակառակորդներից մեկն ընդդիմաբանի Մյուռոնի օծման կապակցությամբ՝ իբր թե այն ավելորդ ու անտեղի է, այս մասին կասենք, որ Մյուռոնն ունի Սուրբ Հոգու

զորության խորհուրդը: Եվ եթե Հորն ու Սուրբ Հոգուն էակից ամենայն ինչի անկարոտ մարմնացյալ Բանն անպատշաճ չհամարեց կամ նվաստություն [չնկատեց] Սուրբ Հոգու՝ աղավնու կերպարանքով Իր իսկ վրա իջեցնելը Հորդանանում, այլ նույն Հոգով կենցաղավարեց անապատում (...), ապա որքան պատշաճ է մեզ սոսկական նյութը, որ վերցնում ենք նյութական բաներից, օծել նույն իմաստով, որպեսզի նույն Հոգու զորությունն առնի:

Ներսես Շնորհալի (մոտ 1100-1173 թթ., կթող.՝ 1166-1173 թթ.)
«Նամակ՝ հղված Միջագետքի ասորիներին՝
Ամայք նահանգի բնակիչներին»

***

Այլ նորաձև հովիվը
(Ս. Գրիգոր Լուսավորիչը)
Առնելով Իր նորակերտ հոտը
Եվ ընտրելով՝ Եփրատի ափն հասավ:
Եվ հանդարտահոս գետը շրջվելով,
Կարկաչասահ պտույտ գործելով՝
Լայնատարած դաշտի նման ծավալվեց,
Եվ նորագույն հոտն այնտեղ բերելով՝
Հեղեց (Սուրբ) Հոգու օծման յուղը:
Երկնքում երևաց լույսի սյուն՝
Գերազանցելով արեգակին:
Եփրատը դարձավ նոր Հորդանան՝
Վկայված հայրական ձայնով,
Որ որդեգրելով մարդկանց որդիներին՝
Դարձյալ Եդեմ հրավիրեց:

Ներսես Շնորհալի
«Վիպասանություն»

- Թ -

Երբ նրան (Թադեոս առաքյալին - Հ. Ք.) վիճակվեց Հայաստան աշխարհը, տրտմեց և ասաց. «Այդ երկիրը ցուրտ է, և մարդիկ՝ բիրտ»: Եվ ասացին. «Մի՛ ընդդիմացիր [Սուրբ] Հոգուն»: Եվ նրան տվեցին օծման յուղը, որ օրհնել էր Քրիստոս, և գեղարդը: Եվ ուրիշ ազգեր չունեն այս պարծանքը՝ մեր Մեռոնը, որ հանապազ և միշտ նույն շնորհն ունի:

Վանական Վարդապետ (1181-1251)
«Գովեստ հայ ազգի»

- Ժ -

Նա, ով պատճառ բռնելով ասում է, թե Հայոց Մեռոնը անկատար է և դրա համար անպատվում այն, շատ ստություն ունի: Մինչդեռ իրենց Մեռոնը շատ են պատվում [ասե-

լով], թե նրա մեջ բալասանի ձեթ և այլ անուշահոտ նյութեր են խառնված խունկի հետ: Եվ կանոնակարգում են Մեռոնը պատրաստել խառնուրդով, ինչպես Պատարագի սուրբ հացի մեջ՝ խմոր (են խառնում) և (հաղորդության) բաժակի մեջ՝ ջուր: Եվ գրված չէ, թե ձիթապտղի ձեթն է անհրաժեշտ օրհնել, որովհետև գավառներում ձիթապտղի ինչ ձեթ պատահի, այն է ընդունելի. թե՛ շուշմայի և թե՛ ուրիշ տեսակների:

Աստված Մովսեսին հրամայեց խակակութ ձիթապտղի յուղ պատրաստել, համաձայն տվյալ գավառում եղածի: Բայց ինչպես Պատարագի հացն է օրհնություն ստանալով դառնում Քրիստոսի մարմին, նույնպես ձեթն է օրհնություն ստանում որպես Հոգու նշանակ, քանզի Սուրբ Հոգին է, որ օրհնում է. և սրա առհավատչյան թե՛ Պատարագի և թե՛ Մեռոնի անուշահոտ լինելն է:

Եվ եթե մեկն օրենքը վկայակոչի, ասելով, թե չորս (տեսակ) անուշահոտ խունկ խառնեցին օծության յուղի մեջ, [կասենք]. բայց այն վայել էր Օրինակին, և Ճշմարտությանը հարկավոր չէ նման խառնուրդ, քանզի այնտեղ ամենայն ինչ մարմնավոր է և այստեղ՝ հոգևոր (...):

Մխիթար Գոշ (մահ. 1213)
«Հավատքի ուղղափառության մասին»

- ԺԱ -

(...) Ամենափրկիչն ու ամենագթած մեր Բժիշկը՝ Քրիստոս, ավազակների ձեռքն ընկածի մասին իր առակախոսության մեջ երկու կարգի հարկավորագույն խորհուրդ ի հայտ բերեց՝ վերքերի վրա ձեթ և գինի հեղելով, որպեսզի դրանցով, այսինքն՝ գինով և ձեթով բժշկի, այսինքն՝ մկրտությամբ, որ կատարվում է Մեռոնի աստվածային յուղի միջոցով և իր կենդանարար արյամբ, որ գինու միջոցով եղավ մեր փրկության համար: Արդ, ամենառատ և գթասիրտ մեր Բժիշկը՝ Քրիստոս, մեզ ավանդեց նաև այլ զանազան և պես-պես կենդանարար խրատներ ու հորդորներ, տարբեր պատվիրաններ, փրկության, օգտակարության զանազան եղանակներ և ճանապարհներ, ինչպես նաև՝ եկեղեցու յոթ շնորհները, որ ամբողջապես օգտակար, առողջարար, փրկագործ և կենդանացուցիչ են, սակայն այս երկուսը, այսինքն՝ մկրտությունն ու հաղորդությունը, բացառիկ են, որովհետև մեր բնության անհրաժեշտ գոյացուցիչներն ու պահպանիչներն են՝ մեկը՝ ծնելով և մյուսը՝ կենդանի պահելով. այս պատճառով Տերն այս երկուսը հարկադրական կանոնով և անեղծանելի կնիքով վճռեց, որ բոլորը ընդունեն և հաղորդվեն (...):

Բայց այն հոգիները, որ մեկտեղված են մի վայրում առանց Աստծո, այսինքն՝ առանց մկրտության ու հաղորդության, չեն կարող փրկվել և ոչ էլ նույնիսկ քրիստոնյա դառնալ, որովհետև մեկը (մկրտությունը) ծնունդ է, մյուսը (հաղորդությունը)՝ ծնվածի պահպանություն: Այս պատճառով առանց մեկմեկու չեն լինում: Ըստ այդմ սուրբ Դիոնիսիոսը սուրբ հաղորդությունն ու Սուրբ Մեռոնը համակարգ (հավասար) է անվանում, որովհետև իրարով են [գոյավորվում] և իրարով են սրբազնագործվում, քանզի Պատարագը չի սրբազնագործվում առանց Մեռոնի, և ոչ էլ առանց Պատարգի՝ Մեռոնը: Ուստի ասում է. «Քահանայապետության բոլոր սրբազնագործությունները Մեռոնով են կատարվում, ինչպես Եկեղեցին, Սեղանը, Խաչը, Քահանան, և բոլոր եկեղեցականները Մեռոնով են օծվում և սրբվում»: Այս պատճառով և եկեղեցու բոլոր խորհուրդների մեջ մկրտությունն

ու Մեռոնի օծումը նախադաս է՝ իբրև դուռ և ճանապարհ մյուս բոլորի: Ինչպես սուրբ Նարեկացին է ասում. «Քահանայությունը չի կարող ձեռնարկել [մոտենալ] անկոխելի տեղին, այսինքն՝ Սեղանի սրբազան խորհրդին մերձենալ, եթե Մեռոնի օծմամբ նվիրագործված չէ»: Մի ուրիշ տեղ սուրբն ասում է, թե՝ «Այս հոգեկիր Մեռոնը իրեն հավասար կամ ընկեր չունի, քանզի բոլորից առավել է, այլ՝ միայն Աստվածային Խաչիդ և Աստվածային Արյանդ հավասարությամբ գերապատիվ եղավ»: Ուրեմն, ինչպես առանց Քրիստոսի արյան և Խաչի չկա փրկություն, նույնպես և առանց աստվածային այս Մեռոնի չկա հարություն և որդեգրություն Հայր Աստծուն: Ինչպես Հացի և Գինու խորհրդի միջոցով աներկբայորեն հավատում ենք, թե Քրիստոսի ճշմարիտ մարմինն ու արյունն ենք ճաշակում փրկության համար և սուրբ Ավազանի ջրի մեջ ծնվում իբրև Աստծո որդիներ, այդպես էլ աստվածագործ Մեռոնի օծումով ստուգապես հավատում ենք, որ սրբագործ այս յուղի միջոցով Սուրբ Հոգին հանգչում է մեր մեջ, ստանում հավիտենական կենդանություն և աստվածային որդեգրության կնիք, համաձայն Պողոսի, թե «Որդեգրության Սուրբ Հոգի ստացանք, որով աղաղակում ենք Աբբա՝ Հայր» (Հռովմ. Ը 15):

Արդ, սկզբնապես այս յուղը կոչվում էր շնորհաբաշխ Մեռոն, որ ըստ բանաստեղծական մեկնաբանության նշանակում է մայր, որովհետև ինչպես մայրն է բնականորեն սիրում և խնամում իր որովայնի ծնունդը և գորովագութ ըղձանքով միշտ պահում և պահպանում ամեն տեսակ վնասակար արկածներից, նույնպես և այս սուրբ Մեռոնը հավատացյալներին և սուրբ Ավազանի շնորհիվ Մկրտությամբ Իրենից ծնվածներին սիրում, հոգևոր խանդաղատանք է տածում նրանց նկատմամբ և գորովազեղ ծնողական գթով պահպանում և փրկում է աներևույթ թշնամու ամեն տեսակ արկածներից: Համաձայն Նարեկացու, ինչպես խավարն է փախչում և հալածվում լույսից, ցավը՝ առողջությունից, մահը՝ կյանքից և գիշերը՝ ցերեկից, այդպես էլ տիրապարգև յուղից իսպառ մերժվում և մեկուսանում են բոլոր չարությունները:

Դարձյալ այս սուրբ յուղը կոչվում է Մեռոն, այսինքն՝ մեռցնող, քանզի Սուրբ Մեռոնի շնորհիվ սուրբ Ավազանի մկրտությունն ու ծնունդը Քրիստոսի մահվան և Հարության խորհուրդն ունեն: Որովհետև երեք անգամ ջրի մեջ ընկղմվելը խորհրդանշում է Քրիստոսի երեքօրյա թաղումը, իսկ ջրից դուրս գալը՝ Հարությունը (...):

Դարձյալ, այս Սրբալույս յուղը կոչվում է Մեռոն, այսինքն՝ մռայլ, մթին և խավար, քանզի աստվածային գրոց սովորությունն է աչքին և մտքին անհասանելի և անըմբռնելի [իրերը] խավարով ու մթով նշանակել՝ անմատչելի լինելու պատճառով, ինչպես օրինակ՝ Աստծուն, որ համակ լույս է և անմատչելի լույսի մեջ բնակվող (...):

Դարձյալ աստվածահրաշ այս յուղը կոչվում է Մեռոն, այսինքն՝ մռայլ, մթին, իբրև անիմանալի, անըմբռնելի լինելու պատճառով խավարի, մռայլի մեջ ծածկված (իրողություն), ըստ Նարեկացու, որ ասում է. «Որովհետև այս իրողությունը հավետ անքննելի է, քան բոլոր սրբությունների սրբությունները»:

Դարձյալ, այս սուրբ յուղը կոչվում է լույս կամ Սրբալույս, սրբող և Աստծո նման լուսավորող (...): Այս պատճառով Մեռոնը կոչվում է սուրբ և լույս՝ իբրև Արարիչ Աստծո պատկերակից: Արդ, ինչպես Աստված և արեգակը իրենց լույսը մշտապես տարածում են արարածների վրա և բոլորին անխտիր լուսավորում, նմանապես և այս Սրբալույս Մեռոնը աստվածային շնորհների լույսը միշտ և առատորեն արձակում է հավատացյալնե-

րի հոգիների մեջ և լուսավորում բոլորի հոգիները և սրբում մեղքերից (...):

Անանուն (ԺԵ դարից առաջ)
«Քարոզ Սրբալույս Մյուռոնի մասին»,
Ըստ այն խոսքի, թե՝
«Եթե մեկը վերստին չծնվի հոգով և ջրով» (Հովհ. Գ 3)

- ԺԲ -

(...) Իսկ Սուրբ Մյուռոնով օծվելն այն է ցույց տալիս, որ երբ Քրիստոս մկրտվեց, Սուրբ Հոգին իջավ նրա վրա, որպեսզի, իբրև մեր գլուխ, իր անդամների՝ հավատացյալների վրա հեղի (այն)՝ իբրև ազնիվ յուղ, որ իջնում է Ահարոնի գլխին (Սաղմ. ՃԼԲ 2): Այսպես էլ ջրով Քրիստոսի մեջ ենք մկրտվում և Աստծո որդիներ կոչվում և յուղով միավորվում ենք Սուրբ Հոգու շնորհներին: Եվ իմանալու է, որ ճակատի, սրտի, թիկնամիջի օծումը դրոշմ է (կոչվում): Եվ այն, որ մեր հինգ զգայություններն է օծում, գաղտնորեն [ակնարկում] է օծման խորհուրդը: (...)

Եվ եթե մեկն ասի, թե պարտ է, որ քահանայի ձեռքը մոտենա զգայարաններին, կպատասխանենք, որ քահանայի ձեռքը հարաժամ մոտենում է քրիստոնյաների գլխին, որ արմատն է բոլոր զգայությունների: Եվ քահանայի ձեռքը օծված և սրբված է Մյուռոնով և տալիս է սրբության շնորհ, ում մոտենում է (...):

Եթե մեկն ասի, թե մկրտությունից առաջ եղած առաջին օծումը չունենք, կպատասխանենք, որ այդ ևս գաղտնորեն ունենք, ինչպես այն, որ Ավազանի ջրի մեջ Մյուռոնը խառնվում է Խաչի նմանությամբ նախ այս խորհրդի պատճառով: Երկրորդ՝ որովհետև մեր մկրտությունը ոչ թե Հովհաննեսի ջրի մեջ է, այլ՝ Քրիստոսի մահվան: Այդ պատճառով այլևայլ յուղ չենք օգտագործում, այլ միայն Սուրբ Մյուռոն, որպեսզի քահանաները չհամարձակվեն ձեթօրհնեքը կրկին եկեղեցի մտցնել: Այլ Ավագ Հինգշաբթի ենք օրհնում յուղը, որպեսզի Սուրբ Մյուռոնը համբակների ոտքերին չմերձենա: Դարձյալ այս օծման խորհուրդը վերաբերում է ննջեցյալ քահանաներին, որովհետև նրանց օծում ենք իբրև ըմբիշներ, որպեսզի գոտեմարտեն օդի չար ոգիների դեմ:

Եվ եթե մեկն ասի, թե միայն մարմինն է օծվում՝ ինչպե՞ս է հոգու վրա ներգործում, կպատասխանենք, երբ միավորված էր մարմնի հետ, բոլոր մարմնավորները միությամբ էին ներգործում նրա վրա, իսկ այժմ, որ բաժանված է, բոլոր սրբությունները բաժանբաժան են հասնում նրան (...):

Եվ եթե մեկն ասի, թե դրոշմ չունենք, որովհետև եպիսկոպոսը չի տալիս, ինչպես ֆռանկաց ազգը, կպատասխանենք, թե համաձայն հունաց ազգի՝ ինչպես քահանան պատարագում և մկրտում է, այնպես էլ դրոշմում է, ըստ սուրբ Դիոնիսիոսի, որ քահանայապետ է կոչում նրան, ով պատարագում, մկրտում և դրոշմում է (...):

Դարձյալ ասենք, որ մեր քահանաները իշխանություն ունեն դրոշմելու, որ շնորհում է նրանց եպիսկոպոսը. ուրեմն, իշխանակից են մեր քահանաները և նրանց եպիսկոպոսները (...):

Գրիգոր Տաթևացի (1346-1409 թթ.)
«Քարոզ եկեղեցու յոթ խորհուրդների մասին»

- ԺԳ -

Իմանալու է, որ առաքինությունն ու սրբությունը աստվածատեսակ նմանություն են, ըստ կարողության: Իսկ աստվածային առաքինությունը գաղտնի է, կատարյալ և անարատ, այսինքն՝ անկեղծ: Եվ քանի որ գաղտնի է՝ շատերի համար անիմանալի է: Եվ իրապես, աստվածային բարիքը բոլոր արարածների համար գաղտնի է: Եվ քանի որ կատարյալ է և ոչ անկատար՝ բոլորին լիալրում է կատարելապես: Եվ քանի որ անարատ է՝ չի երևում տեսանելիքին, այլ ըստինքյան (առկա է) իր մեջ: Այս է ցույց տալիս և Սուրբ Մյուռոնը, որ գաղտնորեն է պարունակում հոտը և անհայտ է հոտոտելիքին, (սակայն) կատարյալ և անարատ (բարիքը նրա մեջ) առկա է ըստինքյան: (...)

Բայց այստեղ հարցնելու է, թե ի՞նչ է նշանակում Մյուռոնի անուշ հոտը: Ասենք, որ Մյուռոնը կազմված է բազում անուշահոտ ծաղիկներից, որ Հիսուս Քրիստոսն է, ըստ այն խոսքի, թե՝ «Թափված յուղ է Քո անունը» (Երգ Ա 2)՝ հավաքված բազում մասերից՝ հոգուց, մարմնից և այլն: Զարդարված անմեղությամբ՝ նա է «Հեսսեի արմատից բխած ծաղիկը» (Եսայի ԺԱ 1): Իսկ Մյուռոնից բխող անուշ հոտը մարմնից առաջ եկած Աստվածություն է, այլև մեզ վրա տարածված սրբության առաքինություն, նաև Քրիստոսի ձեռքով ընծայաբերված անուշահոտ Սուրբ Հոգին: Քանզի Սուրբ Հոգին բխում է Հորից, ընդունվում է Որդու կողմից, որովհետև Որդու միջոցով է ընծայաբերվում բոլոր արարածներին: Իսկ հոտոտելիքից պահանջվում է առողջ լինել հոտից՝ անուշ լինել, և հետո անուշահոտություն կլինի:

Նույնպես և մեր մտքի իմանալի հոտոտելիքին անհրաժեշտ է առողջ լինել և զերծ արտաքին ու ներքին ախտերից, որից հետո (միայն) նա կառնի (Սուրբ) Հոգու անուշահոտ բուրմունքը: Եվ ինչպես նախ հոտն է բուրում և բարեկիր դարձնում և ապա սնուցում ու հետո դառնում ախորժելի, քաղցր և առանց այլայլության, նույնպես և Սուրբ Հոգին, երբ իջնում է մտքի մեջ, բարեկիր է դարձնում խորհուրդը և ապա սնուցանում նույն բանը և աճեցնում ու հետո դառնում ախորժելի, քաղցր ու առանց այլայլության, որովհետև անբաժանելի է մնում իբրև հաստատված կնիք:

Այսպես է աստվածային իմաստն ու բանը. երբ իջնում է հոգու մեջ, երջանկությամբ է լցնում այն: Նույնպես և առաքինությունն ու սրբությունը մաքրում են ընդունողներին և (նրանց) դարձնում աստվածանման:

Իսկ (Մյուռոնօրհնեքի) արարողությունը Պատարագի նման է: Խունկերի բուրումով քահանայապետն իջնում է եկեղեցու մեջ և դառնում դեպի բեմը. սա ցույց է տալիս նախախնամական զորությունը, որ գալիս է մինչև հետինները, և իր հատկությունից, որ Աստված է՝ անեղ և անմարմին, չի խոտորվում, ինչպես ասվում է Պատարագի մեջ: Ինչպես Պատարագի ժամանակ չմկրտվածներին, ուխտացյալներին և ապաշխարողներին հանում են եկեղեցուց, որովհետև տեսությամբ անկատար են, այստեղ նույնպես կլսեն ընթերցումների խոսքը, որպեսզի դառնան դեպի խրատը և հետո դուրս գան:

Դրանից հետո արծաթե ամանով վերցնելով սուրբ յուղը՝ դնում է սուրբ Սեղանի վրա և տասներկու թևերով ծածկում է, այսինքն՝ թևատարածումով, տասը մատներով և երկու բազուկներով, և տասներկու քշոցներով կամ երկու քշոցով՝ վեցական թևերով հովանի անող սերովբեների պատկերով, որ անում է տասներկու: Արդ, քահանայապետն անընդմիջաբար տեսնում է Սուրբ Մյուռոնը, քահանաները կանգնած են շրջան կազմած, իսկ սարկավագները թափանցելով տեսնում են (սուրբ Մյուռոնը) անթիվ քահանաների

միջից: Իսկ ժողովուրդը հեռվից ոչինչ չի տեսնում, այլ միայն քահանաներին, սարկավագներին և արարողությունը:

Քահանայապետը նշանակում է Աթոռների առաջին դասը, որ անընդմիջաբար ընդունում է Քրիստոսի բուրմունքը: Իսկ քահանաները նշանակում են (հրեշտակների) միջին դասը, սարկավագները, որ նրանց միջնորդությամբ թափանցելով տեսնում են (նշանակում են հրեշտակների վերջին դասը): Իսկ հեռու ժողովուրդը մարդկանց բազմությունն է, որ այս երկրի վրա խորհրդանշում է հրեշտակներին:

Դարձյալ աստվածային քահանայապետը տոհմակից է Քրիստոսին՝ անընդմիջաբար նրանից առնելով իշխանությունն ու շնորհները, համաձայն կարգի, տալիս է քահանաներին ու սարկավագներին, և նրանք վերջում ժողովրդին են շնորհում առաքինությունը, սրբությունը և այլ բաները:

Դարձյալ քահանայապետը բաց երեսով տեսնում է Տիրոջ հանդերձյալ փառքը, և այն, համաձայն կարգի, բացափայլում է մինչև իր վերջին հետևողները: Ինչպես, օրինակ, այժմ նույն կարգին են պատկանում հրեշտակների դասերը, նույնպես այն ժամանակ՝ մարդկանցից սրբերն ու ընտրվածները:

Այլ իմանալու է, որ քշոցը երկու դեմք ունի, նաև՝ թևերը, շուրջկալը: Եվ անունը նշանակում է սերովբեների գերագույն էությունը, որ առավել է ուրիշներից: Նախ՝ որովհետև քշոցը երկու դեմք ունի և կոթ. սա խորհրդանշում է առաջին դասը (Սերովբեներ, Քերովբեներ, Աթոռներ), որ առնում է Քրիստոսից և երկատեսակ կերպով փոխանցում մյուս դեմքին, այսինքն՝ միջիններին (հրեշտակների միջին դաս՝ Տերություններ, Զորություններ, Իշխանություններ), և նրանք էլ՝ վերջիններին (հրեշտակների վերջին դաս՝ Պետություններ, Հրեշտակապետեր, Հրեշտակներ), որոնք (քշոցի) կոթերն են, իսկ նրանք էլ (փոխանցում են) փայտե ստորին կոթին, այսինքն՝ մեզ, որ այլ բնություն ենք և նրանցից խոնարհ: Իսկ սերովբեների տասներկու թևերը ցույց են տալիս նրանց պատվի չափը: Եվ այս ունի երկակի իմաստ: Նախ՝ որովհետև յուրաքանչյուր դաս տասներկու գունդ է, ըստ Տիրոջ (խոսքի). «Հրեշտակների տասներկու գնդեր կիջեցնեմ» (Մատթ. ԻԶ 53): Այս խորհրդով տասներկու առաքյալներ ընտրեց: Այստեղից էլ, թե՝ սերովբեներն իրենց դասի մեջ առավել են, քան տասներկու գնդերը:

Երկրորդ՝ որովհետև սերովբեները վարից վեր ըստ կարգի տասներկուսն են, այսինքն՝ անշունչ էություններ, կենդանիներ և բանականներ, մենք, հրեշտակների ինը դասերը, և նրանք առավել են, քան բոլորը: Քանզի սուրբ Դիոնիսիոսը տեղ-տեղ վերին (դասի մեջ) Աթոռներին է նախակարգում և այլուր՝ սերովբեներն ու քերովբեները, որովհետև համակարգ են համապատիվ այս երեք դասերը, քանզի անընդմիջաբար են վայելում բոլոր աստվածային պարգևները: Իսկ «սերովբե» անունը, որ եբրայերենից թարգմանված նշանակում է կիզիչ կամ ջեռուցիչ, այն է ցույց տալիս, որ (նրանք) անմիջաբար լուսավորված են և ջերմացած աստվածային սիրո մեջ և այլոց լուսավորում և ջերմացնում են աստվածային սիրով: Իսկ սուրբ յուղի շուրջ լինելը նշանակում է աստվածային բուրմունք և լուսափայլություն: (...)

Իսկ յուղի սրբությունը, որ (կա) քահանայապետական խոսքի մեջ, խորհրդանշում է Քրիստոսին, որ սրբվեց Հորից և ըստինքյան՝ Սուրբ Հոգուց. Հորից՝ իբրև ներգործական պատճառից, Սուրբ Հոգուց՝ իբրև գործիական (պատճառից) և ըստինքյան՝ իբրև սրբա-

գործող և նյութական պատճառից:

Հայրը սրբող է, Որդին՝ սրբված, Սուրբ Հոգին՝ սրբություն՝ իբրև օծված, օծող և օծություն: Նմանապես և քահանայապետը, յուղը և սրբությունները: (...) Եվ քանի որ (Որդին) Աստված է՝ նույնպես սրբվում է Հոր և Սուրբ Հոգու հետ ոչ թե զատ-զատ, այլ նույնականորեն. Ինքը սրբվում է ըստինքյան, Ինքը սրբում է Իրեն և Ինքը սրբությունն է մեր բոլորի, ինչպես սուրբ յուղն է սրբվում և սրբում բոլորին: Եվ ինչպես սուրբ Սեղանը Հիսուս է, Մյուռոնը նույնպես Հիսուս է, և (ինչպես) Սեղանն է սրբվում, այնպես էլ՝ Մյուռոնը. այսպես Ինքը սրբում է Իրեն: Եվ դարձյալ. ինչպես Պատարագն է Ինքը, նաև սուրբ Սեղանն է Ինքը, ինչպես սուրբ Սեղանն է սրբում Պատարագը, նույնպես Մյուռոնն է սրբում սուրբ Սեղանը, և Խոսքն էլ սրբում է Մյուռոնը, իսկ Պատարագն էլ սրբում է մեզ:

Այսպես Քրիստոս սրբում է Ինքն Իրեն և Ինքն է մեր սրբությունը: Իսկ Հիսուսի սրբվելը սրբությունների հայտնությունն է, որովհետև այն, որ բնությամբ գաղտնորեն ուներ, մեզ հայտնվեց մկրտության ժամանակ: (Մկրտության) ավազանի ջրի մեջ յուղի խաչանիշ հեղումը նախ ցույց է տալիս, թե այս մկրտությունը ոչ թե Հովհաննեսինն է, այլ Քրիստոսինը: Երկրորդ՝ որովհետև ջուրն Ինքը Քրիստոս է, Մյուռոնը (նույնպես) Ինքն է. Ինքը սրբում է Իրեն և սրբում մկրտվողին: Եվ ինչպես Քրիստոսի մեջ մկրտվողը օծվում է սուրբ յուղով, որ Սուրբ Հոգին է, այնպես էլ բովանդակ օրինակով տես Որդուն, որ սրբվում է Ինքն Իրեն Հորից և Սուրբ Հոգուց: (...)

Առաքել Սյունեցի (ծն. մոտ 1350-1425 թթ.)
«Քարոզ Մյուռոնի օրհնության մասին»

- ԺԴ -

Այն յուղը, որով հնում օծվում էին քահանաներն ու թագավորները, եփված էր ծաղկանոցի ծաղիկներից, հիրիկից, եղեգից, կինամոնից, զմուռսից: Հիրիկը ծաղիկ է, որ գտնվում է Եթովպիայում՝ Փիսոն գետի ափին, և ունի զորություն, որի հոտից հալածվում են դևերը: Իսկ եղեգը գտնվում է Սինա [լեռան] վրա. խիստ անուշահոտ է և մարդկանց մեջ հրաշքներ կատարող. ցավեր է բուժում, մանավանդ՝ քոսն ու սունկը: Եվ կինամոն ծաղիկը գտնվում է Թեբայիդում (Եգիպտոս). տեսքով շատ սքանչելի է. երբ քնած մարդու սրտի վրա ես դնում՝ նա իր սրտի մեջ եղած ամեն բան պատմում է առանց իմանալու: Եվ եթե եռման ջրի մեջ գցես՝ անմիջապես սառեցնում է: Զմուռսը Բաբելոնում է գտնվում. հալվեի, խունկի նման է, երբ օծում են մեռյալի մարմինը, այն պահում է անապական և անփուտ: Դառն է իբրև լեղի. քացախով կամ գինով տալիս՝ թմրեցնում է:

Անանուն, [Յուղի մասին]

- ԺԵ -

«Վերցրու անուշահոտ համեմունքներ. զմոնենու հինգ հարյուր սիկղ ընտիր ծաղիկներ, դրա կեսի չափ՝ երկու հարյուր հիսուն սիկղ անուշաբույր կինամոն, երկու հարյուր հիսուն սիկղ անուշաբույր խնկեղեգ, հինգ հարյուր սիկղ սրբարանի հիրիկ և ձիթապտղի շուրջ վեց լիտր ձեթ: Դրանցից կը պատրաստես սուրբ օծության համար յուղ այնպես, ինչպես վարպետ յուղագործները ձեթ են պատրաստում: Այն սուրբ օծության համար յուղ թող լինի» (Ելք Լ 23-25):

Հինգ նյութից գոյացած յուղը, համաձայն կարգի [նշանակն է] նախկին հայրերի արդարության: Աբելը զմռնենու ծաղիկն է. նրա ծաղկաձև արյունը հեղվեց: Անուշ կինամոնը օրինակն է Ենովքի զգոն վարքի: Կինամոնի համար ասում են, թե մեկը խոր քնի մեջ լինի (որ նման է մեր բնության թանձրության հետևանքով առաջացած մեղքի թմրությանը)՝ նրան խոսել է տալիս արթուն ժամանակվա նման և հարցերին պատասխանել է տալիս, ինչպես Ենովքը: Այն նաև իջեցնում է տաքությունը, որ տապոտ հնոցի՝ բանսարկուի (սատանայի) նման (մեղքի) տաքությունն է ներարկում հոգու և մարմնի մեջ: Ողջախոհ Ենովքը բանսարկուի այս խորհուրդները վանում է մտքից, նաև՝ հեշտասիրության ցանկությունը: (Ենովքը) մարմնի մեջ նմանվեց երկնքի հրեշտակներին, որոնք չունեն արյան և մարմնի ջերմոտում:

Եղեգի խունկը նշանակն է Նոյի անուշակ արդարության, որ հոտոտելով Տեր Աստված վկայեց նրան և ասաց. «Մարդկային ցեղի մեջ քեզ տեսա արդար» (Ծննդ. Է 1): Հինգ հարյուր սիկղ հիրիկը Աբրահամի հավատքի նշանակն է և հինգ զգայությունների շարժումների: Իսկ ձիթենու յուղը օրինակն է Մովսեսի օրենսդրության, որովհետև ինչպես լույսի ճառագայթն ըստինքյան ձեթը դարձնում է գիշերվա վանիչ, այդպես էլ նրա օրենսդրությունը կռապաշտության խավարից Իսրայելի որդիներին տարավ դեպի լույս, համաձայն այն խոսքի, թե՝ «Քո պատվիրանը ճրագ է, լույս և կյանք» (Առակ. Զ 23):

Բայց ճաճանչավոր ճրագը Կարապետն (Հովհաննես Մկրտիչն) է, որ եկավ օծության յուղով, որովհետև Մովսեսից սկսվեց, որով օծվեցին Ահարոնը, և նրա որդիները լուսատու ձեթով եկան դեպ քահանայություն և թագավորություն մինչև Հովհաննես, քանզի ինչպես խառնված (շնորհները) համաձայն յուրաքանչյուր անվան յուղի անվամբ են արտահայտվում, նույնպես և Մովսեսի ու Ահարոնի կողմից բոլոր օծվածներն, իբրև օրինակ, արտահայտվում են անշառավիղ Հովհաննեսի մեջ:

Հների մասին՝ այսքան, իսկ նորերից գլխավորը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է. իր արյամբ (խորհրդանշելով) Աբելի ծաղկաձև (արյունը), վարքով՝ Ենովքի զգոն (վարքը), (արդարությամբ)՝ իբրև անուշ խունկ՝ Նոյի արդարությունը, որով լցվեց բովանդակ տիեզերքը: Հիրիկը Աբրահամի հավատքն է Տիրոջ նկատմամբ, ըստ այսմ, բոլորս արդարանում ենք հավատքով, համաձայն այն խոսքի, թե՝ «Եվ մենք արդարանում ենք Քրիստոսի հավատքով» (Գաղատ. Բ 16): Իսկ օծության յուղը օրենքի լուսատու ճրագն է, ըստ Մովսեսի, Ահարոնի և Հովհաննես Մկրտչի մարգարեության, քահանայության և թագավորության, որովհետև սրանք օծյալ են: Եվ սրանց ըստինքյան գլխավորեց Քրիստոս, որ թարգմանվում է Օծյալ, Մարգարե, համաձայն այն խոսքի, թե՝ «Տեր Աստված ձեր եղբայրների միջից ինձ նման մարգարե պիտի հանի ձեզ համար» (Գործք Գ 22) և թագավոր, համաձայն այն բանի, թե «Իսկ մեր Աստված հավիտենական թագավոր է» (Երեմիա Ժ 10) և Քահանա, ըստ այն խոսքի, թե՝ «Քրիստոս եկավ որպես հավիտենական Քահանայապետ» (Եբր. Թ 11):

Նրան փա՛ռք հավիտյանս. Ամեն:

Անանուն, [Օծության յուղի մասին]

- ԺԶ -

(...) Սուրբ վարդապետը (Գրիգոր Նարեկացի) այս աղոթական գլխում (Մատյան, Բան ՂԳ) Մյուռոն անունը, որ թարգմանվում է սուրբ յուղ կամ օրհնության յուղ կամ,

ըստ սուրբ Դիոնիսիոսի, Աստծու սրբազնագործություն, օգտագործում է Քրիստոսի Օծյալ անվան համար: Ուստի և սուրբ Դիոնիսիոսը Մյուռոնի օրհնության մեջ ասում է, թե նշանական շարակցությունը, այսինքն՝ ծաղիկների և յուղի բաղադրությունը, իբրև անկերպ էությունների կերպարանք, նույն Հիսուսին է ներկայացնում: Նաև՝ սրբազան նշանների ավանդությունը աստվածային յուղի մաքրագործման ժամանակ սերովբենեերին է նրա շուրջը կարգում և անփոփոխելիորեն Քրիստոսին է հայտնում և պատկերում, որ մեզ նման բովանդակ ճշմարտությամբ մարդացավ: Որովհետև ի՞նչ է ծաղիկներից բաղադրված յուղը, եթե ոչ Հիսուսի Աստվածության յուղը՝ միավորված Նրա ծաղկյալ մարդկությանը, քանզի Նա է ծաղիկը, որ բողբոջել է Հեսսեի արմատի վրա (Եսայի ԺԱ 1) (...):

Ասում է՝ հասարակ յուղը, որ նվիրագործված և սրբագործված չէ, մեր մարմնավոր աչքերն է լուսավորում, նմանապես մաքրված և սրբագործված Մյուռոնի յուղը, որ ներշնչված Սուրբ Հոգու պատկերն է, անիմանալի ձևով մեր իմանալի հոգուն է միավորվում և պայծառացնում:

Ինչպես լուսարանի մեջ իջնելը (Բան ՂԳ, Գ). - Ինչպես (մկրտության) ավազանի մեջ մտնելով և մեր մարմինների լվացումով հավատում ենք, որ մեր հոգիները սրբվում և մաքրվում են, նմանապես հավատում ենք, թե երբ դրոշմվում ենք Մյուռոնով, լիալրվում ենք շնորհով և որպես օծված ըմբշամարտիկ զորանում ընդդեմ ախոյան չար բելիարի:

Ինչպես դու հիվանդներին բժշկելիս նախ նրանց մեղքերն էիր քավում՝ իբրև ախտերից ձերբազատվելու պատճառ ակնարկելով նրանց հավատը, իսկ հավատքի լույսը չունեցողներին չէիր տալիս մարմնական բժշկության նույն պարգևը՝ ցույց տալով նրանց հոգիների անբժշկելի լինելը՝ հասկացնելով, թե արժանի են մարմնական ախտերի մեջ մնալ՝ հոգեկան մեղքերի մեջ անդարձ մնալու պատճառով: Այդպես էլ Մյուռոնի այս յուղը օծում է մեր արտաքին մարմինը, որ հոգիների խորան է, և ովքեր հավատ ունեն, ներքուստ շնորհով կենդանացնում է նրանց հոգիները, և, համաձայն Աստծու՝ նորապես ծնում է, ըստ այն խոսքի, թե՝ «Ով չի ծնվում ջրից և Հոգուց, նա չի կարող մտնել Աստծու արքայություն» (Հովհ. Գ 5):

Պանծալի պատկեր (Բան ՂԳ, Դ). - Ասում է՝ քեզ համար Սրբալույս Մյուռոնը Աստծու Որդու պատկերն է, ինչպես սուրբ Դիոնիսիոսը Մյուռոնի ճառում ասում է, որ նա Հիսուս Քրիստոսին է ցույց տալիս, որովհետև ինչպես Քրիստոս միավորումն է Աստվածության, որ պարզ է ու միակ, և մարդկության, որ բաղադրված է մարմնից, հոգուց և մտքից, այդպես էլ Սրբալույս Մյուռոնը՝ ձիթենու պարզ յուղից, որ օրինակն է Քրիստոսի Աստվածության, և բաղադրյալ ծաղիկներից ու բալասանից, որ օրինակն է մարդկության, միավորում և կազմում է (միություն), և նույն Հիսուս Քրիստոսի նախատիպի պատկերն է լինում և մատնանշում, մանավանդ որ յուղն այս կակղեցնելու և կայտառացնելու պատճառով ողորմության (գաղափարի) հարմար տիպն է, (մասնավորապես) Աստծու ողորմության: Այս պատճառով դու, ասում է, ողորմություն չունեցողներին՝ հիմար կույսերին, արտաքսեցիր Քո արքայության հարսնարանից, քանզի նրանք չունեին Քո նմա-

նությունը, թեպետև բազում գերազանց անուններով ես կոչվում, սակայն Ողորմած անունը բոլորից գերադասելով՝ ասացիր, թե՝ «Ես ողորմած եմ, և հավիտյան ոխ չեմ պահի» (Երեմիա Գ 12) (...):

Հարազատ (Բան ՂԳ, Զ). - Հնում անասունների ճարպն ու արյունը չէին ճաշակում, այլ Աստծուն էին նվիրում՝ իբրև Նրա հոտոտելիքին հաճելի բան, այդպես էլ այժմ, իբրև մեր հոգուց բխած յուղ և հարազատ բան, Քեզ ենք նվիրում այս Սրբալույս Մյուռոնը: Քանզի կենդանիների արյունը նրանց շնչի և հոգու փոխարեն է և ճարպը՝ նրանց մարմնի: Այս երկուսը հնում չէին ճաշակվում, այլ Աստծուն էին նվիրվում հեղումով և այրումով, թեպետև ներհակապես այս յուղը չի ճաշակվում, բայց և չի այրվում և հեղվում, սակայն վերին արքայության մեջ, իբրև սուրբ սեղանի լուսատու, հոգու լապտերում մշտաբորբոք, անաղոտելի կերպով վառվում, որովհետև մեր հոգիների համար ճրագի փոխարեն լուսատու է լինում արքայության վերին սեղանի վրա (...):

Թափված յուղ (Բան ՂԳ, Զ). - Սա մարդացած Քրիստոսի անունն է, քանզի ցողի նման գեղմի վրա իջավ առանց ձայն արձակելու. այսպես էլ իջած և թափված յուղը ձայն չի արձակում՝ նշանակելով այս աշխարհի իշխանների համար մարդեղության խորհրդի քողարկված լինելը: Եվ ինչպես այս խորհուրդը թափված յուղ կոչվեց Սողոմոնի կողմից, որովհետև Բանն Աստված իբրև յուղ թափվեց մարմնի մեջ անշփոթաբար՝ լինելով Աստծու անձնավոր Բանն ու Հոր իսկական ու բնական պատկերը, այդպես էլ մեր հոգիները, ստեղծված լինելով Աստծու պատկերով, ասում է, Քո շնորհը մեր հոգիներին միավորվելով (իբրև Քո շնորհի թափված յուղ)՝ մեզ պատկերակից է դարձնում Քեզ, որովհետև, ասում է, Քո մեծ խորհրդով մեր փոքրությունն ես պատկերագրում, նաև այն, որ անձնավորաբար մարմնի մեջ թափվեցիր անբաժանելի միավորությամբ, նույն օրինակով շնորհդ մեր մեջ միավորելով՝ նորանման յուղի թափվելն ես իրականացնում, և մեզ, շնորհիդ հեղման միջոցով, Քեզ ես միավորում(...):

Տեր Հիսուս, մոտեցրու այս լուսանյութ ձեթը իմ աներևույթ վերքերիս (Բան ՂԳ, Զ). - Յուղը զգալի լույսի նյութ է, որ ասում է շնորհների Մյուռոնի վերաբերյալ, թե այս յուղը հոգուս վերքերի սպեղանին դարձրու, ինչպես Երիքովի ճանապարհին ընկածի համար արեցիր: Սակայն այս յուղը վերջին օծման նյութը չէ, որի օծումով կատարվում է ներելի մեղքերի թողությունը և մարմինների բժշկությունը, ըստ Քրիստոսի սահմանումի և Հակոբ Տյառնեղբոր հռչակման, քանզի սրան բալասան է խառնվում, և վերջին օծման յուղը լոկ ձիթենու յուղ է. բայց միայն այս շնորհն է խնդրվում վերքերի բժշկության համար, ինչպես և Քրիստոսի մարմնից օգնություն ենք խնդրում՝ առանց ճաշակելու (հաղորդվելու) (...):

Ասում է՝ Քո շնորհը դրոշմեցիր Մյուռոնի Սրբալույս նյութի մեջ, որպեսզի երևացող նյութով չխաբվենք և արտաքին տեսքով չտարվենք՝ ասելով, թե այս փոքրանյութ յուղը ինչպե՞ս կարող է շնորհներ ներգործել. Դու այս կողմից մեզ վստահ ու աներկբա դարձրիր: Բայց ուրիշ էություն (Նարեկ) ասելով մի՛ համարիր, թե սրբազործված յուղը գոյափոխվեց, ինչպես լինում է հացի և գինու մեջ, որոնց գոյացությունները փոխարկվում են

Քրիստոսի մարմնի և արյան: Սա հեռու է Մյուռոնից, որովհետև եթե Սուրբ Հոգին Աստծու Որդու նման մարմնանար, ապա յուղը կգոյափոխվեր Սուրբ Հոգու մարմնացած նյութի: Բայց քանի որ Սուրբ Հոգին մարմնացած չէ, անմարմին կերպով է ներգործում այս յուղը, ինչպես (մկրտության) ավազանի ջրին պարգևում է բարոյական զորություն՝ ծնել Աստծու որդիներ՝ Սուրբ Երրորդության անունով (...): Որովհետև Սուրբ Հոգու անբավ զորությունը քեզ աներկբա է դարձնում և երևացող նյութով աներևութապես ներգործում: Բայց եթե այդպես չլիներ, այլ ըստ երևացողի միայն հավատայիր՝ քեզ ավելի կվիրավորեր, քան կբժշկեր, այսինքն՝ քեզ թերահավատ կդարձներ և երևացող բաներով կխաբեր: Սակայն հոգին լինելով մարմնի մեջ՝ մարմնի շարժումից իմանում ես հոգի ունենալը. ճիշտ այդպես էլ Սուրբ Հոգու սեփական ներգործությունից իմացվում է այս յուղի մեջ Նրա բնակվելը, թեպետ այս ներգործությունն աներևույթ է, որ ընկալվում է լոկ հավատքի աչքով (...):

Կամեցար Քո մարմինը ցորենի հացի փոխարկել, որ ոչ թե ըստ լյութերականների բարբաջանքի օրինակ (հիշողություն) է, այլ ճշմարտապես հացի գոյացությունը մարմնի գոյացության և գինու գոյացությունը արյան գոյացության կամեցար փոխարկել: Նույնպես Քեզնից փչված Սուրբ Հոգուդ շնորհը հոժարեցիր այս յուղի մեջ դրոշմել, չնայած այստեղ գոյափոխություն չի լինում, ինչպես և (մկրտության) ավազանի ջուրը չի փոխարկվում իր գոյացությունից, երբ Աստծու որդիներ է ծնում, որպեսզի թերևս այս երևացող յուղը Սուրբ Հոգուդ աներևույթ շնորհը մեր մեջ դրոշմի, և Քեզնից փչված Սուրբ Հոգիդ սրանով և սրա մեջ Իր շնորհով մեզ զարդարի (...):

Հակոբ Նալյան, Կ. Պոլսի պատրիարք 1741-1749 թթ.,
Մեկնություն Ս. Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության»

- ԺԷ -

Աստվածաբանների գերահրաշ գագաթ երանելի Դիոնիսիոսը եկեղեցական քահանայապետության գրքում Սրբալույս Մեռոնի հայտնության մասին ասում է, թե նշանական շարակցությունը, այսինքն՝ ծաղիկների և յուղի բաղադրությունն իբրև անկերպ իրերի կերպավորում, նույն Հիսուսին է ներկայացնում մեզ: Աստվածային այս յուղը բովանդակ ճշմարտությամբ խորհրդանշում է մարդացած Քրիստոսին, որովհետև ծաղիկներին խառնված յուղն այլ բան չէ, քան Հիսուսի Աստվածության յուղը՝ միավորված ծաղկյալ կուսական մարդկությանը, քանզի Քրիստոս «Ծաղիկ է՝ բուսած Հեսսեի արմատին, և այդ արմատից ծաղիկ կաճի» (Եսայի ԺԱ 1): Ուստի և Սողոմոնը Երգ Երգոցում ասում է, թե՝ «Քո անունը թափված յուղ է» (Ա 2), որովհետև Աստծո Բանը (Խոսքը) Հոր ծոցից յուղի նման թափվեց մեր հողանյութ բնության մեջ՝ այն միավորելով իր Աստվածության հետ: Այդ պատճառով Քրիստոս կոչվեց:

Նա Օծյալ է անվանվում երեք եղանակով. նախ՝ միավորյալ բնությամբ, ըստ որում Աստվածությունն օծեց մարդկությանն անբաժանորեն, որովհետև հասարակ յուղն իսկ, մտնելով մարմնի մեջ, անբաժանորեն է լուծվում և միավորվում: Ուստի Ս. Գրիգոր Աստվածաբանը «Առ որս» գրքում ասում է, թե՝ «Մարդանալու օծումը ոչ թե մնացյալ սուրբ օծյալների զորությամբ էր, այլ՝ մերձավորությամբ բովանդակ օծողի, որով գործում էր մարդ եղած Օծյալը և Աստված դարձնում Օծյալին»: Կարծես պարզ լեզվով կամենում է

ասել, թե Աստծո Բանի մարդեղության օծումը նման չէր ուրիշ օծվածների, այսինքն՝ մարգարեների, սուրբ նահապետների և թագավորների, որոնք օծյալ կոչվեցին շնորհիքով, այլ [իր մեջ ուներ] բովանդակ միավորությունն Օծող Աստծո (...):

Որովհետև այն, ինչ իմանում և ճանաչում ենք աստվածային յուղի մեջ, ոչ թե Սողոմոնից հորջորջված յուղն Աստված ենք նկատում և ինչպես յուղին [ենք հասու լինում] հասու են լինում Աստծո, քանզի անհասանելի է, այլ աննշան գոլորշու բուրմունքով, որ [խորհրդանշում է] աստվածային անուշ հոտավետությունը, գնում ենք առ Աստված՝ ըստ Սողոմոնի հավատալով, թե «Դեպ քո յուղերի բուրմունքն ենք գալիս» (Երգ Ա 3) (...):

Քանզի եթե վառվող հասարակ յուղը մարմնի աչքն է լուսավորում, ապա որքան ավելի՝ մաքրված ու սրբագործված սուրբ Մեռոնի յուղը, որ ներշնչված Սուրբ Հոգու պատկերն է, մեր իմանալի հոգիները միավորելով (Աստվածությանը)՝ պայծառացնում է: Եվ ինչպես Սուրբ Ավազանի ջրի լվացումով հավատում ենք, թե մեր հոգիները մաքրվում են մեղքերից, նույնպես Սուրբ Մեռոնի դրոշմամբ զորանում ենք իբրև ըմբշամարտում օծված մեկն՝ ընդդեմ ախոյան չար բելիարի (...):

Այս յուղի օծումով դառնում ենք Աստծո տաճարի և Սուրբ Հոգու բնակարան, համաձայն Պողոսի, թե՝ «Դուք Աստծո տաճար եք, և Աստծո Հոգին բնակվում է ձեր մեջ» (Ա Կորնթ. Գ 16) (...):

Նաև թագավորները յուղի օծումով իշխանության աթոռ էին ստանում և ահարկու երևում թշնամիներին, ինչպես Սողոմոնն ու Դավիթը հռչակավոր եղան իրենց գործերի մեջ և Տիրոջ սիրելի կոչվեցին, սրբվեցին շնորհների և իմաստության հոսքի մեջ: Եվ սա մարմնական փառավորության համաձայն էր, որ օծյալ լինելով, հնազանդեցնում էին ստորադրյալներին, որոնց հնազանդությունը վերաբերվում էր մեր Օծյալ Քրիստոսին, որովհետև օծյալ թագավորների միջնորդությամբ իրենց հնազանդ էին համարում Օծյալ Քրիստոսին և Նրա անունով էին պատիվ տալիս թագավորներին: Այս պատճառով մեր Պետրոս Գետադարձ սրբազան Հայրապետը շարականի երգում ասում է, թե՝ «Որ նախնի օրենքները Միածնի օրինակն [էին պարունակում]» և այլն: Քանզի թագավորները, Աստծո պատկերը լինելով, առանց օծման և քրիստոսական անվան մասնակցության չէին կարող գլուխ բարձրացնել և հնազանդվողների [հանդեպ] գերապատիվ լինել (...):

Բայց օծության անունը պաշտվում է Մկրտության շնորհի խորհրդով, որ տրվում է հավատացյալներին, քանզի Մկրտության դրոշմի օծումն ընդունելով, լինում ենք Աստծո որդիներ և կոչվում օծյալ: Ուրեմն, պարզ է, որ Քրիստոս և Օծյալ անունն այդ պահից միավորություն կոչվեց (...):

Քանզի սուրբ Մեռոնի յուղով օծվածները որդեգրվում են արքայաբար և Քրիստոսի հետ մտնում են ժառանգության մեջ(...):

Արդ, Օրենքի յուղը պատրաստվեց Աստծո հրամանով Մովսեսի կողմից՝ չորս նյութերից՝ զմուռսից, կինամոնից, եղեգից՝ կասիայից, և ձիթենու յուղից, որով օծվեցին Վկայության խորանը, Տապանակը, Սեղանը, Աշտանակը, Ավազանը, Ահարոնն ու իր որդիները: Քանզի զմուռսը դարչինի ծառի խեժն է և ունի դառը համ, բայց անուշ հոտ, որ մուրր է կոչվում կամ մուրրի սաքի: Եվ սրա ծաղիկը խառնվում է օծման յուղի մեջ և կոչվում է զմուռսի ծաղիկ: Իսկ մանր խեժը խառնվում է օծման յուղին և կոչվում ծխելի խունկի ծաղիկ, որ հին քահանաները բուրվառ էին ծխում տաճարում: Կինամոնը դար-

չին է, եղեգը մի անուշահոտ և քաղցր դամիշ է, և կասիան խիարչամպեն է: Արդ, սրանց խառնուրդը Սողոմոնն անվանում է եփող յուղ՝ ասելով, թե. «Եղեգը և կինամոնը, զմուռսը և հալվեն... յուղի հետ» (Երգ Դ 14): Քանզի այս բոլորը նշանակում են Քրիստոսին և Նրա բովանդակ տնօրինության գործը (...):

Ընտիր նարդոս է կոչվում Քրիստոս, այսինքն՝ նարգիզ՝ հրագույն սիրո և բազմաթիվ տերևների առատության պատճառով, որից իմանալու է, որ նարդոսը կարճ և ցածրահասակ է և ունի կրակի գույն ու հողի վրա սփռված բազում տերևներ, ծայրին ունի ծաղիկ՝ ցորենի հասկի նման, որից պատրաստում են օծանելի և անուշահոտ լավագույն յուղ: Բայց հասկից պատրաստված յուղն ավելի ազնիվ է, քան տերևներից պատրաստվածը: Եվ Ավետարանիչը գրում է, թե այս ազնիվ յուղն էր, որ Ղազարոսի քույր Մարիամը, իբրև նարդոսի ազնիվ յուղ, բերեց 22ով:

Այս յուղն ազնիվ է, որովհետև նարդոսի հասկից էր, որին խառնում էին անուշահոտ ծուխ արձակող նյութեր, որոնցից կազմված է Մեռոնը: Եվ նարդոսի բնությունը տաք է, և համը՝ դառը, որն ունի բազում նշանակություն. նախ՝ կարճ և ցածր լինելը նշանակում է Քրիստոսի խոնարհությունը, որ բոլորից մեծ լինելով՝ փոքրացավ մարդեղությամբ՝ իրեն դարձնելով եկեղեցու խոնարհության հայելի (...), բացեց երկնային բուրաստանի դուռը, որից անմահության հոտը, իբրև նարդոսի հոտ, ծավալվեց, և Սուրբ Հոգու շնորհների և պարգևների յոթնավտակ աղբյուրը հեղվեց մեզ վրա Պենտեկոստեի օրը (...):

Բայց քանի որ ճշմարտապես չարչարվեց, այդ պատճառով շնորհների Սուրբ Հոգին, իբրև նարդոսի հոտ, բուրեց մեր քիմքին, համաձայն Սողոմոնի, թե՝ «Իմ նարդոսը բուրեց իր հոտը» (Երգ Ա 12): Քանզի Աստծո և հրեշտակների առաջ հոտի անուշ բուրմունքն այնքան [կարևոր] չէ, որքան Քրիստոսին խոնարհությամբ նմանվելը (...): Երկրորդ՝ նարդոսի հոտը նշանակում է Քրիստոսի տնօրինության և վարդապետության համբավը, քանզի Տիրոջ չարչարանքը, Խաչը, Հարությունը, Համբարձումը իբրև հոտ բուրեց բովանդակ երկրի վրա: Երրորդ՝ նարդոսը, որ համով դառն է, նշանակում է ապաշխարություն, որ քաղցրորեն բուրում է Աստծո քիմքին. ուստի Սիմոն Փարիսեցու տան մեջ Մագդաղենացու [ձեռքով] Հիսուսի ոտքերի օծության [ժամանակ] Քրիստոս ոչ այնքան ազնիվ օծանելին ընդունեց նրանից, որքան՝ սրտի զղջումը (...):

Այս կապակցությամբ վարդապետներից մեկն ասում է, թե ապաշխարողների արտասուքը հրեշտակների գինին է, կուրծքը ծեծելը՝ հարսանիքի ծափ է, և մեղքերից դարձի գալը ցնծության տոն է հրեշտակների առաջ (...): Չորրորդ՝ նարդոսը նշանակում է զանազան առաքինություններ՝ թե՛ աստվածային և թե՛ մարդկային, քանզի ձիրքերը, շնորհները, պարգևներն ու արդյունքները, որոնք կան եկեղեցում, իբր աստվածային բուրմունք, Քրիստոսին ունեն որպես իրենց սկիզբ (...): Եվ Որոգինեսն ասում է. «Քրիստոսին նարդոսով կամ ջերմեռանդությամբ կամ քարոզխոսությամբ և այլ զանազան բարեգործությամբ օծողը առնում է Քրիստոսի ամենաքաղցր հոտը, այսինքն՝ Սուրբ Հոգու շնորհները, որով զորանում է ինքը և զորացնում այլոց»: Եվ սուրբ Գրիգոր Նյուսացին ասում է, թե՝ «Առաքինության յուրաքանչյուր տեսակ օծանելիք է և զմայլառիթ բուրում». բոլորը միասին կազմում են նարդոսի նույն միակ օծանելիքը (...):

Եղեգնախունկ է կոչվում Քրիստոս, որովհետև հաշտարար խաղաղության բուրմունք ունի և ջերմեռանդ աղոթքի (բուրմունք), որովհետև խունկը Սուրբ Գրքում նշանակում է

աղոթք (...):

Քրիստոս հալվե է կոչվում, այսինքն՝ սապռ, որ համով խիստ դառն է՝ դառնակսկիծ չարչարանքի և կամավոր ապաշխարության պատճառով (...):

Քրիստոս քրքում է կոչվում, այսինքն՝ զաֆրան, որի լավագույնը նորն է, բարեհոտը, երկարը, մաքուրը, սպիտակը, բարեշունչը և շոշափելիս ներկում է բռնողի ձեռքը: Արդ, Քրիստոս նորագույն էր Իր գործի ջերմեռանդությամբ, հոտաբուխ՝ վարդապետությամբ և շնորհով, երկար՝ համբերությամբ, մաքուր՝ կուսությամբ, սպիտակ՝ բարեգործությամբ, բարեշունչ՝ Սուրբ Հոգու շնորհների փչումով, ձեռքի ներկումով՝ մեր բարեգործ առաքինությունը շնորհավորող, քանզի ով Քրիստոսին հավատով շոշափի՝ կներկվի առաքինությամբ (...):

Այս բոլոր ասվածները անուշահոտ են (...) բալասանի նման, որ պատվական է, հոտաբեր, ծանր, մեծ սերմով, համով՝ կծող, բերանի մեջ՝ տաք, և գույնով՝ կարմիր: Արդ, սրանով նմանվում է Քրիստոսի արյանը, որ անուշահոտ է (...): Երկրորդ՝ քանզի բալասանը ծանր է, նույնպես և Քրիստոսի արյունը (...): Երրորդ՝ քանզի բալասանը մեծ սերմ ունի, և մեր Տեր Հիսուս Քրիստոս ցորենի սերմի նման է (...): Չորրորդ՝ որովհետև բալասանի համը խայթող և կծող բնույթ ունի, և Քրիստոսի Խաչն էլ մեղավորների խղճմտանքը խայթողն է (...):

Սուրբ Մեռոնը ահավոր Աստծո պատկերն է, քանզի, Աստծո նման լույս լինելով, որ իր ահավորության համար ասվում է, թե խավարով է ծածկված, նույնպես և այս լուսանյութ սուրբ յուղը արտաքին աչքից ծածկված է և մռայլ մեգով թանձրացած (...):

Եվ դարձյալ այս սուրբ յուղի անունը Մեռա է կամ Մյուռա, որ եբրայերեն ասվում է Մառա, որ դառնություն է, և այս պատճառով ծովը Մառա են անվանում: Եվ այս Մառա անունը հարմար է մեր մեռելություն բառին, որ դառնությունների դառնությունն է, քանզի մահվան դառնությունը ազգակից է մեր բնությանը: Եվ այս պատճառով Մեռոն բառը, որ մահվան նշանակ է, համերաշխ է մեր բնության դառնությանը, որ մեռցնելով մեր մեջ մեղքի ախտերը, դառնացնում է մեր մեջ այս աշխարհի քաղցր հեշտանքը (...):

Աբրահամ Աստապատեցի

«Պիտանի խոսքեր սուրբ յուղ Մեռոնի մասին»

- ԺԸ -

(...) Սերոբեաճեմ աստվածային վայր է այն,
Որ լույսով ընդելուզված ցույց
Տրվեց մեր հորը (Ս. Գրիգոր),
Եւ նա շինեց մեծարգո տաճար.
Կաթողիկե Էջմիածինն է այն:

Այնտեղ աստվածային գործ կա զարմանալի,
Հրաշք մեծահանդես հույժ փափագելի,
Քանզի ծաղկունքն առանց կրակի եփված յուղ են
դառնում
Աջով Լուսավորչի, որ մեր Մեռոնն է:

Հովհաննես Կաֆացի (1686 թ.), Տաղ

- ԺԹ -

Եվ այստեղից (Ս. Էջմիածնից) կենդանարար ջուր և մշտահոս աղբյուր բխեց, այսինքն՝ Սուրբ Հոգու բազմապարգև շնորհքը, որ աստվածագործ Մյուռոնի միջոցով բաշխվում է բոլոր եկեղեցիներին, և հավատացյալների հոգիները, նրանով ոռոգված, պարարտանում և պտուղ են տալիս: (...)

(...) Քահանայապետական բոլոր սրբագործությունները Մյուռոնով են նվիրագործվում, ինչպես Եկեղեցի, Սեղան, Խաչ, քահանա և եկեղեցական մնացյալ բոլոր պարագաները Մյուռոնով են օծվում և սրբվում: Այդ պատճառով էլ եկեղեցու բոլոր խորհուրդների մեջ մկրտությունը և Մյուռոնի օծումը գերադաս են՝ իբրև մնացած բոլորի դուռ և ճանապարհ: (...)

Սիմեոն Ա Երևանցի (1710-1780 թթ., կթող. 1763-1780 թթ.)
«Քարոզ Մյուռոնօրհնեքի»

(...) Եկեղեցիները Քրիստոսի այգիներն ու պարտեզներն են և, ինչպես հայտնի է Սուրբ Գրքից, հավատացյալներից յուրաքանչյուրը Քրիստոսին ընծայում է անուշահամ պտուղներ և տեսակ-տեսակ գեղեցիկ հոգևոր ծաղիկներ, որոնցով ուրախանում է Քրիստոս և փառավորվում հավատքի, բարեգործության և ջերմեռանդ խորհուրդների մեջ: Սակայն նա ունի մեկ աղբյուր և կենդանացնող ջրի մեկ ջրհոր, որ հոսում է Լիբանանից, այսինքն՝ Սուրբ Մեռոնից, որ Սուրբ Էջմիածինն ստանում է Սուրբ Հոգուց, որի շնորհիվ ոռոգվում, դալարում և պտղաբերում են մյուս եկեղեցիները: Նյութական այգիների և պարտեզների նման, սրանք ևս պտղաբերում են իրենց ունեցածը Սուրբ Մյուռոնի ոռոգմամբ, որ բխում է Սուրբ Էջմիածնից: Այս պատճառով (Սողոմոնը) ասում է. «Պարտեզների աղբյուր» (Երգ Դ 15), համաձայն այն բանի, թե բոլոր եկեղեցիները ցանկանում և միշտ կարոտում են Սուրբ Էջմիածնին՝ լիացնողին, զովացնողին և հագեցնողին, ինչպես բոլոր այգիներն ու պարտեզները՝ աղբյուրին, ինչպես օրինակ հողը, որ ինքնըստինքյան գոյացնում է տեսակ-տեսակ բույսեր և զանազան ակնեղեն. որտեղի՞ց կարող են լինել դրանք, եթե արեգակը չներգործի: Այսպես էլ ամեն եկեղեցի ու եկեղեցական, որ առաջ են բերում զանազան գործեր՝ և՛ եկեղեցական, և՛ հոգևոր, որտեղի՞ց են, եթե ոչ Սրբալույս Մեռոնի ներգործությունից, որ ծագում է Սուրբ Էջմիածնից, քանզի նրանից մեզ լույս ծագեց:

Եվ սուրբ Մեռոնի անունը կոչվում է Սրբալույս. ո՞ր եկեղեցին շինվեց առանց սրա և ո՞ր ծաղիկ-եկեղեցականը՝ թե՛ բանական և թե՛ անբան, բուսեց և գործեց եկեղեցականների և եկեղեցիների մեջ առանց սրա (...):

Այժմ կամենում եմ ասել. «Ո՛վ եկեղեցիներ և եկեղեցականներ, ճանաչեք թագուհիների միակ թագուհուն՝ Սուրբ Էջմիածինը, որ Հայոց ազգիս Աթոռն է և Քրիստոսի սիրելին, որ չունեն ուրիշ ազգեր, որոնք երանի են տալիս և գովում նրան, ցանկանում և կարոտում նրան, որին իրենց ծառայությունն են ցույց տալիս բոլոր եկեղեցիները»: Համաձայն Հիսուս Փեսայի վճռի, տեսեք և ճանաչեք միակ աղբյուրը և կենդանացնող ջրի միակ

ջրհորը՝ Սուրբ Էջմիածինը, որն ահա բաշխում և ոռոգում է ձեզ կենդանարար ջուրը՝ Սուրբ Մեռոնը: Ահա խորհրդավոր արեգակ Սուրբ Էջմիածինը, որն առատորեն ճառագայթում է ձեզ աստվածային լույսը, Սուրբ Մեռոնը, որ լուսավորում է ձեր հոգիներն ու մարմինները: Ուրեմն, վայելե՛ք և շնորհակալ եղե՛ք և իմացե՛ք, թե ումից է այդ շնորհը, Որին փա՛ռք հավիտյանս. Ամեն:

Սիմեոն Ա Երևանցի
«Քարոզ Սուրբ Էջմիածնի և Սուրբ Մեռոնի»

(...) Քանզի ինչպես այս աշխարհում և ոչ մեկը անարժաններին ոչինչ չի տալիս անտեղի, նմանապես և Աստված, ու ես ձեզ ասում եմ. «Ահա Աստծո շնորհը, որ Սրբալույս Մեռոնն է, հասել է, և, պատրաստ լինելով, ակնկալում է արժանավորել»: Ուրեմն, ձեզ պատրաստեք ընդունել այն և ինչ-որ պատճառով մի զրկվեք: Ահա շնորհների ծովը լիառատ է՝ դու ամանդ պատրաստի՛ր, արեգակը պատրաստ է լուսավորել՝ դու աչքդ բա՛ց: Եվ ես աղաչում եմ՝ իզուր մի՛ անցկացրեք շնորհառության ժամանակը:

Սիմեոն Երևանցի
«Քարոզ Սուրբ Մեռոնի, թե
որ օրն է անհրաժեշտ բաշխել...»

Այս սուրբ յուղը կոչվում է լույս կամ Սրբալույս՝ սուրբ լույս, որ սրբող և լուսավորող է Աստծո նման, որովհետև Քրիստոս Ինքը սուրբ է և լույս, ըստ այն խոսքի, թե՝ «Եղե՛ք սուրբ, որովհետև ես սուրբ եմ» (Ա Պետ. Ա 16) և թե՝ «Ես եմ աշխարհի լույսը» (Հովհ. Ը 12): Այս պատճառով էլ այս Մեռոնը կոչվում է սուրբ և լույս՝ որպես Արարիչ Աստծո պատկերից: Արդ, ինչպես Աստված և արեգակը միշտ ճառագայթում են իրենց լույսը ամբարածների մեջ և բոլորին լուսավորում են առանց խտրության, նմանապես և այս Սրբալույս Մեռոնը աստվածային շնորհների լույսը միշտ և անսպառ կերպով ճառագայթում է հավատացյալների հոգիների մեջ, և բոլորին լուսավորում է Հոգով ու սրբում հին Ադամի մեղքերից և ապականությունից, համաձայն Նարեկացու, որ լույսն անվանում է արարչության պատկերակից, որ հալածում է մթության խավարը (...):

Այս Սրբալույս Մեռոնը, ծնվելով քրիստոսական արեգակից, և Սուրբ Հոգու ցողից ունեցավ Հայր, այսինքն՝ Սուրբ Հոգին, որ սրա ներգործական պատճառն է երկնքում, և [ունեցավ] մայր, այսինքն՝ այս երկրի նյութը, որ երկրի մեջ է գոյանում(...):

Դարձյալ ծաղիկները, որոնք խառնվում են այս Մեռոնի Սրբալույս յուղի մեջ, համաձայն իրենց զանազանության, ունեն և զանազան ներգործություն բնության մեջ: Նրանք նույն կերպ են ներգործում՝ հոգևորապես խառնվելով այս սուրբ յուղի մեջ, որովհետև, ունենալով քաղցր և զմայլեցնող հոտ և նույն կերպ հոգևորապես ներգործելով մեզ վրա, մեզ դարձնում են Աստծո համար անուշահոտ, ըստ այն խոսքի, թե՝ «Ահա Իմ Որդու հոտը, որ նման է բերրի արտի հոտին» (Ծննդ. ԻԷ 27) (...):

Այս է այն ձեթը, որ երկնավոր Բժշկից Քրիստոս կաթեցրեց ավազակների ձեռքն ընկածի անբուժելի վերքերի վրա, որի շնորհիվ և բժշկելով ու կազդուրելով՝ մեզ բերեց Իր

պանդոկը՝ սուրբ եկեղեցի (...):

Գոհացողական ձայներով այժմ նրանից խնդրենք, որպեսզի գթա և ողորմի մեզ՝ այս ամենասուրբ յուղով մկրտվածներիս, սուրբ և առատապարգև այս Մեռոնի շնորհիվ և միջնորդությամբ թող օրհնի ձեզ և պահպանի, տա զորություն և կարողություն, զգաստություն և արիություն, սրանով բժշկություն տա ախտաժետներին և առողջություն՝ բոլոր հիվանդներին, սրանով տա մեղքերի քավություն և ներում՝ սխալների համար, սրանով տա գերիներին փրկություն և ազատություն՝ բոլոր նեղյալներին, օգնության հասնի վտանգի մեջ եղողներին և թիկունք լինի բոլոր վշտացյալներին, խաղաղություն պարգևի աշխարհներին, անդորրություն՝ բոլոր քրիստոնյաներին: Ողորմություն ընձեռի աղքատներին և քաղցրություն՝ մեծատուններին, համեստություն՝ երիտասարդներին և պարկեշտություն՝ կանանց, խոհեմություն՝ ծերերին և օգնություն՝ պատանիներին, ժուժկալություն՝ վանականներին և զգուշություն՝ քահանաներին, հաջողություն՝ ճանապարհորդներին և ուղեգնացներին՝ ուրախ վերադարձ: Դարձ, զղջումն և մեղքերի թողություն՝ հանցավորներին, բարեխառնություն՝ օդի և օդայինների և պտղաբերություն՝ բույսերի և անդաստանների, ձախորդությունների և վնասակար բաների վերացում, ծանր ախտերի և պես-պես պատուհասների հերքում և տարամերժում և ձեզ՝ համագումար հավաքվածներիդ՝ սեր և խաղաղություն, շնորհ և բարեկարգություն, կյանք և առողջություն, ձեր ննջեցյալներին՝ երանավետ ուրախություն և անվախճան փառավորություն, և այստեղից հետո բոլոր երանելիներիդ միահամուռ կերպով հավաքի Վերին Երուսաղեմի ծոցում՝ այս սուրբ Մեռոնի շնորհով և նշանով բազմեցնելով Հայրական սեղանի շուրջը՝ մասնակցելու հավիտենական ուրախությանը: Եվ Ինքը օրհնվելով՝ թող օրհնված լինի հավիտյանս. Ամեն:

Սիմեոն Ա Երևանցի, ‹‹Քարոզ Սրբալույս Մեռոնի››
(1777 թ., հուլիս 12)

(...) Սուրբ Էջմիածինը թեպետև տարածությամբ հեռու է, սակայն նրա ճառագայթը միշտ ցույց է տալիս Իրեն և քարոզում, որ Սրբալույս Մեռոնն է: Ինչպես արեգակի ճառագայթն է ծանուցում արեգակի գեղեցկությունն ու օգտակարությունը, ինչի շնորհիվ կառավարվում է երկիրը և դալար մնում, ճիշտ այդպես էլ սուրբ Մեռոնն է միշտ քարոզում Սուրբ Էջմիածնի օգտակարությունն ու գեղեցկությունը (...):

Սիմեոն Ա Երևանցի
‹‹Քարոզ Սուրբ Էջմիածնի››

- Ի -

1. Թորված յուղ սուրբ, Կյանքի (Քրիստոսի) անունը քեզ կցված
Սուրբ Հոգու բյուրաթիվ շնորհները քո մեջ լցված՝
Դու ես շնորհների բաշխողը, ո՜վ գանձ՝ առատորեն բացված,
Հույժ բազմապիսի իմաստությամբ լցված:

10. Այս նյութի մեջ Քո Երրորդությունն է միախառնված,
Էությանդ իմանալի շնորհը յուղիս կցված,
Այս բանն օտար վկայություններով չի հաստատված,

Այլ սուրբ Նարեկացու ավանդներով է բացված:

11. Քանզի այս յուղն ունի Քեզնից տրված ներգործող դեղ,
Օրհնյալ անուն՝ իմանալի շնորհքով լեցուն,
Այս շնորհը հրաշալիորեն հեղելի և ներգործելի է...
.....

17. Հույժ գեղեցիկ յուղս այս Քո շնորհներին է կցված,
Քանզի նրա թանձրությունն իմանալին (հոգևորն) է
նյութացնում,
Ինչպես ասվում է, իմանալիներին կերպագործելով
Այլոց վրա հեղվելով՝ նյութի շնչով է ներգործում*:

19. Այս յուղը կնքում է բարի անվամբ հովիվն օծված,
Նույնը հաստատում է ոչ այլ ոք, քան բարձրյալ էությունը:
Այս բանը գեղեցիկ վկայությամբ է հաստատված,
Այս բարի յուղս Աստծո մեջ է կցված:

20. Այնտեղից հեղվում է սրբի գլխին՝ վերևից իջած
Եվ գլխից մինչև գրապանն է հեղվում շնորհն այս,
Հույժ հրաշալիորեն մի առ մի սանդուխտ կազմելով՝
Վեհից մինչև դռնապանն այս շնորհը հեղելով:

24. Այս յուղը սուրբ, ըստ Հնի (Կտակարանի) ծաղկավետյալ ծառ է
Եվ Նորի (Կտակարանի) մեջ՝ (Ս.) Հոգու շնորհքով պտղածնված:
Այնտեղ մեծերի վրա հաճախապես ներգործելով,
Այստեղ, փոքր ավազանի մեջ իսկ շնորհազարդելով:

35. Այս յուղն ունի լուսազգեստ բորբոք լույս,
Իբրև ճարպ վառվում է Պատարագի մեջ,
Իբրև ճրագ՝ մառախուղից բերված ի լույս,
Նույնպես այս շնորհազեղուն յուղը փայլում է լույսով:

72. Անուշ յուղ ես, և անունը Քո յուղով օծված
Հաստատիր Քեզնով, որպեսզի լինենք Քեզ ուղեկից:
Բազում ծաղիկների հին յուղով սա բաղադրվելով
Եվ Տիրոջ անվամբ միասին փառավորվելով:

92. Ով ունի կնիքս այս՝ կարող է մնալ,
Որ Տեր Հիսուսից է մեզ ավանդված:
Մեր եկեղեցիներն ու հավատքը սրանով է կնքված,

Եվ մկրտության ավազանը սրանով է օրհնված:

Թովմաս Այրի քահանայի ոտանավորը
Սրբալույս Մյուռոնի մասին (1729 թ.)

***

1. Լուսեղեն թագ՝ հրաշալի հրեղեն կազմվածքով,
Հավատացելոց ծնունդ, շնորհաց պատճառ, սուրբ Մյուռոն,
Նյութեղեն յուղ, անեղ Բանից հրաշագործված,
Հայոց հիմք՝ երկնքից հեղված, սուրբ Մյուռոն:

2. Որակդ է յուղ, ծառ բազմաճյուղ սիգաբարձր,
Դեղ ներգործող, մեղքեր մաքրող քաղցրորեն,
Դևերին վանող, չարից փրկող հզորապես,
Մարդկանց ծնող, շնորհաց բաշխող, սուրբ Մյուռոն:

3. Դու վերքերի դեղ, զարմանազեղ գանձ բացված,
Դու նորահավատների զորեղ սանձ հզոր,
Մեզ համար հորինված լուսազեղ կանթեղ՝
Պայծառ, բյուրեղ շնորհքով քաղցրահաս սուրբ Մյուռոն:

4. Բոլոր քրիստոնյաներին ծանուցված մայր,
Վեհազունների թիկունք, արքաների թագ դարձած
Մեծ ծաղիկներից, երկնային շնորհներից շաղախված,
Դու բոլորի Տիրոջը կամակից, սուրբ Մյուռոն:

5. Աննման զմուռսով, շուշանով ուռճացած,
Խունկով, բալասանով, պատվական հիրիկով զորացած,
Կինամոնն այն հալվեի հետ եռացված,
Մարդկանց կյանքի սրբազան յուղ, սուրբ Մյուռոն:

6. Հոգնակի սեր, բազմակի կյանք, Քեզնով լրված,
Դու անմահ այգի, երևելի դրախտ՝ բացված մեզ համար,
Քո (հավատացյալների) կամքով և օրինակով ընթանալով՝
Հաղթանակի հանդես ենք մտնում, սուրբ Մյուռոն:

7. Նվազման կերպով, աճման ոճով լիացած,
Հոգու շնորհիվ կյանքի խոսքով միացած,
Վերինների (հրեշտակների) ձայնեղ երգաբանությամբ հիացած,
Դու ազնիվ յուղ, Տիրոջ պատիվ, սուրբ Մյուռոն:

8. Կյանքի խրախճանք՝ վերին շնորհներով լուսափայլ,

Եվ հրեշտակների հրեղեն զորքը Քեզնով զմայլված,
Հրաշագործների անհուն բարիքով սքանչացած,
Դևեր վանող, մեղքը հալող, Սուրբ Մյուռոն:

9. Իբրև ձագուկներ մատաղ մանուկներ (նորահավատներ) ծնելով,
Իբրև անգին ակներ Հորն որդեգրելով,
Հմտագույն այրերը, իմաստուն սրբերը քեզնով լիալրվելով,
Բոլորի համար թիկունք, սուրբ Մյուռոն:

10. Իբրև ցավերի հույժ օգտակար հնար՝ մեզ մատուցվեցիր,
Ովքեր տկար են՝ քեզնով ստանում են կարողություն,
Ովքեր հոժարաբար գալիս են, խորհրդաբար օծվելով՝
Քեզնից ճար են ստանում, լինում արդար, սուրբ Մյուռոն:

11. Աննյութ էության հրանյութ Հոգու մեջ լինելով,
Մեր բութ միտքը Քո հեսանով սրելով,
Ծաղիկների նյութով սուրբ շնորհքը ճզմելով՝
Իմ՝ ծաղրանուն Թովմայիս վրա սուրբ Մյուռոնի գութը շարժելով:

Տառապյալ Թովմաս քահանայի տաղը
Սրբալույս Մյուռոնի մասին

- ԻԱ -

«Քո յուղերի հոտը բոլոր խունկերից [առավել է]» (Երգ Ա 2): Արդ, յուղի բազմորակ լինելը նշանակում է երկու անձերը՝ Որդին և Սուրբ Հոգին, որով ցույց է տրվում, թե աստվածային յուղը ոչ միայն ընդունակ է Սուրբ Հոգին [ներկայացնել], այլև՝ Աստծո Բանը (Խոսքը): Այստեղից, ինչպես ենթադրում եմ խորհրդական իմաստով, երկու էական (բաղադրիչներից) է կազմվում Սրբալույս Մեռոնի նյութը, այսինքն՝ բալասանից և ձիթենու յուղից, որով խորհրդանշվում են Որդին և Սուրբ Հոգին՝ միավորված սուրբ յուղի մեջ, թեպետ վայելչության համար զանազան անուշահոտ խունկեր են խառնվում՝ Սուրբ Հոգու շնորհների բազմազեղ բուրումը ցույց տալու նպատակով: Ինչպես ասում է սուրբ Դիոնիսիոսը. «Մեռոնի կատարման [սրբագործման]» ճառում, թե՝ «Եվ այժմ ասենք, որ յուղի անուշահոտությունը ըստինքյան բաղադրված է անուշահոտ նյութերից՝ իր մեջ փարթամորեն ունենալով նրանց անուշահոտ որակը, որին հաղորդվածները անուշահոտությունն ընդունում են, համաձայն նրա մեջ եղած անուշահոտ հաղորդության» («Հաղազս եկեղեցական քահանայապետության»):

Արդ, սրա հիման վրա համառոտաբար բացատրելու է հինգ բան. նախ՝ «Մեռոն» անվան ստուգաբանությունը, երկրորդ՝ թե այն խորհրդանշում է Քրիստոսին, երրորդ՝ թե այն խորհրդանշում է Սուրբ Հոգին, չորրորդ՝ որ ունի զանազան ներգործություններ, հինգերորդ՝ որ ունի առավելություն:

Իմանալու է, որ առաջինի մասին Նարեկացին տալիս է չորս ստուգաբանություն. մե-

կն՝ ըստ բանաստեղծական բացատրության, որն ասում է, թե Նա ինձ համար Մայր է: Սրանով ցույց տալիս, թե նա է սուրբ Ավազանի միջոցով մեր հոգևոր ծննդյան համընթաց պատճառն ի որդեգրություն Հոր: Այս պատճառով մկրտության ժամին խաչի նմանությամբ է կաթեցվում Ավազանի մեջ: Երկրորդ՝ համաձայն եբրայերենի, ստուգաբանվում է «Մեռա», որ նշանակում է դառնություն, որովհետև սա Քրիստոսի չարչարանքի դառնությունը մկրտության պահին կաթեցնում է մեզ վրա և հաղորդակից դարձնում մեզ Նրա դառը չարչարանքներին, որոնց միջոցով և՝ Նրա փառքին. «Եթե չարչարանքին կցորդ լինենք, ապա և մասնակից կլինենք Նրա փառքին» (Հռոմ. Ը 17): Երրորդ՝ համաձայն մեզ, «Մեռոնը»-ը ստուգաբանվում է «մեռնել», քանզի սա մեզ մեռցնում է Քրիստոսի հետ միասին՝ խաչաձև հեղվելով Ավազանի մեջ, և Նրա հետ հարություն է պարգևում մեզ՝ շնորհաց կյանքի մեջ հարատևելու համար. «Մենք, որ մի անգամ Քրիստոսի մեջ ենք մկրտվել՝ Նրա մահվան մեջ ենք մկրտվել» (Հռոմ. Զ 3): Չորրորդ՝ ստուգաբանվում է «մռայլ», այսինքն՝ խավար, քանզի ինչպես խավարում անգործ է մնում մեր նյութեղեն աչքը, այնպես էլ մեր հոգևոր աչքն է անգործ է մնում՝ իսկությունը ընկալել չկարենալու պատճառով: Այստեղից և անմատչելի գերազանցության պատճառով ասվում է, թե խավարում է բնակվում ըստ այսմ. «Խավարն Իրեն ծածկույթ դարձրեց» (Սաղմ. ԺԷ 12):

Երկրորդի համար իմանալու է, որ սուրբ Մեռոնը խորհրդանշում է Քրիստոսին. անուշահոտության և բուժիչ լինելու պատճառով կոչվում է «թափված յուղ». «Քո անունը թափված յուղ է» (Երգ Ա 2): Եվ ինչպես Հիսուսի գլխին Մարիամի թափած նարդոսի յուղը տունը լցրեց բուրմունքով (Մատթ. ԻԶ 7, Մարկ. ԺԴ 3, Ղուկ. Է 46, Հովհ. ԺԲ 3), այնպես էլ Հորից հեղված անապական յուղը՝ Քրիստոս, աշխարհը լցրեց անմահության հոտով: Ինչպես Դիոնիսիոսն է ասում. «Եվ իմանալու է, որ աստվածպետականագույն Հիսուս, գերագոյական անուշահոտության իմացական բաշխումով, մեր միտքը լցնում է աստվածային վայելչանքով»: Եվ հետո ասում է. «Մեռոնի խորհրդանշական բաղադրությունը հենց Հիսուսին է կարգորոշում աղբյուրացուցիչը լինել աստվածային անուշահոտությունների»:

Արդ, մկրտության ժամին յուղ են հեղում Ավազանի մեջ, որ նշանակում է Քրիստոսին և Նրա մահը, որի մեջ մկրտվում ենք: Ինչպես Դիոնիսիոսն է ասում, թե՝ «Մաքրագործող Ավազանի մեջ խաչանման յուղ կաթեցնելով, քահանայապետը հոգևոր աչքին տեսանելի է դարձնում Հիսուսին՝ ընկղմված Խաչի մահվան մեջ»: (...) Կիսամահ [ընկածի] վրա յուղ և գինի հեղեց՝ գինիով խորհրդանշելով արյունը, իսկ յուղով՝ Քրիստոսի ներքին պարարտությունը: Ուստի սուրբ Ավազանի մեջ գինու փոխարեն ջուր են հեղում, որ բխեց (Հիսուսի) կողից (Հովհ. ԺԹ 34), իսկ սուրբ Մեռոնի յուղի հեղումը խորհրդանշում է մահացու խոցվածի բժշկությունը: Սրա մասին ասվում է. «Վրան դնելու սպեղանի չկա. ոչ ձեթ և ոչ վիրակապ» (Եսայի Ա 6), քանզի Հիսուսին փնտրելու փոխարեն նրանք ունեին սրբության յուղը: Այս նկատելով՝ Նարեկացին ասում է. «Այս օծության յուղը ոչ թե համաձայն հին Օրինաց, բազում ծաղիկների խառնուրդից հրամայեցիր հորինել, այլ, իբրև օրինակ, Նրան փոխարինելով, Դու Ինքդ խառնվեցիր վերնալույս ձեթի այս մաքրությանը: Այս հաստատելով՝ մեր Տերը կնոջ առակը մեզ բերեց. «Ո՞վ է այն կինը, որ չի վառում ճրագը» (Ղուկ. ԺԵ 8): Ճրագը կազմված է երկու մասից՝ պատրույգից և յուղից. պատրույգով խորհրդանշում է Քրիստոսի մարդկությունը, իսկ յուղով՝ Աստվածությու-

նը:

Երրորդի մասին իմանալու է, որ Մեռոնը խորհրդանշում է Սուրբ Հոգին, ինչպես առաքյալն է ասում. «Մի՛ տրտմեցրեք Սուրբ Հոգին, որով կնքվեցիք փրկության օրը» (Եփես. Դ 30): Բայց մկրտվածը կնքված, այսինքն՝ դրոշմված է լինում Մեռոնով: Ուրեմն Մեռոնը Սուրբ Հոգու կնիքն է: Հետևաբար, սուրբ Դիոնիսիոսն ասում է. «Աստվածային Հոգու գալուստը Մեռոնին պարգևում է սրբագործող օծում»: Այստեղից՝ Դավթի վրա հեղվեց Սամվելի յուղը (Ա Թագ. ԺԶ 13), քանզի նրա մեջ Աստվածային Հոգի կար:

Չորրորդի մասին իմանալու է, որ բազում են սուրբ Մեռոնի ներգործությունները: Թվարկենք դրանցից մի քանիսը: Նախ այն, որ օծվածին դարձնում է քրիստոսազգյաց (Քրիստոսին հագած), որով նա կոչվում քրիստոնյա, այսինքն՝ Քրիստոս նրա մեջ, կամ Օծվածը՝ նրա մեջ: Այս պատճառով Քրիստոս նշանակում է Օծվածների Օծում: Երկրորդ՝ լուսավորում է իմացականությունը, համաձայն այն խոսքի, թե՝ «Եվ դուք օծում ունեք սրբից, և օծությունը ձեզ ամեն ինչ կսովորեցնի» (Ա Հովհ. Բ 20): Երրորդ՝ սրբում է ամեն տեսակ արտաքին մեղքերից՝ շնորհելով Սուրբ Հոգին, որովհետև ըստ Նարեկացու. «Ինչպես սուրբ Ավազանի մեջ լվացումով հավատում ենք, թե անձը սրբություն է ստանում, այդպես էլ յուղի օծությամբ՝ Հոգու զորությունը»: Չորրորդ՝ այս դրոշմով հաստատում է հավատքի մեջ, ուստի հարսն ասում է. «Ինձ հաստատեք յուղով» (Երգ Բ 5): Հինգերորդ՝ համարձակություն է տալիս մտնել երկինք՝ Սրբությունների Սրբությունը, ինչպես քահանայապետը՝ երկրային սրբությունների Սրբությունը: Ուստի Նարեկացին ասում է. «Քահանայությունը անկոխելի տեղում չէր կատարվի, եթե սրանով կատարյալ չլիներ»: Սրբությունների Սրբությունն «անկոխելի» է անվանում: Վեցերորդ՝ ինչպես հայտնի է, բարձրացնում է քահանայության և թագավորության պատվին, որովհետև, համաձայն Նարեկացու, քննիչների դատողը նախագահության (առավելության) չէր հասնի, եթե օծմամբ չնշանակվեր: Այս պատճառով քրիստոնյաների օրենքն է՝ օծումով բարձրանալ թագավորական աստիճանի: Յոթերորդ՝ մարդկանց ձեռքով պատրաստված առարկաները դարձնում է տերունական և աստվածաբնակ, որպիսիք են եկեղեցիները, խաչերը և այլն: Այս մասին բավական եմ համարում Դիոնիսիոսի մյուս վկայությունը, որ ասում է. «Սրբազան յուղի ամենասուրբ հեղումով կատարելագործվում է աստվածային Սեղանի սրբազնասուրբ նվիրագործումը»: Եվ այս օրինադրեց Հակոբ նահապետը, որ օծված արձանը ահեղ տեսիլքից հետո անվանեց Բեթել, որ (նշանակում) է Աստծո տուն (Ծննդ. ԻԸ 18):

Իսկ հինգերորդի մասին իմանալու է, որ այս յուղի պատվի գերազանցությունը այնքան է, որ մինչև իսկ պարունակողը (յուղը) հաստատում է խորհուրդը և հավասարվում նրան: Ուստի Պողոս առաքյալը և Հռեթեոսը սա համակարգ (հավասար) նկատեցին աստվածային գոյությանը, ինչպես նշում է սուրբ Դիոնիսիոսը, ասելով. «Բայց սա համակարգ է հաղորդությանը և այլ նվիրագործությանը, որ մեր առաջնորդները Մեռոնի սրբազնագործումն են անվանում»: Եվ հետո ասում է. «Այս պատճառով և սույն նվիրագործությունը մեր աստվածային առաջնորդները համակարգ և նույնական նկատեցին մեր համագումար, հավաքական սրբազնագործություններին»: Ինչպես սրբազան խորհուրդն է անվանվում Աստված, այնպես էլ՝ սա: Ուստի առաքյալն ասում է. «Նա, Ով օծեց մեզ ձեզ հետ միասին Քրիստոս Հիսուսի մեջ, Աստված է» (Բ Կորնթ. Ա 22): Յուղն

անվանում է Աստված: Այս պատճառով հարում է. «Որ մեզ կնքեց էլ և Հոգու առհավատչյան դրեց մեր սրտերի մեջ» (22):

Այսու, թող մեր սիրելի սպասավորներն իմանան, թե ինչպիսի գերագույն մաքրությամբ և անբիծ սրբությամբ, մեծ զգուշությամբ պարտավոր են օգտագործել և բաշխել աստվածադիր Մեռոնը, մանավանդ քահանաները, որոնք եպիսկոպոսների թույլտվությամբ հանձնառու են եղել դրա լուսապաճույճ դրոշմի խորհուրդը (կատարել): Այս պատճառով Աստված զգուշացնում է՝ ամբարտավան խորհրդով չմերձենալ Իր օծյալներին՝ ասելով. «Մի՛ մերձենաք Իմ օծյալներին» (Սաղմ. ՃԴ 15): Ուստի Դավիթ մարգարեն անքավելի անօրինություն համարեց իր ձեռքը բարձրացնել Տիրոջ Օծյալի վրա, այսինքն՝ Սավուղի վրա՝ ասելով. «Ո՞վ կարող է Ձեռք բարձրացնել Տիրոջ Օծյալի վրա և թողություն ստանալ» (Ա Թագ. ԻԶ 9): Արդ, անօրինությունների լրումը եղավ հրեաների ձեռք բարձրացնելը Տիրոջ Օծյալի՝ Քրիստոսի վրա (...):

Պետրոս Նախիջևանցի Աղամալյանց Բերթումյանց (ԺԸ դ.)
«Քարոզ Սրբալույս Մյուռոնի յուղի մասին»

- ԻԲ -

Մոլորված լինելով՝ երբեմն վայրիվերո խոսում ես նաև Մեռոնի Սրբալույս յուղի մասին՝ ավելորդ և անպիտան համարելով այն: Բայց իմացիր, եթե քո կարծիքին թողնենք՝ քեզ համար ավելորդ է նաև աստվածպաշտությունն առհասարակ (...):

Գլխովին թանձրամիտ լինելով՝ ասում ես, թե առաքյալները, որ Քրիստոսի աշակերտներն էին, հոգիներն էին բժշկում և ոչ մարմինները յուղով օծում, որովհետև եթե առաքյալները յուղը կիրառում էին մարմնի զանազան պետքերը բժշկելու համար, ապա միայն մարմինները բժշկելու համար էին շրջում աշխարհի վրա, և նրանց համար պատշաճ չէր Քրիստոսի շնորհաց քարոզիչներ համարել իրենց և ոչ էլ նրանց հարկ էր Հիսուսի մոտ գնալ, այլ՝ Գալիանոսի և Հիպոկրատեսի, որ յուղի օծումից զատ կարող էին առաքյալներին սովորեցնել զանազան բժշկություններ, ինչպես երակ առնել կամ լուծողական տալ: Որովհետև յուղի օծումը սոսկ մարմնի բժշկության համար կիրարկելը չափազանց չար է: Ուրեմն, նրանց ամենևին էլ պետք չէր սոսկ նույնը օգտագործել (...): Այն յուղով օծում էին՝ ի նշան Սուրբ Հոգու զորության, և առաքյալներն այն օգտագործում էին՝ վանելու համար դիվական ախտերը: Եվ քանի որ օծությունը վերաբերում է Հոգու պաշտամունքի զորությանը, առաքյալները նույնը սահմանեցին ի նշան Սուրբ Հոգու շնորհների օծության, որի մասին և Քրիստոս ասում էր. «Աստծո մատով դևեր եմ հանում...» (Ղուկ. ԺԱ 20) (...):

Եվ եթե ասես. «Մի՞թե Սուրբ Հոգին զորություն չուներ առանց նույն յուղի իր զորությունը հրաշագործել հրաշքին հաղորդակից ադամորդիների վրա, ինչպես բազում անգամ առանց նրա հրաշագործեց», կպատասխանեմ, թե այդ մի բան չէ, որովհետև Քրիստոս ևս, Աստված լինելով, կարող էր հրաշագործել Իր Աստվածության զորությամբ: Բայց ասում է, թե Հոգով է հրաշագործում, որի հրաշագործությունը դարձյալ գիտե Քրիստոս Ինքը (...):

Այսպես, շնորհների, բժշկության և մաքրության բաշխումի համար Սուրբ Հոգին կարգվեց, իսկ այս Մեռոնը կամ օրհնության յուղը միջնորդաբար է ներգործում՝ համաբնույթ

լինելով Սուրբ Հոգու բժշկության զորությանն ու մաքրությանը (...):

Արդ, եթե առաքյալները բժշկում էին լոկ նյութական դեղերով, ապա որտե՞ղ էր Քրիստոսի կողմից նրանց տրված իշխանությունը հիվանդությունների վրա կամ որտե՞ղ էր առաքյալներին տրված շնորհքը՝ կատարել ինչ կամենային (...): Իրավ որ. այս օծության յուղը Սուրբ Հոգու մաքրությանը հաղորդակից դարձնող մի նյութ է, որի հանդեպ համարձակությունը համարձակություն է Սուրբ Հոգու հանդեպ, որովհետև ինչպես Հին (Մովսիսական) օրենքում այս յուղը մեծամեծ հրաշքներ էր կատարում, նույնպես էլ նորի (քրիստոնեության) մեջ: Քանզի Սավուղին սա դարձրեց այր (արքա), այլև թույլ տվեց նրան մարգարեների հետ կենցաղավարել: Գիտեմ, որ կասես՝ ոչ թե յուղն էր, որ Սավուղին կամ նրա նմանին այր (արքա) էր դարձնում, այլ Սուրբ Հոգու զորության ներգործությունը: Սրան կպատասխանեմ. «Այժմ ևս յուղը չէ, որ նույն շնորհներն է ընծայում, այլ՝ նույն այդ յուղի մեջ բնակվող Սուրբ Հոգու զորությունը»:

Հարցնում ես, թե Սուրբ Հոգու ճշմարիտ օրենքների մեջ ի՞նչ կարիք կար այդպիսի նյութական միջոցի, քանզի (իրապես միայն Սուրբ Հոգին) կարող է օգտակար լինել նրան, ով արժանի է: Սրան կպատասխանեմ, թե Աստված օրենսդիր դարձրեց մարգարեներին, որոնք և այսպես սահմանեցին (...):

Հարցնում ես, թե Աստված ե՞րբ ասաց, որ յուղ եփես կամ օրհնես (...): Սրան կպատասխանեմ. եթե ընդունում ես Աստվածաշունչը և Աստծո պատգամը, Հին [Օրենքը] լի է Մովսեսին տրված այդ պատգամներով, և երկու տեղում պարզիպարզո գրված է այս յուղի ներգործության մասին, քանզի Մարկոսը գրում է, թե օծում էին յուղով և բազում հիվանդներ բժշկում: Եվ Կաթողիկե թղթի մեջ Հակոբ առաքյալը հիվանդների համար գրում է, թե՝ թող օծվեն և աղոթք անեն (...): Ինչպես նաև Սկյուղասի, Սիմաքոսի և մի շարք քաղդեացիների պատմություններում ասվում է, թե աղոթք էին անում յուղի վրա, որով և օծում էին հիվանդին (...):

Այս պատճառով և մենք, ճշմարիտ խորհուրդներ ստանալով, աղոթքի տևական խոկումն ու մաղթանքը ուղղում ենք շնորհների նույն աղբյուրին՝ Սուրբ Հոգուն, և դրանցից (շնորհներից) մեկին՝ Սրբալույս Մեռոնին, հանուն որի քառասուն օր շարունակ պաղատալից աղոթք ենք անում՝ նույն Հոգու սրբությունը նրա մեջ շնչավորելու, Իր զորությունը այդ յուղի մեջ ներարկելու համար, որպեսզի ով օծվի նրանով՝ ընդունի աստվածային ներգործությունների շնորհաց զորությունը: Եվ երկրորդ՝ կատարում ենք նրանց՝ մկրտվողների վրա, ինչպես պարզ երևում է նրանց ձեռնադրության կանոնի մեջ:

Բայց ասում են, թե ինչո՞ւ քահանաները չեն կարող Մեռոն օրհնել, ինչպես կաթողիկոսն է կատարում, մի՞թե Մեռոնը, ասում եք, Պատարագից մեծ է, որ մատուցելիս հացն ու գինին աստվածացնում են, իսկ ինչո՞ւ ամեն քահանա չի կարող աղոթքով Սուրբ Հոգու շնորհները դրոշմել Մեռոնի մեջ: Սրան կպատասխանեմ, թե՝ համաձայն բոլոր իմաստունների՝ «Ձայն բազմաց ձայն Աստուծոյ է», որովհետև յուրաքանչյուր քահանա շատ տեղերում պաշտոնյա դասի մեջ ընկերներ չունենալու հետևանքով չի կարող նրանց հետ միաժամանակ օրեր տևող աղոթքով Սուրբ Հոգու շնորհները խոնարհեցնելով հանգչեցնել օրհնության նույն յուղի մեջ: Մինչդեռ հայրապետական Աթոռը, որ նույն օրհնության յուղը սրբում է աղոթքով, հոգևորական պաշտոնյաների դասը, եպիսկոպոսների, քահանաների բովանդակ բազմությունը ճոխանալով փառաբանում է. ովքեր

պահքով, աղոթքով, բազմօրյա հսկմամբ և պաղատանքով (դիմում են) շնորհների Տիրոջը՝ աղերսելով, որ Նա Սրբալույս Մեռոնի նույն յուղի օրհնությամբ Աստվածային Հոգու մաքրության զորությունը տա, որով ըստինքյան շնորհունակ կդարձնի օծյալին՝ լինել Աստծո տաճար և աստվածային առաքինությունների բնակարան (...):

Ղազար վարդապետ Տեր-Մարտիրոսյան

«Պատասխաններ Կալվինականներին» (1838 թ.)

- ԻԳ -
ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

«Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ, ո՛չ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ. զի ծնեալն ի մարմնոյ մարմին է և ծնեալն ի Հոգւոյ՝ հոգի է» (Հովհ. Գ 5-6):

Դժվար է մեր ազգային-եկեղեցական կյանքի մեջ մի այլ կետ ցույց տալ, որ ընդհանուրի համար ավելի մեծ, ավելի նվիրական խորհուրդ բովանդակեր, քան այն րոպեն, երբ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո Քահանայապետը կանգնած է Միածնի Իջման Տաճարի բեմի վրա՝ Ս. Լուսավորչի Աջը ձեռքին, և թաթախում է լուսաթաթախ այդ սուրբ Աջը Սրբալույս Մյուռոնի կաթսայի մեջ, երբ ջերմեռանդ ուխտավորը, մոռացած յուր շուրջը տիրող ժխորն ու անձկությունը, մոռացած ողջ աշխարհի տագնապն ու հոգսերը, անզուսպ մի փափագ է զգում միայն՝ առաջ նետվել, ջերմ կաթսայի կողերին անդրանիկ ջերմ համբույրը դրոշմել. անպատում և սքանչելի մի զգացմամբ սիրտը լիքն է զգում և շրթունքներն է միայն շարժել կարողանում, անթարգմանելի մրմունջներով յուր Ամենակալ Տիրոջ հետ խոսում (...): Տարբեր եղանակավ և տարբեր պատկերով մեր հոգևոր տեսության դիմաց ներկայանում է այստեղ նույն այն խորհուրդը, որ մի օր Փրկչի կենդանի խոսքերի մեջ փարիսեցի գիտնական Նիկոդիմոսին ներկայացավ և այնչափ շփոթեցրեց նրան: Նիկոդիմոսների համար, որոնց ինքնագոհ, հպարտ միտքը քննության է ենթարկում երկինքն ու երկիր և մերժում, արհամարհում է այն, ինչ որ յուր նեղ, խղճուկ չափին համաձայն չէ, այսօր ևս ոչինչ չկա արտակարգ և խորհրդավոր իրենց տեսածի և լսածի մեջ: Նոքա պարզ արտաքին արարողություններն են միայն տեսնում և խորը թափանցել, այնտեղ ներգործող Հոգվո խորհուրդներն ըմբռնել չեն կարող. «Քանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա, և ոչ կարէ գիտել, եթէ հոգեպէս քննիցի»: Բայց ով մի անգամ ավազանի մկրտությամբ Ս. Հոգվո դրոշմ է ընդունել և մի նոր հոգևոր կյանքի համար վերածնվել, ով հոգևոր զավակ է Ս. Լուսավորչի և ենթակա է եղել նորա տան մեջ իշխող հոգվո ազդեցության, պետք է ընդունակ լինի զանց անելու առժամ յուր շնչավոր բնության թելադրությունները և հոգեպես քննելու Աստվածային Հոգվո անհասանելի տնօրինությունը: Եվ ի՞նչ կտեսնե նա. կանաչ Մյուռոնի այն փոքրիկ կաթսան մի ակնթարթի մեջ մեծանում՝ անեզր, լայնատարած մի ծով է դառնում, որ ողողում է հայաբնակ ողջ աշխարհը՝ դրախտի բուրմունք, երկնային ամենաառատ շնորհ սփռելով ամեն տեղ. նույն շնորհն անխտիր մեծատան ապարանքում և թշվառ պանդուխտի հալածանաց հարկի տակ. շնորհաբաշխ այդ սուրբ Մյուռոնի ամեն մի կաթիլ, հայ մանուկների ճակատին դրոշմած, դարձնում է նոցա լուսակեզ զառներ և Ս. Լուսավորչի փարախը ժողովում՝ Անմահ Երկնավոր Գառան շուրջը:

Ի՜նչպիսի վեհ խորհուրդ, ի՜նչ հրաշալի զորություն մի բուռն հասարակ յուղի մեջ: Սկ-

սած այն օրից, երբ առաջին անգամ մեր լեռները բարձրացավ Տիրոջ առաքյալը և խաչակնքեց այս երկրին, երբ նորակառույց Իջման Տաճարի բեմը բարձրացավ Տիրոջ այն մեծ խոստովանող մեր Ս. Լուսավորիչը և յուր կենդանի Աջով Ս. Մյուռոն օրհնեց նորահավատ հոտի համար, անթիվ անգամ կրկնվել է նույն խորհուրդը, և Աստվածային Հոգվո այդ չնաշխարհիկ զորությունը, օրհնյալ յուղի միջնորդությամբ, նորանոր սերունդներ է վերածնել հավիտենական կյանքի համար, ժառանգաբար մեկից մյուսին անցնելով, իբրև ամենաթանկագին ավանդ, իբրև հայ ժողովրդի հոգևոր միության ամենանվիրական երաշխիք: Եվ ամեն անգամ, երբ Ս. Էջմիածնի Տաճարում Մյուռոն է օրհնվում՝ Ս. Լուսավորչի Աջով, և հին Մյուռոնը նորի հետ խառնվում Լուսավորչի հաջորդի ձեռքով՝ զգում է յուր հոգու խորքում հայ քրիստոնյան, որ ամփոփվեցավ այդտեղ, նորոգվեցավ և կրկին պիտի ծավալի ի սփյուռս ամբողջ աշխարհի ժառանգական այն մեծ շնորհը, որ այդպիսով մի նոր հանգույց ևս ավելացավ հների վրա, ու երկարեց յուր և յուր ժողովրդի գաղափարական կյանքի թելը: Իսկ երբ դարձնում է երախտագետ հայացքը դեպի այն եկեղեցին, դեպի աստվածակերտ այն սուրբ տաճարը, որ յուր լուսեղեն կամարների տակ պահպանում է այդ կյանքը՝ աչքին չեն երևում այլևս նորա արտաքին անշքությունն ու անբարեզարդությունը, մտքից փախչում են նորա ներքին խեղճության համար ունեցած դառն հոգսերը՝ խորհրդավոր պայծառություն, հարատև անպարտելի զորություն է միայն տեսնում և պատրաստ է բացականչել այն հրաշախոս վարդապետի, Հովհան Երզնկացու հետ. «Այլ ի մեծն և ի գլխաւորական բարիսն երանելի ես և յոյժ խնդալի, վասնզի ուղղափառ հաւատոյ լոյս ոչ նուազեցաւ, ի բարի սերմունս ցորենոյն որոմն ապականիչ ոչ խառնեցաւ, զաղբիւր յստակ աւանդութեանց քոց աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեաց»:

Այո՛, Մյուռոնօրհնության վսեմ հանդեսը ամենից առաջ մխիթարություն է մեզ համար և կենդանի ոգևորության առիթ: Նա մեզ հիշեցնում է, որ ունինք մի բարիք, որ բոլորին փոխարինել կարող է, մի գանձ, որ անկողոպտելի է և անսպառ հարստության աղբյուր՝ Լուսավորչի Ս. Հավատը, այդ հավատը մեր մեջ ներշնչող և պահպանող հոգին. և քանի կենդանի է նույն հավատը, նորոգվում է նոր Մյուռոնի հետ և նորանոր սերուդների կյանք պարգևում նահատակ նախնյաց անմահության հոգին՝ կենդանի ենք և մենք, կենդանի է հայ անունը: Սակայն որչա՞փ ենք գնահատում արդյոք այդ երկնատուր բարիքը, որչա՞փ և ինչպե՞ս ենք շահեցնում ու գործադրում ժառանգաբար մեր ձեռքը հասած այն մեծ գանձը՝ պետք է հարցնենք անմիջապես, և այն ժամանակ ոգևորությունը տեղի կտա կրկին տխուր մտածությունների: Հոգին կենդանի ինչ է և միայն կենդանի կրծքերի ներքո կարող է պահել յուր զորությունը, որպեսզի ծավալի նա Ս. Մյուռոնի կաթիլների հետ և իրոք մի նոր սերնդի վերակենդանության պատճառ լինի, հարկավոր է, որ կենդանի և գործունյա լինի նախ ներկա սերնդի մեջ, կենդանի այն եկեղեցվո մեջ, որ յուր սրբազան խորհուրդներով հաղորդում է նորա զորությունը յուր զավակներին, բայց կենդանի, բանավոր դաստիարակության միջոցավ միայն արծարծում և ներգործական դարձնում: Արդյոք զգո՞ւմ ենք մեր մեջ այդ կենդանությունը: Նման չե՞նք արդյոք այն ծառային, որ յուր տիրոջից ստացած ավանդը տանում, գետնի տակն է թաղում և նորա շահեցման մասին ամենևին չէ հոգում:

Թո՛ղ ուրեմն յուրաքանչյուր հայի մեջ եռա նախնյաց այն աստվածաբաշխ հոգին Ս.

Մյուռոնի կաթսան Ս. Էջմիածնի Տաճարի բեմի վրա տեսնելիս, և բազուկները դեպի երկինք, դեպի Աստծո Միածին Որդին կարկառած՝ աղաչեն, որ վերակենդանացնե և արծարծե նույն հոգին Յուր թանկագին արյամբ գնված ժողովրդի մեջ. հրաշալի զորություն պարգևե օրհնյալ յուղի կաթիլներին՝ մի նոր սերունդ ի կյանս հրավիրելու, որ ոչ միայն մարմնով և արյամբ հարազատ ժառանգ լինի քրիստոնյա հայության, այլ հոգվով՝ դեպի Աստծո արքայություն առաջնորդող Հոգվով. «Զի ծնեալն ի մարմնոյ մարմին է և ծնեալն ի Հոգւոյ՝ հոգի է», զի «Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ»:

Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան

«Արարատ», 1897 թ.

- Մեր նոր, ինքնիշխան պետության անկախության հիմքերից մեկն է նաև հայ ազգի Եկեղեցու անկախությունը և ինքնիշխանությունը:

Մենք դավանում ենք Հավատամքը՝ մեկ ազատ ազգություն,

մեկ անկախ պետություն,

մեկ անկախ ազգային Եկեղեցի:

Այս հավատամքով, այս գիտակցությամբ, Սուրբ Հոգու զորությամբ այս Սրբալույս Մյուռոնը Մենք հռչակում ենք Անկախության Մյուռոն:

Հայե՛ր, հոգևոր զավակներ Մեր, այս սրբազան Մյուռոնով միացե՛ք, եղբայրացե՛ք, եղե՛ք մեկ կամք, եղե՛ք մեկ ուրախություն, եղե՛ք մեկ ցավ: Եղեք մե՛կ ազգ, մե՛կ ընտանիք, մե՛կ ժայռացած երդում և հավատացե՛ք մեր այս մի բուռ հայրենի հողին ու նրա գալիքին, սուրբգրական Արարատի հայացքի տակ, Սուրբ Էջմիածնի օրհնության ներքո:

ՎԱՉԳԵՆ Ա

1991 թ. սեպտեմբերի 29-ի Մյուռոնօրհնության
ժամանակ խոսված քարոզից

Բոլորս ալ գիտակից ենք այն հոգևոր պայծառ իրողութեան, որ Միւռոնը ոչ միայն Աստուածային կնիքն է Ս. Հոգւոյն, այլև «Ճակտի գիր»ին պէս ազգային դրոշմը հայ մարդու իւրայատուկ կերպարին և ինքնուրոյնութեան դիմագծութեանը: Միւռոնը մեր քրիստոնէական հայկականութեան խորհրդանիշն է, մեր ինքնութեան և արժանապատուութեան ցուցանիշը, մեր միութեան սրբազան շաղախը, մեր հոգեկան կեանքի աւիշը, որ մեր հոգևոր ծառի՝ Հայոց Առաքելական Եկեղեցու արմատներից արտաբխում է որպէս կենսայնութեան և պտղաբերութեան աղբիւր: Հին Միւռոնն այսօր ահա խառնուեց նորին մէջ և մեր Եկեղեցու դարաւոր կեանքի անբեկանելի շարունակականութեան զօրութիւնը լցրեց մեր հոգիների մէջ՝ մեր նոր կեանքին որպէս մղիչ ոյժ և մեր ազգային ամբողջականութեան որպէս կաթ մայրենի և հաց կենդանի:

ԳԱՐԵԳԻՆ Ա

1996 թվականի սեպտեմբերի 8-ի
Մյուռոնօրհնության ժամանակ խոսված քարոզից

Այսօր Մյուռոնօրհնության սրբազան խորհրդով վերստին ողջագուրվեցին անժամանակն ու անցավորը, միավորվեցին Աստվածայինն ու նյութեղենը, և ծնվեց 1700-ամյակի

Սրբալույս Մյուռոնը հայոց՝ կրելով իր մեջ անկախության ու վերածննդի ոգին և հավատը հաղթանակների, որով պիտի մկրտվեն մեր զավակները, օծվեն մեր եկեղեցիները, սրբվի և օրհնվի հանուր հայ կյանքն ի սփյուռս, և Աստված պիտի բնակվի ու գործի հայոց մեջ: Արդարև, Մյուռոնը մեզ է սպասում՝ Երկնային Սիրո անուշաբույրով: Ընդունենք 1700-ամյակի Մյուռոնը այն խնդությամբ, միաբանության այն սիրով, որով մեր նախնիք դիմավորում էին Սուրբ Մյուռոնը հայոց թեմեր տանող Մայր Աթոռի նվիրակներին:

Տեսնե՛նք նախախնամական տնօրինությունը մեր կյանքում, որով կանչված ենք լինելու ազգ սուրբ և Աստծո սեփական ժողովուրդ, հրավիրված ենք Մյուռոն կրելու, Մյուռոնով շնորհընկալը լինելու Քրիստոսապարգև ազատությանը և որդեգրությանը հավիտենական կյանքի: Հիրավի, Աստծո կամքն է առաքելահաստատ Հայ Եկեղեցու Մյուռոնով մեզ հայ պահել, մահաբեր փորձությունների, ավերների, կորուստների քառուղիներում հարության առաջնորդել, հողմերից աշխարհեաշխարհ սփռված՝ Հայրենիքով և Սուրբ Էջմիածնով մեկ ու միասնական պահպանել: Աստծո խնամատար ներկայության այս գիտակցությամբ ու հավատով ապրենք ու ապրեցնենք մեր սրտերում հայոց Մյուռոնի բազմափայլ խորհուրդը և հեռու լինենք օտարամուտ քարոզություններից, օտարացնող ու մոլորեցնող ուղղություններից: Ճանաչենք մեզ որպես Հայ Եկեղեցի, որպեսզի կարողանանք ճիշտ ըմբռնել մեր առաքելությունը՝ իմաստը մեր կյանքի, որպեսզի անսայթաք լինի մեր ուղին և հավետ առաջնորդի դեպի Սուրբ Տաճարն Աստծո:

ԳԱՐԵԳԻՆ Բ

2001 թվականի սեպտեմբերի 22-ի

Մյուռոնօրհնության ժամանակ խոսված քարոզից

Գրաբարից աշխարհաբարի վերածեց
*և կազմեց՝ **Հակոբ Քյոսեյանը***

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՎԻՐՎԱԾ
ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻՆ

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆԻ «ՍՈՒՐԲ ՄՅՈՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ» ԳՐՔԻ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մյուռոնօրհնության առիթով Մայր Աթոռի հրատարակչական բաժինը վերահրատարակել է 20-րդ դարի նշանավոր եկեղեցական և մեծավաստակ գիտնական Տ. Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի «Ս. Միւռոնի օրհնութիւնը» ուսումնասիրությունը, որն առաջին անգամ լույս է տեսել 1912 թ. «Արարատ» ամսագրում: Ուսումնասիրությունը վերահրատարակության է պատրաստել Մայր Աթոռի արխիվի և թանգարանների տնօրեն Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը:

Կարապետ Սրբազանն իր ուսումնասիրությունում անդրադառնում է Հին և Նոր Կտակարաններում օծության յուղի մասին հիշատակություններին, բացատրում Մյուռոնի խորհուրդը, նրա գործածությունը Հայ Առաքելական Եկեղեցու ծիսակարգում՝ ընդգծելով Ս. Մյուռոնի նշանակությունը մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքում:

Գրքում որպես հավելված ներկայացված են Ս. Մյուռոնի օրհնության երեք սրբությունների՝ Կենաց փայտի մասունքով Ս. խաչի, աստվածամուխ Ս. Գեղարդի և Ս. Գրիգոր Լուսավորչի Աջի, ինչպես նաև Մյուռոնօրհնեքի ժամանակ գործածվող որոշ սրբազան մասունքների և առարկաների 23 լուսանկարներ:

2008 ԷՋՄԻԱԾԻՆ Թ *157*

ԳԻՐՔ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԵՎ ՄԻՋԵԿԵՂԵՑԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ լույս է տեսել Մայր Աթոռի էկումենիկ և միջեկեղեցական կյանքը լուսաբանող «Ծառայության մեջ և եղբայրությամբ» վերտառությամբ հայերեն և անգլերեն լեզուներով պատկերազարդ գիրքը, որն անդրադառնում է արդի շրջանում Հայ Եկեղեցու միջեկեղեցական հարաբերություններին և Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության շրջանում Մայր Աթոռի միջեկեղեցական գործունեությանը: Գրքի գլխավոր խմբագիրը Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանն է, հեղինակը՝ Մայր Աթոռի միջեղեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը: Անգլերեն թարգմանությունը կատարել է Մայր Աթոռի միաբան Տ. Վահան ծ. վրդ. Հովհաննիսյանը:

Գրքի առաջին մասը սկսվում է էկումենիզմի և էկումենիկ շարժմանը Հայ Եկեղեցու մասնակցության մասին փոքրիկ առաջաբանով, որին հաջորդում է 1965 թ. Վազգեն Ա Վեհափառի Եկեղեցիների միության հարցի շուրջ նշանավոր Սրբատառ Կոնդակը: Տեղեկատվությամբ հարուստ այս աշխատության մեջ անդրադարձ է կատարվում Հայ Եկեղեցու անդամակցությանը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին, Հայոց Եկեղեցու ունեցած դերակատարությանն այդ կազմակերպության մեջ, Ուղղափառ և Արևելյան Ուղղափառ, Հռոմեական Կաթոլիկ, Անգլիկան, Ռեֆորմիստական Եկեղեցիների հետ մեր Եկեղեցու վարած աստվածաբանական երկխոսություններին և խորհրդակցություններին, տրվում են նաև Հայոց Հայրապետների և քույր Եկեղեցիների պետերի և առաջնորդների միջև ստորագրված համատեղ հայտարարությունների, հռչակագրերի և հաղորդագրությունների ժամանակագրական ցանկերը:

Գրքի երկրորդ բաժինը նվիրված է Գարեգին Բ Հայրապետի ժամանակ առավել ընդգծված Մայր Աթոռի միջեկեղեցական և միջկրոնական գործունեությանը:

Վերջում տրված են Հայոց Հայրապետի միջկրոնական և միջեկեղեցական այցելությունների, Մայր Աթոռին քույր Եկեղեցիների գահակալների և կրոնապետերի, էկումենիկ կազմակերպությունների ղեկավարների և պատվիրակությունների, օտար բարձրաստիճան եկեղեցականների այցելությունների և Հայաստանում անցկացված համաժողովների ժամանակագրական ցանկը:

«ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՆՁԵՐՆ ԱՇԽԱՐՀԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ»

Հրամանավ Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սրբալույս Մյուռոնի օրհնության առիթով լույս է ընծայվել «Սուրբ Էջմիածնի գանձերն աշխարհի թանգարաններում» գունավոր և շքեղ ձևավորմամբ ալբոմը աշխատասիրությամբ Տ. Ասողիկ քահանա Կարապետյանի:

Եռալեզու՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն այս աշխատանքը տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչատանը մեկենասությամբ տեր և տիկին Վրեժ և Անահիտ Մարկոսյանների:

Գիրքը բացվում է Վեհափառ Հայրապետի Օրհնության խոսքով, որում ի մասնավորի ասվում է. «*Հոգու ուրախությամբ ենք ողջունում «Սուրբ Էջմիածնի գանձերն աշխարհի թանգարաններում» ալբոմի հրատարակումը, որտեղ ներկայացվում են մեր հոգևոր արժեքները, որոնք դարերի մեջ ստեղծված, պահպանված ու մեզ ավանդված սրբություններ են:*

Նվիրական այդ գանձերի մեջ արտահայտված են մեր ժողովրդի հոգևոր կյանքը, ձգտումներն ու իղձերը և աղոթքն առ Աստված, որով ստեղծվել են ու կերտվել որպես արվեստի գործեր: Միաժամանակ այդ արժեքները ներկայացնում են մեր ժողովրդի պատմության էջերը, մեր հնագույն վանքերն ու մշակույթի կենտրոնները Հայրենիքում և տարբեր գաղթօջախներում: Դրանցից շատերը փրկվել են աղետներից ու ավերածություններից, պահպանվել ու մեզ հասել զրկանքներով ու անձնազոհությամբ, հավատքով մեր ժողովրդի, որ այսօր ապրում ու արարում է և նոր կյանք կառուցում նույն հավատքով, առ Տերն մեր Հիսուս Քրիստոս նույն ապավինությամբ:

Դարակազմիկ հոբելյանի՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով, որը մեր ժողովուրդը տոնախմբեց 2001 թ., Սուրբ Էջմիածնի գանձերը ցուցադրվեցին աշխարհի բազմաթիվ նշանավոր քաղաքներում և հանրահայտ թանգարաններում՝ ճանաչելի դարձնելով հոգևոր մեր ժառանգությունը բազմազգ հազարավոր այցելուների: Միմյանց մշակույթին առնչվելն այն բարեբեր ուղիներից է, որոնցով արգասավորվում են ժողովուրդների բարեկամությունը և ամրապնդվում են համագործակցության ուղիները: Աստվածահաճո այդ առաքելությունը շարունակվում է «Սուրբ Էջմիածնի գանձերն աշխարհի թանգարաններում» պատկերազարդ այս գրքի հրատարակումով»:

Գրքում ներկայացվում են U. Էջմիածնում պահվող այն սրբությունները, որոնք 1995-2007 թթ. ցուցադրվել են աշխարհի տարբեր թանգարաններում:

«ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆ»

Մյուռոնօրհնության առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Մայր Աթոռի հրատարակչությունը լույս է ընծայել նաև «Սրբալույս Մյուռոն» գիրքը, որում տարբեր հեղինակների կողմից առանձին բաժիններով ներկայացվում են Սրբալույս Մյուռոնի հոգևոր խորհուրդը, Մյուռոնի մասին եղած պատմական վկայությունները, օրհնության արարողությունը և բաշխումը աշխարհասփյուռ հայությանը, ինչպես նաև Մյուռոնի պատրաստության համար անհրաժեշտ բույսերը համապատասխան կարգաբանական դասակարգմամբ:

Սրբալույս Մյուռոնի հոգևոր խորհրդին, օրհնության արարողության մասին պատմության մեջ եղած հիշատակությունների քննությանը, օրհնության կանոնին և Ս. Մյուռոնով կատարվող օծություններին, ինչպես նաև Ս. Մյուռոնի ժողովրդական պաշտամունքին նվիրված մասը գրել է Վարդան Դևրիկյանը, Տ. Արշակ եպս. Խաչատրյանը գրել է «Սրբալույս Մյուռոնի բաշխումը նվիրակությամբ», Նազիկ Խանջյանը և Սիրանուշ Գալստյանը՝ «Սրբալույս Մյուռոնի բույսերի բնագիտական մեկնություն» բաժինները:

Գրքի վերջում բերվում են Հայոց Եկեղեցու հայրերի և հայ պատմիչների երկերում Սրբալույս Մյուռոնի մասին եղած վկայությունները, որոնք հավաքել և աշխարհաբար թարգմանությամբ ներկայացրել է Հակոբ Քյոսեյանը:

Այս գրքի համառոտ տարբերակը Վ. Դևրիկյանի աշխատությամբ հրատարակվել է նաև ռուսերեն և անգլերեն:

Գրքի հայերեն հրատարակության խմբագիրն է Վանուհի Եղիշյանը, ռուսերեն տարբերակինը՝ Տ. Վահրամ քհն. Մելիքյանը և Գայանե Պողոսյանը, անգլերենինը՝ Գայանե Պողոսյանը, ռուսերեն թարգմանությունը կատարել է Խորեն Դիլանյանը, անգլերենը՝ Լիլիթ Սարգսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



ԲԱՑՎԵՑ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 2008-2009 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԸ

Սեպտեմբերի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 2008-2009 թթ. ուսումնական տարվա բացման արարողությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները, ՀՀ Կրթության և գիտության նախարար Սպարտակ Սեյրանյանը, ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ կառավարարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության պետ Վարդան Ասծատրյանը, բարձրաստիճան պաշտոնյաներ ու զինվորականներ:

Հանդիսությանը բացման խոսք ասաց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ Տ. Դավիթ աբեղա Քարամյանը: Այնուհետև Ճեմարանի ուսումնական տարվա բացման առիթով ամենքին շնորհավորեց ՀՀ Պաշտպանության նախարարը: Մեծապես կարևորելով Եկեղեցու և բանակի համագործակցությունը՝ տիար Սեյրան Օհանյանը տեղեկացրեց, որ այսուհետ այդ համագործակցությունը նոր որակ կստանա՝ նշելով, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և հայոց բանակի հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի հետ համատեղ մշակել են մի ծրագիր, համաձայն որի՝ ոչ միայն հոգևորականները բանակում կիրականացնեն հոգևոր կրթադաստիարակչական առաքելություն, այլև բարձրաստիճան զինվորականներ դասընթացներ կանցկացնեն հոգևոր կրթօջախներում:

Այնուհետև ելույթ ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը: Իր հորդորն ուղղելով ճեմարանականներին՝ Սահակ Սրբազանն ասաց. «Ձեր ընտրած ուղին նախ և առաջ երկնային կոչում է՝ դառնալ Աստծո քահանաներ և երկնքի շնորհները բաժանել մարդկանց: Հետևաբար պետք է շատ լավ իմանաք, թե ո՞վ է Աստված և ո՞վ է մարդը՝ իր հոգու և մտքի խնդիրներով ու պահանջներով: Ձեզ պատրաստում ենք, որպեսզի Ավետարանի բարի լուրը տարածեք հոգևոր մխիթարանքի կարիք ունեցող մեր ժողովրդի զավակներին: Ձեզ է սպասում իր հոգսերով տարված երիտասարդը, հիվանդանոցի մեջ տառապողը, աղքատը և հարուստը: Մանուկները սպասում են ձեզ, որպեսզի սովորեցնեք նրանց «Հայր մերը» և ցույց տաք Եկեղեցու ճանապարհը: Մենք՝ եկեղեցականներս, սպասում ենք ձեզ, որպեսզի լրացնեք մեր պակաս շարքերը, և զորանանք ձեր երիտասարդությամբ ու թարմ ուժերով»:

Հանդիսության ընթացքում ելույթ ունեցավ նաև ՀՀ Կրթության և գիտության նախարարը: Պատահական չհամարելով իր և Պաշտպանության նախարարի ներկայությունը Ճեմարանի բացման հանդիսությանը՝ տիար Սպարտակ Սեյրանյանը նշեց, որ մարտի դաշտում զինվորի համար լրացուցիչ ուժ են հավատն ու գիտելիքը: Նա նաև ընդգծեց, որ հավատով ու գիտելիքով զորեղացած՝ մեր ժողովուրդը կարող է դիմագրավել բոլոր մարտահրավերներին:

Հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Որպես պատգամի նյութ ընտրելով Ավետարանի սերմնացանի առակը՝ Նորին Սրբությունն անդրադարձավ հոգևորականի կոչմանն ու առաքելությանը ժողովրդի կյանքում՝ լինելու սերմնացաններ հայոց անդաստանում: *«Առաջին պատգամը, որ այսօր հնչում է մեր սաների համար, սերմնացանի առակն է: Դաշտն իրենց՝ հայորդյաց հոգին է, որ պիտի հերկեն և պիտի մշակեն: Եվ այնտեղ պիտի ցանեն բարի հունդեր, որպեսզի արդյունքը լինի բեղուն և արգասաբեր»,* - նշեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը նաև իր գնահատանքի խոսքն ուղղեց դասախոսական կազմին՝ ընդգծելով, որ նրանք իրենց բազմաթիվ տարիների փորձն ու գիտելիքների ամբողջ ներուժը ներդնում են ապագա հոգևորականների կերտման գործում և որ նրանց շնորհիվ է, որ Ճեմարանի սաները քաջատեղյակ են դառնում Եկեղեցու հայրերի ժառանգությանը, ինչը մեծ կարևորություն ունի ապագա հոգևորականի կերտման գործում:

Հանդիսության ընթացքում հոգևոր ու ժողովրդական երգերի կատարումներով և ասմունքով հանդես եկան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀԵԵԿ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Համազգային Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպության Կենտրոնական խորհրդի հայաստանյան ներկայացուցիչների ժողով՝ նախագահությամբ ՀՀԵԵԿ ընդհանուր պատասխանատու Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի: Ժողովին ներկա էր նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ՀՀԵԵԿ հոգևոր պատասխանատու Տ. Մաղաքիա աբեղա Ամիրյանը:

Ժողովին ներկայացվեցին ՀՀԵԵԿ հանձնախմբերի գործառույթները, թեմատիկ քննարկումների արդյունքները, առաջիկա գործողությունների ծրագիրը և առկա խնդիրները:

Քննարկվեց նաև Կենտրոնական խորհրդի հաջորդ նիստի գումարման վայրի և ժամանակի հարցը, ինչպես նաև գործադիր մարմնի տեղական ժողովի հարցը, որը տեղի կունենա հոկտեմբեր ամսին: Մինչև գործադիրի ժողովը տեղի կունենան թեմական այցելություններ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 18-19-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղան բարգործական միջեկեղեցական հիմնադրամի տարեկան հերթական ժողովը՝ մասնակցությամբ հիմնադրամի միջազգային և Հայաստանյան գործընկեր կազմակերպությունների և եկեղեցիների ներկայացուցիչների: Ժողովը նախագահում էր հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Սեպտեմբերի 18-ին ժողովն սկսվեց Տերունական աղոթքով, ապա բացման խոսք ասաց Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Սրբազան Հայրը ողջունեց ներկաներին և հաջողություն ու բարի ընթացք մաղթեց ժողովի աշխատանքներին:

Ժողովի մասնակիցներին ցուցադրվեց Հայաստանի ու Ադրբեջանի սահմանամերձ գյուղերի բնակիչների հետպատերազմական կյանքը ներկայացնող «Պատերազմ պատերազմից հետո» ֆիլմը, որի դիտումից հետո քննարկվեցին տարածաշրջանի վերջին զարգացումները, ինչպես նաև տարածաշրջանային խաղաղության ու հաշտեցման և հետագա զարգացման ծրագրեր:

Այնուհետև ՀԿՍ-ի գործադիր տնօրեն դոկտոր Կարեն Նազարյանը ներկայացրեց հիմնադրամի 2007-2008 թթ. գործունեության հաշվետվությունը, որը ըստ գործունեության ոլորտների շարունակեցին ՀԿՍ-ի ծրագրերի պատասխանատուները: Ժողովականների ուշադրությանը հանձնվեց նաև հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունը:

Ժողովն իր աշխատանքները շարունակեց նաև սեպտեմբեր 19-ին: «Սոցիալական դիակոնիան Հայաստանում և այլուր» թեմայի շրջանակներում զեկույցներ ներկայացրեցին Հայ Առաքելական Եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը, ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի աշխատակից Աննա Ոսկանյանը, Գերմանիայի բողոքական Եկեղեցիների սոցիալական ծառայությունների գործակալության Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի ծրագրերի պատասխանատու Ուտա Կոհլեր-Բաբանինը և ՀԿՍ-ի գործադիր տնօրեն պրն Կարեն Նազարյանը: Այնուհետև աշխատանքային քննարկումները շարունակվեցին փոքր խմբերում: Քննարկումների արդյունքում հստակեցվեցին Կլոր Սեղանի հետագա ծրագրերն ու անելիքները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 5-ին Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանում հերթական անգամ հանդիսավորապես նշվեց Ուսուցչի օրը:

Ուսուցչի օրը որպես տոն սեպտեմբերի 5-ին նշելը հատուկ է միայն հնդիկ ժողովրդին: Այն ունի իր յուրահատուկ պատմությունն ու ավանդույթը, որը սկիզբ է առել 1962 թ.: 1947 թ. Հնդկաստանի անկախացումից հետո երկրի երկրորդ նախագահն էր մեծ գիտնական-փիլիսոփա և մանկավարժ դոկտ. Ռադհա Կրիշնան, որը համեստորեն հրաժարվել էր հանդիսավորապես նշելու իր ծննդյան տարեդարձը, սակայն փոխարենը սեպտեմբերի 5-ը հռչակել էր որպես ազգային տոն՝ նվիրված Հնդկաստանի բոլոր ուսուցիչներին, որը տոնվում է մինչ օրս ողջ Հնդկաստանում:

Տոնի առիթով ճեմարանի սաները պատրաստել էին ուսուցիչներին նվիրված հանդիսություն: Հանդիսությունը սկսվեց Տերունական աղոթքով, այնուհետև ճեմարանականները ներկա գտնվող ողջ ուսուցչական կազմին նվիրեցին իրենց ձեռքով պատրաստված հուշանվերները, որին հաջորդեց նաև գեղարվեստական ծրագիր, ուր ճեմարանի սաները հանդես եկան երգ ու պարով, արտասանությամբ, երաժշտական կատարումներով, ինչպես նաև փոքրիկ թատերական բեմադրությամբ:

Հանդիսության գեղարվեստական ծրագրի ավարտին սաները հրավիրեցին ճեմարանի տնօրեն պրն Սումիտրա Մալիկին՝ իր սրտի խոսքն ուղղելու ներկաներին: Տնօրենը ջերմորեն շնորհավորեց բոլոր ուսուցիչներին՝ ընդգծելով ուսուցչի առաքելության կարևորությունն ու դերը աշակերտի կյանքում:

Ավարտին ներկաներին օրհնության ու գնահատանքի խոսքով դիմեց նաև Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հոգեշնորհ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Հայր Սուրբը նախ ջերմորեն շնորհավորեց ճեմարանի ուսուցչական կազմին օրվա տոնի կապակցությամբ, այնուհետև անդրադարձավ օրվա խորհրդին՝ հատկանշելով հայոց առաջին ուսուցիչներ Սահակ-Մեսրոպյան թարգմանչաց սերնդի անգնահատելի ավանդն ու անձնուրաց նվիրումը հայ գրչությանը և դպրությանը՝ հորդորելով ուսուցիչներին կյանքում նույն անձնուրաց և անշահախնդիր նվիրումով վերաբերվել իրենց առաքելությանը:

Հաղիսության ավարտից հետո ուսուցիչները մասնակցեցին նաև աշակերտների կողմից պատրաստված զվարճալի անակնկալ ծրագրին, որը հագեցած էր ժամանցային խաղերով, երգ ու պարով, արտասանությամբ, անակնկալ մրցանակներով և այլն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՎԱՔ ԼԻՈՆՈՒՄ

Սեպտեմբերի 10-12-ը Ֆրանսիայի Լիոն քաղաքում տեղի ունեցավ «Ապագա Կոնֆերանսը 2009 թվականին» խորագիրը կրող էկումենիկ հավաք՝ նախաձեռնությամբ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի:

Հավաքին մասնակցում էին ավելի քան հարյուր աշխարհիկ և հոգևորական ներկայացուցիչներ Եվրոպական Եկեղեցիներից, Եվրոպայում գործող ուղղափառ և բողոքական երիտասարդական կազմակերպություններից, էկումենիկ ինստիտուտներից: Հավաքին հրավիրվել էին նաև սոցիոլոգներ, լրագրողներ և քաղաքագետներ:

2009 թվականի հուլիսին Լիոն քաղաքում կայանալիք Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի 13–րդ համագումարից առաջ հրավիրված այս հավաքի ընթացքում մասնակիցները անդրադարձան Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի անցած 49 տարիների գործունեությանը, ժամանակակից մարտահրավերների լույսի ներքո նրա հրամայականներին: Տեղի ունեցան արդյունավետ քննարկումներ Կոնֆերանսի ապագա գործունեության, այս կառույցի Եկեղեցիների համագործակցությանը ծառայելու կարևոր առաքելության վերաբերյալ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հավաքին մասնակցեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը և իրավաբանական և փիլիսոփայական գիտությունների դոկտ. Թոմ Սամվելյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

16-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԲՈՍԵԻ ՎԱՆՔՈՒՄ

Սեպտեմբերի 18-21-ը Իտալիայի Բոսեի վանքում տեղի ունեցավ Բոսեի վանքի, Կոստանդնուպոլսի և Մոսկվայի Պատրիարքությունների կողմից կազմակերպված հերթական 16-րդ միջազգային էկումենիկ կոնֆերանսը «Հոգևոր Հայրը Ուղղափառ ավանդության մեջ» թեմայով:

Ժողովում քննարկվեցին ժամանակակից աշխարհում հոգևոր հայրության համակարգի զարգացմանը վերաբերող հարցեր:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ Տ. Դավիթ աբդ. Քարամյանը: Հոգեշնորհ Հայր Սուրբը ներկաներին փոխանցեց նաև Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքը:

«ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՄԻԼԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 24-ից 28-ը Միլան քաղաքում տեղի ունեցավ Համաեվրոպական Քրիստոնեական բնապահպանական ցանցի 7-րդ համագումարը՝ «Կլիմայի փոփոխության հիմնական մարտահրավերները» թեմայով, որին մասնակցում էին ավելի քան 100 պատվիրակներ Եվրոպական 27 երկրներից:

Համաժողովի մասնակիցներն անդրադարձան անցյալ տարի սեպտեմբերին Ռումինիայի Սիբիու քաղաքում տեղի ունեցած Համաեվրոպական երրորդ էկումենիկ համագումարի ընթացքում բնապահպանական խնդիրների առնչությամբ կատարված առաջարկներին, որոնցով կոչ էր ուղղվում Եկեղեցիներին առանձին օրեր սահմանել որպես «Արարչագործության օր» և այդ օրերին անդրադառնալ բնապահպանական խնդիրներին:

Ժողովի ընթացքում անդրադարձ կատարվեց աշխարհում կլիմայի փոփոխության խնդրին և այս առնչությամբ Եկեղեցիների առջև ծառացած մարտահրավերներին: Խնդրի շուրջ լսվեցին տարբեր եկեղեցիների ներկայացուցիչների հայտնած կարծիքները:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուց ժողովին մասնակցում էր Սևանի Վազգենյան Դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սարոյանը, ով ժողովականներին ներկայացրեց Վազգենյան Դպրանոցում իրականացվող «Կանաչ Աստվածաբանություն» ծրագիրը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ 51-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Դատավորների միջազգային միության տարեկան 51-րդ համաժողովի մասնակիցներին:

Նորին Սրբությունը ողջունեց աշխարհի 53 երկրներից Հայաստան ժամանած դատավորներին՝ ուրախություն հայտնելով Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին նրանց այցի առիթով: Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ դատավորի կարևոր դերակատարությանն արդար հասարակություն կերտելու գործում: Այս առնչությամբ Նորին Սրբությունն ընդգծեց, որ արդարադատությունը պիտի նպաստի բարության ամրապնդմանը հասարակական կյանքից ներս: Վեհափառ Հայրապետը նաև անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելությանը հայ ժողովրդի կյանքում:

Նույն օրը համաժողովի մասնակիցները շրջեցին Մայր Աթոռում և թանգարաններում՝ ծանոթանալով ամենայն հայոց հոգևոր կենտրոնի հոգևոր-մշակութային արժեքներին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՉԵԽԻԱՅԻ ՍԵՆԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՇԵՄԻՍԼ ՍՈԲՈԴԿԱՅԻՆ

Սեպտեմբերի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չեխիայի Սենատի նախագահ Պրշեմիսլ Սոբոդկայի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրի այցը ամենայն հայոց հոգևոր կենտրոն՝ Վեհափառ Հայրապետը համառոտ ներկայացրեց պատմության ընթացքում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անցած դժվարին ուղին և առաքելությունը հայ ժողովրդի կյանքում: Նորին

Սրբությունը գոհունակությամբ արձանագրեց, որ այսօր երկիրն ազատ ու անկախ է, և Եկեղեցին հնարավորություն ունի ազատորեն իրականացնելու իր առաքելությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն հայտնեց, որ Հայաստանի և Չեխիայի միջև հարաբերությունները ջերմանում և առաջընթաց են ապրում, ինչը պիտի բարի արդյունքներ բերի երկու ժողովուրդներին: Նորին Սրբությունը նաև շնորհակալություն հայտնեց Չեխիայի իշխանություններին հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար:

Իր հերթին Պրշեմիսլ Սոբոդկան, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, մեծապես կարևորեց Հայ Եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում՝ ընդգծելով պատմության ընթացքին Եկեղեցու զորակցությունը ժողովրդին, և ապա անդրադարձավ երկու երկրների միջև առկա հարաբերություններին և համագործակցությանը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ տարածաշրջանում խաղաղության հաստատման ու ամրապնդման անհրաժեշտությանը: Որպես մեծագույն արժեք նկատելով ժողովուրդների ազատ ու խաղաղ կյանքը՝ մեծապես կարևորվեց Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորումը բանակցային խաղաղ գործընթացի շրջանակում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՌՈՒՍԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՕՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 14-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ռուսական խոսքի օրերը Հայաստանում» միջոցառման շրջանակներում Հայաստանում գտնվող ռուս անվանի գրողների, գրականագետների, խմբագիրների և լրագրողների պատվիրակությանը՝ գլխավորությամբ Հայաստանի հետ բարեկամության և համագործակցության ռուսաստանյան ընկերության նախագահ Վ. Վ. Կրիվոպուսկովի և ուղեկցությամբ Զորի Բալայանի:

Հանդիպմանը Նորին Սրբությունը Հայրապետական իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց «Ռուսական խոսքի օրերը Հայաստանում» նախաձեռնության կազմակերպիչներին՝ կարևոր նկատելով նման միջոցառումների անցկացումը հայ և ռուս ժողովուրդների միջև առկա բարեկամության առավել ամրապնդման համար:

Իրենց հերթին նախաձեռնության մասնակիցները ներկայացրեցին անցած օրերի իրենց տպավորությունները: Ներկաները կարևոր նկատեցին նաև Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների դերը երկու հավատակից ժողովուրդների հումանիտար և մշակութային կապերի պահպանման և զորացման գործում:

Հանդիպման ավարտին պրն Կրիվոպուսկովը հանուն Հայաստանի հետ բարեկամության և համագործակցության ռուսաստանյան ընկերության Վեհափառ Հայրապետին հանձնեց Վալերի Բրյուսովի անվան շքանշան՝ ռուս-հայկական հումանիտար և մշակութային կապերի զարգացման մեջ կարևոր ներդրում ունենալու համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՆՍ-ՅՈՒՐԳԵՆ ՊԱՊԻԵՐԻՆ

Սեպտեմբերի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Հանս-Յուրգեն Պապիերին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հյուրերին, անդրադարձավ հայ-գերմանական բարեկամական հարաբերություններին և սերտացող կապերին: Նորին Սրբությունը նաև իր օրհնությունը բերեց երկու դատարանների գործունեությանը և առաքելությանը:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Հանս-Յուրգեն Պապիերին շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության համար և անդրադարձավ Հայաստան այցի ընթացքում ունեցած հանդիպումներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 7-ին, կիրակի - Դ. կիր. զկնի Վերափոխման։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը *«Դեռ որովայնում չստեղծած Ես ընտրեցի քեզ և դեռ արգանդից դուրս չեկած՝ սրբացրի քեզ» (Երեմիա Ա 5) բնաբանով* քարոզ խոսեց (տե՛ս էջ 48)։

Սեպտեմբերի 8-ին, երկուշաբթի - Տօն Ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դավիթ աբեղա Քարամյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 50)։

Սեպտեմբերի 14-ին, կիրակի - Խաչվերաց։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Գերաշնորհ Սրբազան Հայրը *«Որ զանարատ բազուկս Քո ի Խաչին տարածեցեր, Քրիստոս Աստուած և Նշան Յաղթութեան ետուր մեզ»* բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 45)։

Սեպտեմբերի 20-ին, շաբաթ - Տօն է Խաչի։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Գերաշնորհ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց։

Սեպտեմբերի 21-ին, կիրակի - Բ կիր. զկնի Խաչի։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Գերաշնորհ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց։

Սեպտեմբերի 28-ին, կիրակի - Գ կիր. զկնի Սրբոյ Խաչի։ Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի։ Միւռոնօրհնեք։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ռոկան արքեպիսկոպոս Գալփաքյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Գերաշնորհ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց։

“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Сентябрь 2008)

1. Редакционная статья, посвященная освящению Святого Мира (с. 3-4).
2. Слово Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян на церемонии освящения Святого Мира, 28 сентября 2008 г., (с. 5-7).
3. Заседание Комиссии по организации освящения Святого Мира в Первопрестольном Святом Эчмиадзине, 11 сентября 2008 г. (с. 8).
4. В Первопрестольном Святом Эчмиадзине совершено освящение отвара цветов, входящих в состав Святого Мира, и началось мироварение, 14 сентября 2008 г. (с. 9).
5. Выставка в Первопрестольном Святом Эчмиадзине по случаю Мироосвящения, 25 сентября 2008 г. (с. 10).
6. Открытие нового здания телекомпании ,,Шогакат”, действующей при Первопрестольном Святом Эчмиадзине, 26 сентября 2008 г. (с. 11-12).
7. Его Святейшество Гарегин II, Католикос Всех Армян, освятил в Святом Эчмиадзине часовню-крестильню Св. Вардан и Св. Иоанн-Креститель, 26 сентября 2008 г. (с. 13-14).
8. Панихида за упокой душ жертв Армянского Геноцида, 27 сентября 2008 г. (с. 15).
9. Экуменическая молитва в Кафедральном соборе Св. Григория Просветителя в Ереване, 27 сентября 2008 г. (с. 16-17).
10. Его Святейшество Гарегин II, Католикос Всех Армян освятил Святое Миро в Первопрестольном Святом Эчмиадзине, 28 сентября 2008 г. (с. 18-20).
11. Его Святейшество Гарегин II, Католикос Всех Армян принял делегацию Индийской Церкви Маланкара, 29 сентября 2008 г. (с. 21).
12. Его Святейшество Гарегин II, Католикос Всех Армян, принял делегацию Римской Католической Церкви, 29 сентября 2008 г. (с. 21).
13. Его Святейшество Гарегин II, Католикос Всех Армян, раздал новоосвященное Святое Миро предводителям епархий, 30 сентября 2008 г. (с. 22).
14. Совещательный сбор епископов в Первопрестольном Святом Эчмиадзине, 30 сентября 2008 г. (с. 23).
15. Его Святейшество Гарегин II, Католикос Всех Армян освятил церковь Св. Богородицы села Большие Сала в Ростовской области и церковь Св. Креста в Ростове на Дону, 7 сентября 2008 г. (с. 24-27).

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛОГОСЛОВЕНИЯ

16. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, г-ну и г-же

Армен и Нуне Сарксянам по случаю их награждения орденом “Святой Григорий Просветитель”, 27 сентября 2008 г., № 502 (с. 28-29).

17. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, г-ну Владимиру Чубу по случаю его награждения орденом “С. Саак-С. Месроп”, 4 сентября 2008 г., № 487 (с. 30-31).
18. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, г-же Лусин Амара по случаю ее награждения орденом “Святой Саак-Святой Месроп”, 24 сентября 2008 г., № 489 (с. 32-33).
19. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, г-же Анаит Ачемян по случаю ее награждения орденом “Святой Саак - Святой Месроп”, 23 сентября 2008 г., № 493 (с. 34-35).
20. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, г-ну Кейу Армену по случаю его награждения орденом “Святой Саак- Святой Месроп”, 24 сентября 2008 г., № 491 (с. 36-37).
21. Патриаршие награды (пожалование Его Святейшеством Гарегином II, Католикосом Всех Армян в течение сентября 2008 г. энциклик орденов „Святой Григорий Просветитель”, “Святой Саак - Святой Месроп” и блогословений группе духовных и светских лиц, оказавших большие услуги Армянской Церкви)-(с. 38-39).
22. Поздравительное послание Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян по случаю Дня знаний, 1 сентября 2008 г. (с. 40).
23. Святая Литургия и Патриарший Молебен по случаю праздника Независимости РА, 21 сентября 2008 г. (с. 41).
24. Слово Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян во время Патриаршего Молебна по случаю Дня независимости РА, 21 сентября 2008 г. (с. 41-42).
25. Патриаршее послание участникам Съезда руководителей общеармянских средств информации, 18 сентября 2008 г. (с. 43).
26. Преподнесена в дар копия плащеницы Христа Первопрестольному Святому Эчмиадзину, 17 сентября 2008 г. (с. 44).

ПРОПОВЕДИ

27. Проповедь Его Преосвященства епископа Вртанеса Абраамяна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина на праздник Воздвижения Св. Креста, 14 сентября 2008 г. (с. 45-47).
28. Проповедь преподобного архимандрита Егише Аветисяна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 7 сентября 2008 г. (с. 48-49).
29. Проповедь иеромонаха Давида Карамяна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина на праздник рождения Св. Богородицы, 8 сентября 2008 г. (с. 50-51).

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

Посвящается освящению Святого Мира

30. **НАЗИК ХАНДЖЯН** - Святое Миро на страницах "Книги скорбных песнопений" (текстологическое исследование)-(с. 52-59).
31. **АРПЕНИК КАЗАРОСЯН** - Канон освящения Мира в требнике "Маштоц" (кодикологическое исследование)-(с. 60-73).
32. **ВАРДАН ДЕВРИКЯН** - Святое Миро в армянском средневековье (литературоведческое исследование)-(с. 74-83).
33. **ВАРДАН ДЕВРИКЯН** - Народное почитание Святого Мира (литературоведческое исследование)-(с. 84-87).

Два описания освящения Мира, согласно путевым заметкам

34. **КИРАКОС КАЗАНЧЯН** - Письма, путевые заметки паломника (подготовила к печати Вануи Егишян)-(с. 88-91).
35. **МИСАК АРАМЯН** - Путешествие из Салиана до Эчмиадзина. путевые заметки (подготовила к печати Вануи Егишян)-(с. 92-101).

36. **АЗНИВ АКОПЯН** - Описание обряда мироосвящения на страницах журнала ,,Арарат" (историковедческое исследование)-(с. 102-110).
37. **ГАЯНЕ ПОГОСЯН** – Святое Миро в определениях иностранных авторов и в описаниях путешественников (историко-географическое исследование)-(с. 111-119).
38. Отцы Церкви о Святом Мире – (составил и перевел Акоп Кеосеян)-(с.120-155).

РЕЦЕНЗИИ

Издания, посвященные Святому Миру

39. Переиздание книги епископа Карапета Тер-Мкртчяна "Освящение Святого Мира" (в конце книги, подготовленной к изданию иереем Асогиком Карапетяном, в качестве приложения приведены фотографии 23 реликвий из хранилища Первопрестольного Святого Эчмиадзина)-(с.156).
40. Книга, посвященная экуменической и межцерковной деятельности Первопрестольного Святого Эчмиадзина (рецензия на книгу архимандрита Овакима Манукяна " В служении и в братстве", вышедшей на армянском и английском языках, перевод на английский архимандрита Ваана Оганисяна)-(с. 157).
41. "Сокровища Святого Эчмиадзина в музеях мира" (представлен одноименный, иллюстрированный, цветной альбом, подготовленный иереем Асогиком Карапетяном на армянском, русском и английском языках)-(с. 158).
42. "Святое Миро" (представлена одноименная книга Вардана Деврикяна,

изданная отдельными книгами на армянском, русском и английском языках)-(с. 159).

В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

43. Открытие нового 2008–2009 учебного года в Геворкянской Духовной Семинарии, 16 сентября 2008 г. (с. 160-161).
44. Собрание Общеармянской молодежной организации Армянской Церкви в Первопрестольном Святом Эчмиадзине, 12 сентября 2008 г (с. 162).
45. Ежегодное собрание Армянского Круглого Стола в Первопрестольном Святом Эчмиадзине, 18-19 сентября 2008 г. (с. 163).
46. День учителя в Филантропической Духовной семинарии Калькутты, 5 сентября 2008 г. (с. 164).

МЕЖЦЕРКОВНЫЕ СВЯЗИ

47. Экуменическое собрание в Лионе, 10-12 сентября 2008 г. (с. 165).
48. Шестнадцатая международная экуменическая конференция в монастыре Босе, 18-21 сентября 2008 г. (с. 166).
49. “Основные вызовы изменения климата” -тема съезда в Милане, 24-28 сентября 2008 г. (с. 166).

АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

50. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, участников 51-го ежегодного съезда международного союза судей, 9 сентября 2008 г. (с. 167).
51. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, председателя сената Чехии г-на Пршемисла Сободки, 13 сентября 2008 г. (с. 167).
52. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, участников инициативы “Дни русского слова в Армении”, 14 сентября 2008 г. (с. 168).
53. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, председателя Конституционного суда Федеративной Республики Германии г-на Ганса-Юргена Папиери, 24 сентября 2008 г. (с. 169).

54. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном Соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение сентября 2008 г. (с. 170).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(September 2008)

1. Editorial – dedicated to the blessing of the Holy Myron, (3-4)
2. Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, at the blessing of the Holy Myron, 28 September, 2008 (p. 5-7).
3. Convention of the commission organizing the blessing of the Holy Myron in the Mother See of Holy Etchmiadzin, 11 September, 2008 (p. 8).
4. Blessing of the flower waters of Myron and making of the Holy Myron in the Mother See of Holy Etchmiadzin, 14 September, 2008 (p. 9).
5. Exhibition in the Mother See of Holy Etchmiadzin on the occasion of the blessing of the Holy Myron, 25 September, 2008 (p. 10).
6. Inauguration of the new branch establishment of "Shoghakat" TV company of the Mother See of Holy Etchmiadzin, 26 September, 2008 (p. 11-12).
7. Consecration of St. Vardan – St. Hovhannes Baptistry by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, 26 September, 2008 (p. 13-14).
8. Requiem service for the repose of souls of the victims of the Armenian Genocide, 27 September, 2008 (p. 15).
9. Ecumenical service in St. Gregory the Illuminator Church of Yerevan, 27 September, 2008 (p. 16-17).
10. Blessing of the Holy Myron in the Mother See of Holy Etchmiadzin by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, 28 September, 2008 (p. 18-20).
11. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the delegation of the Syrian Malankara Orthodox Church of India, 29 September, 2008 (p. 21).
12. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the delegation of the Roman Catholic Church, 29 September, 2008 (p. 21).
13. His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, dispensed the newly blessed Holy Myron to the Primates of the Armenian Dioceses, 30 September, 2008 (p. 22).
14. Episcopal consultation in the Mother See of Holy Etchmiadzin, 30 September, 2008 (p. 23).
15. Consecration of Holy Mother of God Church of Great Sala village (Rostov region), and Holy Cross Church of Rostov-on-Don by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, 7 September, 2008 (p. 24-27).

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

16. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Armen Sarkissian and Mrs. Nune Sarkissian, on the occasion of their decoration with the Medal

of “Saint Gregory the Illuminator”, 27 September, 2008, no. 502 (p. 28-29).

17. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Vladimir Chub, on the occasion of his decoration with the Medal of “St. Sahak – St. Mesrop”, 4 September, 2008, no. 487(p. 30-31).
18. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mrs. Lousin Amara, on the occasion of her decoration with the Medal of “St. Sahak – St. Mesrop”, 24 September, 2008, no. 489 (p. 32-33).
19. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mrs. Anahit Ajemian, on the occasion of her decoration with the Medal of “St. Sahak – St. Mesrop”, 23 September, 2008, no. 493 (p. 34-35).
20. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Kay Armen, on the occasion of his decoration with the Medal of “St. Sahak – St. Mesrop”, 24 September, 2008, no.491 (p. 36-37).
21. Pontifical Awards (Orders of “Saint Gregory the Illuminator”, “St. Sahak – St. Mesrop”, and Letters of Blessing granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during September 2008 to clergymen and laymen having been of great service to the Armenian Church,) (p. 38-39).
22. Message of Congratulation of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians on the occasion of the Day of Knowledge, 1 September, 2008 (p. 40).
23. Divine Liturgy and Patriarchal Prayer on the occasion of the Independence Day of the Republic of Armenia, 21 September, 2008 (p. 41).
24. Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during the Pontifical Prayer on the occasion of the Independence Day of the Republic of Armenia, 21 September, 2008, (p. 41-42).
25. Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the participants of the Conference of Pan-Armenian Mass Media Leaders, 18 September, 2008, (p. 43).
26. Copy of the shroud of Christ was granted to the Mother See of Holy Etchmiadzin, 17 September, 2008, (p. 44).

SERMONS

27. Sermon delivered by His Grace Bishop Vrthanes Abrahamian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the occasion of the Feast of Exaltation of the Cross, 14 September, 2008 (p. 45-47).
28. Sermon delivered by Rev. Fr. Yeghishe Avetissian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, 7 September, 2008 (p. 48-49).
29. Sermon delivered by Rev. Fr. David Karamian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the occasion of the Feast of the birthday of the Holy Virgin, 8 September, 2008 (p. 50-51).

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES
Dedicated to the blessing of the Holy Myron

30. **NAZIK KHANJIAN** – Holy Myron on the pages of the “Book of Laments” (naturalistic research) – (p. 52-59).
31. **ARPENIK GHAZAROSSIAN** – The Canon of blessing of the Holy Myron in the “Mashtots” Ritual (manuscript research) – (p. 60-73).
32. **VARDAN DEVRIKIAN** – Holy Myron in Armenia in the Middle Ages (literary research) – (p. 74-83).
33. **VARDAN DEVRIKIAN** – National Cult of the Holy Myron (literary research) – (p. 84-87).

Description of two travel-notes dedicated to the blessing of the Holy Myron.

34. **KIRAKOS GHAZANCHIAN** – Letters of a Pilgrim, Travel-notes (prepared for publication by Vanouhi Yeghishian) – (p. 88-91).
35. **MISAK ARAMIAN** – Journey from Salian to Etchmiadzin ((travel-note) prepared for publication by Vanouhi Yeghishian) – (p. 92-101).

36. **AZNIV HAKOBIAN** – Description of the ceremonies of the blessing of Holy Myron in “Ararat” monthly reviews (historical research) - (p. 102-110).
37. **GAYANE POGHOSSIAN** – Holy Myron in definitions of foreign authors and travel-notes (historical-geographical research) – (p. 111-119).
38. Church Fathers on the Holy Myron (compiled and translated by Hakob Kyoseyan) – (p. 120-155).

LITERARY REVIEWS

39. Re-publication of “Blessing of the Holy Myron” by Bishop Karapet Ter-Mkrtchian (prepared for publication by Fr. Asoghik Karapetian, pictures of 23 relics of the Mother See of Holy Etchmiadzin are represented at the end of the book as an appendix), (p.156)
40. Book dedicated to the ecumenical activity of the Mother See of Holy Etchmiadzin (literary review of the book “In Service and Fellowship” by Rev. Fr. Hovakim Manoukian published in Armenian and English (translation from English by Rev. Fr. Vahan Hovhannissian)
41. “Relics of the Mother See of Holy Etchmiadzin in the World Museums” (the colored and illustrated album of the same name authored by Fr. Asoghik Karapetian is represented, which is published in Armenian, Russian and English), (p. 158)
42. “Holy Myron” (the book of the same name by Vardan Devrikian is represented. It is published in Armenian, Russian and English), (p. 159)

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

43. Opening ceremony of the 2008-2009 academic year of the Gevorkian Spiritual Seminary, 16 September, 2008, (p. 160-161)
44. Convention of the Youth Organization of the Armenian Church in the Mother See of Holy Etchmiadzin, 12 September, 2008, (p. 162)
45. Annual meeting of the WCC Armenian Round Table Inter-Church Charitable Foundation in the Mother See of Holy Etchmiadzin, 18-19 September, 2008, (p. 163)
46. Teachers' Day in the Armenian Philanthropic Academy of Calcutta, 5 September, 2008, (p. 164)

INTER-CHURCH RELATIONS

47. Ecumenical meeting in Lyons, 10-12 September, 2008, (p. 165)
48. The 16th International Ecumenical Conference in the Monastery of Bose, 18-21 September, 2008, (p. 166)
49. Conference in Milan entitled "Main Challenges of Climate Changes", 24-28 September, 2008, (p. 166)

AUDIENCES AT THE MOTHER SEE

50. Audience granted by His Holiness Karekin II to the participants of the 51st annual meeting of the International Union of Judges, 9 September, 2008, (p.167)
51. Audience granted by His Holiness Karekin II to Mr. P. Sobodka, President of the Senate of the Czech Republic, 13 September, 2008, (p. 167)
52. Audience granted by His Holiness Karekin II to the participants of the project "Days of the Russian Speech in Armenia", 14 September, 2008, (p. 168)
53. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Hans-Jurgen Papier, President of the Constitutional Court of Germany, 24 September, 2008, (p. 169)

54. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during September 2008, (p. 170).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրական՝ նվիրված Սրբալույս Մյուռոնի օրհնությանը 3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Սրբալույս Մյուռոնի օրհնությանը 5
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում զումարվեց Մյուռոնօրհնության կազմակերպման հանձնաժողովի նիստ 8
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց Սրբալույս Մյուռոնի ծաղկանց հյութերի օրհնությունը և սկսվեց Մյուռոնի եփումը 9
Ցուցահանդես Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Մյուռոնօրհնության առիթով 10
Բացվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող «Շողակաթ» հեռուստաընկերության նոր մասնաշենքը 11
Ամենայն Հայոց Կաթողիկոսն օծեց Մայր Աթոռի Ս. Վարդան և Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարանը 13
Հոգեհանգիստ Մեծ եղեռնի զոհերի հոգիների հանգստության համար ... 15
Էկումենիկ աղոթք Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում 16
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց Սրբալույս Մյուռոնը 18
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հռոմի Կաթոլիկ և Հնդիկ Մալանկարա Եկեղեցիների պատվիրակություններին 21
Ամենայն Հայոց Կաթողիկոսը նոր օրհնված Ս. Մյուռոնը բաշխեց թեմական առաջնորդներին 22
Եպիսկոպոսաց խորհրդակցական հավաք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 23
Ամենայն Հայոց Կաթողիկոսն օծեց Ռոստովի Մարզի Մեծ Սալա գյուղի Ս. Աստվածածին և Դոնի Ռոստովի Ս. Խաչ եկեղեցիները 24

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Արմեն և Նունե Սարգսյաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին 28
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Վլադիմիր Չուբին «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին 30
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Լուսին Ամարային «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին 32

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Անահիտ Աճեմյանին «Ս. Սահակ–Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին 34
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Քեյ Արմենին «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին 36
Հայրապետական գնահատություն 38
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա առիթով 40
Սուրբ Պատարագ և Հայրապետական Մաղթանք ՀՀ անկախության տոնի առիթով 41
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հանրապետական մաղթանքի ժամանակ Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա առիթով 41
Հայրապետական պատգամ համահայկական լրատվամիջոցների ղեկավարների համաժողովի մասնակիցներին 43
Սուրբ Էջմիածնին նվիրվեց Քրիստոսի Վարշամակի կրկնօրինակը 44

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Խաչվերացի տոնին մատուցված Ս. Պատարագին ... 45
Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Մատուցված Ս. Պատարագին 48
Տ. Դավիթ աբեղա Քարամյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ս. Կույսի ծննդյան տոնին մատուցված Ս. Պատարագին 50

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Նվիրվում է Սրբալույս Մյուռոնի օրհնությանը

ՆԱԶԻԿ ԽԱՆՋՅԱՆ – Սրբալույս Մյուռոնը «Մատյան ողբերգության» աղոթամատյանի էջերում 52
ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ – Մյուռոնօրհնեքի կանոնը Մաշտոց ծիսարանում 60
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ – Սրբալույս Մյուռոնը հայոց Միջնադարում 74
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ – Սրբալույս Մյուռոնի ժողովրդական պաշտամունքը 84

Ուղեգրական երկու նկարագրություն՝ նվիրված Սրբալույս Մյուռոնի օրհնությանը
ԿԻՐԱԿՈՍ ՂԱԶԱՆՉՅԱՆ – Ուխտավորի նամակներ (հրատարակության պատրաստեց Վանուհի Եղիշյանը) 88
ՄԻՍԱՔ ԱՐԱՄՅԱՆ – Ճանապարհորդություն Սալիանից դեպ Էջմիածին (հրատարակության պատրաստեց Վանուհի Եղիշյանը) 92

ԱԶՆԻՎ ՀԱԿՈԲՅԱՆ – Մյուռոնօրհնության արարողությունների նկարագրությունը «Արարատ» ամսագրում 102
ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ – Սրբալույս Մյուռոնը օտարազգի հեղինակների բնորոշումներում և ուղեգրողների նկարագրություններում 111
Եկեղեցու հայրերը Սուրբ Մյուռոնի մասին (կազմեց և թարգմանեց Հակոբ Քյոսեյանը) 120

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հրատարակություններ նվիրված Սրբալույս Մյուռոնին
Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի «Սուրբ Մյուռոնի օրհնությունը» գրքի վերահրատարակությունը 156
Գիրք նվիրված Մայր Աթոռի էկումենիկ և միջեկեղեցական գործունեությանը 157
«Ս. Էջմիածնի գանձերն աշխարհի թանգարաններում» 158
«Սրբալույս Մյուռոն» 159

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Բացվեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 2008-2009 ուսումնական տարեշրջանը 160
ՀՀԵԵԿ ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 162
Հայաստանյան Կլոր Սեղանի տարեկան ժողովը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 163
Ուսուցչի օրը Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանում 164

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Էկումենիկ հավաք Լիոնում 165
16-րդ միջազգային էկումենիկ կոնֆերանսը Բոսեի վանքում 166
«Կլիմայի փոփոխության հիմնական մարտահրավերները» թեմայով համագումար Միլանում 166

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց դատավորների միջազգային միության տարեկան 51-րդ համաժողովի մասնակիցներին 167
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չեխիայի սենատի նախագահ Պրշեմիսլ Սոբոդկային 167
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ռուսաստանի խոսքի օրերը Հայաստանում» նախաձեռնության մասնակիցներին 168
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Հանս-Յուրգեն Պապիերին 169

Եկեղեցական բեմ. լուրեր 170

“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата 171
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin 175